

ՀՐԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՇՈՒՇԻ

ՔԱՐԵՂԵՆ ԱՆԽՈՍ ԿԿԱՆԵՐ

669

Գրքեր

ՀՐԱՉԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՇՈՒՇԻ

6436

ՔԱՐԵՂԵՆ ԱՆԽՈՍ ՎԿԱՆԵՐ

Յեզքրուտ 65
Պարոպր Թարազյանը անբան
Բրբարանցա Կրկնի Բ
Չկանկան Կարբեկյան
Անքրեանկ՝ Հարազան

Ստեփանակերտ
 «Սոնա» գրահրատարակչություն
 2013



ՀՏԴ 941 (479.25)
ՊՄԴ 63.3(2Հ)
Հ 422

Նվիրում եմ
եղբորս՝ Իլյա Հարությունյանի եւ
քրոջս՝ Բելլա Պետրոսյանի հիշատակին

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հ.

Հ 422 Շուշի. քարեղեն անխոս վկաներ/ Հրււչիկ Հարությունյան. - Խմբ.՝ Մ.Հովհաննիսյան. - Ստեփանակերտ: «Սոնա» գրատուն, 2013. - 292 էջ+12 էջ ներդիր:

Գիրքը ընթերցողի ուշադրության է ներկայացնում 18-19-րդ դդ. Շուշին իր նիստուկացով՝ ըստ հին գերեզմանատների շիրմաքարերի արձանագրությունների: Հիմնականում խոսվում է նշված ժամանակաշրջանում քաղաքի արհեստի տեսակների, արվեստի, ռազմական ու այլ համակարգերի մասին: Տեղ է հատկացված նաեւ տոհմանունների եւ ազգանունների ծագումնաբանությանն ըստ արձանագրությունների:

Մի շարք արձանագրությունների օգնությամբ ճշտվում կամ վերականգնվում են պատմական փաստերի ստույգությունը, իրադարձությունների իրական պատկերը:

Անուրանալի է գրքի աղբյուրագիտական նշանակությունը:

Գիրքը կարող է հետաքրքրել բուհերի ուսանողներին ու մի շարք մասնագետների, ովքեր զբաղվում են ինչպես Շուշիի, այնպես էլ Արցախի պատմությամբ:

ՀՏԴ 941 (479.25)
ՊՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-99941-58-86-7

© Հարությունյան Հ., 2013



Մտորումներ գրքի եւ հեղինակի մասին

ՄՈՒԵՌԱՆԴԸ

Մոլո՞ւցք ասեմ, թե ուրիշ բառով որակեմ: Մարդը որոշել է ուսումնասիրել տապանաբերի արձանագրությունները: Ի՞նչ հաճույքի մղումով կայացվեց նման մի վնիռ կամ գերագույն ի՞նչ նպատակի թելադրությամբ. աստ հանգչի..., այս է տապան..., ի սմին տապանի... եւ հար ու նման գրքեր, որոնց հաջորդում են անուն-ազգանուն, ծննդյան եւ մահվան տարեթվեր, հարեանցի նշվում հանգուցյալի գրադուները կամ թե ումից է սերված: Ոչինչ չասող կամ համարյա ոչինչ չհուշող գրքեր:

Մարդը իր համար գրադուներ է գտել եւ ծուռ համառությամբ փայլում է ընտրած նշակետի ուղղությամբ: Օրերը հաջորդում են իրար, ամիսները գումարվում են կանոնավոր, ապա տարիներն են գլորվում: Լուսանկարչական խցիկը թեւատակին, թուղթ ու գրիչը գրպանում, փայլում է տապանաբերի արանում, ծոված շիրմաքարը շտկում, փոշուց ու նստվածքներից մաքրում գրքերն ու արտագրում արձանագրությունները, լուսանկարում տապանաբերը: Եվ ապա ուշ գիշերով օրվա արածը կարգի է բերում, մտորում, խորհում, փաստը դնում փաստի կողքին, վիժագիր տեխտերում նորից ու նորից կապ որոնում, առնչություններ փնտրում:

Անորոշության եւ անհայտի թանձր ծածկույթի տակ, երբ թվում է դուռ ու լուսամուտ չկա, լույսի թեկուզ նվազ շող չկա, մի պահի, օ՛, զարմանք, միտքը պայծառակերպության շնչով է պարուրվում եւ պարապության մատնված վիժագրերը սկսում են ակնարկներ անել, մոռացումից արտագեղել տարտամ մի պատկեր եւ թեկուզ կակազ ձայնով իմաստի թերել գրքերն ու պատկերները:

Տապանաբերը, որոնք վաղուց մատնվել էին մոռացության, վերին մի կարգադրությամբ լեզու են առնում ու սկսում են խոսել: Խոսում են ոչ միայն վաղուց խամրած, ֆարե լուրջյան մատնված գրությունները, այլեւ դրանցում արձարծված փաստերը սկսում են կապակցվել, տարեթվերը կենդանի շունչ են առնում, դեպքերը ձեռք են բերում իմաստ, հյուսվում է... պատմություն Շուշի ֆաղափի մասին, այն

մարդկանց մասին, ովքեր ապրել են ու կառուցել ֆաղաֆ Շուշին՝ ի սկզբանե հայեցի եւ հայի ձեռնով ստեղծված: Իմաստուն են եղել մեր նախնիները, որոնք որպէս պատգամ եւ հիշեցում իրենց տապանաբարերի վրա բողիկ են աշայխի գրեթե:

Ի՞նչ հաւատով քրիստոնէայ վաղաք՝ մարդիւք

վիճուներ մայօր Սարգիս շահաբէկ 70 լուխանեանց

Տնեալ է 1821 ամի և վախճանեալ 1885 ամի

Հրկղեմբերի 30՝ 65 ամաց Հասակի

Անսպասելի հիմնավորց այս ֆաղաֆը, որ բազմիցս ասպատակվել ու հրդեհի է մատնվել, կերպար ու դիմագիծ է ձեռք բերում, հյուսվում է Շուշիի իրական պատմությունը՝ վասն ծննդի եւ կործանումի, հառնումի եւ արարումի:

Հիրավի, սկզբում եղել է բանը:

Շուրջ 20 տարի նվիրյալն այս՝ ժամանակից վրիպած մոլեռանդի մեկը, որը իրատես մարդկանց կողմից առիթ-անառիթ քեթե ֆամահ-բանքի էր արժանանում, գերեզմաններ կարգի բերելով, գերեզմանաբարեր հողի տակից հանելով, տապանաբարերի արձանագրությունները կցելով-համեմատելով, փշուր-փշուր, հատիկ-հատիկ իրար կողքի դնելով, նորահայտ գտածոներով Արցախի հիմնավորց Շուշի ֆաղաֆի պատմությունը գիտական հավաստիություն է ստանում: Ավելին ասեմ, խեղաբյուրումները, դիտավորյալ կամ ակամա բույլ տրված վրիպումները արդեն հնարավոր է դառնում սրբագրել, գիտական տեսքի բերել:

Հրաչիկ Հարությունյան:

Տապանաբարերի արձանագրությունների ու վիմագրերի հիման վրա հյուսված Շուշիի պատմությունը լույս է տեսել ռուսերեն եւ հայերեն: Եվ ահա մեր սեղանին է դրվում հեղինակի երրորդ գիրքը՝ «Շուշի, ֆարեղեն անխոս վկաներ» վերնագրով:

Վերջինս ունի ոչ միայն գիտական անուրանալի արժեքներ, այլեւ խիստ արդիական է տարածաշրջանում տեղի ունեցող ֆաղաֆական իրադարձությունների, գաղավարական բախումների, դիվանագիտա-

կան, մշակութային եւ վերջապես զուտ պատմագիտական առումներով. երբ պատմաբանը հանդես է գալիս գիտության փաստերը շրջանցելով եւ պատմություն է մոզոնում իր երկրի ֆաղաֆական հավակնությունների ուղղորդությամբ, առաջին պլան են մղվում Հրաչիկ Հարությունյանի գրքում տեղ գտած պատմական այն բացահայտումները, որոնք գիտականորեն հիմնավորում են եւ անառարկելի փաստերով ապացուցում Արցախի եւ Շուշիի իրական պատմությունը, եւ ամենակարեւորը՝ ազգային պատկանելությունը: Հայ Արցախ, հայեցի Շուշի՝ այս են երկու գրքերի հեղինակն ու ծուծը:

Երկու գրքերն էլ աղբյուրագիտական շտեմարաններ են, իսկ «Շուշի, ֆարեղեն անխոս վկաները» գիտական եւ աղբյուրագիտական նշանակությունից զատ գնահատելի է այլ առումով: Շուշին վաղուց դարձել է հայ-ադրբեջանական հարաբերությունների կովախնձորը: Ով է հիմնադրել Շուշին, ինչ է տվել ֆաղաֆը Ադրբեջանի եւ հայ մշակույթին: Հիմնավորց ֆաղաֆը, որ բազմիցս դարձել է ազգամիջյան բախումների ասպարեզ, ներկա հայ-ադրբեջանական բարդ հարաբերություններում ձեռք է բերել ֆաղաֆական ու դիվանագիտական նշանակություն: Ղարաբաղի սիրտը հանդիսացող Շուշին ադրբեջանական մշակույթի միջուկն է եղել հնուց անտի՝ պնդում են ազերի պատմաբանները: Հրաչիկ Հարությունյանը վիմագրերի եւ այլ արձանագրությունների հիման վրա մեկիկ-մեկիկ մերկացնում է ազերի պատմաբանների ստահող վարկածները, նրանց «գիտական» ասպատակությունները մերկացնում տրամաբանության դաժանությամբ: Նա ֆարեղեն վկաների օգնությամբ Շուշին ներկայացնում է նախածին տեսքով, ցույց տալիս, թե ով է հիմնադրել, ինչ է արել հայ մտքի արցախյան հատվածը, ինչպես են վանառական տները բարգավաճ ֆաղաֆ կառուցել, արհեստներ զարգացրել, մշակույթի օջախներ ստեղծել: Գրքում տեղ գտած նյութերը հետաքրքիր են ոչ միայն գիտական հավաստիությամբ, այլեւ հեղինակի պոլեմիստական բորբոսուն շնչով: Ներկա հայ-ադրբեջանական լարված հարաբերություններում այն ձեռք է բերում խիստ արդիական շունչ:

Մախիմ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Սույն աշխատությունը պարունակում է Եյուֆեր Շուշիի 18-19-րդ դդ. ճարտարապետական կառույցների՝ մասնավորապես վեց հայկական, մեկ ռուսական եւ մեկ համատեղ հայ-ռուսական գերեզմանատների արձանագրությունների մասին: Հուշակոթողների եւ շիրմաքարերի վրա փորագրված վիմագրերը սերունդներին եւ փոխանցում արժեքավոր վկայություններ: Արցախի ոչ վաղ անցյալի քաղաքական ու մշակութային, հասարակական-տնտեսական, ռազմական տարբեր բնագավառների վերաբերյալ:

Գերեզմանատների կոթողային ու սովորական բազմաթիվ շիրմաքարեր զարդարված են բուսական, երկրաչափական, կենցաղային իրերի, աշխատանքային գործիքների, կենդանիների պատկերներով: Շատերն այնքան մանրակերտ են ու նուրբ, որ ասեղնագործության ու գորգագործության տպավորություն են թողնում: Ինչպես ասում են, քարերը լեզու առած պատմում են տարածաշրջանի բնակավայրերի հիմնադրման ու մարդու աշխատանքային գործունեության մասին:

Նորահայտ արձանագրությունները արժեքավոր են նաեւ նրանով, որ Հյուսիսային Կովկասում ու Մերձավոր Արեւելքում կատարված ռազմական գործողությունների մասին գիտությանը անհայտ տեղեկություններ են պարունակում: Մի շարք արձանագրություններ պահանջում են տասնամյակներ առաջ տարբեր աշխատություններում տեղ գտած փաստերի ու մեկնաբանությունների ճշգրտումներ եւ լրացումներ կատարել:

Տարիների աշխատանքի արդյունքում 1300-ից ավել արձանագրություն է գրի առնվել: Աշխատանքները շարունակվում են: Մեկ հարյուրամյակում երեք անգամ ավերված այս քրիստոնյա քաղաքի անձնագիրը՝ հրաշքով փրկված կիսաջարդ գերեզմանաքարերը եւ վիմագրերը ներկայանում են սերունդներին որպես անփոխարինելի հուշագրություններ եւ մշակութային արժեքներ:

Թե՛ս այս գիրքը օգնի ընթերցողներին որոշ չափով ծանոթանալու Շուշիի ոչ վաղ անցյալի կյանքին, դրանով հեղինակը իրեն վարձատրված կզգա:

Եվ վերջում, հայտնում ենք մեր խորին ու անկեղծ շնորհակալությունն այն բոլոր սնձանց, ովքեր ոգետրել են, խրախուսել աշխատանքի ընթացքում, առանձնապես՝ ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար տիկին Նարինե Աղաբալյանին, ով կարեւորել ու նպաստել է սույն գրքի տպագրությանը:

Հրաչիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18-19-րդ դարերում Կովկասում ու Մերձավոր Արեւելքում արհեստի ու արվեստի, գրականության, առեւտրի, ճարտարապետության բնագավառում Շուշին դարձել էր տարածաշրջանի գլխավոր կենտրոններից մեկը: Քաղաքը միաժամանակ աչքի էր ընկնում իր անառիկությամբ՝ շնորհիվ աշխարհագրական դիրքի եւ բերդի: Վերջին հանգամանքը անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որովհետեւ տարածաշրջանում գերիշխում էին ցեղային ընդհարումները, քաղաքական անկայուն վիճակը արգելում էր տնտեսական կայունությանը, բռնությունը, ավազակային հարձակումները խաղաղ բնակչության վրա թույլ չէին տալիս բնակչությանը խաղաղ աշխատանքներ զարգացնել:

Քաղաքի հարավ-արեւելյան մասում, Յոնուտի կիրճի ծախափնյա ժայռի ուսին առաջին բերդ-ապարանքը կառուցվել է 1720-24 թվականներին, որը կոչվում էր Ավան հայրուրապետի անունով, քանի որ այնտեղ տեղակայված էր նրա հարյուրյակը եւ իրականացնում էր տարածաշրջանի պաշտպանությունն ու վերահսկում կիրճում գործող ջրաղացների անվտանգ աշխատանքը:

Տեղանքը որոշ թեքություն ունեցող երկու հարթություններից է բաղկացած: Նրա արեւելյան կողմի՝ քաղաքի ստորին մասի բարձրությունը ծովի մակերեսույթից 1356 մետր է, իսկ վերին հատվածինը՝ 1423 մետր:

Ժամանակի ընթացքում ռազմաքաղաքական իրավիճակի փոփոխությունը (տարածաշրջանի վրա հաճախակի էին հարձակումներ կատարում Կովկասի լեռնականներն ու Քուռ-Արաքսի հովտի քոչվոր ցեղերը) ստիպում է, որ կառուցվեն նոր պաշտպանական կառույցներ: Եվ ինչպես հարձակվողները կատարելագործում էին իրենց զենքերն ու ռազմավարությունը, այնպես էլ նստակյաց կյանք վարող ժողովուրդը փոխում էր պաշտպանական կառույցները, ամրոցները, համապատասխանեցնում ռազմական գործողությունների պահանջին: Նման կառույցներից է Շուշի քաղաքի շուրջը կառուցված այս բերդը, որն իր տարածքում ընդգրկել է նաեւ Ավան հարյուրապետի ամրոցը: Առանց նշելու կառուցման ստույգ տարեթիվ, տարբեր աղբյուրներում նշվում է, որ Շուշիի բերդը, որպես ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող կառույց, կառուցվել է՝ մի շարք անգամ փոփոխությունների ենթարկվելով: Սկզբնական շրջանում այն եղել է սովորական պատի ձեւով ու առանց աշտարակների: Դրանում համոզված լինելու համար թարգմանված մեջբերում են մի պարբե-

րություն ադրբեջանցի պրոֆեսոր Ն.Ախունդովի՝ 1991թ. Բաքվում հրատարակված «Գարաբաղյան մամուլը» (Ղարաբաղյան մամուլներ) գրքի 2-րդ մասի 200-րդ էջից մի հատված, որն ասում է. «Առաջներում Շուշիի բերդը ուներ միայն սովորական պատ եւ դուռ, որը երեք տարում (1783-84թթ.) որոշ չափով բարեփոխվել է: Հետագայում հզոր ռուսական պետությունը (ամնայի-դովլաթի Ռուսիա՝ պարսկ. նշանակում է հզոր ռուսական կայսրություն) քանդել, ավելի լավ, ամուր կառույց է հիմնել: Այս մասին նշել են նաև գրագիրներ Մ.Յու. Ներսեսովը (Միրզա Փարուխ Մինասի Ամիրխանեանց, Յ.Յ) «Թարիխի սաֆի» (Ճշմարիտ պատմություն), Մ.Ջ.Ջավանշիր Գարաբաղին «Գարաբաղ թարիխի» (Ղարաբաղի պատմություն) գրքերում: Այստեղ վերանուն են բոլոր կասկածներն ու գրված արտահայտություններն ինչպես Շուշիի, այնպես էլ նրա բերդապարսպի մասին, որ հիմա էլ արվում են: Հեռու չգնանք. Ն. Ախունդովի նշված աշխատության, որում տեղ են գտել Մ.Յու. Ներսեսովի «Թարիխի-սաֆի», Միր Սեհդի Խազանի «Քիթաբի Թարիխի Գարաբաղի» եւ այլ պարսիկ գրողների աշխատություններն Արցախի ու Շուշիի մասին, 19-րդ էջում գրված է. «1799 թվականին հնում շարված պարսպապատերը փլվել էին լրիվ: Հետագայում՝ ռուսական իշխանության ժամանակաշրջանում գիտուն ու գործին տեղյակ ինժեներները պլանի համաձայն նախկին պատերի չափսերը մեկ վերստից (մոտ 1,5 կմ) ավելացրել են պատի ընդհանուր երկարությունը եւ նախկինից ավելի ամուր պատ շարել»: Իսկ ռուսական իշխանությունը տարածաշրջանում հաստատվել է 1805 թվականի մայիսի 14-ին՝ համաձայն Կուրակ գետի ափին, ցարական բանակի ճամբարում ստորագրված պայմանագրի:

Մինչեւ 16-րդ դարը սպառազինությունն այն աստիճանի չէր հասած, որ պահանջվեր նման ռազմական նշանակություն ունեցող բերդեր կառուցել: Զինված հեծյալ քոչվորների դեմն առնելու համար պատն էլ բավական էր:

Նույն աշխատության 2-րդ գրքի 200-րդ էջում նորից նշվում է. «Շուշիի բերդի միայն պատերն էին, որ նորոգվեցին, 1783թ.: Հետագայում (ռուսական հզոր պետությունը) այն լրիվ քանդեց, (ջնջեց), նորից լավ, ամուր շինություն կառուցեց»: Պարզ ու հասկանալի է, որ ոչ այնքան էլ կայուն պատերից բացի նախկինում ոչինչ չի եղել, հետեւապես այն բերդ անվանել անհնարին էր: Այն բերդ դարձել է այն ժամանակվանից, երբ կառուցվել են նրա ամրակուռ պատերն ու ինժեներական կառույցները երկհարկանի կոնաձեւ աշտարակները: Այս գրքում տեղ գտած վերը նշված ստեղծագործությունները, եղած բոլոր անձնանունները, նաև հին մահմեդա-

կան գերեզմանատան արձանագրություններն ասում են, որ տարածաշրջանում եղել են պարսիկներ, այն էլ՝ միայն զավթելու նպատակով: Այս գիրքն էլ վերացնում է բոլոր կասկածները եւ հաստատում, որ ադրբեջանապատկանը միայն հեղինակի կողմից հաճախակի գործածվող «Ադրբեջան» (ազարբայջան) բառն է: Եվ իզուր են մտավորականները խեղաթյուրված ներկայացնում պատմությունը, որն էլ թշնամանք է սերմանում ազգերի մեջ:

Շատ պարզ երեւում է, որ Ն. Ախունդովի հոգին էլ Անարի ու Ֆ.Շուշինսկու նման ծուռ է, ճշմարտության աչքերին ուղիղ նայել, իրերն իրենց անուններով կոչել չի ցանկանում՝ բավական չէ, հասցեներն էլ շեղում է: Խառնելով իրեն դուր չէկող հայերին, յուր ժամանակի գրագիր Ահմեդ բեկ Ջիվանշիրին էլ «սխալ» է հանում: Չնայած Ահմեդ բեկ Ջիվանշիրի «О политическом существовании карабахского ханства 1747-1805 гг.» գիրքը Ղարաբաղի խանության անունով է կոչվում, կարելի է ասել, որ այն հիմնականում ընդգրկում է Շուշիի վիճակը 1790-ական թվականներին Պարսկաստանի շահ Աղա Մահմեդի կողմից բերդի պաշարման ու նրա հետագա գրավման դեպքերը, շահի հրամանով կատարված ձեռքբալություններն ու սպանությունները, որի համար օգտագործվել են ցցեր ու կացին: Գրքի



Բերդապարսպի հյուսիսային մասից հատված

տպագրությունն էլ պրոֆեսորը տանում հասցնում է Թբիլիսի, այն դեպքում, երբ վերը նշված գիրքը տպագրվել է Շուշիում գործող Հակոբովի (Միրզա-ջան Մահտեսի Յակոբեանց) տպարանում: Պատճառը հասկանալի է:

Համոզված կարելի է ասել, որ Շուշիի բերող վերջնականապես կառուցվել է 18-րդ դարի առաջին կեսերին, 2-րդ ռուս-պարսկական պատերազմից (1826-28թթ.) առաջ: Այդ մասին խոսվում է նաև Պարսկաստանում Ռուսաստանի դեսպան Գրիբոեդովի մասին ֆիլմում, որտեղ պարսկական կողմը ասում է. «Ռուսաստանը պստերազմի է պատրաստվում: Իսկ եթե ոչ, ինչո՞ւ է երմուղվը Կովկասում բարդեր կառուցում»:

Այո, ընդունելի ու հավատ ներշնչող է այն միտքը, որ բերդից առաջ Շուշին հյուսիսային կողմից ու մասամբ էլ արեւելքից հարձակումներից պաշտպանվելու համար պատ է ունեցել շարված, այն էլ՝ հասարակ, որի հետքերը, մնացորդները այժմ էլ կան: Դա բոլոր ժամանակներում էլ եղել է, նստակյաց կյանք վարողները պաշտպանվել են այդպես, իսկ քոչվորին հազիվ թե հետաքրքրեր նման գործով զբաղվելը: Կառուցելու համար ահագին ժամանակ է պետք, իսկ քոչվորն այն չունի: Նազիմ Ախունդովի նշված աշխատությունը, որ պարսիկ գրագիրներ Միրզա Յուսիֆ Ներսեսովի (Միրզա Փարուխ Մինասի Ամիրխանյանց) «Թարիխի սաֆի», որին, Ներսեսովից խուսափելով, «Գարաբաղլի» է անվանում, Միր Մեհդի խագանի «Քիթաբի Թարիխի Գարաբաղ», Րզա Գուլու բեկ Միրզա Ջամալ Օղլու «Փանահ խանըն վա Իբրահիմ խանըն Ղարաբաղդա հաքիմի-յատլարը վա Օ զամանըն հադիսալարը», Միրզա Ռահիմ Ֆանիի «Թարիխի ջադիդի Գարաբաղ» գրքերի մի յուրահատուկ ժողովածու է, որի էջերից պարզ երևում է, որ Փանահ խանն էլ, իր համախոհներն ու հետնորդներն էլ մի յուրատեսակ զինված հեծյալ խմբեր են եղել, որոնց հիմնական զբաղմունքը եղել է զինված անսպասելի հարձակումը բնակավայրերի վրա՝ զուտ թալանի նպատակով:

Ն.Ախունդովը նշում է. «Ղարաբաղը Ռուսաստանի, Ռուսի (Թուրքիա, Ն.Ա) եւ Պարսկաստանի համար մարտադաշտ է եղել, գործերի անցուղի է եղել» (տե՛ս, նույն տեղում, էջ 394):

Այսքանով սահմանափակվեմք, բավական համարելով օտարների՝ առանց կոնկրետ չափագրական տվյալների գրած անհիմն արտահայտությունները Շուշիի բերդի մասին, որը վերագրում ենք բազում են մեկ Փանահ, մեկ Մեհրալի խանին: Ընթերցողին ներկայացնեմք Շուշիի բերդն իր չափագրական բոլոր տվյալներով: Եվ այսպես, իմ կատարած չափագրական տվյալներով ամբողջ ամրոցի շրջագիծը 10284 գծամետր է, որից

6894 մետրը բաժին է ընկնում անմատչելի Գյավուրի սարին (Գյավուրի՝ այսինքն՝ անհավատների, այդպես էին կոչում հայերին), որը բերդի արեւմտյան սահմանագիծն է, կերտված հայ քարհանների ձեռքով: Գագաթից մինչեւ հիմքը հատուկ գործիքներով հատված է, առկա են դրա հետքերը: Այս հատվածն ունի 50 մետր բարձրություն, 517 մետր երկարություն, որտեղ Քարին տակ գյուղը ստորոտում պահող եւ Հոնուտի կիրճը մխրճված, այն երեք մասի բաժանող ժայռերն են, իսկ 3390 մետրը քարուկրե պատ է, որը կազմում է 455 320 խոր մետր: Զբաղեցրած տարածքը 591 հեկտար է:

Բերդն ունեցել է 4 դուռ, որոնցով հնարավոր է եղել կատարել երթևեկություն՝ ժամանակի հիմնական տրանսպորտ հանդիսացող սայլերով, ձիերով, ուղտերով ու ջորիներով. Երեւանյանը, Գանձակինը (ելիզավետապոլ), Մխիթարի դուռը (ճանապարհ դեպի Մխիթարաշեն) եւ չորրորդը՝ հարավահայաց ժայռում՝ Քարին տակ գյուղից վերեւ (Մ.Յու. Ներսեսով «Թարիխի-սաֆի»): Շատ հետաքրքիր է, որ Ն.Ախունդովը Մխիթարի դուռը, որ համարվում էր 3-րդ դուռ, անվանում է «Մուխաթար գափըսը»: Այն դեպքում, երբ կարող էր ազատ գրել՝ «Մխիթար գափըսը»: Ինքներդ համեմատեցեք անունների հնչողությունը, եւ ամեն ինչ հասկանալի կլինի:

Վերջին երկու դռներով սայլերի երթևեկությունն անհնարին է եղել տեղանքի պատճառով: Եթե Շուշ ու Մխիթարաշեն գյուղերից քաղաք կարելի էր մտնել ձիերով, ջորիներով, ապա Քարին տակից վերեւ («Քարին գլուխ» տեղանասում) տեղադրված դուռը եղել է ժայռի գագաթից մոտ 20մ ցածում, նրան հասնելու համար իջնում էին քարե աստիճաններով: Այժմ պատով փակված են Մխիթարի եւ այս դուռը: Երեւի հաշվի է առվել նրանց մնալու վտանգավորությունը թշնամիների հարձակման ժամանակ: Ժայռի մեջ դռան տեղ շարված պատը զիգագաճեւ է, որի երկարությունը վերնամասում 12 մ է, հիմքում՝ 7մ, բարձրությունը կենտրոնական մասում 9 մ (հնարավոր է՝ դուռն այստեղ է եղել տեղադրված, որովհետեւ դիմացը հարթ է, որտեղից ուղրապատույտ արահետ է իջնում դեպի գյուղը): Այս պատի բարձրությունը թեւերում 4 մ է, իսկ հաստությունը կենտրոնական մասում՝ 1,2 մ: Նրանից մոտ երկու հարյուր մետր դեպի արեւելք գործել է քարի մշակման արհեստանոց, որտեղ քար են հատելու մշակել՝ ինչպես հարավային հին հայկական գերեզմանատան, այնպես էլ քաղաքի շինարարության համար: Երբ ուշադիր զննում ես տեղանքը, տեսնում ես, որ տեղում դեռ կան հատված, բայց կիսամշակ տարբեր չափսերի ու ձևերի

քարեր: Պարզ երեսուն են եւ ժայռերի վրա փորված շրջանաձեւ անցքերը, որոնք ունեն 3/4-րդ դյույմ տրամաչափ:

Բերդ-ամրոցը կիսանշակված կրաքարերով ու կրաշաղախով է կառուցված: Քարերը սղոցի ատամների նման իրար են ագուցված: Ամբողջ բերդի շրջագիծը 10284 մ է, որից՝ 6894 մ ժայռեր են, իսկ 3390 մետրը՝ պատ: Բերդն զբաղեցնում է մոտ 6610 հա տարածություն, ունեցել է երկհարկանի 21 աշտարակ, որոնցից 5-ը լրիվ ավերված են, բայց պահպանվում են հիմքերը: Երկուսը եղել են Երեւանյան դռների աջ ու ձախ կողմերում, իսկ երեքը՝ հյուսիսային պատում: Աշտարակների միջեւ ընկած հեռավորությունը 150 մ է՝ բացառությամբ վերջին երկուսից, որոնց միջեւ հեռավորությունը 100 մ է: Քանի որ բերդի պատերը ձգվում են Գյավուրի սարից (որտեղ տեղադրված է հեռուստաաշտարակ) դեպի հյուսիս՝ անցնելով Երեւանյան դռներով, այժմ գոյություն չունեցող քանու աղացի մոտով, որտեղից երեսուն է Ղայթալի գյուղը, թեքվում ու ձգվում դեպի արեւելք՝ կազմելով շարված պատի հիմնական մասը:

Սկսենք նկարագրել այստեղից՝ ժամացույցի սլաքի շարժման ուղղությամբ: Պատի հաստությունը Երեւանյան դռներից մինչեւ քանու աղաց 1,3 մ է: Երեւանյան դռներից դեպի հյուսիս իրարից 50 մ հեռավորության վրա եղել են 3 աշտարակներ, որոնք քանդված են (կան հիմքեր): Ղայթալի գյուղի դիմաց, որտեղ ժայռը որոշ չափով մատչելի է դառնում, կառուցված է փոքր աշտարակ, որի պատի հաստությունը 1,3 մ է: Աշտարակից հարյուր մետր ներքեւ շարված է պաշտպանական պատ, որի երկարությունը՝ 180 մ է, բարձրությունը՝ 9: Այս աշտարակի ներսը 6 քառ.մ է: Այստեղից նույն հաստությամբ պատը դեպի հյուսիս ձգվում է 70 մ ու բութ անկյան տակ թեքվում դեպի հյուսիս-արեւելք, որտեղ 7-րդ աշտարակն է: Սրա մոտ վերջանում են ժայռերը, եւ դրա համար էլ փոխվում են պատի հաստությունն ու ձևերը: Այստեղից դեպի արեւելք ձգվող պատն ունի 2,1 մ հաստություն, 5 մ բարձրություն, ընդ որում հաստությունը բարձրության 4-րդ մետրում փոխվում է 1 մ հաստության՝ բարձրանում 1մ: Բերդի ներսի կողմից 1,2 լայնություն ունեցող պատի վրայով շարժվելու համար ճանապարհ է ձգվում մինչեւ 8-րդ աշտարակը: Պատի 1 մ հաստություն ունեցող վերնամասում կան երկաստիճան հրակնատներ, որոնց հեռավորությունը միմյանցից 3,5 մ է: Հրակնատդիտակետերը կառուցված են կամարածեւ, որոնց չափսերն են ներսի կողմում՝ 60x60 սմ, դրսինը՝ 60x20 սմ: Պատերում կառուցված է 1450 հրակնատ: Աշտարակները երկհարկանի են: Հարկերն իրարից բաժանվում են կամարածեւ ծածկով, որի կենտրո-

նական մասում կա 40x40 սմ անցք, որը ծառայել է որպես լուսամուտ ու հաղորդակցվելու եւ զինամթերք մատակարարելու տեղ: Աշտարակի շրջագիծը 26 մ է, պատի հաստությունը՝ 1,5 մ: Աշտարակի առաջին եւ երկրորդ հարկերն ունեն 1,2մ չափսի մուտք: Երկրորդ հարկում կա 8 դիտակետ հրակնատ: Ինչպես պատերինը, սրանք եւս մեջտեղում ունեն քարե հարմարանք, որը հնարավորություն է տալիս գեների հսկողության տակ պահել հեռու տարածությունից մինչեւ բերդի պատերի տակը: 9-րդ աշտարակը եւս երկհարկանի է, ունի մուտքի առանձին դռներ, որոնց չափսերն են 2,2x0,90 մ: Առաջին հարկը չունի ոչ լուսամուտ, ոչ էլ հրակնատներ: Հարկերից յուրաքանչյուրն ունի 3,2 մ բարձրություն: Առաստաղները կամարածեւ են: Առաջին հարկը լուսավորվում է դռան ու առաստաղի կենտրոնական մասի՝ 70 սմ կողեր ունեցող քառակուսածեւ անցքից: Երեւի օգտագործվել է որպես հրամանատարական (մարտավարական) շտաբ ու զինամթերք պահելու տեղ, որտեղից հեշտ էր զինամթերք մատակարարել աջ ու ձախ կողմերում գտնվող աշտարակներին ու պատերում հրակնատների մոտ տեղ զբաղեցրած զինվորներին: Առաջին հարկի ներսի շրջագիծը 16,5 մ է: Ի տարբերություն առաջին հարկի, երկրորդ հարկն ունի 8 հրակնատ, որոնք զբաղեցնում են ամբողջ պատի 75 տոկոսը:

Տասերորդ աշտարակը գտնվում է Գանձակի (Ելիզավետպոլի) դռների ձախ մասում: Այն եւս երկհարկանի է, պահպանվում է նախկին ձեւն՝ ինչպես իններորդ աշտարակում, սակայն 2-րդ հարկում կա երկաստիճան 10 հրակնատ: Ի տարբերություն մնացած 9-ը աշտարակների, այս աշտարակի մուտքի (դռան) ձախ պատում կառուցված է բուխարի: Նույն չափսերն ունի 11-րդ աշտարակը, որի երկրորդ հարկում կա 7 հրակնատ: 9-րդ եւ 10-րդ աշտարակների միջեւ եղած պատը հավասարաչափ, 45 աստիճան անկյան տակ իջնում է դեպի ձորը, որտեղ պատի միջով դեպի հյուսիս անցնում է կամարածեւ, քար ու կրի շաղախից կառուցված կոյուղին, որն ունի 2x2մ չափսեր: Այս տեղամասի պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով աջ ու ձախ կողմերի հրակնատները կառուցված են աշտարակների նման: 9-րդ եւ 10-րդ աշտարակների միջեւ ընկած պատի վրա տեղաշարժ կատարելու համար կառուցված են սանդուղքի 156 աստիճաններ, որոնցից 90-ը շարված է 9-րդ աշտարակից մինչեւ կոյուղու ձախակողմյա, իսկ 66-ը՝ 10-րդ աշտարակից մինչեւ կոյուղու աջակողմյա հրակնատը:

13-րդ աշտարակից 60մ դեպի աջ տեղադրված է Գանձակի (Ելիզավետպոլի) դուռը, որը տեղացիներն անվանում են Վարանդայի դուռ: Դարպասը կառուցված է կամարածեւ, լայնությունը՝ 3,5 մ, իսկ բարձրությունը

կենտրոնական մասում 4 մ է: Ունեցել է երկփեղկ փայտե հաստ դռներ: Դարպասի աջ ու ձախ կողմերում կառուցված են 2-ական կամարածե կառույցներ՝ 6,5 x 5,5մ չափսերով: Ձախակողմյա պատկից կառույցից մուտք կա դեպի աշտարակի առաջին հարկը: Աջակողմյա կառույցի աջ պատի անկյունում տեղադրված է դուռ, որտեղից կարելի է մտնել մի փոքրիկ կից սենյակ: Այդ դռան լայնությունը 1 մ է, բարձրությունը՝ 1,5 մ: Սենյակն ունի 61,2 մ չափս, դեպի բակը նայող 1,5 x 3,5 մ չափսի լուսամուտ: Գանձակի դռների դրսի կողմում, աջ մասում կա 4 մ բարձրություն ու 5 մ երկարություն ունեցող՝ դեպի հյուսիս ձգվող պատ, որի աջ մասում, բերդի պատի մեջ, կառուցված են 8 ձի կամ ջորի կերակրելու տեղ: Հաշվի է առվել այն հանգամանքը, որ կարող էին ուշացած ճամփորդներ լինել, պետք է հանգստանան կամ սպասեն՝ մինչև բացվի դարպասը, քանի որ դռները ժամը 24:00-ին փակվում էին՝ մինչև առավոտյան ժամը 6-ը:

Այսպիսին են եղել նաև Երեւանյան դռները, որոնք այժմ փլված-ավերված են:

15-րդ աշտարակը, որ տեղադրված է Գանձակի դռներից 60 մ դեպի աջ, իր չափսերով ու ձևով նման է 14-րդ աշտարակին:

Հաջորդ՝ 16-րդ աշտարակն իր ձևով, չափսերով ու նշանակությամբ տարբերվում է բոլոր աշտարակներից: Այն բաց աշտարակ է՝ հատուկ հրապարակով ու ներքնահարկով (պահեստ): Պատի վրա կան 3 հատուկ տեղեր, որտեղ կարելի է տեղադրել 3 աշտարակային թնդանոթ, որոնցով կարելի է կրակի տակ առնելով՝ վերահսկել Շոշ գյուղի ուղղությունից մինչև Ավագուտի թաղամասը (հյուսիսային հին հայկական գերեզմանոց):

17-18-րդ աշտարակների միջև եղած հեռավորությունը 110 մ է: Այս աշտարակները եւս երկհարկանի են, ունեն 5-ական հրակնատ՝ տեղադրված 2-րդ հարկում:

19-րդ աշտարակից պատը ձգվում է դեպի արեւելք 200 մ ու, կիսաշրջան կազմելով, թեքվում դեպի հարավ-արեւելք, ձգվում 550 մ ու շարունակվում ուղիղ գծով 150 մ: Այստեղ իրարից 20 մ հեռավորության վրա կառուցված են 20-րդ եւ 21-րդ աշտարակները, որոնք ունեն 8 մ բարձրություն, նույնպես երկհարկանի են, չունեն հրակնատներ 1-ին հարկերում, սակայն 20-րդ աշտարակի հենց հատակին հավասար, պատում բացված է 40x40 սմ անցք, որն ուղիղ նայում է Շոշ գյուղ մտնող ճանապարհին: Կարելի է գնդացի տեղադրել ու վերահսկել, կրակի տակ առնել գյուղի հարավային շրջակայքն ու գյուղ մտնող ճանապարհը:



Բերդապարսպի Երեւանյան դռներն այժմ

21-րդ աշտարակի մոտ պատն ավարտվում է: Այստեղից ձգվում է անմատչելի ժայռ դեպի հարավ, որը շարունակվում է 420 մ: Ժայռի վերջնամասից նորից շարված է պատ: Այստեղ նորից փոխվում են պատի չափսերը: Պատի բարձրությունը 4 մ է, իսկ հաստությունը՝ 110 սմ: Այս հատվածը, որի երկարությունը 95 մ է, ուղղված է դեպի Հոնուտի կիրճը: Սա բերդի պատի վերջնամասն է, որ շարված է անդնդախոր ծորի վրա կախված երկու մեծ ժայռաբեկորների միջև: Ի տարբերություն մնացած տեղամասերի, այս մասում հրակնատների միջև եղած հեռավորությունը 2մ է: Սրանք գետնից բարձր են 1,5 մ: Հրակնատները ներսի կողմում ունեն 40x30 սմ չափսեր, իսկ դրսի կողմում՝ 40x15 սմ: Այս հրակնատներից կրակել կարելի է միայն կանգնած դիրքից:

1868թ. Ելիզավետպոլի նահանգապետի որոշմամբ 2000 քառ.մ տարածք է միջնապատով առանձնացվում բանտի շինարարության համար, որի շինարարությունն ավարտվել ու շահագործման է հանձնվել 1869 թվականին: Այն նախատեսված է եղել 160 հոգու համար, որն այժմ էլ գործում է: Բանտի տարածքում կառուցվել է նաև հիվանդանոցի շենք:

1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին այս բերդի պետը եղել է պորուչիկ Գյանջում աղա Առաքելի Խանդամիրյանցը, որին


Ն.Ախունդովը ճարակորեն յուրացրել է՝ անվան մասերը միացնելով (Գյանջում աղա), ազգանվան վերջավորությունն էլ «ով» դարձնելով, կարծելով քե ամեն ինչ կփոխվի:

Համաձայն Աբաս-Միրզայի հրամանի՝ պետք է Ամիր խանն ու Մեհրի-գուլի խանը 4 հետեւակային ջոկատով ու խալիֆալի թուրքաբնակ գյուղի մոտակա ձորում դարանակալած մեծ հեծելազորով գրավեին Շուշին: Լուսաղեմին նրանց մարտն ընդունում է Գյանջում աղա խանդամիրյանցը: Բացել է տալիս Երեւանյան դարպասը, երկու ջոկատով դարպասից դուրս, բերդի պատերի տակ, մարտի բռնվում ղզլբաշների հետ: Ահագին զոհեր են տալիս պարսիկները դրսում, սակայն որոշ թվով ղզլբաշներ ներս են անցնում: Այդ պահին խանդամիրյանցը փակում է փայտե դարպասը, լցնել տալիս հողով, որ անհնարին լինի ջարդել եւ շարունակում մարտը բերդի աշտարակներից՝ ու ներսում: Այդ մարտական գործողություններն ընթացել են մինչեւ ուշ երեկո: Քաղաքում տեղակայված ցարական Ռուսաստանի թիվ 6 սահմանապահ գնդի հրամանատարի՝ գնդապետ Սեմյոնովի համաձայնությամբ զենք է տրվել նաեւ քաղաքի հայ բնակչությանը, որոնք բարձրանալով աշտարակների վրա՝ մեծ օգնություն են ցուցաբերել մարտական գործողություններին: Աբաս-Միրզայի զորախումբը պարտված հետ է նահանջել:

Հետպատերազմյան տարիներին Գանջումաղա Մարգարի խանդամիրյանցը զբաղեցրել է մովրովի (գավառապետ) պաշտոն եւ մղել ակտիվ պայքար մղել զինված ավազակախմբերի (ղաչաղներ) դեմ տարածաշրջանում: Անհրաժեշտ են համարում նշել Ն.Ախունդովի «Գարաբաղնամալար» գրքի էջերում տեղ գտած բազմաթիվ դեպքերից մեկը, որ տեղի է ունեցել Ջանգեզուրի գավառում. «Խաղաղ բնակչությանը հաճախակի թալանելու համար նա ձերբակալել է զաչաղներ Ջամալ բեկին, Ջաբբար բեկին, Ջամալ բեկի եղբոր որդի Ջաբբայիլ բեկին ու Իսմայիլ բեկին: Վերջինիս հատուկ կառավարական որոշմամբ աքսորել են Սիբիր» (նույն տեղում, էջ 307):

Բերդապարսպի պատում (բանտի տարածքում է այժմ) ի հայտ է բերվել երկրաչափական սեղանաձեւ սրբատաշ քար, որի վրա կա խաչ, գրված՝ 1848, իսկ հաջորդ տողում ռուսերեն գրված է՝ Под часно: 2005թ. ապրիլին նորոգման աշխատանքներ կատարելիս բանտի բակում գտնվել է երկու կգ քաշ ունեցող մի կողպեք, որի մի կողին գրված է՝ 1877, իսկ մյուսին՝ ռուսերեն «СІІ» տառերը: Բանալիի անցքի մոտ ռուսերեն գրված է՝ БААТ.

6736



ՈՍԿԵՐԶՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱԿՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ
ՇՈՒՇԻՈՒՄ 18-19-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ ԸՍՏ ՆՈՐԱՅԱՅՏ
ՎԻՍԱԳՐԵՐԻ

Ոսկերչությունը մարդկության ամենահին արվեստներից է: Այս բնագավառի մասնագետները կոչվել են ոսկերիչներ, որոնց պատրաստած ոսկյա զարդերը մարդկանց հագուստին տվել են ուշագրավ տեսք: Այն բարձր մակարդակի վրա է եղել Հին Եգիպտոսում, որտեղ փորձառու եւ հմուտ վարպետները բազմապիսի զարդերից բացի, ոսկուց ծուլել-սարքել են արձաններ: III-VII դարերում, կրելով եգիպտացի ոսկերիչների ազդեցությունը, Պարսկաստանում եւս սկսել են պատրաստել ոսկյա եւ արծաթյա առարկաներ, որոնք գործածվել են կենցաղում: Առետրական հարաբերությունների զարգացման շնորհիվ արվեստի այս տեսակը տարածվել է հարեւան երկրներում, այդ թվում նաեւ Կիլիկյան Հայաստանում:

Հայկական ոսկերչության արվեստի կենտրոններ էին Դվինը, Անին, Կարսը, Կարինը, Վանը, Արդվինը, Արդահանը, Կ.Պոլիսը, Երզնկան, Ալեքսանդրապոլը, Շուշին, Ախալցխան եւ այլն (տե՛ս, ՀՄԳ, հատոր 8, էջ 632):

Ինչո՞ւ միեւնույն ժամանակ արհեստի այս տեսակը, որ շատ տեսակների նման գործ ունի մետաղի հետ, կոչվում է արվեստ: Առանց մեկնաբանությունների նշե՛ք, որ ի տարբերություն մյուսների, այստեղ առկա են նաեւ փորագրությունն ու նկարչությունը: Փաստորեն, ոսկերիչները տիրապետում էին երեք եւ ավելի մասնագիտությունների ու կախված չէին ուրիշ մասնագետներից: Նրանք կախված էին միայն առետրականներից, որոնց միջոցով ձեռք էին բերում միայն հումք: Պարզ է, որ Շուշիի ոսկերիչներին հումք են մատակարարել Արիսդակես Մարգարեան Խանդամիրեանցը, Աստվածատուր Մելիք-Շահնազարեանը եւ ուրիշներ, որոնք սերտ առետրական կապեր ունեին Ռուսաստանի եւ Ֆրանսիայի հետ:

Ոսկերիչների արհեստանոցները տեղակայված են եղել Կազարմայի թաղում, Ղազանչեցոց ու Ազուլեցոց եկեղեցիների հարեւանությամբ ու քաղաքի հայկական շուկայում: Քանի որ խոսք բացվեց շուկայի մասին, նշե՛մ, որ այստեղ տեղակայված արհեստանոցում թուրքի ատրճանակից արծակված երկու գնդակներից 1905թ. օգոստոսի 16-ին սպանվել է ոսկերիչ Հարությունը (տե՛ս, Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք է, էջ 351):

Շատ մասնագիտությունների նման ոսկերչությունը եւս Շուշիում XVIII-XIX դարերում կրում էր ժառանգական բնույթ, որը շատ հանգամանքների հետ էր պայմանավորված: Նախ՝ որդին մանկուց է սկսում ընդօրինակել հորը, սովորում որոշ գաղտնիքներ ու գործին առանձնահատուկ նրբություններ, ապա՝ հայրը չէր ուզում, որպեսզի հացին շատ մոտիկ ու միշտ պատվիրատուներ ունեցող այս մասնագիտությունը գերդաստանի սահմաններից դուրս գնա: Տողերս հաստատվում են Շուշիի հին հայկական երկու եւ մեկ համատեղ հայ-ռուսական գերեզմանատների նորահայտ արձանագրություններով: Եվ այսպես: Ըստ արձանագրությունների՝ հայ-ռուսակա՛ն գերեզմանատանը հողին են հանձնված 13 ոսկերիչներ: Պարզվում է, որ ոսկերիչ Դանիելի մասնագիտությունը սովորել են նրա երեք որդիները՝ Արզիւմանը, Գրիգորն ու Հովհաննեսը, թոռները՝ Հովհաննեսի որդի Արթինը, Արզումանի որդիներ Միքայելն ու Դանիելը եւ ծոռը՝ Դանիելի որդի Հովհաննեսը: Արձանագրություններից պարզ երեւում է, որ հմուտ ու ճանաչված մասնագետներ են եղել Դանիելի որդին՝ Հովհաննեսն ու թոռ Միքայելը (Արզումանի որդին), որոնց տապանաքարերի արձանագրություններում առկա են «քաջ ոսկերիչ» բառակապակցությունը, որը չի կարող պատահաբար ի հայտ գալ (տե՛ս, Հրաչիկ Հարությունյան, Շուշիի տապանաքարերի արձանագրությունները, ԵՊՀ հրատարակչություն, Երեւան, 2008, էջ 284):

ԱՓՈՓԵԱԼ ԴՆԻ ՀԱՅՍՄ ՏԱՊՆԻ
ԱՐՄԻՆ ԱՆԴՐԷՒ ՔԱՋ ՈՍԿԵՐԻՉԻ
ՌՍՏԱՅ ՅՕՅԱՆԵՍ ՂԱՅՐԱՆԵՆԻ
1856 ԹԻՒ 20 ՕԳՈՒՍՏՈՍԻ

Զգիտես ինչու, Հովհաննես Ղահրամանյանի որդին, ոսկերիչ Անդրեյը եւս այս գերեզմանատանն է հողին հանձնված, այն դեպքում, երբ Ղահրամանյանների գերդաստանը (եւս ոսկերիչներ), տոհմական գերեզմանատուն ունեն Շուշիի հյուսիսային գերեզմանատանը: Հյուսիսային գերեզմանատանը հողին է հանձնված նաեւ ոսկերիչ Ավետիս Գրիգորեան Միրգայ Եօզբաշեանցը (Հուզբաշյանց):

Քաղաքի Երեւանյան դռների հարավ-արեւմտյան հին հայկական գերեզմանատանը հողին է հանձնված ոսկերիչ Շովքեաթ Ղուկասի Ղուկունցովը, որը միաժամանակ բանահավաք էր:

Դեկորատիվ կիրառական արվեստի տեսակ հանդիսացող ակնագործությամբ եւս զբաղվել են Շուշիի արհեստավորները, որոնք եւս, ինչպես Մերձավոր Արեւելքի արհեստավորները, օգտագործել են փորագիր թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր: Նրանց արհեստանոցներում ոսկյա մատանիներն ու այլ զարդեր լրացուցիչ զարդարվել են այդպիսի քարերով: Եկեղեցական շատ իրեր եւ խաղեր եւս զարդարվել են թանկարժեք քարերով: Բարձրաստիճան հոգեւորականների համար պատրաստել են կնիք-մատանիներ: Պատրաստվել են ակնակուռ խաչեր:

Հիմք ընդունելով արձանագրություններում գրվածները, առանց որեւէ կասկածի կարող ենք ասել, որ Շուշիում ակնագործներն օգտագործել են նաեւ ադամանդ, որի մասին ասում է ռուսերեն «բրիլիանտ» բառը՝ գործածված հանգուցյալ վարպետի տապանաքարի արձանագրությունում, որն էլ իր հերթին մուտք է գործել ֆրանսերենից ու նշանակում է թափանցիկ ալմաստ:

Արվեստի այս տեսակով, համագործակցելով ոսկերիչների հետ՝ Շուշիում աշխատել է ակնագործ (բրյանտչի) Վանօ Կեանջումեանցը, որի դիակը հողին է հանձնված Երեւանյան դռների հարավ-արեւմտյան գերեզմանատանը:

ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇՈՒՇԵՑԻՆԵՐԻ ՏՈՅՄԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շուշիի հին հայկական գերեզմանատների արձանագրությունները մեզ տեղեկություն են տալիս ոչ միայն մեր նախնիների կյանքի ու կենցաղի, բազմապիսի արհեստների, կրթության, մշակույթի եւ առեւտրի, այլ նաեւ մեր տոհմերի եւ ազգանունների ծագումնաբանության մասին:

Բազմաթիվ տոհմերից ներկայացնում ենք ժամհարեանց, Միսկարեանց, Բարութջիանց, Ղոնդաղսազեանց, ճգնավորեանց ու Կրասիլնիկեանց գերդաստանների անվանումների, ազգանունների առաջացման հիմնական պայմաններն ու եղանակը:

Արհեստների ազդեցությամբ անվանի արհեստավորների անձնանուններին կցվել են նրանց արհեստների անուններն ու կոչել նոր բառակապակցությամբ: Այսպես՝ ժամհար Համբարձում, Միսկեար Ավետիս, Բարուտչի (Բարութջի) Գասպար, Ղոնդաղսազ (Ղոնտաղսազ) Աղաբեկ, ճգնավոր Մինաս, Կրասիլնիկ Նիկողայոս եւ այլն: Ինչպես նկատում ենք, հատուկ անուններին կցված արհեստների անունները, որպես հասարակ գոյականներ, կցվել են անձնանուններին, որպեսզի տվյալ անձինք տարբերվեն իրենց անվանակիրներից: Իսկ հատուկ անունների հետ բառակապակցություն կազմող վերոհիշյալ բառերը կազմված են ժամ(եկեղեցի)+հար(մոտ), բարութ (վառող)+չի մասնիկից, ղոնդաղ (կոթ)+սազ(կցել, ամրացնել) պարզ բառերից, միս (պղինձ)+կար(գործ) եւ կրասիլ(կրասկա, ներկ)+նիկ մասնիկից եւ ցույց են տվել մարդկանց արհեստը, զբաղմունքը:

Վերը նշված անվանումներից երկուսը՝ ճգնավորն ու ժամհարը ունեն հայկական ծագում եւ ցույց են տալիս կապ, առնչություն եկեղեցու հետ, իսկ ղոնտաղսազ, միսկար եւ բարուտչի (բարութջի) բառերը մուտք են գործել պարսկերենից, շնորհիվ Արցախի եւ Մերձավոր Արեւելքի երկրների միջեւ զարգացող առեւտրական հարաբերությունների: Կրասիլնիկ (կրասիլչիկ) բառը մուտք է գործել ռուսերենից:

Թե ե՞րբ են կատարվել այս անվանակոչությունները, կոնկրետ տարեթվեր չկան, սակայն ըստ տապանաքարերի արձանագրությունների պահպանվել են դրանք: Որոշ ազգանունների բացատրությունները ներկայացրել են մեր անվանի հայագետները:

Ժամհարյան .- Առաջացել է ժամ+հար բառերից եւ նշանակում էր «եկեղեցասեր մարդ» (տե՛ս, Յ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Բ, էջ 377):

Իսկ ըստ ծիսական բառարանի տրված բացատրության, ինչպես գերդաստանի, այնպես էլ ազգանվան առաջացումն այսպես է մեկնաբանվում. Ժամհար-եկեղեցի, ժամ հրավիրելու համար «Ձանգակն» ու «Կոչնակը» հարվածողը, հարվածողները (նույն տեղում, էջ 80): Ինչպես տեսնում ենք՝ ժամ, եկեղեցի կանչողները զանգերի կամ կոչնակների միջոցով կոչվել են ժամհարներ: Եվ քանի որ նման գործողություն կատարողները նույն ընտանիքից կամ գերդաստանից էին, կոչվում էին ժամհարեանք, իսկ որպեսզի մատնացույց անեին տունը կամ էլ գերդաստանի որեւէ անդամի, ավելացնում էին «եանց» ածանցը, որը պարզ արտահայտվում է արձանագրություններում: Օրինակ՝

ՀԱՆԳԻՍ ՍԱՀԱԿՅ
ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ ԺԱՄՀԱՐԵԱՆՑ
ԾՆԵԱԼ ՅԱՄԻ 1812
ՎԱԽՃԱՆԵԱԼ Ի 25 ՆՈՅԵՍԲ 1897

շուշաբաղաբացի լուսահոգի Միքայել
Մանուկեան ժամհարեանց Հայրենեօքն
ղազանչեցի վախճանեալ ի 63 ամաց Հասակի
ի 1869 ամի օգոստոսի 22

Ժամանակի ընթացքում այս գերդաստանի անվանումից վերջավորության փոփոխությամբ ձեւավորվել է ազգանունը, որը այժմ էլ գործածական է: Օրինակ՝ ժամհարյան Ալբերտ ծնված 1924թ., ճարտարապետ: Կրթվել է Երեւանում, աշխատել է հնությունների պահպանության կոմիտեում (տե՛ս, Կենսագրական բառարան, հատոր Բ, էջ 4):

Նույն եղանակով ստեղծվել է Միսկարով տոհմանունը, նախապես կազմելով հատուկ անվան մաս՝ արիեստը նշելու նկատառումով: Պահպանված արձանագրություններից պարզվում է, որ այս գերդաստանի անունը նախկինում եղել է Դանիելեանց, այդ տոհմի նախնի Դանիելի անվան հետ կապված: Ինչպես պարզվում է, երբ տարածաշրջանում մարդիկ սկսել են համբավ ձեռք բերել իրենց արիեստի շնորհիվ, կամա թե ակամա փոխվել է գերդաստանի անունը, կամ ազգանունը, կամ էլ ժամանակի ընթացքում՝ երկուսը միասին: Կրկին դիմենք արձանագրություններին, որոնք

շատ պարզ ու հասկանալի մեզ կհամոզեն դրանում: Միսկարովների գերդաստանի տոհմական գերեզմանատան տապանաքարերին գրված է.

Յոհաննէս Դանիելեանց պղնձագործ
վախճանեցաւ 1885 թիւ 60 տարեկան

Այս է տապան լուսահոգի պղնձագործ
Ավետիս Դանիելեանցին ծնեալ է 1898 թ 55 տարեկան

այս է տապան լուսահոգի Մարեա
նին որ է կողակից միսկեար
ավետիսին տանիելեանց1860 ամի

ի տապանիս յայսմիկ Հանգուցեալ կայ մարմին
բարեպաշտուհի Արզի տիկնոջ Դավիթեն-
լազարեանց ըստ առն Միսկարեանց, վախճանելոյ
ի 27 փետրվարի 1890 ամի, ի Հնակի 71 ամաց:

Բարուտջիան (Բարութջիան). - Ինչպես տեսնում ենք, բառը բաղկացած է բարութ (վառող) բառարմատից եւ «ջի» զբաղմունք ցույց տվող մասնիկից ու նշանակում է վառող պատրաստող: Օրինակ՝

ՏԱՊԱՆ ԲԱՐՈՏՉԻ
ՀԱՆԳՈՒՑԵԱԼ Գ -
ԱՍՊԱՐԻ ԹՈՄԾԻՆ

այս է տապան մնացականի
բարութջեանց վախճանեցաւ
1848 ամի 55 ամաց հասակի

այս է տապան ազիզգիւլին կնոջ
մնացականի բարութջեանց վախ-
ճանաչեցաւ ի 1850 ամի 45 ամաց հասակի

Շնորհիվ արիեստավորի, գերդաստանը կոչվել է Բարութջեանց եւ արիեստ նշանակող հասարակ գոյականը դարձել է հատուկ անուն.

Աստ Հանգչի
Համբարձում Մնացականեան
ԲԱՐՈՒԹՉԵԱՆՑ
Ծնեալ 1831Թ եւ ի Տէր Հանգեալ 1900Թ
դեկտեմբերի 15 ին Շուշի:

Ինչպես պարզ երեւում է արձանագրություններից, ժամանակի ընթացքում երեւան է եկել նոր արհեստ, որի շնորհիվ գերդաստանի անունը փոխվել-նորացել է: Տոհմի սերունդ Բախշին սկսել է զբաղվել լարախաղացությամբ, որ կոչվում էր փահլեւանություն, իսկ զբաղվողը՝ փահլեւան, որը եւս պարզ նկատելի է արձանագրությունից.

Այս է տապան Հանգուցեալ փահլեւան
Բախշի Մնացականյանի ծնված 1846 թ
վախճանված 1918թ սեպտեմբերի

Շնորհիվ վերջինիս արհեստի (փահլեւանություն), նրա որդիներին կոչել են փահլեւանի Հակոբ, Սամսոն եւ այդ ժամանակվանից գերդաստանի Բարութիանց անունն իր տեղը զիջել է նորին, ու գերդաստանը հարատեւելով, շարունակել է կոչվել նոր անունով, այն է՝ Փահլեւանեց: Այսպես, նրա որդու՝ Սամսոն Մնացականյանի տապանաքարի արձանագրությունը վկայում է.

ՄԱՅԱՎԱՆՅԱՆ
ՍԱՍՍՈՆ
ՓԱՀԼԵԱՆ ԲԱԽՇԻԻ
1894 -1977

Արհեստի հետ է կապված նաեւ **Ղոնդաղսագենց (Ղոնդաղսագեանց)** գերդաստանի անունն ու Ղոնդաղսագյան ազգանվան ծագումնաբանությունը: Հրացանների համար փայտից ղոնդաղ (կոթ, ազուստ) պատրաստող վարպետ Վանյան (Վանիեանց) Աղաբեկին մյուսներից տարբերելու համար անվանը կցել են արհեստի անվանումն ու ասել՝ Ղոնդաղսագ Աղաբեկ, ինչպես վկայում է շիրմաքարի արձանագրությունը՝ գրված այսպես.

Այս է տապան Ղոնտաղսագ
Աղաբեկի Վանիեանց 1881ամի
նոյեմբերի 1-ին

Եվ քանի որ գերդաստանի համար մասնագիտություն էր այդ արհեստը, գերդաստանի անդամներին ուրիշներից տարբերում էին՝ շեշտելով արհեստը, որն էլ մասնագիտությունը նշանակելուց բացի դառնում է հատուկ անուն՝ Ղոնդաղսագենց: Օրինակ.

Հանգիստ Ստեփաննոսի
Եսայեան Ղոնդաղսագեանց
վախճանելոյ ի 5 յունիսի 1870
ամի 54 ամաց հասակի

Նիկողայոս, որդի Ստեփաննոսի
Ղոնդաղսագեանց, վերափոխեցալ
ի 23 հոկտեմբերի 1884 ամի ի ծննդեան
36 ամեայի

Այս հանգչի յարութիվն Եսայեան
Ղոնդաղսագեանց
Վախճանուեց 1905 ամի Յուլիսի 17-ին
90 ամեայց Հասակում:

Ստանալով «յան» վերջածանց, այն դարձել է նաեւ ազգանուն: Այս է վկայում գերդաստանի սերունդ Ա.Ղոնդաղսագյանի ազգանունը: Եղել է Շուշիի ճարտարապետը, 1912թ. Շուշիի 4-րդ հատակագծի հեղինակը: Ունեցել է կովերի ֆերմա: Երկրամասում առաջինը ինքն է շուշեցիներին կաթ մատակարարել շշերի մեջ: Նա միաժամանակ եղել է Շուշիի գրաքննական լիազորը: Նրա անունով է կոչվում քաղաքի փողոցներից մեկը:

Ճգնավոր. - Հայերեն բառ է, հասարակ գոյական, որից առաջացել է ճգնավորեան ազգանունը (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր 9, էջ 158):

Այս բառը ստանալով -ություն վերջածանց, ցույց է տալիս անձ, որը զբաղվում է ճգնավորությամբ (ճգնավոր+ություն), որ յուրատեսակ գործողություն է նշանակում: Տեսնենք ինչպես է տարածում գտել հայերենում:

Ճգնավորություն-կրոնական մղումով ընտանիքից, մարդկանցից հեռանալ եւ անմարդաբնակ վայրում մեկուսացած մնալ էր նշանակում: Հայաստանում այն սկսել է տարածվել 4-րդ դարում: Եկեղեցին ճգնավորներին համախմբել է իր իրավասության տակ գտնվող մենաստաններում (ՀՍՀ, հատոր 7-րդ, էջ 95):

Անձ (ճգնավոր) ցույց տվող հասարակ գոյականին ավելանալով «եան» վերջածանցը՝ ստացվել է ճգնավորեան, որ հատուկ անուն է, գործածվել է որպես ազգանուն: Այն Ղարաբաղում սկսել է գործածվել 18-րդ դարից (տե՛ս, նույն տեղում):

Օրինակ.

Յայսմ տապան ամփոփի մարմին Թօմասայ,
որդի մինասայ ճգնաւորեանցին վախճանել
1878 ամի ի հասակի 69 ամաց

8
18-----30
15

ի սոյն Շիրմի ետեալ Մարմին ԱԳՈԼԵ	ՅԻ
ԱՐԴԱՐ ՀՈԳԻ ՄԻԱՍ ԱՆՈՆ ԳԱԲՐԵԼԵԱ	ՆԻ
ԲԱՐԻ ՏՈՂՄԵՆ ԵԳՆԱՌՐԵԱՆՅ ՉԱՅՆԵԱԼԿՈ	ՁԻ
ԳՈԼ ՊԱՐԵՊԱՇՏ ԳԱՂԹԵԱԼ ԵԿՆ Ի ԱՍՏ ՏԵ	ՂԻ
ՈՒԹՍՈՒՆ ԱՄԵԱՑ ԵՄՈՒՏ ՅԱՐԳԱՆՏ ՄՕՐ ՏԱՊԱ	ՆԻ
ՉԱՅՆ ԲԱՐՉՐԵԱՑԵԱԼ ԱՍ ԻՉԵՆՉ ՏԱԼ ՁՈՂՈՐ	ՄԻ

տապան լուսահոգի եղիսաբէթ
կնոջ գաքարէի Ամատրեան
ճգնավորենց. ծնեալ ի 1834 ամի
եւ վախճանեալ 1887 ամի 53 ամաց
մայիսի 15

Ռուսերենի ազդեցությունը կրելով, անվանումը ստացել է «օվ» վերջավորությունը:

Օրինակ.

տապան բալասան
ջքնաւորով
վախջանէ զին ար-
ութուն արգումանեան
1863 ամի

Այժմ էլ գոյատեւում է այս անվանումը: Եզնավորյան Լորիս (ծնվել է 1936 թ. դիրիժոր կոմպոզիտոր (տե՛ս, Կենսագրական բառարան, հատոր Բ, էջ 257):

Կրասիլնիկեանց. Ռուսերեն Կրասիլնիկ բառն է, որ նշանակում է ներկարարական արհեստանոցում կտորեղեն կամ թել ներկող: Եվ բառն ինքը հուշում է, որ այս արհեստով զբաղվողները կապված են եղել ռուսական միջավայրի հետ, որտեղից ձեռք էին բերում ներկ: Այս անունով կոչվող

գերդաստանի գերեզմանոցում պահպանվող գերեզմանաքարերի արձանագրություններն այս մասին ասում են.

Այս է տապան Անթառամին
դուստր Մկրտչի կրասիլնիկենց
որ է կողակից Յարութունի
Պետրոսեան Աղամալեանցին
վախճ 1826 ամի 21 ամաց

Սարգիս Մկրտչեան կրասիլնիկեան
վախճանվեց 1892 ամի սեպտեմբերի 6-ին
եօթանասնամեայ հասակում

Անձնանունների ու գերդաստանների անուններն այն հիմնական միջոցներն են, որոնցով իրարից զատվում են առանձին մարդիկ ու գերդաստաններ մյուսներից: Որոշ դեպքերում նույնիսկ կցվում են մականուններ: Եթե լավ ուշադրություն դարձնենք, կնկատենք, որ հատուկ անունների հիմնական մասը կազմված է հասարակ գոյականներից: Օրինակ՝ «Անդրի» անձնանունը հունարեն նշանակում է արծառ: Այս փոխառնված անդրի հասարակ գոյականը հայերը գործածել են որպես հատուկ անուն: Օրինակ՝ Ֆարսյան Անդրի Իվանի (1898-1961 թթ., Շուշիի շրջան, Կանաչ թաղ): Նշված անձնանվան «ի» ձայնավորը սղվելով, բառը ստացել է յան վերջածանցը եւ շրջանառության մեջ մտել որպես ազգանուն: Օրինակ՝ Անդրյան ժամ Սերգեյի, ծնված 1926թ: 60-ական թթ. զբաղեցրել է ԼՂ մարզգործկոմի կուլտուրայի բաժնի վարիչի պաշտոնը:

Ինչպես տեսնում ենք, յուրաքանչյուր հատուկ անուն մի բառ է, որն օժտված է հասարակ անվան նշանակությամբ: Եվ այդ բառերի մի մասը գործածվել է միայն որպես մականուն, ապա՝ հատուկ անուն ու ազգանուն:

Ձուտ հայկական անուններից բացի ունենք մի շարք օտարահունչ անուններ Շուշիի 18-19-րդ դդ. հայկական գերեզմանատների շիրմաքարերի արձանագրություններում: Համոզվելու համար ներկայացնենք դրանց ծագումնաբանությունը: Եթե անունը հայերենով որեւէ իմաստ է տալիս, նշանակում է տվյալ անունը հայկական է, իսկ եթե ոչ՝ օտար է:

Շահնազար. Բարդ բառ է՝ առաջացած պարսկերեն շահ (թագավոր իմաստով) եւ արաբերեն նազար (հայացք) բառերից. այն անձնավորությունն է ցույց տրվում, որին ուղղված է շահի հայացքը: «Շահնազար» բարդ բառը, որպես հասարակ գոյական, շրջանառության մեջ է մտել 16-րդ

դարում: Այս բառի մասին հնագույն հիշատակությունը 1574 թվականից է (Կարապետ Եպիսկոպոս Դոփեանք 120):

Արցախում՝ Վարանդայի մելիք Զուսեհինի որդուն էին կոչել «շահնագար», քանզի նրան է ուղղված եղել պարսից շահի հայացքը: Այս հասարակ գոյականը դարձել է հատուկ անուն եւ Վարանդայի մելիք է նշանակվել Նազիր շահի հրամանագրով «Շահնագար» հատուկ անունով: Անվանն ավելանալով -եան վերջավորությունը, նշանակել է հայրանուն: Օրինակ՝ Մելիք Զուսեհին Շահնագարեան: Նույն հատուկ անվանն ավելանալով -եանց ածանցը՝ նշանակել է գերդաստան: Օրինակ՝ Թագուհի խանում, կինը Զակոբ աղա Շահնագարեանցի, առնաբարբար Յակով աղա (Զակոբ աղա) Ղահրամանբեկեան մելիք Շահնագարեանց:

Այս հատուկ անվանը գերդաստանի իմաստ տվող -եանց վերջածանցը փոխվելով -յան-ով, հատուկ անունը շրջանառության մեջ է մտցվել որպես ազգանուն: Օրինակ՝ Շահնագարյան Նիկոլայ Սամսոնի, 1959-62 թթ. եղել է կոմկուսի ԼԴ մարզկոմի առաջին քարտուղար:

Կրելով ռուսերենի ազդեցությունը՝ ազգանունը գրվել է -ов, -ова վերջավորություններով, որոնք պահպանվում են:

Օրինակ՝ Մելիք Շահնագարով Աշոտ Ջարեւիչ (Ջարեւի), Մելիք Շահնագարովա Ելենա:

Չիլինգար. - Արիեստ նշանակող պարսկերեն բառ է, որ նշանակում է փականագործ՝ մասնագետ-արհեստավոր, որը հաստոցի վրա մետաղից, էբոնիտից, փայտից դետալներ է պատրաստում: Արիեստ նշանակող այս հասարակ գոյականը կցվել է անձնանուններին՝ մյուս համանուններից տարբերելու համար:

Օրինակ՝ չիլինկար, ուստա Քեասի՛:

Նույն չիլինգար (կար) հասարակ գոյականը ստանալով - ենց (բարբառի ազդեցությամբ՝ -անց) ածանցը ցույց է տվել կոնկրետ գերդաստան:

Այս է տապան Չիլինկարենց
Դանիէլին կին լուսաՅոգի խանումին

Այս է տապան չիլինկարանց
յարութիւնի կին
լուսաՅոգի Թագուհուն
1879 ամի

Յետագայում նույն չիլինկար բառը ստանալով -յան վերջածանց, դարձել է ազգանուն նշանակող հատուկ անուն: Օրինակ՝ Չիլինգարյան: Կրելով ռուսերենի ազդեցությունը -յան վերջածանցը փոխվել է «ով»-ի: Օրինակ՝ Չիլինգարով Արտուր:

Նույն փականագործ նշանակող ռուսերեն «токар» բառից կազմվել է *Токарев* ազգանունը ստանալով -ев վերջածանցը:

Օրինակ՝ Токарев Федор Васильевич, советский конструктор автоматического оружия, Герой Соцтруда, создал ручной пулемет М-Т, пистолет ТТ, самозарядную винтовку, СВТ.

Գործող է նաեւ հայերեն տարբերակը՝ խառատ- Դմիտրի Խառատյան: ԽՍՀՄ վաստակավոր դերասան, ՌՖ ժող. դերասան:

Александра Дмитриевна Харатьян - дочь Д.Харатьяна Дмитрий Вадимович Харатьян - Народный артист Российской Федерации.

Չիլավ -սանձ, որ հազցվում է ձիու գլխին: Մարդու կողմից հիմնականում նրանով է կառավարվում ձին: Այն կարվում է 2 սմ լայնություն ունեցող դաբաղած կաշվե կտորներից: Չիլավ պատրաստող արհեստավորը կոչվում էր ջիլավչի: Մեծ թվով ջիլավչիներ ունեցող գերդաստանը կոչվել է Չիլավենց:

Այս է ՏԱՊԱՆ ՃԼԱՎԱՆՅ ՊՈՂՈՍԻ ՈՐԴԻ
ԼՈՒՍԱՅՈԳԻ ՄԱՆԿԱՍԱՐԻՆ 1837 ԱՄԻ

Գերդաստան նշանակող «Չիլավենց» հատուկ անվան -ենց վերջածանցը փոխվել է -յան-ով ու կազմել նոր՝ Չիլավյան հատուկ գոյական՝ ազգանուն իմաստով:

Այս է տապան
Ավետիս Աբրահամի
Չալավյան 1865-1918

Տերտեր. -հոգեւորական: Կրելով Ղարաբաղի բարբառի ազդեցությունը, գործածական է նաեւ «դեր» բառը: Օրինակ՝ դեր Մուքի (Միքայել), դեր Ներսես: Նույն բարբառային ձեւին ավելանալով -ունց ածանցը ցույց է տվել պատկանելը՝ միաժամանակ դառնալով մանրատեղանուն նշանակող հատուկ գոյական: Օրինակ՝ «Դերունց ծոր» (մանրատեղանուն Շուշիի շրջանի Բերդածոր գյուղի «Մեծ հարթ» տեղամասում):

Իսկ զբաղմունք նշանակող տերտեր հասարակ գոյականը, ստանալով -եանց ածանց, դարձել է հատուկ անուն նշանակող գոյական՝ ազգանուն:

Օրինակ՝

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՆԱՆԱՌՆ ՈՐ Է ԿՈՂԱԿԻՑ
ՏԵՐ ԳՐԻԳՈՐԻՆ ՏԵՐՏԵՐԵԱՆՑ
ԹՆ 1852 ԻՆ

Ժամանակի ընթացքում - եանց ածանցը ուղղագրական փոփոխության ենթարկվելով, սկսել է գործածվել -յան ձևով, որը եւ պահպանվում է: Օրինակ՝ Տերտերյան: Կրելով արաբերենի ազդեցությունը՝ Մերձավոր Արեւելքում պահպանվել ու այժմ էլ հարատևում է ազգանվան նույն իմաստն արտահայտող «Քեշիշյան» ձևը: Օրինակ՝ Քեշիշյան Ջաքար Յակոբի (Տեր Արսեն), ծնված 1968 թ. Լիբանանի Այնճար ավանում, Շուշիի պատվավոր քաղաքացի, «Վարանդա» մանկապատանեկան երգչախմբի ղեկավար, հայտնի շվիհար:

Նույն իմաստն ունի, նույն եղանակով էլ առաջացել է ռուսերեն Պոպով ազգանունը: Օրինակ՝ Попов Александр Степанович (1859-1905/06), русский физик, изобретатель радио (см. СЭС, ст. 1051, Москва, 1990г.):

Խոյլունց. - Ազգանուն է կազմված խոյ տեղանունից (քաղաք Արեւմտյան Յայաստանում)- «լ» ձայնեղ բաղաձայնից, որը պահպանվել է պարսկերենի - լի եւ -ունց պատկանելություն ցույց տվող ածանցներից: Նախ գործնական է եղել «խոյիցի» տարբերակը, որը անձնանվանը կցվելու դեպքում ցույց է տվել նախ՝ անձնավորության որտեղացի լինելը, ապա հնարավորություն է տվել նրան տարբերել համանուններից.

այսմ տապանի իտինի մարտին
խոյիցի դազարի որդի ավագին
ովոր հարգայ ասի ա՛ծ ողորմին
վախճանեաց 1870 ամի օգ՛ս 7ին

Ինչպես նկատում ենք, առաջին արձանագրության երկրորդ տողում -եցի ածանցի փոխարեն գործածված է բարբառային -իցի ձևը: Ըստ արձանագրությունների միաժամանակ գործածական են եղել «խոյիցի» եւ «խոյլի» ձևերը, որոնք պարսկերեն ու հայերեն արտահայտում են նույն իմաստը՝ կոնկրետ անձնավորության որտեղացի լինելը (խոյլի Յովսեփ, խոյիցի Ղազար):

Ժամանակի ընթացքում հատուկ անվան տեղ ցույց տվող բաղադրիչ (կապակցություն) հանդիսացող «խոյլի» բառին ավելացվել-կցվել է -ունց ածանցը եւ գործածվել գերդաստանի անուն նշանակող իմաստով՝ պահպանելով պարսկերենի տեղ ցույց տվող -լի ածանցի «լ» ձայնեղ բաղաձայնը: Այս երեւույթը եւս պարզ նկատվում է վերը նշված երկրորդ արձանագրության երկրորդ տողերում:

Գերդաստանի անուն նշանակող «խոյլունց» հատուկ անունն այժմ գործածվում է նաեւ որպես ազգանուն եւ հիմնականում պահպանվում է Ջանգեզուրում: Օրինակ՝ խոյլունց Միքայել (Միշա), ապրում է Գորիսում:

Թարխան. - Արաբերեն, պարսկերեն բառ է, որ նշանակում է չորաթան, իսկ պատրաստող ու վաճառքով զբաղվողը կոչվում էր թարխանչի (տես, Ղազարյան Ռ.Ս., Միջին գրական հայերենի բառապաշարը, էջ 27, Երեւան, 2001թ.):

Այս հասարակ գոյականը անհայտ ժամանակվանից հայերը գործածել են որպես հատուկ անուն եւ այժմ էլ գոյություն ունի Շուշիում: Օրինակ՝ Առստամյան Թարխան Առուստամի, ծնված 1926 թ., մինչեւ 1970 թ. քաղաքային շուկայի հարեւանությամբ գործող արհեստանոցներից մեկում թիթեղագործ էր, այժմ՝ թոշակառու է:

Թարխան հատուկ անունը, ստանալով -եմց ածանցը, ցույց է տվել պատկանելություն եւ տեղ: Օրինակ՝ Թարխանեմց երեխաները, ընտանիքը, թաղամասը: Նույն հատուկ անունը ստացել է -եանց ածանցը եւ գործածվել որպես հատուկ անուն՝ ազգանուն արտահայտելու իմաստով.

Հանգիստ Հայրապետ ԲԵԿ Թարխանեանցի
վախճանեալ է 1899 թ. 10յուլիսի 24 հասակում՝

Հանգիստ Սանդուխտի որ ԵԿԻՆ Հայրապետ ԲԵԿ
Թարխանեանցին վախճանեալ է 1898 թ. 12
28 սեպտեմբերի 61 հասակում՝

Կրելով ռուսերենի ազդեցությունը, ստացել է -օս վերջավորությունը եւ գործածվում է նաեւ ռուսերեն տարբերակով.

Այս է հանգիստ միջալ
Հայրապետին, որ է որդի
պրապորշչիկ Առուստամ ԲԵԿ
Թարխանուլին, որք հանդիբեք տաք
ողորմին 1824 КАРАПЕТЪ ТАРХАНОВЪ

Քարամ. - Արաբերեն բառ է, որ նշանակում է ազնվություն: Որպես արական եւ իգական անձնանուն, Մերձավոր Արեւելքում գործածվել է 1400-ական թվականներից: Օրինակ՝ Քարամ, կինն՝ Սահակ քահանայի: Քարամ (Քարիմ), ծերունի էր, մի Մաշտոց էլ գրել տվեց եւ նվիրեց Գավազ գյուղի եկեղեցուն (տե՛ս, Յ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, էջ 217, Երեւան, 1962թ.):

Այս անձնանունը ստանալով -եանց ածանցը նշանակել է հայրանուն, իսկ -եան+ց նշանակել է ազգանուն, իսկ ածանցի ու ծայնավորի սղման դեպքում՝ գերդաստան կամ թաղամաս:

Օրինակ՝ ՉԱՔԱՐԻԱ ՄԵԼԻՔ ՔԱՐԱՄԵԱՆՑ
1879-1903

Ազգանունն այժմ գործածվում է -յան ածանցով:

Թավրիզյան(ով) .- Անունը ստացել է պարսկական Թավրիզ քաղաքի անունից, որը պարսկական Ատրպատականի մայրաքաղաքն է: Սկզբում ասվում էր Թավրիզխաթուն: Գործածվել սկսել է ժե (15-րդ) դարից: Վերջին հիշատակությունը 1713 թվականից է (տե՛ս, Յ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. ք., էջ 288, Երեւան, 1946թ.):

Թավրիզ անվանն ավելանալով -յան ածանցը, քաղաքի անունը դարձել է ազգանուն: Օրինակ՝

*Հրեզգիստ շահուկի որ է կողակից
աճատուր գափիօվի դուստր Հաթամ
Թավրիզովի 1883 ամի փետրի 23*

*Աստ ամփոփուած է մարմին նուբար Հաթամեան
Թավրիզովի որը ճնուեց 1814 թ վախճանուեց
1899 85 տարեկան Հասակում*

Ինչպես վկայում է երկրորդ արձանագրությունը, կրելով ռուսերենի ազդեցությունը -յան ածանցը դարձել է -ով:

Չերքեզ. - Ժողովուրդ Կարաչանվո -չերքեզական ինքնավար օկրուգում: 16-17-րդ դարերում հաճախակի են Հյուսիսային Կովկասի լեռնականները կատարել ասպատակություններ դեպի Արցախ: Նրանց թվում եղել են նաեւ չերքեզներ: Արցախում այդ գոյականը սկսել են գործածվել որպես հատուկ անուն՝ անվանակոչելով արու զավակներին: Չերքեզ հա-

տուկ անունը Արցախում տարածված է եղել հիմնականում 18-19-րդ դարերում, մասամբ էլ 20-րդ դարի առաջին կեսին: Չերքեզ հատուկ գոյականը ստանալով -եանց ածանցը, բառը գործածվել է գերդաստան նշանակող իմաստով: Օրինակ՝

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՊՈՏՊՈՐՈՒՏՉԻԿ
ՊԵՏՐՈՍԻՔԵԿԻ ՉԵՐՔԷԶԵԱՆՑ
ՎԱԽԵ 27 ԻՆ ՓԵՏՐՎԱՐԻ 1874 ԱՄԻ
ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏԻԿԻՆ ԱՆՆԱ
ՉԵՐՔԷԶԵԱՆԻ. ՎԱԽԵԱՆՎԵՑ 7 ԻՆ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1909Թ. 80 ԱՄԵԱՅ ՀԱՍԱԿՈՒՄ

1. փառոխ - պարս. փարրուխ, փարրուխ շահ- երջանիկ (տե՛ս, Յ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. ե., էջ 192, Երեւան, 1962թ.):

2. փանահ - ապավեն (ալլահա փանահ), (տե՛ս, Յ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. ե., էջ 184, Երեւան, 1962թ.):

3. փահլեւան - պարս. (քաջ ու կորովի), (թուրք. ըմբիշ):

4. Քալաշ- թուրքերեն՝ kalas (քաջ), հնչվում է քեալաշ (տե՛ս, Յ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. ե., էջ 213, Երեւան, 1962թ.):

5. Քամիլ- կատարյալ, իմաստուն, խելահաս (տե՛ս, Յ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. ե., էջ 215, Երեւան, 1962թ.):

6. բուրջ (չ)- Քաղաքի կամ բերդապարսպի մեջ շինված աշտարակ՝ որպես ռազմական դիրք (տե՛ս, Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, էջ 210, Երեւան, 1976թ.): Նշված վայրին մոտիկ կամ կից տուն ունեցողին իր համանուններից տարբերելու համար անվանը կցել են «բուրջ» բառը, նրան ավելացնելով -ին մասնիկը (բուրջ+ին): Օրինակ՝ բուրջին Պետրոսը ասելով հասկացել են տեղամասի բուրջում ապրող Պետրոսը: Ժամանակի ընթացքում հասարակ գոյական «բուրջ» բառին ավելացել է -եանց (-անց) ածանցը, որ դարձել է Բուրջեանց (անց)՝ գերդաստանի անուն, ապա՝ ազգանուն իմաստով: Օրինակ՝ Անամիա Բուրջիանց, Միսկին Բուրջի եւ այլն: Գերեզմանատանն ի հայտ եկած արձանագրությունը ավելի կոնկրետ օրինակ է, որն ասում է.

Հանգիստ Բաբաջանի
Պողոսեան Բուրջիեանց ծնեալ է
1832 թի վախճանեալ է 1899 թի

7. Խոջա.- նշանակում էր հայ վաճառական 16-18-րդ դդ. (նույն տեղում, էջ 595):

Խոջա Փանոս Քալանթար՝ մեծ հայ վաճառական, (Լեո, Խոջայական կապիտալ, I, էջ 85, պետիրատ, Երևան, 1934թ.):

ժամանակի ընթացքում Խոջա մականունը ստանալով -յաս վերջածանցը՝ դարձել է հատուկ անուն՝ ազգանուն նշանակությամբ: Օրինակ՝ Խոջայան:

Կրելով ռուսերենի ազդեցությունը, -յան վերջածանցը փոխվել է - ԵՅ ածանցի եւ գործածական է Ходжаев տարբերակով:

Ղալա.- պարսկերեն բառ է, որ նշանակում է բացօթյա փայտաշեն փակ տեղ անասունների համար, նաեւ քարաշեն կառույց-ամրոց է, բերդապարիսպ, տեղ ցույց տվող հասարակ գոյական: «Ղալա» հասարակ գոյականը, որպես մականուն, կցել են մարդու անվանը՝ համանուններից տարբերելու նպատակով: Ըստ բանավոր տեղեկությունների, Ղարաբաղում առաջին անգամ որպես մականուն ստացել է Զալալյանների սերունդ Սարգիսը: Նրան Ղալա, Ղլցե Սարգիս են կոչել տնեցիներն ու գանձասարեցի համագյուղացիները: Երբ Շուշիի թեմական դպրոցից որեւէ առիթով տուն էր գնում, ասում էին՝ Ղալան եկավ, Ղլցեն եկավ:

Այսպես: Ավարտելով Շուշիի հոգեւոր թեմական դպրոցը, Սարգիս Տեր հայրը 1810թ. ծառայության է անցել Գանձասարի վանքում: Հաշվի առնելով նրա շուշեցի լինելը, անվանը կցել են Ղալա բառը, գործածում էին անձնանունից առանձին, դարձյալ նկատի ունենալով Տեր Սարգիսին:

Առկա է երկրորդ տարբերակ եւս, որը վկայում է, որ Ղալա եւ բեկ հասարակ գոյականները միասին կազմել են մեկ բառ եւ շրջանառության մեջ մտել որպես հատուկ անուն: Գանձասարից ոչ հեռու կա մանրատեղանուն, որ կոչվում է «Ղլեն ձոր»: Այստեղ արդեն «ղալա» հասարակ գոյականը գործածվում է որպես հատուկ անուն: Նույնը վկայում է նաեւ տիկնոջ՝ Ամառնանի շիրմաքարի 4 տողից բաղկացած արձանագրությունը, որն ասում է.

Այս է տապան խաչակիր ավագ
քահանա Ղալաբեկեանցին վախճ. փետր 4-ին
1905թ. 96 ամաց

Այս անունը նշված է նաեւ նրա տիկնոջ՝ գանձասարեցի Ապրեսբեկ Հասան Զալալյանցի աղջկա՝ Ամառնանի շիրմաքարի արձանագրության տողերում (Ղ.Ղ. Շուշի, ռուսերեն, էջ 316, Ստեփանակերտ, 2008թ.):

Հանգիստ Ամառնանի Ապրեսբեկեան Հասան
Զալալեանց Գանձասարեցվոյ որէ կին խաչակիր
խաչատուր ավագ Քահանայի Ղալաբեկեանց վախճ ի
1898 ամի ի հասակի 68 ամաց

Ղալաբեկեանց ազգանունը, որ միաժամանակ գերդաստանի անուն էր, հետագայում ենթարկվել է փոփոխության ու դարձել գրությամբ նոր ազգանուն: Բառարմատին (ղալա) ավելացել է -յան՝ դուրս մղելով -բեկեանց ածանցը: Շրջանառության մեջ է մտել ազգանուն նշանակող իմաստով:

Օրինակ՝ Ղալայան Լավրենտ Բահաթուրի, ծնված 1938թ., Արցախի պետհամալսարանի նկարչության ֆակուլտետի դեկան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատրաստվում ենք հետագայում ծավալուն գրքի տեսքով ներկայացնել տոհմանունների ծագումնաբանությունն Արցախի տարածքում արհեստի ազդեցությամբ առայժմ սահմանափակվում ենք այսքանով:

ՈւՆԱՑԱԾ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Գաղտնիք չէ, որ Ադրբեջանի մամուլի, ռադիոյի հիմնական թեման հայն է, Հայաստանն ու Ղարաբաղը: Նույնիսկ հանգիստ չեն տալիս 1915 թ. Ցեղասպանությունից հազիվ փրկված ու օտար հողերում հանգրվանածներին, իսկ ամենաշատը՝ ամերիկահայերին:

Ադրբեջանի ռադիոյի ծրագիրն այնպես է կազմված, որ համարյա ամեն օր առանձին թեմայով տարբեր ժամերի հաղորդում է լինում՝ նվիրված հայերին, սակայն ավելի շատ՝ Ղարաբաղին: Երեւի մեզ շատ են սիրում: Եվ համարյա միշտ հանդես են գալիս Բաքվի պետական համալսարանի պատմության ամբիոնի դասախոսները: Մի ամբիոնի, որի վարիչը տասնյակ տարիներ անփոփոխ եղել է ղարաբաղցի (բերդաձորցի) պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Պետրոս Բոգդանի Մովսիսյանը (ադրբեջանցիները սիրում են ասել Մոսեսով), որը մի քանի տասնյակ օձի ճտեր է տաքացրել ու սնել: Սույն թվականի հոկտեմբերին (2005թ.) ստուդիա էին հրավիրվել նշված համալսարանի դասախոսներ, պատմական գիտությունների դոկտոր Մամեդովն ու ավագ դասախոս Ռովշան Հասանովը: Իրենց ելույթներում շատ արտառոց խոսքեր հնչեցին մեր հասցեին, բայց եւայնպես, ճշմարտություն էլ ասացին (չգիտեմ, գիտակցաբար, թե սխալվել ու ճիշտն են ասել): Հենց նրանց ասած ճշմարտությունն է՝ աված ռադիոյով, որ ներկայացնում են ընթերցողի ուշադրությանը:

Ղարաբաղի մասին խոսելիս ադրբեջանցի դասախոսն ասաց, որ հողերը 1918 թ. խլվել են հայերից: Թարգմանաբար մեջբերում են նրանց ելույթից մի հատված. «Տարածաշրջանը հայերից վերցնող Օսմանյան Թուրքիայի բանակի կերպարն ընդհանրացնող թուրք զինվորի (ասկյար) արձանը պետք է կանգնեցնել Բաքու, Շամախի քաղաքներում, իսկ Շուշիում՝ Ղարաբաղն ազատագրելուց հետո»: Ըստ Մամեդովի, հուշարձանների բացումը պետք է լինի մինչեւ 2005թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսները: Այսինքն՝ պետք է հանդիսավոր կերպով նշվի Ղարաբաղը, Շամախին ու Բաքուն Օսմանյան Թուրքիայի բանակի ուժերով հայերից ազատելը: Եվ այդ հուշարձանների բացման հանդիսավոր արարողությանը պետք է հատուկ պատվիրակություն հրավիրվի Թուրքիայից:

Ադրբեջանցի պատմաբանն իր ելույթի վերջում ասաց. «Հուշարձանի կանգնեցմամբ մենք՝ ադրբեջանցիներս արտահայտած կլինենք մեր երախտագիտությունը թուրք զինվորին, որն այս հողերը հայերից խլեց զենքի ուժով ու տվեց մեզ: Չմոռանանք, որ Շամախին ու Բաքուն էլ են նրանք ազատել հայերից ու դաշնակ Ստ. Շահումյանից»:

Հոկտեմբերի 11-ին հնչած հաղորդման ժամանակ հաստատվեց, որ ադրբեջանցիների հանրապետությունը հիմնված է հայկական հողերի վրա: Եվ այսքանից հետո էլ Ադրբեջանի իշխանավորներն ու իշխանամետ մամուլի աշխատողները Եվրախորհուրդի, Յունեսկոյի, ՄԱԿ-ի նիստերում ու մի շարք մեծ ու փոքր հանդիպումներում պիտի շարունակեն աղմկել, որ իբր Ղարաբաղն իրենցն է, կարծելով, թե մենք հաշտվել ենք ու մոռացել մեր կորցրած տարածքները:


Հավատանք, որ նման խոստովանություն կլինի նաեւ պաշտոնական մակարդակով: Չէ՞ որ շատ պաշտոնական հայտարարություններ կատարվում են անհատական հեղինակների խելացի առաջարկությունների հիման վրա:

11.03.2005թ.

ԵՎ ՏԱՍՆԱՊԵՏՈՒ ՅՐԱՄԱՅԵՑ

1905թ. փետրվարի 6-ին Բաքվից սկիզբ էր առել հայ-թուրքական ընդհարումը Կովկասում: Նրա արյունաշաղախ գետը դուրս էր եկել ափերից եւ տարածվում էր: Մի հորդ վտակ էլ հասել էր Շուշի: Հայի նախկին սովորությամբ՝ ունեցվածքն ու սեփական տարածքները հենց այնպես «նվիրելը» կորցնում էր իր ուժը: Հայը սկսեց գալ այն համոզմունքին, որ պետք է ցույց տալ եւ ապացուցել, որ ինքն իրավունք ունի եւ կարող է պաշտպանվել ու պահել իր երկիրը:

Բաքվի դեպքերը, որ սկսվել էին 1905թ. փետրվարի 6-ին, ստիպեցին, ու շուշեցիները գրեմ մի լոգունգ-կոչ՝ ժողովրդին: Այն գրված է քաղաքի հյուսիսային գերեզմանատան շիրմաքարերից մեկի երեսին՝ այսպես. քանդակված են խաչ ու հրացան եւ աղեղնածեւ գրված. «Սա է մեր կիսնքը վտանկից պաշտպանողը Ա.» (Տ. Գ. Արությունյան, Մուսի: Նովոբյալեննայե իստորիկեսկե ռադնիսի, իզդ. Տոնա, 2008, էտ. 291).



Սկսվեց հայդուկյան շարժումը, պայքարի մտան բոլորը: Մահվան եւ կենաց կռիվ էր սկսվում: Ավելի ճիշտ՝ հավատի եւ խաչի մնալ-չմնալու կռիվ: Մեծ ու փոքր ելան ոտքի: Կազմվում էին ջոկատներ, ստանում հանձնարարություն, շարժվում դեպի պաշտպանական դիրքեր: Պաշտպանական կարեւոր, գուցե ամենակարեւոր դիրքը «Փոստի փողոցի» հյուսիս-արեւմտյան մասն էր, որ ձգվում էր մինչեւ Ղազանչեցոց եկեղեցին, իր մեջ առնելով Ագուլեցոց եկեղեցին, մի շարք արհեստանոցներ ու Ագուլեցոց եկեղեցապատկան երկու տասնյակից ավելի խանութներ, որ գտնվում էին հայ-թուրքական թաղամասերի սահմանի վրա:

Դիրքը վերահսկում ու պաշտպանությունն իրականացնում էր հայդուկների մի տասնյակ, որի հրամանատարն էր քսանհինգամյա Ասլան Աղաբաբյանը:

Թուրքերի մի մեծ զինված ջոկատ դիրքավորվել էր հենց Ագուլեցոց եկեղեցու երկրորդ հարկում ու կրակի տակ առել Ղազանչեցոց եկեղեցու շրջակայքը, որտեղ գտնվում էր հայերի մեծամասնությունը:

Եւս մեկ «քայլ», եւ թուրքերը կհայտնվեին Ղազանչեցոց եկեղեցում ու կործանումը կլիներ անխուսափելի:

Այս պահը Ա-Դո-ն ներկայացնում է այսպես. «Հայերի մի զինված ջոկատ ուշ երեկոյան անցավ հակահարձակման Ակուլեանց մայր եկեղեցու ուղղությամբ: Թուրքերը հրդեհեցին եկեղեցին, մեծ զոհեր տալով փախսան»:

Ինչպես նորահայտ արձանագրությունն է վկայում, զինված ջոկատը հայդուկների այն տասնյակն էր, որի տասնապետը Ասլան Աղաբաբյանն էր:

Եվ՝ ընթերցողին ներկայացնել զիշերվա մարտը եկեղեցու համար ավելի լավ, քան պատկերված էր շիրմաքարի կողերին գրված էպիտաֆիայում, ինձ թվում է, անհնար է եւ անիմաստ, քանի որ նրա տողերում ասվում է ամեն ինչ անմնացողը:

Անհրաժեշտ են համարում ընթերցողին ներկայացնել Ա. Աղաբաբյանի շիրմաքարի արձանագրությունը, որն ասում է.

Ուր գնացիր փառադրեցի ջան	Փափակտ թերի մնացաւ
չես մոռացել յախտեան	եղաւ մեզի սրտացաւ
Ղուշի մէջ կուեսիր	Օրիորտները միաձայն
Աւաղ մեզնից Հեռացիր	կանչում են թեզ ազրեր՝ ջան
Ակուլեայ մայր փամուռը էիր	նշանաճտ վիզը ճռաճ
Տանապետ ու քաջընտիր	լաւէն աշքերն է ուռաճ
Քաջ կուռում էիր Տու Հատուկ	չըարժանացաւ պսակիտ
Փափակտ թերի Հայտուկ	ճողոններից ամաշելով
Հասակտ քսանկինգ ամայ	կանչում էր թեզ ողբաւով
Աչգանունտ Աղաբաբեանց	խընայե ինձ ով անգին
Չատերը թողիր թեզ փափագ	Հողը մտնենք միապին
Սիշերուն սուրբ նախառակ	

114 շատ վաշեր հայրից ընկան
միու էլ ընկար քաջ Ասլան
ՈՄանք վինևոր են դժգոհ
իսկ դուք եղաք ազգի զոհ
եղբայրք ունիս փաջընտիր
Արսենն է վրէժխնդիր
կըներապէ տըխուր ողբալով
ճնողանցս սիրտ տալով
երբ վինևորուժիւնից եկար
Թակաւորի մէջը ընկար
մտար ազգային լճի տակ
Յանկարճ կպաւ տաք գնդակ

չի խնայեց տխուր Հորտ
Ոչ էլ թուժաս եղբորտ
կողորեց քեզ մահը գաժ
չընշար Հողիտ: արժան
Թուժաս եղբայրք երբ եկաւ
լալով շիրիմիտ ընկաւ
Արիւն էր վազում աջքերից
եղբայր կուզէր փաջերից
երանի այն նախատակին
Հասնի այլան պսակին :

Ինչպես տեսնում ենք, հայդուկ Ասլանը գիտակցված զոհվել է հանուն հայ ազգի, Քրիստոսի սուրբ խաչի եւ այն աղջկա, որին սիրում էր:

ԲԱՔՎՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՇԱՅԱՐԿԵԼ ՇՈՒՇԻԻ ԹԵՄԱՆ

Գրեթե միաժամանակ ծանոթացա Բաքվի «Նովոյե վրեմյա» (23.04.04) եւ «Ձերկալո» (25.06.04) թերթերում հրապարակված երկու հոդվածների: Դրանցում Լեռնային Ղարաբաղը հերթական անգամ մեղադրվում է մահմեդական հուշարձանների ավերման, ինչպես նաեւ Շուշիի մզկիթը թանգարան դարձնելու եւ հետագայում այն արտասահմանցիներից (թե կոնկրետ ում՝ հոդվածում նշված չէ) հանձնելու մտադրության մեջ:

Ուրախ կլինեի, եթե Ադրբեջանի իրավասության տակ գտնվող հայկական որեւէ բնակավայրում վերականգնվեր հայկական որեւէ եկեղեցի կամ հոգեւոր մեկ այլ օբյեկտ՝ անկախ այն բանից, թե հետագայում այն ում կհանձնվի: Գլխավորն այն է, որ մեր անցյալի մասին պատմող ճարտարապետական կոթողը պահպանվի: Ինչ վերաբերում է Շուշիի մզկիթին, ապա այն, ինչպես հայտնի է, պարսկական մշակույթի հուշարձան է, ինչի մասին միանշանակ խոսում են արեւելյան բազմաթիվ աղբյուրներ: Ուզում եմ նշել, որ նույնիսկ թե՛ ռազմագործողությունների ժամանակ Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարության կողմից ստեղծվել էր հատուկ ստորաբաժանում, որի առջեւ դրված էր Շուշիի բոլոր ճարտարապետական հուշարձանները, այդ թվում՝ մզկիթը, որպես պատմական արժեք անվնաս պահպանվի:

«Չայ բռնագավթիչների բարբարոսությունը» հոդվածի հեղինակ ս. Կուլիեւը, այսպես կոչված Ղարաբաղի ազատագրության կազմակերպության միջոցով հրահրելով ժողովրդին, կոչ է անում. «Մենք չպետք է հույս դնենք ո՛չ Եվրախորհրդարանի, ո՛չ Եվրամիության, ո՛չ ՄԱԿի եւ նույնիսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ի վրա», եւ պահանջում է ուղքի կանգնել եւ արշավ կազմակերպել դեպի Ղարաբաղ:

Ուզում եմ հարցնել Ն. Կուլիեւին, որը պնդում է, թե, իբր, Շուշիի յուրաքանչյուր անկյուն իր մեջ պահպանում է ադրբեջանական ժողովրդի պատմությունը եւ «այնտեղ հայերին պատկանող ոչինչ չկա»: Ն. Կուլիեւը երբեւէ (լինի դա ռազմագործողությունների ընթացքում, թե հետո) որեւէ առաքելությամբ եղել է, արդյոք, Լեռնային Ղարաբաղի տարածքում: Ես նրան հրավիրում եմ այստեղ՝ սեփական աչքով տեսնելու, թե իրականում ինչպիսին է իրերի վիճակը եւ ինչը ում է պատկանում:

Վերոհիշյալ հողվածներում բարձրացվում է նաև Շուշիի բերդի պատերի ավերման հարցը: Նախ՝ բերդը կառուցվել է ռուսների կողմից՝ մինչև 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը, ինչի մասին ասվել է Ռուսաստանի եւ Պարսկաստանի բանակցությունների ընթացքում (տե՛ս Գրիբոյեդովի մասին ֆիլմը, ինչպես նաև Ն. Ախունդովի «Գարաբաղնամալար» (էջ 264) գիրքը, որտեղ կոնկրետ նշվում է, որ հին պատերի տեղում «հզոր Ռուսական պետությունը («Ամնաի թուսիա դովլաթի» պարսկ.) կառուցել է բերդ»): Հիշեցնեն, որ հյուսիսային պատը երկու տեղում քանդվել է 1960-ական թվականներին՝ ադրբեջանական իշխանությունների կողմից եւ հին հայկական գերեզմանոցի տարածքով անցկացվել է ավտոճանապարհ:

Միաժամանակ ուզում եմ հարցնել Ջանար Կուլիեւին, թե ինքը, արդյոք, տեղյա՞կ է, որ դեռ խաղաղ ժամանակներում կանխամտածված կերպով ավերվում էին Շուշիի քրիստոնեական գերեզմանոցներում տեղադրված գերեզմանաքարերն ու խաչքարերը: Եվ վերջապես՝ ի՞նչ էին մտածում ադրբեջանցիները, երբ բուլղոզերներով երկրի երեսից ջնջում էին Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանի, ինչպես նաև Հադրութի շրջանի արեւմտյան հայկական գյուղերի գերեզմանոցները: Թե՞ արդեն սովոր են ուրիշի աչքի շյուղը տեսնել՝ սեփական աչքի գերանը չնկատելով:

Որպես հետազոտող, որը զբաղվում է պատմա-ճարտարապետական հուշարձանների եւ հին քրիստոնեական գերեզմանոցների արձանագրությունների հավաքմամբ եւ ուսումնասիրությամբ, կարող եմ ի գիտություն հայտնել, որ այսօր իմ ձեռքի տակ կան 1300-ից ավելի արձանագրություններ, որոնք խոսում են Լեռնային Ղարաբաղի տարածքում եւ մասնավորապես Շուշիում հայերի եւ ռուսների անցյալի մասին: Մի՞թե այդ փաստերը կեղծ պատմություն են կամ կեղծ մշակույթ, ինչպես դուք եք պնդում՝ առանց համապատասխան օրինակներ բերելու, որոնք, վստահ եմ, չունենք այն պարզ պատճառով, որ դրանք գոյություն չունեն:

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ՄԵՆՔ ՈՒՆԵԻՆՔ Ի ՍԿՋԲԱՆԵ

Հայ ժողովուրդը դարեր շարունակ գտնվում էր տարբեր բռնակալների լծի տակ: Նա ապրում էր ստրկական վիճակով իր սեփական տան մեջ, հպատակ էր մերթ արյան ծարավ սելջուկին, մերթ՝ ավերիչ թաթար-մոնղոլներին, մերթ՝ բարբարոս թուրքին ու պարսիկին: Կորած էր հայի՝ ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ու մարդկային անկախությունը: Չեն թողել, որ հայը հանգիստ կյանքով ապրի նաև Արցախում: Նրան էլ թալանել են, որդիներին գերեվարել: Արցախցու գերեվարված որդիներից էր Փարրուխ Մինասի Ամիրխանյանը, որ լավ տիրապետելով արաբերենին ու պարսկերենին, դարձել էր պարսից շահի պալատական գրագիրը (միրզա): Պալատական գործերին զուգահեռ նրան հաջողվել է գրել «Թարիխի-սաֆի» (ճշմարիտ պատմություն) գիրքը, որի էջերում հատուկ տեղ ունի 18-րդ դարի Արցախի պատմությունը:

Չնայած արցախահայի ստեղծածը դարեր շարունակ յուրացնում էին օտարները, նա երբեք չէր հուսալքվում ստեղծում ու զարգացնում էր իր արվեստը, արհեստն ու մշակույթը: Սակայն, կարծես ամեն ինչ կողպեքի տակ էր, աշխարհի շատ տեղերում տեղյակ չէին 18-19-րդ դարերի Արցախի ճարտարապետության ու գրականության բնագավառների յուրատեսակ նվաճումներին:

Եկավ ժամանակը, եւ ճշմարտությունն ասպարեզ դուրս ելավ, ինչպես՝ մախաթը պարկից: Առաջին համաշխարհային պատերազմից հետո (1914-1917թթ.) ռուս մտածող եւ տաղանդաշատ բանաստեղծ Վալերի Բրյուսովը Բաքվում, Թիֆլիսում, Երեւանում եւ ուրիշ խոշոր քաղաքներում կարգաց դասախոսություններ հայ միջնադարյան եւ ընդհանրապես, հայ բանաստեղծների ու նրանց ստեղծագործությունների մասին: Շատ ունկնդիրների համար Բրյուսովի մտքերը հայտնագործություն էին, զարմանում էին: Ջարմանում էին, որովհետեւ Եվրոպայում տարածված էր այն գաղափարը, որ իբր հայերը բանաստեղծներ չունեն: Այս գաղափարը հերքել է Վ.Բրյուսովը, որի զեկուցումից մի հատված, որ գրված է «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության» գրքի Ե (V) հատորի 228-րդ էջում, ասում է. «... հայերը ոչ միայն ունեցել են նշանավոր բանաստեղծներ, այլ որ այդ բանաստեղծները գեղարվեստի այդ ճյուղի մեջ առաջնակարգ, երբեմն ղեկավար դեր են կատարել»:

Այդ մասին են վկայում նաեւ Շուշիի հին հայկական գերեզմանատների շիրմաքարերի հարյուրավոր արձանագրություններ՝ գրված բանաստեղծական ոճով: Որպեսզի լոկ խոսքով չլինի, ներկայացնում են երկու արձանագրություն:

ԵՎ ԱՅՍՐ ԶԻՄ ՏԵՍ ՈՎ ԱՆՑԱՎՈՐ	ՄԱՐԴ
ԻՄԻՏ ԱՌ ԵՏԵՍ ԹԷ ԶԻՆՉ ԵՄ ԵՍ	ԱՐԴ
ՄՄԱՆՈՒՇԱԿՍ ՄԱՐՍԵՆՈՎ ՓԱՌԱ	ԶԱՐԴ
ԿԱՊԵԼ ԱՆԿԱՇԿԱՆԴԵԱԼ ԵԼՈՒՈՐ ԶԱՆԳՉԻՄ	ԱՐԴ
ԿՆՈՋՍ ՄՆԱՑԱԿԱՆ ՆՈՅՆ ԶԱԽՈՒՄ	ՈՎԻՆ
ԲԱՐԵՅԱՃԵՏԵՔ ԱՍԵԼ ՈՂՈՐ	ՄԻՆ

Գյավուրի սարի քարհանքում աշխատելիս թուրքի արծակած գնդակից սպանված քարհատ Իվան Դուկասի Տեր-Մկրտիչեանցի շիրմաքարին արձանագրված է.

Անգութ հրացանը թուրք	ավազակին
Ինձնից հավիտեան խլեց իմ	հոգին
Թողեց Քարհատում իմ անշունչ	մարմին
Քառասուն եւ հինգտարոյս	հասակին
1876 ամի 15 մայիսի	

Իսկ 1905-06թթ. Շուշիում հայ-թուրքական ընդհարման ժամանակ ագուլեցոց Սուրբ Աստվածածին եկեղեցին պաշտպանող հայդուկների տասնապետ Ասլան Աղաբաբյանի շիրմաքարին գրված արձանագրությունը, որը ծնողների ու եղբոր աչքերից արյուն ցայտող Արսենի ողբը, օրհորդների եւ վիզը ծռած մշամածի միածայն կանչն է պատկերում, էպիտաֆիա է, բաղկացած 49 տողից:

Եվ բավական է մշել, որ բնիկ շուշեցի Բահաթրյանների գերդաստանի զավակ՝ կոլլեժսկի ասսեսոր Ավետիք Բաբայի Բահաթրյանը գրել է «Յին հայոց տաղաչափական արվեստը» գիրքը, որ լույս է տեսել Շուշիում 1891 թվականին, Միրզաջան Մահտեսի Յակոբեանցի (Չակոբյան) տպարանում: Գիրքը շատ բանաստեղծների համար հանդիսացել է որպես քննական տեսության դասագիրք: Այն գրախոսվել է հայ տաղանդաշատ պոետ Ե. Չարենցի կողմից 1937 թվականին եւ արժանացել մեծ դրվատանքի: Կատա-

րում են մեքքերում գրախոսականից. «Սա է գիրք հանճարեղ եւ զարմանալի՝ գրված լինելով 1890-ական թվականներին մի ինչ-որ անհայտ շուշեցի ուսուցչի ձեռքով...»

Մեր հին եւ նոր տաղաչափական արվեստի հետ կապված բոլոր պորբլեմները շոշափված եւ մասամբ հանճարեղ ինտուիցիայով լուծված են այստեղ. պորբլեմներ, որ սրանից հետո ոչ միայն չեն դրվել ու արծարծվել մեր տեսական գրականության մեջ, այլ մինչեւ օրս չեն էլ հասկացվել:

Այս գիրքը էապես մի զարմանալի հանք է՝ գտնված հանճարեղ բնագրի տեր հեղինակի կողմից, որ, դժբախտաբար, միմիայն բնագրով ցույց է տալիս, մատնանշում է հանքի գոյությունը, մերթ անգամ շոշափում է հանքի անխափան ջղերը, եւ որքան դեռ ընդհանուր կուլտուրա եւ ջանք են հարկավոր, որպեսզի մեր գրականագիտությունը՝ գնալով Բահաթրյանների հետքերով, բաց անի, համակվի եւ օգտագործի մեր հին տաղաչափության հրաշալի հատկությունները:

Ըստ էության՝ մեր նոր գրականագիտությունը (Աբովյանից մինչեւ օրս) ունի ընդամենը երկու ինքնուրույն, միանգամայն անօրինակ, համարյա հանճարեղ դեմք, կամ անուն: Դրանք են՝ Գեւորգ Ախվերդյանը եւ ահավասիկ, այս մոռացված գրքի հեղինակ Ավետիք Բահաթրյանը» (1937թ.):

Ավետիք Բաբայի Բահաթրյանը թաղված է ծննդավայրի՝ Շուշիի հին հայկական գերեզմանատանը, իրենց տոհմական գերեզմանոցում, որտեղ ամփոփված են մտավորականների գերդաստանի ինը հանգուցյալներ: Շիրմաքարերը տեղաշարժ են արված, խաչերը՝ ջարդված: Վնասված են նաեւ արձանագրությունները: Կողք-կողքի են Ա. Բահաթրյանի, նրա մոր՝ Զահավիր Գրիգորի Բահաթրյանի (Չախունյանների սերունդ) եւ իր որդի՝ ռեալական ուսումնարանի աշակերտ Աշոտի շիրմները:

Նրա ջարդված շիրմաքարին կարդացվում է.

Հանգիստ կոլլեժսկի ասսեսոր
Ավետիք բաբայեան Բահաթրեանցի
վախճանեալ 1909 թվին 68 ամաց
Հսկի Շուշի

Ա. Բահաթրյանի որդու, Շուշիի ռեալական ուսումնարանի աշակերտ Աշոտի շիրմաքարին գրված է.

ՇՈՒՇԻԻ ՌՈՒՄԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ԸՍՏ ԿԻՄԱԳՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Մերձավոր Արևելքում պարսկական տիրապետությունը 18-րդ դարի սկզբին սկսել էր անկում ապրել: Ծայրաստիճան ծանր էր տնտեսական վիճակն Անդրկովկասի արևելյան շրջաններում, այդ թվում և Արևելյան Հայաստանում, իրողություն, որի մասին պատմական աղբյուրներում շատ հեղինակներ են նշել:

Խոսելով Իրանի տնտեսական ու քաղաքական վիճակի մասին, պրոֆ Ա. Աբրահամյանն արխիվային փաստաթղթերի և Մ.Ա. Իվանովի (Отчерк истории Ирана) մեկնաբանության հիման վրա գրում է. «Սեֆյան Իրանը սկսած 17-րդ դարի վերջերից, գտնվում էր տնտեսական ու քաղաքական անկման շրջանում, զգալիորեն կրճատվել էր ներքին և արտաքին առևտուրը, ընկել էր քաղաքների տնտեսական դեբը, շրջանառության մեջ նվազել էր դրամը: Դրա գլխավոր պատճառը՝ գյուղացիության և քաղաքի աշխատավորության ծայրահեղ շահագործումն էր ֆեոդալների կողմից, որ ոչ միայն չէր ուղեկցվում արտադրական ուժերի աճման հետ, այլև հասցրել էր գյուղատնտեսության և արհեստների քայքայմանը»: [1]

Նշված իրավիճակը ստիպել և հնարավորություն է տվել, որպեսզի տիրապետության տակ գտնվող ծայրամասերի խանությունները ելք փնտրեն ու ազատվեն ծանր հարկերից, իրենց համար ստեղծեն ինքնավար վիճակ: Կովկասյան տարածաշրջանում շատերի հետ նախկինում պատմական Հայաստանի մաս կազմող Արցախ-Ղարաբաղն էլ սկսեց ձգտել ինքնիշխանության՝ աստիճանաբար կազմելով զինված ջոկատներ:

Պարավերջին Պարսկաստանի դրությունն ավելի է վատանում տնտեսապես, որի հիմնական պատճառը ներսում բռնկված ռազմական ընդհարումներն էին: Ստեղծված վիճակն աշխուժացնում է աստիճանաբար ուժեղացող ռուսական կայսրության հետաքրքրությունը դեպի Կովկաս: Տարածաշրջանի, ժողովրդի հոգեբանությունն ու տրամադրությունն ուսումնասիրելու նպատակով 1715թ. Պետրոս Առաջինի հանձնարարությամբ Անդրկովկաս է ուղարկվում ռուսական դեսպան Վոլինսկին, որը պետք է հատուկ ուշադրությամբ տվյալներ հավաքեր տարածաշրջանում հայերի դիրքի, զբաղեցրած տեղի, դեպի Ռուսաստան ունեցած վերաբերմունքի մասին և ամենագլխավորը՝ տեղեկանար դեպի Պարսկաստան տանող կարևոր ճանապարհների վիճակին:

Այս ավելի էր ոգևորում արցախցիներին: Սկսում են կազմել նոր զինված ջոկատներ՝ կովկասյան լեռնականների հարձակումներից պաշտպանվելու համար:

Իրենց առավել արտոնյալ էին զգում լեզգիները: 1715թ. սկսված ուսումնասիրությունները շարունակվում էին, հավաքված տեղեկություններն ուղարկվում Պետերբուրգ: Սակայն ռազմական օգնություն Ռուսաստանից դեռ չէր ստացվում, չնայած Օսմանյան կայսրության զորամիավորումները շարժվում էին Կովկասի ուղղությամբ: Նման պարագայում գործել էր պետք այնպես, որպեսզի բարձրանա ժողովրդի ոգին ու փնտրվեն պաշտպանության միջոցներ: Սկսվում են կազմակերպվել զինված ջոկատներ, որոնցից մեկն էր Շուշիում տեղակայվածը՝ Ավան Յուզբաշու հրամանատարությամբ գործող ջոկատը, որը համագործակցում էր Եսայի Հասան Ջալալյանի հետ: Ստեղծված իրավիճակում կարելու էր պիտի խաղարկարական բանակի օգնությունը: Չէ՞ որ քրիստոնյա հայերը շրջափակված էին մուսուլմաններով, այն էլ լրիվությամբ թշնամաբար տրամադրված: 1720-ական թթ. հայերն արդեն հասցրել էին Շուշիում կառուցել փոքր ամրոց 700 քմ տարածությամբ, չորս աշտարակներով, որը կոչվում էր Ավան Հարյուրապետի (Յուզբաշի) ամրոց: Ղարաբաղցիների տրամադրությունը կտրուկ փոխվում է, երբ 1723թ., մեծ դժվարություններ հաղթահարելով (լեզգիները փակել էին ճանապարհները), տարածաշրջանում հայտնվում է Ղարաբաղցի առևտրական Իվան Կարապետը: Նա իր հետ բերել էր Պետրոս Առաջինի գրությունը, որում նա խոստանում էր ռազմական օգնություն ուղարկել:

«Հրովարտակ-ձեռնարկ»-ում նշված չի եղել կոնկրետ ժամանակ, գործի և զինամթերքի քանակ: Միայն պարզ նկատվում էր, որ Պետրոս Առաջինը հայ առևտրականներին էր օգնություն խոստանում, որպեսզի վերջիններս շահագրգռված լինեն ու ծավալեն ակտիվ առևտուր Ռուսաստանում: Այդ հրովարտակը 1723թ. հունիսի 3-ին արտգործղեպարտամենտում գաղտնի խորհրդական Դ.Անդրեևիչ Տոլստոյի մասնակցությամբ քննվել է և կայացվել որոշում: Կոլեգիայի որոշումն էր. «Հրովարտակը հաստատել մեծ կնիքով և ուղարկել այն հայ ժողովրդին՝ Իվան Կարապետի միջոցով»: [2]

Այս տեսակ որոշումը պատասխան էր երից Մանկանց վանքի կաթողիկոս Ներսեսի և մի քանի մելիքների ու յուզբաշիների 1723թ. մարտ ամսում գրած այն խնդրագրին, որում ասվում էր. «Վերև Աստված, ներքև դու, քեզա-

ն է ի գատ, ոչ ոք չունենք, զմեզ ազատելոց այս տառապանացս, այլ լեր իբրև զմեծն Սովսես մարգարէ և ազատեաց զմեզ ձեռաց փարավօնի...»: [3]

Լոկ խոստումների հիման վրա սկսվում է մի յուրատեսակ հանրաքվե, որով պիտի իմացվեր ժողովրդի կարծիքը տարածաշրջանը ցարական Ռուսաստանին առանց ռազմական գործողությունների հպատակեցնելու մասին, այն էլ միայն Կասպից ծովի արևմտյան ափին վերջինիս ամրանալուց հետո: Եվ այս միջոցառումը տևեց տարիներ:

Չնայած Անդրկովկասը Ռուսաստանին ոչ ռազմական ճանապարհով միացնելու ծրագիր է մշակվել, ու աշխատանքները սկսվել էին Պետրոս Առաջինի նախաձեռնությամբ, սակայն իրականացվել է Ալեքսանդր Առաջինի օրոք՝ 1805թ. մայիսի 14-ին, Գանձակից (Ելիզավետպոլ) ոչ հեռու, Կուրակ գետի ափին տեղակայված ցարական բանակի ճամբարում (իրամանատար Ցիցիանով) կնքված պայմանագրի համաձայն՝ խանությունը ևս մտել է Ռուսաստանի կազմի մեջ: [4] Նույն թվականին Շուշիում տեղակայվել է N6 սահմանապահ գունդը մայր Լիսանկիչի իրամանատարությամբ: Քաղաքում այն զբաղեցրել է Մեդրեցոց և Գյանջեցոց թաղամասերի միջև ընկած հատվածը և կոչվում էր «Կազարմայի թաղ»: Մեկ տարի հետո, 1806թ. գարնանը, Շուշիից 4կմ հեռավորության վրա գտնվող «Գարա-Գայա» (Սև ժայռ) կոչվող տեղամասում Լիսանկիչը զինված ջոկատով գիշերը շրջապատում է և սպանում Իբրահիմ խանին, կնոջը՝ Թուրա խանուհին ու նրանց հետ ևս 17 հոգու: Հիմնական պատճառը Պարսկաստանի հետ նորից կապ հաստատելու խանի ցանկությունն էր, որի մասին արդեն տեղեկացված էր ռուս իրամանատարը: [5] 1917թ. գունդը Ռուսաստան տեղափոխվելուց հետո, 1920թ. մարտին, դարասկզբի հայ-թուրքական արդեն երկրորդ զինված ընդհարման ժամանակ, հայկական թաղամասերի հետ հրդեհի է մատնվում նաև կազարմայի թաղը: Չորանոցներից ու զինապահեստներից կիսավեր վիճակում առասօր պահպանվում է վառոդի պահեստի կիսավեր շինությունը, որի արևելյան կողմում 1901թ. կառուցվել է Թ.Թամիրյանցի 1000մ³ ջրատարողությամբ ջրամբարը: Գունդը մասնագիտացված ստորաբաժանումներ է ունեցել Վարարակնում (այժմ Ստեփանակերտ), Կուրակ գետի աջ ափին՝ Սունջինկա տեղամասում: Այստեղ տեղակայված է եղել հեծյալ ստորաբաժանում, որի իրամանատարն է եղել փոխգնդապետ Գլադիլինը: Գունդն ունեցել է հատուկ նշանակության վաշտ՝ կազմված եզերներից (մասնագետ-որսորդներ), որի պարտականությունը լեռնային ու անտառային շրջաններում պայքարն էր ավազակային

խմբերի դեմ (վաշտի իրամանատար՝ փոխգնդապետ Սիխայիլով Վլադիմիր Իվանովիչ): 1820-ական թվականներին գնդի իրամանատարն է եղել Ֆյոդոր Սեմյոնովը, որի աճյունը հողին է հանձնված Շուշիի ռուսական գերեզմանատան կենտրոնական մասում: Կարևորելով 2մ³ չափեր ունեցող շիրմաքարի կողերի արձանագրությունների պատմական նշանակությունը, ներկայացնում եմ թարգմանաբար.

*ЗДѢСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ
ПОЛКОВНИКА ФЕДОРА СЕМЕНОВА¹
СЫНА ИЩЕНКОВА БЫВШАГО
ШУШИНСКАГО КАМЕНДАНТА
УМЕРШАГО 17^{го} АВГУСТА 1852^{го}
ГОДА НА 54^{лѣтѣ} ВОДУ ЖИЗНИ И
НА 37^{лѣтѣ} ГОДУ СЛУЖБЫ ЕГО*

*ВѢРНЫЙ ДОЛГУ ЦАРЮ И ОТЕЧЕСТВУ
ХРАНИМЫЙ РОКОМЪ ВЪ БИТВАХЪ
ЗА АРАКСОМ И ЕВФРАТОМЪ
ПОД ЗНАМЕНАМИ ВЕЛИКАГО ИЗЪ
ВОЖДЕЙ ГРАФА ПАСКЕВИЧА²
ЭРИВАНСКАГО И САМОСТОЯТЕЛЬ-
НОЙ МУЖЕСТВЕННОЙ ЗАЩИТѢ*

*КР. КУБЫ³ НА БЕРЕГУ КАСПИЯ НЕ ИЗБѢГЪ
ПРЕД ЛАСМЕРАНАГО ВЪ МИРНОЙ ТВЕРДИНѢ
ШУШИ*

Ինչպես նկատելի է սույն արձանագրությունից, Ֆ. Սեմյոնովի իրամանատարության ներքո գունդը մասնակցել է նաև 1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմին: Առաջին ճակատամարտը տեղի է ունեցել Շուշիի բերդի Երևանյան դռների մոտ: Ռուսների կողմից մարտը վարել է բերդի պետ Գյանջումադա Առաքելի խանդամիրյանցը (1775-1853): Կարելի է ասել, որ ռուս-պարսկական պատերազմում հաղթանակը այստեղ է կայացել:

Այստեղ հանգչում է գնդապետ Ֆյոդոր Սեմյոնովի՝ Շուշիի նախկին պարետ Իշչենկովի որդու աճյունը. մահացել է 17-ին օգոստոսի 1852թ. կյանքի 54, ծառայության 37 տարում.

Հավատարիմ էր թագավորին ու հայրենիքին, մասնակցել է Արաքսի և Եփրատի ափերի մարտերին մեծ առաջնորդ Պասկևիչ Երևանսկու դրոշի տակ.


Ինքնուրույն խիզախորեն պաշտպանել է Կասպից ծովի մերձափնյա Կուրա բերդը հանուն Շուշիի խաղաղ ամրակայման:

Ուսական գերեզմանատանը հողին է հանձնված թիվ 5 գծային վաշտի հրամանատար փոխգնդապետ Ֆյոդոր Պոգորելովի աճյունը: Վաշտի ծառայողական պարտականությունը Շուշի-Ելիզավետպոլ-Թբիլիսի ճանապարհով անվտանգ երթևեկության ապահովումն էր:

Գնդի անձնակազմը միատարր չի եղել: Շատ կարճ ժամանակաշրջանից հետո սպայական և ենթասպայական կազմը սկսել է համալրվել նաև դարաբաղցիների հաշվին: Դրա վառ ապացույցն է շրջանի Բերդաձոր, Քարին տակ, Շոշ գյուղերի գերեզմանատների շիրմաքարերի արձանագրությունները: Վիճագրական արձանագրությունները վկայում են, որ Շահնագարյանների, Դոլուխանյանների, Զուրաբյանների սերունդները միևրոյալ գինվորականներ են եղել, ու շատերն ունեցել են ավագ և բարձրաստիճան սպայական (գեներալներ) կոչումներ [6]: Կան վկայություններ նաև, որ հայ-ռուսական հարաբերություններն այնպիսի հիմքերի վրա են եղել, որ սկսվել են հաստատվել բարեկամական կապեր՝ խառնամուսնության միջոցով: Ավշարյանների համար տատ է դարձել աստիճանավոր Կովալյովի դուստրը՝ Վարվառան (Գրիգոր Բեկ Ավշարյանի կինը), իսկ Շահոսկի Թավրիզովան (Թավրիզյան) հանդիսանում էր Մոսկվայում բնակվող գիտնական Առնոլդ Ալեքսանդրովիչ Կլեշչովի նախատատը: [7] Արմատները փնտրելու նպատակով Ա. Կլեշչովը 2006թ.-ին եղել է Շուշիում, լուսանկարել շիրմաքարը և հող տարել գերեզմանից:

Քանի որ նպատակս ոչ միայն ցարական զորքի՝ ռազմական կոնտինգենտի Անդրկովկասում՝ հանձինս Շուշիում տեղակայվելու մասին կոնկրետ վիճագրական արձանագրությունները ներկայացնելն է, այլ նաև միաժամանակ քաղաքացիական կյանքով ապրողների և համակարգերում աշխատողների մասին որոշ տեղեկություններ ներկայացնելն է:

Որպես արխիվային փաստաթղթերի հավասարազոր իրավունք ունեցողներ, արձանագրությունները, որ հավաքվել են ռուսական և հայ-ռուսական համատեղ գերեզմանատների շիրմաքարերից, վկայում են, ինչպես անձնագիրը, որ սկսած 18-րդ դարի սկզբից սկսել է ձևավորվել ռուսական համայնք, որի անդամները աշխատել են տեղի դատա-իրավական, ֆինանսական, կրթական, առողջապահական, ղեղազորական, փոստային, բանկային և այլ համակարգերում: Իրենց աշխատանքային կենսագրությունը գրած, բնական ու այլ ձևով վախճանված շատ պաշտոնյաների աճյուններ են եղել հողին հանձնված: Նրանց շիրմաքարերը հայկականի նման եղծված են, խաչերը՝ ջարդված:




Շուշիի N6 գնդի բաղնիքի շենքը

Վերը նշվածից գալիս ենք այն եզրակացության, որ Շուշիում ցարական N6 սահմանապահ գնդի տեղակայվելու ժամանակն էլ հանդիսացել է սկիզբն ու հիմքը ռուսական համայնքի: Գունդը քաղաքի հարավային կողմում գտնվող Քարին տակ գյուղով հոսող գետի ձախ ափից ոչ հեռու ունեցել է 53x6x 4.4 մ չափսեր ունեցող բաղնիք: Սա բնական է, որովհետև Շուշին ջուր չի ունեցել: Իսկ հետագա տարիներին սկսել են քաղաքում վերաբնակվել քաղաքացիական կյանքով ապրողներ և: Նպատակը մեկն էր՝ հարավային սահմանները պահող զորքի տնտեսական, առողջական վիճակը բարվոք պահել: Իսկ այդպիսի հարցը Պետերբուրգից-Շուշի դժվար լուծելի էր: Ստեղծված համակարգերը հաստիքավորվում էին, աշխատողներին էլ տրվում էին արտոնություններ պետության կողմից (հիմնականում հարկային), որն էլ պատճառ է հանդիսացել, որպեսզի շատ մասնագետներ իրենց ընտանիքներով մշտական բնակություն հաստատեն քաղաքում: Եթե ուրիշ սկզբնաղբյուր չվկայակոչենք, վիճակագրական որևէ թիվ չենք տալ, ապա վերը նշված գերեզմանատները դրա վառ ապացույցն են իրենց արձանագրություններով:

Շուշիում ռուսներն ունեցել են իրենց կրթական ու հոգևոր օջախները՝ երկհարկանի դպրոցական շենք և եկեղեցի:

Կրթական համակարգում և այլ բնագավառներում ռուսները շարունակել են աշխատել նույնիսկ ռուսական գունդը Արցախից Ռուսաստան տեղափոխելուց հետո՝ 1917-1980թթ.: Անցյալ դարասկզբին նրանք ռուսական դպրոցում աշխատելուն զուգահեռ աշխատում էին նաև հայկական դպրոցներում: Շուշիի ռեալական ուսումնարանի տեսուչ էր Նիկոլայ Պետրովը, քաղաքային դպրոցի տեսուչ՝ Ռազդորսկին, իսկ Մարիամյան օրհորդաց (պրոգիմնագիա) դպրոցի տեսչուհի էր Մարիա Միխայիլովնան: Նշված անձինք կրթական համակարգում պաշտոնավարել են նաև անգլիական գեներալ Շատելլորդի կողմից նշանակված նահանգապետ Սուլթանովի պաշտոնավարության ժամանակ ու միշտ էլ հրաժարվել են պատասխանել նրա պաշտոնական գրություններին:[8]

Շուշիի ռուսական եկեղեցին կառուցվել է 1830թ., Ելիզավետպոլի դռների մոտ, 300մ հեռավորության վրա՝ քարավանատան դիմաց: Այն կոչվել է Սուրբ Գեորգիի անունով և ունեցել է 28.9մ երկարություն, 5.9մ լայնություն: Երկու կամարածև դռներից մեկը տեղադրված է եղել արևմտահայաց, իսկ մյուսը՝ հարավահայաց պատերում: Արևմտահայաց պատկից կառույցի երկրորդ հարկում եղել է զանգակատունը: Չորսական պատուհաններ են ունեցել հարավահայաց ու հյուսիսահայաց պատերը: Եկեղե-



Շուշիի ռուսական եկեղեցին

ղեցրու արագլյան կողմունք՝ այժմյան վարչակազմի, իսկ խորհրդային տարիներին՝ Ադրբեջանի կոմկուսի Շուշիի շրջկոմի շենքի տեղում եղել է ոչ մեծ գերեզմանատուն, որտեղ հողին են եղել հանձնված անվանի ռուսների աճյուններ: Ինչպես եկեղեցին, այնպես էլ նշված գերեզմանատունը Ադրբեջանի իշխանությունների հատուկ հրահանգով քանդվել են 1960-ական թվականներին: 1966թ. Բաքվի «Строитель» թերթում ճարտարապետ Սաիրովը գրել է. «Սեռածներն ապրողներին հանգիստ չեն տալիս: Մի խոսքով այստեղ մեռածները ուտում են ողջերին: Այստեղ հողին են հանձնված մեր թշնամի Պասկևիչի զինակիցները»: Անհրաժեշտ է Շուշիում արտագնա խորհրդակցություն հրավիրել հանրապետական սանիտարահամաճարակային կայանի մասնագետների մասնակցությամբ ու կոնկրետ որոշում կայացնել այն լրիվ քանդել-ոչնչացնելու մասին»: [9] Նիստը կայացել է թե չէ, մեզ հայտնի չէ, սակայն այսօր փաստ է, որ չկան սրբատաշ քարից կառուցված եկեղեցին և նրա արևելյան կողմում տեղակայված գերեզմանատունը:

Ինչպես տեսնում ենք, ադրբեջանական իշխանություններին հանգիստ չեն տվել թե նշված եկեղեցին, թե ռուս անվանի մարդկանց շիրիմները, որոնք գտնվում էին նրա բակում (չթվա, թե ոչնչացնում էին ռուսապատկանը, պարզապես, ոչնչացնում էին այն ամենը, ինչ քրիստոնեական էր): Ջարդել են բոլոր շիրմաքարերը, հիմնովին քանդել եկեղեցին և սրբատեղիում կառուցել Ադրբեջանի կոմկուսի Շուշիի շրջկոմի քառահարկ շենքը:

Կատարվող հետազոտական աշխատանքների ժամանակ բազմաթիվ հայկական շիրմաքարերի հետ Շուշիի սահմաններից դուրս, Ստեփանակերտ-Երևան ավտոճանապարհի աջակողմյա մասի անտառապատ հեղեղատում ի հայտ է բերվել ռուս կնոջ շիրիմին կանգնեցված բրգածև վեց կտորից բաղկացած հուշակոթողի 1մ³ չափեր ունեցող մի կտորը, որի արձանագրությունը ներկայացնում են.

ЕѲ ПРЕВОСХОДИТЕЛЬСТВО
СОФЪИ ѲЕДОРОВНЬ КРАББЕ
СКОНЧАВШЕЙСЯ 30 ЯНВАРЯ
1835 ГОДА НА 43 ГОДУ
ОТ РОЖДЕНИЯ

Ինչպես տեսնում ենք, մշտական բնակություն հաստատելու տրամադրությամբ են հիմնաքար դրել ռուսները Շուշիում, այլապես չէին ունենա դպրոց, հիվանդանոց, եկեղեցի և այլ համակարգեր: Եվ վերջապես չէին ունենա գերեզմանատուն՝ յուրատեսակ անձնագիր, որը գործել է մինչև 1985թ.-ը: Ռուսական համայնքի վերջին բնակիչները՝ Տրոյանով Վլադիմիր Վասիլևիչը, Ալեքսեևնա Տամարա Պավլովնան, Պյոտր Արշինովը, քաղաքը թողել են նրա հայ բնակչության բռնագաղթի հետ միասին, Արցախյան շարժման ժամանակ՝ 1989թ.:

2010թ.-ի դրությամբ Շուշիում ապրում է յոթ ռուսական ընտանիք, որից երեքը Արցախյան շարժման տարիներին տեղափոխվել են Բաքվից:

Գրականություն

1. Աբրահամյան Ա. Գ., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, էջ 13, Երևան 1953թ.:
2. Նույն տեղում, էջ 23:
3. Նույն տեղում, էջ 23, 24:
4. Ахмед Бек Дживаншир, О политическом существовании Карабаского Ханства с 1747 по 1805гг., Шуши, лино-тип А. М. Магдесин Акопова, 1901г., ст. 73.
5. Ахундов Назим, Карабахнамаһлар, на азербайджанском языке, Баку 1991г., том 2, ст. 337.
6. Հարությունյան Հ. Մ., Շուշիի տապանագրերի արձանագրությունները (18-19-րդ դդ), Երևան 2008թ., էջ 266-280:
7. Арутюнян Г.М., Шуши: нововыявленные исторические надписи, Степанакерт, 2008г. ст.112, 244.
8. Իշխանյան Եղիշե, Լեռնային Ղարաբաղը 1917-20թթ., Երևան 1989թ., էջ 405:
9. Саидов К., Проблемы Курортного города Шуша, газета Строитель, Баку, 02.02.1966г.

ՇՈՒՇԻՆ ՈՐԲԻ ԳԼՈՒԽ ԶԷ

2001թ. նոյեմբերին Ստեփանակերտում կայացած Արցախի հուշարձանների պահպանության խնդիրներին նվիրված համաժողովին հրավիրված էի: Արցախի պատմությանն ու հուշարձանների պահպանությանը նվիրված գիտական համաժողովի նյութերը՝ բաղկացած 80 էջից, ընթերցեցի ուշադիր: Կոնկրետ փաստեր կան նրա էջերում: Քանի որ հավաքում են Շուշիի տարածքի պատմա-ճարտարապետական կառույցների 18-19-րդ դդ. հին գերեզմանատների արձանագրությունները, ուստի աչքաթող չեն կարող անել մի փաստ եւս, որը կապված է մեր ոչ վաղ անցյալի հետ:

Առանձնացնելով մյուսներից, ամբողջությամբ ներկայացնում են Ս.Սարգսյանի գեկուցումից՝ Շուշիին վերաբերող 63-րդ էջից երկու պարբերություն. «Վերջերս Բ. Կարապետյանը հրապարակել է «Շուշի բերդաքաղաքը» գիրքը, որտեղ դժվար է ասել՝ սխալն է շատ, թե ճիշտը: Այս գրքում տեղ են գտել բազմաթիվ անճշտություններ, աղավաղումներ, ցավոք, առանձին դեպքերում՝ գիտակցաբար: Միայն մի օրինակ. փորձելով ապացուցել, որ Շուշին 15-րդ եւ նախորդ դարերում էլ հիշատակվում է պատմական աղբյուրներում, պրն. Կարապետյանը Շոշ գյուղի տվյալները վերագրում է Շուշիին: Մատենադարանի ֆոնդերում պահպանվող 1428 եւ 1575 թթ. ձեռագրերը, որ տեղ են գտել նշված գրքում, իրականում, Շուշի քաղաքի հետ առնչություն չունեն: Մատենադարանից գրի առնված ձեռագիրը Բ.Կարապետյանը ներկայացնում է հետեւյալ կերպ. «Ի փառս նմանէ գաւառս Վարընթոյ, ի գաւառս, որ կոչի Շուշոյ, ...Անդ հավանեաւ սուրբ Աստուածածնին, զրեցաւ ի թվականութեանս ՌԻԴ» (1575):

Նշված արձանագրությունը կա նաեւ Շուշիի թանգարանում, գրված այսպես. «Գրեցաւ ի գաւառս վարանդա, ի գիւղս, որ կոչի Շուշի, Սուրբ Ստեփանոսի Զովանու ներքոյ, ի թուականիս ՌԻԴ» (1575): (Մատենադարան ձեռ. 4375):

Իրականում պետք է լինի. «... ի փոսանհանք վաւառս Վարընթոյ, ի գեւղս որ կոչի Շուշոյ, ընդ հավանեաւ սուրբ Ստեփանոս ի հանգիստ տորա այրաւեր եւ ընդ հավանեաւ սուրբ Աստուածածնին: Արդ, զրեցաւ ի թվիս ՌԻԴ» (1575):

Այսպիսով, նկատի ունենալով, որ նախկինում Շուշի քաղաքում եղել է Սուրբ Աստվածածին եկեղեցի, Բ.Կարապետյանը Շոշ գյուղին վերաբերող

այս արձանագրությունը վերագրում է Շուշի քաղաքին, գիտակցաբար արձանագրությունից դուրս թողնելով Սուրբ Ստեփանոս անվանումը, այլապես ընթերցողը կհասկանար, որ ձեռագրում նշված երկու եկեղեցիները գտնվում են Շոշ գյուղում եւ Շուշի քաղաքի հետ կապ չունեն:

Որոշեցի ընթերցել Բ. Կարապետյանի «Շուշի բերդաքաղաքը» գիրքը, վերը նշվածում համոզվելու համար: Իրոք, գրքում տեղ գտած անճշտությունները Ս. Սարգսյանի նշածից ավելի շատ են: Նա նշել է ամենակարելորդ: Ես էլ իմ հերթին կնշեմ որոշ սխալներ, կատարելով մեկնաբանություններ:

Եվ այսպես, գրքի 47-րդ էջում նշված է. «... իրեանց մեջն էլ հալա փարաղաթ (կամաց-կամաց, Բ. Կարապետյան) են, վերջն աստված գիղի, ճշմարտութիւն չկա»: Սա հատված է Եսայի կաթողիկոսի նամակից Պետրոս I-ի պատվիրակ Իվան Կարապետին: Իրոք, «փարաղաթ» բառը պարսկերեն է, եւ այժմ էլ, որպես ռազմական տերմին, մուսուլմանական պետություններից շատերի բանակում այն գործածվում է, որպես հրահանգ՝ դուզլան, փարաղաթ - այսինքն՝ հավսար, զգաստ: Նշանակում է, որ ժողովուրդը զգաստ է եղել, այլ՝ ոչ կամաց-կամաց, ինչպես բացատրում է հեղինակը: Էջ 66-ում գրված է՝ «Սարուջայ Ալի»: Պետք է լինի՝ Սարուջայ Ալի: Էջ 69-ի 1-ին պարբերությունում նշելով Բարսեղ քահանայի մասին, գրված է. «Նա գնում է Սպահան, շահից մեկիքական ֆիրման ստանում»: Եթե խոսքը հրամանագրի մասին է, պետք է լինի «Ֆարման»: Ի դեպ, այս «Ֆիրման» բառը շատ էջերում է կրկնվում, որը չես կարող համարել մեխանիկորեն սխալ գրված: 56-րդ էջում գրված է. «Թուրքերը տիրացան նոսրացների երանների, ոչխարի հոտերին ու նախիրներին»: Իսկ ինչո՞ւ, երբ գիտենք, որ ձիերի խումբը երամակ է, թռչունների՞նը՝ երամ: Էջ 72-ում, խոսելով բերդի մասին, նշում է. «Դարպասների վերելում (խոսքը Ելիզավետպոլի-Ջրաբերդի դարպասի մասին է, 3.3) կառուցվել էին մեծ հարթակներ, որտեղ տեղադրված էին թնդանոթները: 3արավային մուտքը կոչվում էր Երեւանյան: Պարսպապատը 2,5 կմ ձգվելով, ընդհատվում էր 50 աշտարակներով (նույն տեղում)»: Իրավամբ, սկզբնական շրջանում բերդն ունեցել է 4 դուռ՝ Երեւանյան, (արեւմտահայաց, այլ ոչ արեւելահայաց, ինչպես նշում է, հեղինակը), Ելիզավետպոլ ջրաբերդի, Մխիթարի դուռ եւ այժմ գործող հայկական գերեզմանատան վերնամասից Քարին տակ գյուղի հետ կապվող դուռ: Ժամանակի ընթացքում քաղաքի անվտանգությունն ապահովելու նպատակով վերջին երկուսը փակվել են: Տեղում շարված

պատը պահպանվել է: Ելիզավետպոլի դռների հարթակի վրա թնդանոթներ չէին տեղադրվել: Գործել են հրակնատները, որոնցից մարտնչել են հրացաններով: Բերդն ինքնցել է երեք աշտարակային թնդանոթ, որոնք տեղադրված են եղել հատուկ կառուցված՝ աշտարակի վրա, որտեղից վերահսկվել է քաղաքի հյուսիսային կողմը, Շոշ գյուղի կողմից մինչեւ Ավագուտի թաղամասը: Աշտարակի առաջին հարկը եղել է զինամթերքի պահեստ, որտեղ պահվել են արկերը:

«Ղարաբաղ» տեղանունը գրքի 76-րդ էջում բացատրվում է, որ այն նշանակում է Սեւ այգի, որը դարձյալ սխալ է, փաստորեն, թուրքերի տեսակետն է: Իրականում Ղարաբաղ, որը «Կարաբագ»-ի աղավաղումն է, նշանակում է «Սուրբ լեռնաստան», որի մասին տեղի սղության պատճառով հարկ չեմ համարում ծավալվել:

117-րդ էջում գրված է. «Աշնանը շահը ֆիրման է ուղարկում Իբրահիմին, հրամայելով ձերբառվել դավադրությանը մասնակից Սաֆարլիին: Դավադիրները սպանում են շահին, վերցնում Կյուխ նուր (Լուստ լեռ), Դերյանուր (լույսերի ծով) ճարմանդներն ու հմայիլը»:

Ինչպես տեսնում ենք, խոսքը Շուշիում պարսից շահ Աղա Մուհամեդ շահ Գաջարի սպանության մասին է: Նրա սպանությունը ոչ թե կատարվել է դավադիրների, այլ ծառաների՝ Սաֆարալի բեկի եւ Աբաս բեկի կողմից, քանի որ շահը սպառնացել էր երկուսին էլ գլխատել տալ: Իրենց սպանությունը նախականխել են շահի սպանությանը, գիշերվա երկրորդ կեսին՝ նրան գլխատելով: Եվ նրա բազուկներից հանել-տարել են ոչ թե ճարմանդներ (զապոնկի), այլ վերը նշված ապարանջանները:

127-րդ էջում գրված է. «Լիսանեիչը (N 6 ցարական սահմանապահ զորամասի հրամանատար, 3.3.) 100 ռուս կոզակներով ու Ջունջուղի ու նրա կտրիճների հետ հունիսի 2-ին երեկոյան դուրս եկավ Երեւանյան դարպասներից, շրջանցող ճանապարհով կեսգիշերին հասավ խանի այգին, որտեղ սպանում են Իբրահիմին»: Չի նշվում տարեթիվը: Սակայն հավաստի աղբյուրներում սպանության մասին ասվում է, որ Իբրահիմ խանի ընտանիքի ու մերձավորների սպանությունը իրագործվել է 1806թ. հունիսի 11-ին, Շուշիի բերդից ոչ հեռու՝ «Ուչ աղաջ» (երեք ծառ) կոչվող տեղամասում (ներկայիս անֆալտի գործարանի տեղում, որտեղ վրան էին զարկել, որոշ ժամանակ մնալու համար: Տե՛ս Միրզա Ջամալ «Գարաբաղ թարիխի»): Շուշին այդ ժամանակ շրջանցիկ ճանապարհ չի ունեցել: Նույնիսկ քոչվորները սար գնալիս անցնում էին քաղաքով: Շրջանցիկ ճանա-

պարիզ կառուցվել է 1900-ական թթ.: Այս ճանապարհի մասին նշված է Ա. Դո-ի «Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում 1905-06թթ.», Ռ.Իշխանյանի «Լեռնային Ղարաբաղը 1917-20թթ.» գրքում, որոնց որոշ էջեր առանց բառ անգամ փոխելու հայտնվել են Բ. Կարապետյանի «Շուշի բերդաքաղաքը» գրքում: Սկզբնաղբյուրների վրա կարելի է հենվել սեփական բացահայտածը հաստատելու առումով, այլ ոչ ընթերցողին ծանրաբեռնելու:

Որոշ անճշտություններ կան գրքի 167-րդ էջի 2-րդ պարբերությունում, որտեղ գրված է. «Նրանց մոտ էր Միրզա-Ֆարուխը (Հարություն Ներսեսի Ամիրխանյանը), որը մանուկ հասակում Թաղլար գյուղից գերի էր տարվել Պարսկաստան: Գերությունից ազատվելով, Շուշի էր եկել, կապվել միսիոներների հետ, թողել մահնդակաճությունը, դարձել նրանց օգնականը: Նա գիտեր պարսկերեն և արաբերեն: Միրզա Ֆարուխը պարսկերեն գրեց Ղարաբաղի պատմությունը՝ «Թարիխի-Սաֆի» վերնագրով, որը հայերեն է թարգմանվել «Բարելավված պատմություն» խորագրով»:

Իրականում Միրզա Ֆարուխը պատանի հասակում գերեվարվելով Դիզակից, պարսիկների մոտ մնացել է մինչև 1820-ական թթ., կրթվել, դարձել գիտնական, եղել է հայտնի գրագիր: Վերադառնալով Դիզակ, վերստին ընդունել է քրիստոնեություն, ամուսնացել, մնացել հայրենիքում: Մահացել է 1853թ.: Կնոջ և դստեր հետ թաղված են Շուշիի հին հայկական գերեզմանատանը: Իմ ձեռքի տակ գտնվող արձանագրության երկրորդ տողում գրված է՝ Միրզա Ֆարուխ Մինասեան Ամիրխանեանց: Ինչ վերաբերում է գրքին, ապա Թարիխի-սաֆի նշանակում է «ճամարիտ պատմություն», այլ ոչ բարելավված պատմություն: 73-րդ էջում նշվում է. «1752թ. Ազադ խանը դեպի Երեւան շարժվելիս պարտություն է կրում վրացիներից և նահանջի ճանապարհին թալանում է Նախիջևանի հայաբնակ գյուղերը»: Ճիշտ է, նման հարձակում Երեւանի վրա ձեռնարկվել է, որը վերջացել է պարսիկների պարտությամբ, որոնք դարձի ճանապարհին ավերել ու թալանել են Նախիջևանի Ագուլիսն ու մյուս հայկական բնակավայրերը: Որպես ընթերցող, ինձ անհասկանալի է, թե ինչպե՞ս է Ազադ խանը պարտություն կրել վրացիներից: Չէ՞ որ Վրաստան հասնելու համար պետք է անցնել կամ Հայաստանի տարածքով, կամ Ղարաբաղով, շրջանցելով Հայաստանը:

152-160-րդ էջերը հատկացված են Շուշիի հերոսական պաշտպանությանը, սակայն չի նշվում տարեթիվը: Որոշ ընթերցողներ, տեղյակ լինելով ուրիշ աղբյուրներից, կիմանան, որ խոսքը 1826-28թթ. ռուս-պարսկական

պատերազմի մասին է: Խոսք բացել այս պատերազմի առաջին ճակատամարտի մասին ու չնշել, որ մարտը սկսվել է Շուշիի Երեւանյան դռների մոտ, այն էլ հայորդի պորուչիկ Գյանջում Աղա Առաքելյան Խանդամիրյանցի հրամանատարությամբ և ունեցել է վճռական դեր, ճիշտ չի՞ լինի: Պարսիկների պարտությունը այստեղից է սկսվել:

181-րդ էջի երրորդ պարբերությունում նշվում է. «Բեմաճակատի (խոսքը Ղազանչեցոց եկեղեցու մասին է, Գ.Գ.) ստորին մասում զետեղված արձանագրությունը հայտնում է քանդակագործի Ավետիս Երամիշյանցի և ճարտարապետ Սիմոն Տեր Յակոբյանցի անունները»: Ավետիս Երամիշյանցը ոչ թե քարգործ, ինչպես նշում է հեղինակը, այլ եկեղեցու առաջին տերտերն է եղել ու մտերին ընկերը նախիջևանցի հայ աշուղ Միսկին Բուրջիի: Ավետիս Երամիշյանցին հաջորդել է իր եղբայրը: Երկուսն էլ կողք-կողքի հողին են հանձնված հին հայկական գերեզմանատանը՝ իրենց տոհմական գերեզմանոցում:

215-րդ էջի վերջում նշված է. «Շուշեցի մեծահարուստ վաճառական Թ. Թամիրյանցը 1896թ. 700 հազար ռուբլի ներդնելով, ձեռնարկում է Սարի բաբա բարձունքից Քարին տակ գետակի ջրերը բերդաքաղաք հասցնելու՝ այն ժամանակվա համար հանդուգն ծրագիրը»: Հաջորդ էջում նշված է, որ 1896թ. սեպտեմբերի 8-ին օծվել է ջրատարը: Նախ անհասկանալի է, թե 1896թ.-ը, որտեղի՞ց է ի հայտ եկել, երբ ջրատարը սկսել են կառուցել 1893թ. և ավարտել 1901թ., իսկ հետո՝ Սարի բաբան իր սառն աղբրի հետ ի՞նչ կապ ունեն Քարին տակ գյուղի ու համանուն գետակի հետ, երբ աղբրաջուրը կավե խողովակաշարով ինքնահոս հասնում է քաղաք, իսկ նշված գյուղն ու համանուն գետակը մի քանի հարյուր մետր քաղաքից ցածում են:

Չեմ կարող անուշադրության մատնել նաև «Շուշի» հիմնադրամի համանախագահներից մեկի՝ գրող-հրապարակախոս, գրքի հեղինակ Բ. Կարապետյանի (24. 07. 2004թ.) «Ազատ Արցախ» թերթի երրորդ էջը զբաղեցրած հարցազրույցից այն նախադասությունը, որն ասում է. «Ձուգահեռ ստեղծվելու է վիճազիրների արշավախումբ, որը պետք է վերձանի Շուշիի գերեզմանները»: Ոչ թերթին, ոչ էլ հոդվածագրին ասելիք չունեն: Գրվել է նախադասությունը այնպես, ինչպես ասվել է: Մի՞թե առ այսօր հասկանալի չէ, որ Շուշիի գերեզմանները հայկական են, որ պետք է վերձանի ստեղծված արշավախումբը: Արշավախումբը թող իր արշավանքով զբաղվի (տերմինն առանձնահատուկ է ճանապարհորդությանն ու տուրիզմին):

Շուշիի գերեզմանատների պատկանելությունը հայտնի է, իսկ շիրմաքարերի արձանագրությունները գրված են մեսրոպատառ: Վերծանման ենթակա են հիերոգլիֆներն ու սեպագրությունները: Իսկ այդպիսիք այստեղ չկան:

Վերծանում նշանակում է գրության հասկանալիության վերականգնում, իմաստի պարզաբանում: Վերծանման ենթակա են եղել ուրարտական սեպագիր արձանագրությունները, որի սկիզբն է դրել անգլիացի հնագետ եւ լեզվաբան Ա.Մեյսը 1882թ. (տե՛ս, ՅՄՅ, հ. 11, էջ 411):

Հագարավոր արձանագրություններ են գրի առել Շուշիի հին հայկական եւ ռուսական ութ գերեզմանատներից, սակայն չեն հանդիպել ոչ հիերոգլիֆի, ոչ էլ սեպագրության:

Քանի որ դարձյալ Շուշիին է վերաբերում, ուզում են ներկայացնել երկու նախադասություն «TV ալիք» (10-16. 05.2004թ.) թերթ-ծրագրի երրորդ էջում Աննա Կարապետյանի ստորագրությամբ «Կարկառ-Շիկաքար-Շուշի» հոդվածից երկու նախադասություն ու հարցնել նշված նախադասությունների իմաստի մասին, որոնք ասում են. «Աղբբեջանական, այսպես կոչված, գիտնականները կամ քաղաքական գործիչները Շուշիի հիմնադրումը կապում են ոմն Թամահ (այսպես է գրված) Ալիի հետ: Նա առաջին թուրքն էր, որը ոտք դրեց Արցախ՝ օգտվելով հանգամանքներից եւ Արցախի իշխանների միջեւ եղած պառակտումից»: Հասկանալի է, որ խոսքը Փանահ խանի մասին է: Իսկ ո՞ր գեներտիկայի հարցերով զբաղվող հանձնաժողովն է որոշել, որ նա թուրք է: Եկեք ցեղը՝ ազգությունից, ազգությունը՝ ազգից, ազգերն էլ իրարից տարբերենք, խորհելով այն մասին, որ նման չնչին թվացող շեղումները պարարտ հող են ստեղծում ուրիշների համար:

Ես կողմնակից եմ եւ երկու ձեռքով ձայն կտամ, եթե լինի գրաքննություն (ցենզուրա), նախ՝ կվերանա ուրիշից արտագրելու սկզբունքը, ապա՝ շատերն էլ կամավոր ցած կդնեն գրիչները: Եվ կհասկանան, որ Շուշին որբի գլուխ չէ, որի վրա վարսավիրություն սովորեն:

ՍՏԻՊՎԱԾ ԵՍ ԱՆԴՐԱԴԱՌՆԱԼ

14.08.2004թ. «Ազատ Արցախ» թերթում հանդես էի եկել մի հոդվածով, որտեղ նշել էի մի շարք սխալների, պատմական անճշտությունների ու սխալ հասցեագրված արձանագրության մասին, որոնք տեղ են գտել գրող, հրապարակախոս, «Շուշի» հիմնադրամի համահեղինակ, ԵՊՀ ժուռնալիստիկայի ամբիոնի դասախոս Բ.Կարապետյանի «Շուշի բերդաքաղաքը» գրքում:

Նախապես նշեմ, որ հոդվածում ներկայացրել են գրքում եղած անճշտությունների որոշ մասը միայն, հաշվի առնելով, որ դրանք խմբագրողներն ու տպագրության երաշխավորները հաշվի կառնեն վերահրատարակման ժամանակ:

Եվ ի՞նչ: Մեկ շաբաթ հետո՝ 21.08.2004 թվականին նույն թերթում Բ.Կարապետյանի ստորագրությամբ «Բամբասանքը՝ հոդվածի «հավաստի» աղբյուր» վերնագրով տպագրվում է հոդված, որը, փաստորեն, ոչ մի առնչություն չունի իմ հոդված-գրախոսականի հետ: Իմ հոդվածում ներկայացրել էի նշված գրքում եղածի որոշակի մասը՝ պարբերությունները, նույնիսկ տողերը եւ կատարել համապատասխան մեկնաբանություններ՝ հենվելով աղբյուրների վրա: Սակայն Բ. Կարապետյանը իր պատասխանն այնպես է սկսում, որ կարծես ժողովրդից խլում ենք հուշարձանները, որ միայն ինքն է հայ ժողովրդի, արցախցու սրտացավ միմուճարը, որը փորձում է կրկին հասարակությանը վերադարձնել մի շատ կարեւոր հուշարձան, հանձինս 1428 թվականի Տեր Մանուելի արձանագրության, որն իբր գրի է առնվել Շուշիում: Ընթերցողի ուշադրությանն են ներկայացնում մի հատված վերոհիշյալ արձանագրությունից.

«... ի յաշխարհիս աղուանից, ի վիճակս ամարասայ, ի գեղս շուշու կոչեցել ընդ հովանեալ սբ ածածնիս ի կաթղկսե տր յոհանիսի...»:

Ինչպես տեսնում ենք, Բ.Կարապետյանի կողմից գրի առնված այս արձանագրությունը վերաբերվում է Վարանդայի Շոշ գյուղին ու Ամարասի վանքին: Այն Շուշիի Սուրբ Աստվածածին եկեղեցու հետ ոչ մի առնչություն չունի: Շուշիի եկեղեցին Թառունյանների սեփական միջոցներով կառուցվել է 1822 թվականին, հրդեհվել է 1905 թվականին, հայ-թուրքա-

կան ընդհարումների ժամանակ: Կիսավեր վիճակում հուշարձանը պահպանվել է մինչև 1972 թվականը: Նրա տեղում 1974 թվականին կառուցվել է դպրոցի շենք, ուր տեղափոխվել է մզկիթի մոտ գտնվող թիվ 4 աղբջանական դպրոցը:

Նշված եկեղեցուն 42 տարի իր հոգևոր ծառայությունն է կատարել բարկուշատցի Ստեփանոս քահանա տիրացու Հայրապետյան տեր Գրիգորեանցը: Գերեզմանը գտնվում է Երեւանյան դռների հարավ-արեւմտյան կողմի հին հայկական գերեզմանատանը, որի հարավահայաց կողմն արձանագրված է.

Ի տապանիս ամփոփել է մարմին լուսայ
Հոգի ստեփանոս քինյի տիրացու հայր-
ապետեան տր գրիգորեց որ հայրենեօքն
էր յագարակ գեղջէն բարկիւշատայ ծա-
ռայելով սբ ածածնայ եկեղեցւոյն ագուլ-
եց շուշի քաղաքի ամս 42 ծնել 1776
ամի 8 մայիսի վախճնել 1871ամի 16 փետր

Այսպիսով, գրքում ու հոդվածում ներկայացված տեր Մանուելի արձանագրությունը ոչ մի կապ չունի Շուշի քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու հետ եւ, մեղմ ասած, պատմական փաստերի աղավաղում է: Եվ կարծում եմ, որ իմաստ չունի նաեւ անիվներ դնել ու նշած եկեղեցին բերել-հասցնել հրապարակ, հետո էլ ասել, թե այն տվել է ռուսներին ու հույներին, այն դեպքում, երբ հրապարակում ռուսներն ունեցել են իրենց եկեղեցին իր ուրույն ճարտարապետական ոճով: Այն քանդվել է աղբբջանական իշխանությունների կողմից 1962 թվականին եւ տեղում կառուցվել մշակույթի տուն: Շուշիի ավերված հայկական թաղամասն այդ վիճակում պահպանվել է մինչև 1962թ., այլ ոչ 1953-54թթ., ինչպես նշում է Բ.Կարապետյանը: Այդ մասին նույնիսկ կարող է վկայել ցանկացած 50-55 տարեկան շուշեցի: Գիշտ էլ արել է Շուշիի շրջանի վարչակազմը, որ Բ.Կարապետյանի առաջարկությունը հիմք չի ընդունել հրապարակը Տեր Մանուելի անունով կոչելու, իսկ եկեղեցու տեղում հայտնված շենքի ճակատին արձանագրություն տեղադրելու համար, քանզի, ինչպես նշվեց, արձանագրությունները Շուշիի հետ կապ չունեն:

Ես «Շուշի բերդաքաղաքը» գրքի հեղինակ Բ.Կարապետյանին, ինչպես ինքն է շեշտում, նսեմացնելու միտում երբեք չեմ ունեցել: Հիմա էլ չունեմ, պարզապես որպես տարածաշրջանի 18-19-րդ դարերի արձանագրությունների գրառող (որոնցից շուրջ 1000-ը նորահայտ), չեմ կարող անտարբեր անցնել Շուշիի մասին գրվածների կողքով եւ, երբ իմ ձեռքի տակ գտնվող բազմաթիվ արձանագրություններ առճակատվում են կեղծիքի հետ՝ անկախ հեղինակի ազգությունից:

Ես ընդամենը խոսել եմ պատմական փաստերի աղավաղումների մասին: Բաքվի գիտնականների օրինակով, ինչպես Բ.Կարապետյանն է նշում, չեմ անտեսում ոչ 1428, եւ ոչ էլ 1575 թվականների արձանագրությունները եւ միշտ ասել եմ, որ այն սխալ է հասցեագրված: Չի կարելի հարեւան գյուղի պատմական տվյալները վերագրել մի քաղաքի, որի գլխով շատ ամպեր են անցել՝ սերունդներին թողնելով պատմական հարուստ ժառանգություն:

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒՇԻՈՒՄ (18-19-րդ դդ.)

Համաձայն 1805թ. մայիսին՝ առանց պատերազմի կնքված պայմանագրի, որ արդյունք էր մոտ երեք քառորդ դար առաջ անցկացված յուրատեսակ հանրաքվեի, Կովկասում հաստատվել էր Ցարական Ռուսաստանի իշխանությունը:

Այս ժամանակաշրջանում ուժեղանում էր Շվեյցարիայի Բազել քաղաքի համալսարանի քարոզչական աշխատանքը: Գիտաշխատողներն ամեն կերպ ձգտում էին օգտագործել բոլոր հնարավորություններն իրենց գործունեության ու քարոզչական աշխատանքների շրջանակն ավելի ընդարձակել՝ տարածվելով դեպի արեւելք: 1821թ. Բազելի «Ավետարանական քարոզչական ընկերությունը» ռուսական իշխանությունից պաշտոնական թույլտվություն է ստանում՝ Կովկասում հիմնելու տպարան ու դպրոց:

Տարածաշրջանն ուսումնասիրելու նպատակով մասնագետներ են գալիս Կովկաս՝ Ավգուստ Դիտրիխի եւ լեհ Ֆելիցա Ջարեմբայի գլխավորությամբ: Վերջինս փիլիսոփայության դոկտոր էր՝ ուսում առած Դորպատի համալսարանում: Դիտրիխը տիրապետում էր հայոց գրաբար լեզվին: Նրանց հիմնական նպատակն էր ընտրել մի այնպիսի բնակավայր, որտեղ հիմնադրվելով, հնարավոր լինի շփվել ու աշխատանք ծավալել շատ ազգերի հետ: Եվ այդպիսի վայր էր Շուշին, քանի որ, լինելով յուր ժամանակի առեւտրական քաղաք, հաստատուն կապ ուներ Եվրոպայի ու Մերձավոր Արեւելքի շատ երկրների հետ: Խումբը եկավ այն եզրակացության, որ միայն Շուշիում հիմնվելով կարելի էր նույնիսկ այլադավան ազգերի շրջանում տարածել քրիստոնեություն: Տեղում նրանք պետք է լուծեին երեք խնդիր՝ տարածեին Աստծո գաղափարները տեղացի ազգերի մեջ, սովորել տեղական ազգերի կարեւոր լեզուները եւ հիմնել տպարան՝ Սուրբ Գիրքը զանազան լեզուներով տպելու համար:

Չնայած թույլտվություն կար, սակայն ռուս-պարսկական 2-րդ պատերազմի պատճառով մոտ 6 տարի ուշացումով՝ 1827 թվականին են հաստատվում Շուշիում, հիմնադրում տպարան, միաժամանակ բացում դպրոց: Հենց առաջին տարում նրանց մոտ սովորում էին 100-ից ավել 10-18 տարեկան հայ երեխաներ: Նրանց հիմնադրած տպարանը տեղավորված էր

եռահարկ շենքում եւ գտնվում էր քաղաքի հայկական թաղամասի արեւելյան սահմանագծի վրա (այժմվա մանկապարտեզի հարեւանությամբ. Գ.Գ.):

Բազելցիների՝ Շուշիում հրատարակած գրքերի առավելությունը կայանում էր նրանում, որ մոտ էին խոսակցական լեզվին, աշխարհաբար էին ու հասկանալի համարյա բոլորին:

Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի ուսուցիչ Պողոս վարդապետ Ղարադաղցին հաստատում էր, որ 1830 թվականին բազելցիները տպագրել էին 11679 գիրք՝ սկսած հիմնադրվելու օրից (տե՛ս Ս. Ավագյան «Նյութեր Ղարաբաղի նախասովետական շրջանի մամուլի պատմությունից», էջ 12): Բազելցիների հետ համագործակցում էր Միրզա Փարրուխ Մինասի Ամիրխանյանը, որը նախկինում Պարսկաստանում էր աշխատում:

Սկսում էր ավելանալ նրանց մոտ սովորողների թիվը, մեծանում էր պահանջարկը նրանց մոտ տպագրվող բոլոր տեսակի գրականության նկատմամբ, որն էլ շարժում էր տեղի հոգեւորականության նախանձը: Իսկ պատճառներից ամենահիմնականը՝ ժողովրդի թեքվելը դեպի բազելցի միսիոներները ստիպում է, որ հոգեւորականները դիմեն Կովկասի փոխարքային Շուշիից նրանց հեռացնելու համար (նույն տեղում, էջ 15):

Քանի որ գործում էին քրիստոնեության օգտին, բազելցիները խնդրում էին մնալ Շուշիում իրենց գրքերը Պարսկաստանում ու Թուրքիայում տարածելու նպատակով, սակայն չի հաջողվում: Նրանք գործունեությունը Շուշիում դադարեցնում են, չնչին գումարով տպարանը վաճառում թեմի առաջնորդ Բաղդասար Մետրոպոլիտին (Հասան Ջալալյաններից) եւ տեղափոխվում Մոսկվա, շարունակում գործել Լազարյան ճեմարանում: Մետրոպոլիտի գնած տպարանի սարքավորումները տեղափոխում են հայկական թաղամասի կենտրոնական մասը եւ սկսում հրապարակել մեծամասամբ հոգեւոր գրականություն:

Տարիներ հետո աքսորավայրից՝ Բաքվից Շուշի վերադարձած Միրզաջան Մահտեսի Հակոբյանին թույլատրում են, որպեսզի նա հիմնադրի տպարան, քանի որ մեծանում էր հասարակական պահանջարկը տպագիր խոսքի նկատմամբ: Իր տան կից բացում է տպարան ու 1881 թվականից սկսում աշխատել որդիների հետ: Այս տպարանի աշխատանքը բարձր գնահատելով, Րաֆֆին գրել է. «Այս քաղաքից «Խենթի» առաջին թերթերը ուղարկել էին ինձ տեսնելու համար, թուղթը բավական լավն է եւ

տպագրությունը մաքուր, երեւում է այնտեղ (նկատի ունի Շուշին Յ.Յ.), տպարանը այժմ փոքրիշատե կանոնավորված է»:

Միրզաջան Մահտեսի Յակոբյանը 1883թ. ապրիլին Կովկասի մայնուլի կոմիտեին դիմելով հայտնել է, որ նա պատրաստ է հայերենից բացի տպագրել նաեւ պարսկերեն, ռուսերեն եւս, կարող է շաբաթական երեք անգամ հրատարակել «Шушинские объявления» թերթը, ունենալով նպատակ հետաքրքիր տեղեկություններ տալ Շուշիի անցյալի եւ ներկայի մասին ռուսերեն լեզվով եւս: Սակայն անհայտ պատճառներով առաջարկը չի ընդունվել:

Շուշիի տպարաններից ամենամեծն ու անխափան գործողն էր Մ. Յակոբյանի տպարանը, որը միաժամանակ տպագրում էր հայերեն, ռուսերեն ու պարսկերեն:

Այս տպարանում 1891 թվականին տպագրվել է բնիկ շուշեցի, կոլլեժսկի ասսետոր Ավետիք Բաբայի Բահաթրյանի «Հին հայոց տաղաչափական արվեստը» գիրքը, որը շատ բանաստեղծների համար հանդիսացել է որպէս քննական տեսության դասագիրք:

Միրզաջան Յակոբյանի դիակը հողին է հանձնված Շուշիի հին հայկական գերեզմանատանը (Քիրս-Շուշի շրջապատի մոտ), որի շիրմաքարի երեսին արձանագրված է. «Այս է տապան լուսահոգի Միրզաջան Մահտեսի Յակոբեանցի որ վախճանուեց 1895 ամի 78 ամաց հասակի. Այսքան տարի աշխարհում ես ապրեցի բացի սէրից ոչ մի լաւ բան չտեսի»:

Մ.Յակոբյանի հիմնադրած տպարանի գործունեությունը դադարել է 1906թ.: Երեւի հրդեհվել է հայ-թուրքական ընդհարման ժամանակ:

ԱՂՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԵՎ ԱՂՐԲԵՋԱՆԵՐԵՆԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՈՒՇԻԻ ՄԱՅՍԵՂԱԿԱՆ ԳԵՐԵՋՄԱՆԱՏԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Օրեցօր Աղրբեջանի զանգվածային լրատվամիջոցները, ավելացնելով կեղծիքների ծավալը, ձգտում են արհեստական հիմքեր ստեղծել ու միջազգային ատյաններին, ինչու չէ նաեւ միջազգային հանրությանը համոզել, որ իբր հայերն Արցախ են եկել 19-րդ դարի կեսերին, տարածաշրջանը Աղրբեջանի անբաժան մաս է հանդիսացել հնագույն շրջանից ի վեր: Այդ ղալմաղալի օրակարգում առանձնահատուկ տեղ է տրվում Շուշիին:

Ստածում ես ու ինքդ էլ քո հարցին հարցով պատասխանում. ինչո՞ւ չպիտի աղրբեջանցի պատմաբանները զինվորագրվեն նման «արշավանքի», երբ հորդորելուց բացի հարեւան երկրի նախագահը խոստանում է նշված «կարեւոր» ծրագրի իրականացման համար տրամադրել այնքան պետական միջոցներ, ինչքան կպահանջվի: Եվ մարդիկ աշխատում են, նույնիսկ նոր քարտեզներ են գծում, ըստ որի՝ ոչ միայն Արցախը չունի սահմաններ, այլ նաեւ Յայաստանը երկրագնդի վրա տեղ չունի: Իսկ Յայաստանից Բաքու տեղափոխված Իսրաֆիլ Մամեդովն ու Քյամիլ Մամեդովը (Եղեգնաձորի շրջանից) Յայաստանը համարում են Արեւմտյան Աղրբեջան: Նույնիսկ համարձակվում են գծել մի սահման, որի մեջ ներառվում է Թուրքիայի տարածքում մնացած Արեւմտյան Յայաստանի մի մասը, Նախիջեւանը եւ Իրանի Իսլամական Յանրապետության հյուսիսային շրջանները՝ Ղարաղաղ, Ատրպատական, մինչեւ Կասպից ծովի հարավային ափը: Այս մտավորականներն առաջնորդվում են այն պատկերացմամբ, համաձայն որի՝ որտեղ վրան են զարկում, իրենցն է: Դե, եթե ոմն Մուրադ Յաջի Մոսկվայում գրքեր է հրատարակում ու հրապարակում, որոնց միջոցով ուզում է ասել, թե իբր մարդկության նախահայրերը թուրքերն են, եւ ձայն հանող չկա, էլ ինչո՞ւ չպիտի նման արտառոց երեւույթներ լինեն Բաքվում: [1]

Ի՞նչ ասեն: Սա մի նոր տեսակի պատերազմ է, որի մարտադաշտը դիվանագիտական հարթությունն է: Եվ եթե լռել են թնդանոթներն ու տանկերը, ապա նոր հրաձգություն է պահանջվում՝ հայ պատմաբանների եւ դիվանագետների համազարկ: Յայը հապաղելու իրավունք չունի: Յապաղելն ու ժամանակավոր դադարը նահանջ է:

Իրենց գործն ու զծած քարտեզները իրենց մնան, իսկ մենք անցնենք Շուշիի հյուսիսային կողմի հին հայկական գերեզմանատնից մեծ հեղեղատով բաժանող մահմեդական գերեզմանատան տարածքը եւ տեսնենք, ի՞նչ են ասում առկա արաբատառ արձանագրությունները:

Առկա են շատ շիրմաքարեր, որոնք իրենց ոճով ու զծանախշերով մնան են քաղաքի հայկական գերեզմանատների շիրմաքարերին (նույն վարպետի ձեռագիրն է): Թուրքական (ադրբեջանական) բնակավայրերում մնան ձեւի շիրմաքար տեսած չկան: Ես մեկ խնդիր պետք է լուծեի՝ հնարավորության սահմաններում պարզել, թե ում է պատկանում այս գերեզմանատունը (նկատի ունեմ ազգությունը):

Այստեղ պարզվեց, որ գերեզմանատան տարածքում հողին են հանձնված Իրաքից եւ Պարսկաստանից տեղափոխված քոչվոր ցեղերի հանգուցյալների դիակները, որոնց շիրմաքարերի արձանագրությունները որոշ տեղեկություններ են տալիս մեզ: Արձանագրությունները հուշում են, որ Շուշի են հասել քերթալա, մաշադի, դաջար եւ այլ ցեղեր: Պարզվեց նաեւ, որ որոշ ժամանակահատվածում կիսաքոչվոր կյանք վարելուց հետո 20-րդ դարասկզբին սկսել են հարմարվել նստակյաց կյանքին, շարունակելով զբաղվել հիմնականում անասնապահությամբ եւ թաղիքագործությամբ: Առկա արձանագրությունները համապատասխանում են որոշ այլ տեղեկատվությունների, որոնք նշում են, որ 1826 -1828թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո մինչեւ 1830 թվականը բնակչության ներիսս է եղել դեպի Ղարաբաղ: Անդրկովկաս են տեղափոխվել 40 հազարից ավելի պարսիկներ, որոնք տեղավորվել են Երեւանի եւ Ելիզավետպոլի նահանգներում: [2]

Մեջբերելով Մ.Յու. Ներսեսովի (Միրզա Փարրուխ Մինասի Ամիրխանյանց Դ.Գ.) «Թարիխի-սաֆի» գրքից, Ե.Ախունդովը նշում է. «Ղարաբաղի, Շամախու եւ Շաքիի տարածքները հնում հայկական են եղել»: [3] Տեղեկատու աղբյուրներում նշված է, որ Կովկաս ներխուժած թուրքալեզու ցեղերը սկսել են դուրս մղել արաբներին եւ մյուսներին: Այն մասին, թե երբ եւ ինչպես են դուրս մղվել արաբները եկվոր (притомельцы - ոչ տեղացիներ իմաստով) թուրքերի կողմից, կոնկրետ տեղեկություններ չկան, սակայն ակնհայտ է, որ նշված գործընթացը իրականացվել է՝ կապված Ադրբեջանի եւ հուսիս-արեւմտյան պարսկական պրովինցիաները (մարզերը) թուրքացնելու հետ: Մեջբերում են. «Մելջուկների դիմաստիայից, չնայած VI-XII դդ. Դերբենդում, ըստ ակադեմիկոս, արեւելագետ Վ.Վ. Բարտոլդի, մեծամաս-

նություն են կազմել արաբները» [4]: Դեղինակը նաեւ նշում է. «Միջին Ասիայից, շրջանցելով Կասպից ծովը, Կովկասում սկսել են հայտնվել թուրքալեզու ցեղեր. կարամանլուները՝տեղահանված Պարսկաստանից 1509թ.՝ շահ Իսմայիլի կողմից, բայաթները՝ XVIդ. վերջին՝ շահ Աբասի կողմից»: Առկա են եղել նաեւ Թուրքմենիայից ներթափանցած թարաքյամա, պադար, մաշադի, իսկ Իրաքից՝ քերթալա ցեղերը: [5]

Անհրաժեշտ է նշել, որ քրիստոնյա բնիկ հայերին Արցախից դուրս մղելու փորձեր միշտ եղել են, սակայն չի հաջողվել, ժողովուրդը զինված դիմադրություն է ցույց տվել: Նման ցանկություն ու ծրագրեր են ունեցել տաճիկները, սակայն չի հաջողվել, ինչպես 1905-1906թթ., այնպես էլ 1918-1920 թթ. զինված ընդհարումների ժամանակ: Այդ մասին վկայում են նաեւ Շուշիի գերեզմանատների շիրմաքարերի մի շարք արձանագրություններ:

Շահնագարյանների սերունդ Մելիք Յյուսեյնի շիրմաքարի արձանագրությունը փաստում է, որ վերը նշված քոչվոր ցեղերի թվում եղել են նաեւ տաճիկներ: Շիրմաքարի հարավահայաց կողմն արձանագրված է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ՈՐԴԻ ՄԵԼԻՔ ՅԻՍԵԻՆ ԹԱՌՃԶԵ ՈԳԵՄ
ԶԲԱՆԱ ԳՈՎԵՍԴԻ Ի ՎԵՐԱՅ ՄԵԼԻՔ ԶՈՒՍԵՅՆԻ ԶՈՐ ԳՐԵՑԻ ԱՅՍ ՏԱՊԱՆ
ՍԱ ԷՐ ՏՐ ԵՐԿՐԻՆ ՎԱՐ (ԱՆԴԱ)
ՌՃԶԵ (1746թ.)

Իսկ երեսին գրված է.

ԹԱԳ ՊԱՐԶԱՆՔ ԶԱՅՈՑ ԱԶԳԻ ՅՈՅԺ ԿՈՂՈՐԷԱՑ ԱԶԳԵՆ ԴԱԶԿԻ
ՊԱՏԵՐԱԶՄԵԱՑ ՅԵՏ ՕՍՄԱՆՑԻ ՍԱ ՈՉ ԵՏ ԶԱՐԿ ԹԱԳԱԻՈՐԻ ԱՍՈՒՐ
ՊԱՐԻՍՊ ԷՐ ԱՇԽԱՐԻ [6]

Նշված գործընթացը շարունակվել է նաեւ խորհրդային տարիներին Ադրբեջանի կողմից: Ծնշումն ակտիվացել էր 1960-ական թվականներին, որը պատճառ է դարձել արցախահայության 1988-1994թթ. ազգային-ազատագրական շարժման:

Շուշիի մահմեդական այս գերեզմանատան հետ Ադրբեջանը ոչ մի առնչություն չունի, քանի որ բոլոր արձանագրությունները վկայում են, որ ինչպես Կովկասի մյուս շրջաններում, Արցախում եւս՝ մասնավորապես Շուշիում, դաջարներ եւ այլ թարաքյամա (քոչվորական կյանք վարող) ցեղեր են բնակվել:

Ի հայտ եկած արձանագրությունները վկայում են, որ եթե մինչև 20-րդ դարը շատ բնիկ ազգեր իրենց տարածքները զիջում էին տեղաշարժի, բռնագաղթի, ազգամիջյան զինված ընդհարումների արդյունքում, ապա խորհրդային շրջանում Կովկասում կատարվում էր հիմնականում երկու եղանակով.

1. Ոչ թուրքալեզու բնակավայրերում վերաբնակեցնում էին մեծ թվով թուրքերի: Կարճ ժամկետում վերջիններիս թվաքանակի մի քանի անգամ ավելանալն ու պետական անբարյացակամ մոտեցումը բնիկ քրիստոնյաներին ստիպում էին թողնել իրենց բնակավայրերը: Վկա է այն փաստը, որ անցյալ դարում Բաքվում հայերը մեծ թիվ էին կազմում (ռուսների հետ միասին կազմում էին ամբողջ բնակչության մեծամասնությունը), իսկ 1990թ.-ից ի վեր քաղաքում չկա հայ, մի քանի անգամ էլ պակասել է ռուսների թիվը:

2. Պետականորեն, սակայն, առանց հատուկ հրամանագրի, սկսած 1970 թվականից իրենց հատուկ լեզուն ունեցող թալիշները, դաջարները, լյաքերը, օվչարները, քոդերը եւ այլոք, անձը հաստատող բոլոր փաստաթղթերում գրվեցին ադրբեջանցի:

Այսպես, 1950-ական թվականներին սկսվել էր լեռնական-հրեաների «մասսայական դիմումների հոսք»՝ հասցեագրված տեղական իշխանություններին, որ ուզում են փոխել իրենց ազգությունը, այսինքն՝ հրեաները ուզում են դառնալ թաթեր: Շարժման կենտրոնը Դաղստանն էր: Պատրաստում էին անձնագրեր, եւ այդ պրոցեսը շարունակվում է մինչև 60-ական թվականները: Նույն պրակտիկան տարածվել է Կովկասի մյուս ինքնավար հանրապետություններում ու մարզերում: [7]

Ի տարբերություն Դյուսիսային Կովկասում կատարվածի, մեր տարածաշրջանում՝ Արցախում, Ադրբեջանի կողմից իրականացվում էին վերը նշված կետերի միջոցառումները միաժամանակ (ազգությունը փոխելը, տարածքը յուրացնելը): Եվ այդ պրոցեսները եթե Դաղստանում կատարվում էին 1950-60-ական թվականներին, ապա Արցախում Ադրբեջանի իշխանությունները սկսել էին էլ ավելի վաղ՝ 1920-30-ական թվականներից եւ իրականացվել են տարբեր առիթներով:

Արդեն Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ (ապա ինքնավար) մարզ դարձած մեր տարածքը հանգիստ իր «գաղին թորփաղը» (հին, վաղեմի հողերը) հայտարարելու համար պետք էր մաքրել բոլոր հետքերը, փոխել այն ցեղերի անունները, որ տարբեր առիթներով Արցախ են թափանցել Պարս-

կաստանից, Իրաքից ու Միջին Ասիայից: Դա հաջողվել է, ինչպես հաջողվել է, որ դրանից առաջ «Կովկասի թաթար» լինելով հանդերձ դառնալ ադրբեջանցի:

Ուշադրություն դարձնենք «ադրբեջանցի» բառին: Այն բաղկացած է «Ադրբեջան» բառից եւ -ցի վերջավորությունից, որը ռուսերենի -ей եւ, այսպես կոչված, ադրբեջաներենի -лы վերջավորությունների համարժեքն են (азербайджанец, азербайджанлы), որ նշանակում է տվյալ տարածքում, տեղում ապրող: Եվ չգիտես ինչո՞ւ է միաժամանակ այդ բառը դարձել հատուկ անուն՝ ազգ նշանակող իմաստով: Այս պրոցեսը, ինչպես տեսնում ենք, կոչվում է ասիմիլյացիա (ծուլում): Պրոցես, որի շնորհիվ փոքրամասնություններին խառնում-միացնում են մեծերի հետ, կոչելով վերջիններիս անուններով: Նման պրոցես կատարվել է նաեւ Շուշիում, որի այսօրվա ամխոս վկաներն են վերը նշված մահմեդական գերեզմանատան տարածքում ի հայտ եկած արձանագրությունները, որոնց գրչագիր տեքստը ներկայացվում է ընթերցող հասարակությանն ու բոլոր նրանց, ովքեր այսօր անօրեն հավակնում են Ղարաբաղի հողերին: Ներակայացվող արաբատառ այս արձանագրությունները վկայում են, որ ծուլել, ադրբեջանցի են դարձրել (անվանակոչել) ոչ միայն ցեղը, այլ նույնիսկ առանձին ընտանիքների կեսը: Կողք-կողքի են դաջարների ցեղի սերունդ թույր ու եղբայր Քեյխստրովի ու Նիմթաջի շիրիմները: Եղբոր շիրմաքարին գրված է.

Բահմանով Քեյխստրով Միրզա Ղաջար Քեյգուրաթ Միրզա օղլու
(1914-1985թթ.), իսկ քրոջ շիրմաքարին՝ Բահմանովա Նիմթաջ
Քեյգուրաթ զըզը (1920-1974թթ.): [8]

Բերենք մի այլ օրինակ: Շուրջ երեք տարի է, ինչ անձամբ է գործի անցել Ռուսաստանի Ֆեդերացիայում Ադրբեջանի Հանրապետության դեսպան Մամեդով Փուլադ Բյուլ-Բյուլ օղլին: Տարիներ շարունակ լուռ մնալուց հետո, երկու անգամ (2008-2009թթ.) գալով ԼՂՀ, եղավ նաեւ Շուշիում: Նրա առաջին այցը կարծես մի տեսակ հետախուզական էր, իսկ երկրորդի ժամանակ ցանկություն հայտնեց Շուշիում ստեղծել իր հոր՝ Բյուլ-Բյուլի տուն-թանգարան՝ իրենց հայտարարելով որպես բնիկ շուշեցիներ: Տեսնենք ինչքանով է համապատասխանում իրականությանը դեսպանի կատարած հայտարարությունը:

Այսպես. Բյուլ-Բյուլ (իսկական անուն-ազգանունը՝ Մուրթուզա Մաշա-
դի Ռզա օղլի Մամեդով, ծնված 26.06.1897թ., Խանի բաղ տեղամասում,
Շուշի քաղաքից ոչ հեռու): Աղբրեջանական խորհրդային երգիչ: Բյուլ-
Բյուլ (բլբուլ) - նշանակում է սոխակ: Հատուկ անուն դարձած այս մական-
ունը նա ստացել է շնորհիվ իր ծայնի: Մահացել է 26.09.1961թ., թաղված
է Բաքվում: [9]

Ինչպես տեսնում ենք, Արցախ-Ղարաբաղ թափանցած մաշադի ցեղի
սերունդ Բյուլ-Բյուլը ոչ ծնունդով, ոչ էլ գործունեությամբ Շուշիի հետ ոչ
մի կապ չունի: Պարզապես խորհրդային տարիներին Շուշիում ունեցել է
տուն, որը նրանց ծառայել է որպես ամառանոց:

Վկայող շատ արձանագրություններ ու փաստեր կան: Այնպես որ, եթե
Աղբրեջանն այսօր մոլորեցնելով ժողովրդին, Արցախի հողերն իր «գաղիմ
թորփաղն» է համարում, կեղծ է, քանի որ, ինչպես տեսնում ենք, աղբրե-
ջանցին, որպես ազգ, միանգամայն նոր անուն է ազգերի ցանկում: Հետե-
ւաբար նոր ազգը «գաղիմ թորփաղ» չի կարող ունենալ: Իսկ մյուս տար-
բերակը, եթե համաձայնվեն ու հանձն առնեն, որ իրենք վերոնշյալ ցեղե-
րից ծուլված են, ապա միանշանակ պետք տարածքի հավակնեն, ավելի
ճիշտ՝ բնակություն հաստատելու (վերաբնակվելու) իրավունք ստանան
ոչ թե Ղարաբաղում, այլ՝ Արաքսի աջ ափին, վերը նշված տեղերում:

Հարկ են համարում նշել, որ «աղբրեջաներեն» կոչվող լեզվի աղբրե-
ջաներեն լինելն էլ կասկածելի է: Այն ավելի շուտ տաճկերեն է, լրացուցիչ
ուսումնասիրության ու հիմնավորման կարիք ունի, պիտի զբաղվեն լեզ-
վաբանության մասնագետները եւ հայտնեն համապատասխան կարծիք,
որն էլ հիմք կծառայի վերջնական եզրահանգման համար:

Գրականություն

Շուշի, 22.08.2007թ.

1. Տե՛ս, Էդուարդ Լ.Պանիբեյան, պատմ. գիտ. դոկտոր, «Պանթուրքիստական խավա-
թաճուղության ջունգլիներում», «Գոլոս Արմենիի», 16-22 մայիսի, 2007թ.:
2. Տե՛ս Ն.Ախունդով, «Պարաբաղնամակար», 2-րդ հատոր, էջ 477, 1991թ., Բաքու:
3. Նույն տեղում, էջ 412:
4. См. З.У Махмудова, Дербент в. XIX—начале XX века этническая мозаичность
города на вечном перекрестке., ст. 42, Москва 2006г.
5. Там же, ст. 56
6. Տե՛ս Ավետարանոց գյուղի գերազմանատուն, շիրմաքար N 3:
7. См. З.У Махмудова, Дербент в. XIX — начале XX века Этническая мозаич-
ность города на вечном перекрестке., ст. 63-64, М. 2006г.
8. Տե՛ս Շուշիի մահմեդական գերազմանատուն, արձանագրություն N 6:
9. См. Большая Советская энциклопедия, том 1, ст. 206, Москва, 1971г.

ՀԵՐԹԱԿԱՆ «ԿՐԱԿՈՑՆԵՐ» ԲԱՔՎԻՑ

Կամ՝ ականա պատասխան նենգափոխիչ
պրոֆեսոր Ս. Գասըմլիին

Բաքվի ռադիոյի հերթական հյուրն էր հանրապետության պետհամալ-
սարանի պատմության ամբիոնի դասախոս, պրոֆեսոր, պատմական գի-
տությունների դոկտոր Մուսա Գասըմլին: Հաղորդավարուհին հայտարա-
րեց. «1919-ջի իլ, սոյ գրըմ, տեռոր», այսինքն՝ 1919 թիվ, ցեղասպանու-
թյուն, ահաբեկչություն, եւ «բույուրըն» ասելով՝ խոսափողը տրամադրեց
պրոֆեսորին: Էֆենդի Գասըմլին մի երկու բառով նշեց, որ ահաբեկչությունն
առաջին անգամ ասպարեզ է եկել Իսպանիայում եւ որպես հանցագործու-
թյուն՝ ուղղված է եղել ինչպես պետության, այնպես էլ առանձին մարդկանց
դեմ: Որպես օրինակ՝ նշեց 2003թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում, 2004թ. Հյու-
սիսային Օսիայի Բեւլան քաղաքում (Ր. սաստան) կատարված դեպքերը
(հասկանալի է՝ սովորության համաձայն՝ հզոր պետություններին սիրաշա-
հել է պետք) ու արագ անցավ Հայաստանին ու Ղարաբաղին: Նրա խոսքե-
րով, ահաբեկչությունը՝ որպես վախեցնելու քաղաքականություն, Իսպա-
նիայից տեղափոխվել է Հայաստան ու Ղարաբաղ, եւ այժմ աշխարհի ահա-
բեկիչները հայերն են, իսկ նրանց առաջնորդն է ակադեմիկոս Աղանբեկյա-
նը, որը 1987թ. հայերին ասել է, որ ինքը խոսել է Գորբաչովի հետ, որպեսզի
Ղարաբաղը միացնեն Հայաստանին: Դրանից հետո սկսել են հայ միրութա-
վորներ հայտնվել անտառներում, որտեղից էլ հարձակվում էին աղբրեջա-
նական գյուղերի վրա, գողանում անասուններ եւ այլն:

Ահաբեկչությունն ուժեղացնելու նպատակով իբր հայերը տարբեր տե-
ղերից գենք էին փոխադրում Ստեփանակերտ: Նրա խոսքերով, այդ գոր-
ծում ներգրավված էին Հայաստանի հատուկ ծառայությունների ու ներքին
գործերի մարմինները, ինչպես նաեւ դաշնակցականներ: Հետաքրքիր է,
այս խոսքերը Ղարաբաղի ֆերմաներից անասուններ քշող-տանող թուրք
երիտասարդներն է՞լ էին լսու: Առաջին հերթին այն հինգ զինվածները, որ
Շուշիի շրջանի Դաշտահողի ֆերման գիշերը դատարկել էին, իսկ երկու
հայ անասնապահներին «ուղարկել» հիվանդանոց՝ երկարատեւ բուժման:

Հաղորդավարուհու հերթական հարցին պրոֆեսորն այսպես պատաս-
խանեց. «Հայկական ահաբեկչությունը 100 տարեկան է, իսկ մենք միայն
տասը տարի է, ինչ սկսել ենք նրա դեմ պայքարել, եւ հույս ունեն, որ ուժ
կունենանք հայկական ահաբեկչությանը վերջ տալ: Քանի որ աշխարհում

չկա իսլամական ահաբեկչություն, հայկական ահաբեկչությանն էլ պետք է վերջ տալ»:

Չետաքրքիր է, էֆենդի Գասըմլին 2004թ. մայիսի 5-ի «Օսնովնոյ ինստիտուտ» հեռուստահաղորդումը Մոսկվայից դիտել է: Եթե ոչ, ապա հիշեցնեմ, որ հաղորդման հյուրերի թվում էր նաև Մոսկվայում տեղակայված «Ալ Ջազահիր» հեռուստաբյուրոյի պետ Աքրամ Խուզամը: Քննարկվող թեման այնտեղ էլ «միջազգային ահաբեկչությունն» էր: Նրա ոչ մի խոսքից չէր կարելի ասել, որ ժխտում է իսլամական ահաբեկչության գոյությունը: Ըստ պրոֆեսորի՝ ահաբեկչությունը Հայաստանի պետական քաղաքականությունն է: Որպես ահաբեկչության փայլուն օրինակ՝ մատնանշեց 1960 թվականին (փաստորեն, դեպքը տեղի է ունեցել 1967 թվականին. Յ.Յ.) Ստեփանակերտում կատարված մի դեպք: Խոսքերը թարգմանված ներկայացնում են. «1960 թվականին Ստեփանակերտ քաղաքում բանտի հատուկ մեքենայի մեջ հայերը հրկիզել են մեր քաղաքացուն»: Պրոֆեսորի վկայությամբ, իբր նա ահաբեկչության օրինակներ շատ ունի, սակայն այս մեկն էլ բավական է, որպեսզի ունկնդիրը հասկանա, թե ինչ է հայկական ահաբեկչությունը, կամ առհասարակ ինչ ասել է ահաբեկչություն:

Երեւի ես անուշադրության մատնեի այս հերթական հաղորդումը, եւ այն մնար հիշողությանս մեջ որպես ծախսող որսորդի հրացանի կրակոց, եթե չխոսվեր ադրբեջանցի բանտարկյալի հրկիզման մասին ու այն չներկայացվեր որպես ահաբեկչություն Ադրբեջանի դեմ:

Թող ընթերցողի համար ձանձրալի չլինի, որ քիչ-ինչ խորանամ ու նշեմ որոշ մանրամասներ՝ ըստ դեպքերի հաջորդական զարգացման՝ ներողություն խնդրելով Ղարաբաղի Մարտունու շրջանի բերդաշենցիներից, որ ես ստիպված եմ ձեռք տալ նրանց ծանր վերքերից մեկին: Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Կուրոպատկինո գյուղի բնակիչ, նույն գյուղի դպրոցի տնօրեն, ազգությամբ ադրբեջանցի Արշադ Աբասովն իր բարեկամներ Ալամշաղի եւ Ջոհրաբի հետ դպրոցից տունդարձի ճանապարհին սովխոզի տեղամասի պետ Բենիամին Մովսեսի Մովսիսյանի ութամյա որդուն՝ Նելսոնին, առեւանգել ու «Մոսկվիչ» մակնիշի ավտոմեքենայով հեռացրել էին գյուղից, առանձին դաժանությամբ սպանել (մեթոդները չեմ նշում) ու դիակը նետել խաղողի այգուց ոչ հեռու գտնվող՝ մոլախոտերով ծածկված փոսի մեջ: Դիակը գտնվել է հարյուրավոր հայ բերդաշենցիների որոնումների շնորհիվ: Երեխայի սպանության փաստի կապակցությամբ տարվել է քննություն ու կայացվել էր դատավճիռ: Ստեփա-

նակերտից Շուշիի բանտ ուղեկցելու պահին կալանավորներ փոխադրող ավտոմեքենայի մոտ Արշադի կինը բարձրածայն դիմել է ավտոմեքենա բարձրացող ամուսնուն ու ասել. «Ոսկին հասել է Բաքու, չմտածես»: Հենց դա էլ ստիպել է, որ ժողովուրդը կայացնի իր դատավճիռը: Գազանի հատկություններով օժտված հանցագործին սպանելու համար տուժել են ութ տարեկան տղայի 70-80 բարեկամներ, որոնք ձերբակալվել ու տարբեր ժամկետի ազատագրկման երթարկվելով՝ պատիժը կրել են Բաքվի ուղղիչ աշխատանքային գաղութներում: Իսկ էֆենդի պրոֆեսորը, տեղյակ-անտեղյակ կատարվածին, մեյդան է բերում Արշադի սպանության փաստը՝ այն էլ առանց նշելու անունը, որպեսզի իր կողմից տրված «ահաբեկչություն» որակումը հալած յուրի տեղ ընդունվի: Չետաքրքիր է, թե ինչո՞ւ Մուսա Գասըմլին Արշադ Աբասովին հիշում է, բայց նրա կատարածը՝ ոչ (չնայած մենակ չէր), իսկ 1991թ. իր ժառանգական պարտականությունները կատարող միլիցիայի մայրո Հրաչիկ Քրիստաֆորի Շահբազյանի հետ կատարվածը չի հիշում, չի նշում, թե ինչպես են ադրբեջանի օմոնականները եւ Շահբազյանի ադրբեջանցի «զինակիցները» անօրեն կերպով մուտք գործել ՆԳ Ստեփանակերտի քաղաքային հերթապահ մաս ու կեսգիշերին առեւանգել, իսկ մի քանի օր հետո դաժանությամբ սպանել Շուշիի բանտում: Պրոֆեսոր Մուսա Գասըմլին՝ որպես պատմության մասնագետ, այն էլ զիտական բարձր կոչումով, պարտավոր է իրարից տարբերել «սպանություն», «ազգային-ազատագրական շարժում», «ցեղասպանություն», «ահաբեկչություն» տերմինները: Ճիշտ է, նշված բոլոր դեպքերում էլ կատարվում է մարդասպանություն, սակայն պետք է իմանալ, թե որ սպանություն նշված տեսակներից որին վերագրել:

Ինչպես տեսնում ենք, իշխանության ներկայացուցչի առեւանգումն ու առանձին դաժանությամբ սպանությունը ահաբեկչություն չէ, իսկ ութամյա դպրոցականին առեւանգող, հետո էլ գազանաբար սպանողին՝ Արշադին, սպանելը, ըստ ադրբեջանցի պրոֆեսորի, հայկական ահաբեկչություն է: Պրոֆեսորի կոչում ունեցողը պարտավոր է իրարից տարբերել «ահաբեկչություն» եւ «հատուցում» հասկացությունները: Հանրագիտարանում սրանք հանդես են գալիս «քաղաքական ահաբեկչություն» եւ «արդարացի հատուցում» բառակապակցություններով: Այստեղից կարելի է անել հետետություն, որ հատուցումը միշտ լինում է արդարացի, իսկ ահաբեկչությունն ունենում է քաղաքական նպատակներ: Նրա խոսքերով, «Դաշնակցություն» կուսակցության բոլոր անդամները ահաբեկիչներ են: «Դաշնակցություն» կուսակցության ժամանակակիցն ու հասակակիցն է

«Մուսավաթ» կուսակցությունը: Եթե պրոֆեսորին առաջարկվի տալ այս երկու կուսակցությունների համեմատական բնութագիրը, երեւի կնշի, որ «Մուսավաթ» կուսակցությունը միջազգային մակարդակի բարեգործական կազմակերպություն է, «Կարմիր խաչի» երկվորյակ եղբայրը:

Հայ ժողովրդի դարաբաղյան հատվածի ազատագրական շարժումը նա ներկայացնում է որպես ահաբեկչություն ընդդեմ Ադրբեջանի, չնայած գերազանց գիտի, որ դա ազգային-ազատագրական շարժում է, որի հիմքը դրվել է դարեր առաջ: Մենք նման շարժման ո՛չ առաջին սկսողներն ենք, ո՛չ էլ վերջինը կլինենք: Իսկ դուք 1921 թվականին ուրիշի հողի վրա ձեզ համար ստեղծած (ծեւավորած) հանրապետություն եք:

Իսկ այն մասին, որ հայերին իբր իրենք են հողային տարածք տվել, երեւանի նման քաղաքն էլ՝ որպես մայրաքաղաք, ու «այդքանից հետո հայերը ահաբեկում են իրենց», կասեմ հետեւյալը: Հայաստանի սահմանների մասին գրել են շատերը, այդ թվում նաեւ ազգությամբ արարներ Աբուլֆեթն ու Յագուբը: Հայաստանն ունեցել է 15 հազար քառ. մետր աշխարհագրական մղոն տարածք՝ աշխարհագրական երկայնության 52,5 աստիճանի եւ 68 աստիճանի, լայնության 37 ու 41, 5 աստիճանների միջեւ (տե՛ս, Ս. Գլինկա, Հայ ժողովրդի պատմության տեսություն, ռուսերեն, էջ 11, 1832թ., Մոսկվա):

Վերոնշյալ թեման շարունակում է Բաքվի պետհամալսարանի ժամանակակից գրականության (ադրբեջաներեն) ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հասան Միրզոեւը: Թեման էլի պատմությունն էր՝ անցյալ ու ներկա, նորանոր, մարդկությանն անհայտ ու անհասկանալի եթնիկական քարտեզներով: Ի տարբերություն շատերի՝ Միրզոեւը ներկայացավ ռադիոլսողներին, նախ խոսեց իր ով եւ որտեղացի լինելու մասին ու շարունակեց: Նշեց, որ ծնվել է Նախիջեւանի Դարալագյազ գյուղում, բարձրագույն կրթությունը ստացել է Բաքվում, երկար տարիներ աշխատել Նախիջեւանի գյուղական դպրոցներում, ապա մի քանի տարի եղել է կրթության բաժնի ավագ տեսուչ: Դարալագյազցի: Այո՛, այն դարալագյազցին, որ խառնվելով Օսմանյան Թուրքիայի ասկյարներին, յաթաղանը ձեռքին 1918թ. հասել է Բերդաձոր ու Շուշի: Միշտ մասնակցելիս է եղել ժողովրդի ուրախ եւ տխուր միջոցառումներին: 1950-55թթ. բավականին նյութեր է հավաքել: Տեղափոխվել ու աշխատանքի է անցել Բաքվի պետհամալսարանի բանասիրության ամբիոնում: Իբր մինչեւ 1980-90-ական թվականները տպագրության է սպասել: Հենց երկրորդ անգամ Հ. Ալիեւն իշխանության է եկել, նրան տեղեկացրել են, որ Հասան Միրզոեւը «Դարալագյազ» վերնագրով գիրք է տպագրության հանձնել, սակայն տեղաշարժ, առաջխա-

ղացում դեռ չկա: Նախագահն իր մոտ է հրավիրել հեղինակին: Որոշ մասնաձեռքեր իմանալուց հետո համապատասխան մարմիններին հանձնարարել է, որ միջոցներ հատկացնեն, անհապաղ տպագրեն ու տարածեն, որպեսզի ժողովուրդն իմանա իր ազգի ունեցած ու կորցրած հողերի մասին: 76-ամյա պրոֆեսորը, լինելով նաեւ Միլլի Մեջլիսի պատգամավոր, 1990-ից շուրջն է համախմբել համալսարանի՝ իր գլխավորած ամբիոնի դասախոսներին ու տվել հատուկ հանձնարարություն: Նրա ասելով, Ասլան Բայրամովը պետք է գրի մի պատմություն, որ կոչվելու է «Ադրբեջան»: Հիշեցնեմ, որ պատմական Դադիվանքի մասին է խոսքը: Պատկերացնո՞ւմ եք: Հայի պատմա-ճարտարապետական կառույցներին նայելով, գետափին նստած, Ասլան Բայրամովը պատմություն է հորինում: Ժամանակից շուտ ի՞նչ կարող ենք անել: Ոմն Վիլայաթ մուալլիմ (ազգանունը չնշեց) պետք է գրի Ջանգեզուրի պատմությունը:

Պրոֆեսորի գրույցից այնպես հասկացա, որ նոր մասնագետներ են ասպարեզ եկել ու գրում են Հայաստանի տարածաշրջանի պատմությունը, բայց ոչ հայ ժողովրդի: Իր գրույցի ավարտին, ասաց. «Մեր յոթ միլիոնից բացի՝ աշխարհում կա 50 միլիոն ադրբեջանցի, պետք է բոլորին համախմբենք ու հասկացնենք, որ ոտքի կանգնեն, զինվեն ու միացնեն բոլոր «ադրբեջանական» հողերը, իսկ առաջին հերթին՝ Դարաբաղն ու յոթ շրջանները: Թե խոսքը որ հողերի մասին է, իմ գրքի վերջում տեղադրված է քարտեզը»:

Էֆենդի պրոֆեսոր, եթե հերթը քարտեզին է հասել, այն էլ՝ քո երազների հիման վրա կազմած, ապա ըստ հանրագիտարանի քարտեզի՝ դու պետք է գնաս քո գաղափարներով Դրղաստանի ու Չինաստանի սահմանում՝ Տիբեթում, կատարես յուրացումներդ:

Պրոֆեսորի մտքի վերջին գոհարը. «Մեր քաղաքացիական պարտականությունն է լավ հիշել, որ կա ադրբեջանականություն (ազերբայջանչը-լըզ) մի կարելու հարց, որի հիմնադիրը եղել է մեր հարգված հանգուցյալ նախագահ Հ. Ալիեւը»:

Դե ինչ, մնում է, որ Եվրոպայի ու Մերձավոր Արեւելքի յուր ժամանակի պատմաբաններն ու աշխարհագրագետները հարություն առնեն ու միասին իրենց «սխալի» համար ներողություն խնդրեն, ապա հաջողություն ցանկանան պրոֆեսոր Հասան Միրզոեւին, որ որոշել է ուղղել իրենց «սխալը»: Իսկ մեր մասնագետներն էլ օրակարգի հարց պիտի դարձնեն մնաց երեսույթների դեմ պայքարելը՝ դիմելով ավելի ռեալ եղանակների:

15.04.2005թ.

ԱՆՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄՆԱՑԱԾ ԱՆՈՒՄ ԱՐԺԱՆԻ ՄԵԾԱՐՄԱՆ

Արցախի հարավ-արեւմտյան մասում է գտնվում Բերդաձորը՝ շրջապատված 30-ից ավելի բնակավայրերով: 13-րդ դարից ի վեր այստեղ մարդիկ ապրում էին առանձին տոհմերով (վկայում են ի հայտ բերված մի շարք խաչքարեր ու պահպանվող հնություններ): 1805թ. մայիսին Կուրակ գետի մոտ կնքված պայմանագրի համաձայն՝ ռուսական հպատակություն ընդունելուց հետո Բերդաձորն իր մայր գյուղերով մտել է Ջանգեզուրի շրջանի (ուեզդ) կազմը: Շրջանի կազմում ընդգրկված 25 գյուղերից միայն Գորիսին էր զիջում բնակչության թվով. անցյալ դարասկզբին Գորիսում կար 450 տուն (4722 մարդ), իսկ Բերդաձորում՝ 430 տուն (2611 մարդ):

Այսօր ուզում եմ խոսել Բերդաձորի փոքր բնակավայրերից մեկի՝ Թեւանատուն գյուղի, ավելի ճիշտ՝ նրա բնակիչներից մեկի մասին: Ասեմ, որ այդ գյուղն այնքան էլ մեծ չի եղել՝ ընդամենը 8 տուն, որոնցում Թեւանի (չչփոթել Տունի գյուղի հայտնի Թեւանի հետ) գերդաստանի անդամներն էին ապրում: Գյուղը եղել է սովորական բինա, որտեղ բերդաձորցի գերդաստանը զբաղվել է անասնապահությամբ: Մեզ հասած բանավոր տեղեկություններն ասում են, որ բինայից ոչ հեռու ճանապարհով սար բարձրացող թափառական-քոչվոր ցեղերի աչքը Թեւանից «ջուր չի խմել», եւ բինան անվանակոչել են «Թեւան էփի», այսինքն՝ Թեւանի տուն, իսկ հետագայում՝ Թեւանատուն: Գյուղատեղին այսօր էլ տեսանելի է Բերդաձորի մայր գյուղ Մեծ շենից:

Չնայած «Թեւանատուն» տեղանունը այժմ էլ պահպանվում է, շրջանառության մեջ է, սակայն մի շարք գերդաստանների նման Թեւանի գերդաստանն էլ 19-րդ դարի վերջին անվանափոխվել է: Քանի որ գերդաստանն արդեն ուներ չորս հոգեւորական (տեղացիներն ասում էին՝ «դեր») եղբայրներ, որոնք գրաճանաչի համբավ ունեին Բերդաձորում, այդ պատճառով էլ գերդաստանը վերանվանվեց Դերունց ու պահպանվում է: Տարբեր հանգամանքների բերումով (1918-20թթ. ազգամիջյան ընդհարումներ, Օսմանյան Թուրքիայի հարձակում, 1930թ. կոլեկտիվացում, իսկ հետագայում՝ գյուղերի խոշորացում) գյուղը դարձավ անմարդաբնակ:

Թումասյանների (Դերունց) գերդաստանը առաջին անգամ գյուղը թողեց 1918թ. սեպտեմբերին ու տեղափոխվեց Շուշի:

Սույն հոդվածում ուզում եմ ծավալվել այս գերդաստանի գավակ տեր Սկրտիչի (ասում էին «դեր Մակիչ») որդու՝ Հակոբջան Թումասյանի մասին:



Թումասյանների (Դերունց) գերդաստանը հայրենի գյուղում

Մի մարդու, ով երիտասարդ հասակից մինչեւ խոր ծերություն շատ ծառայություններ է ունեցել, սակայն մնացել է անհայտ: Այսօր իմ ձեռքի տակ են գրույցի թեմա դարձած Հակոբջան Թումասյանի երիտասարդ տարիներից պահպանվող լուսանկարն ու մի խղճուկ թղթապանակ, որի մեջ պահպանվում են արդեն դեղնած ու հազիվ ընթեռնելի մի շարք փաստաթղթեր (վկայականներ, տեղեկանքներ, զովասանագրեր) զրված տարբեր լեզուներով, որոնք, հստակ տեղեկություններ տալով, ստիպում են պատկերացում կազմել արծվաթիթ ու խելացի աչքեր ունեցող մարդու գործունեության մասին: Ընթերցում ու մտորում եմ՝ քանի՞-քանի նման բերդաձորցիներ են «արխիվին» հանձնվել՝ մնալով անհայտության մեջ, կատարածի մասին սերունդներին անտեղյակ պահելով:

Մինչեւ փաստաթղթերի բովանդակությունը ներկայացնելը տեղեկացնեմ, որ թղթապանակն ինձ է հանձնել Հակոբջանի որդին՝ ութսունինգամյա Պավել Թումասյանը:

Ըստ վկայագրերի՝ Հակոբջան Սկրտիչի Թումասյանը ծնվել է 1892թ. Ելիզավետպոլի նահանգի Գորիսի շրջանի Բերդաձոր գյուղում: Ամուսնա-

ցել է 21 տարեկանում համազյուղացի Մարիամ Ղահրամանյանի հետ եւ ունեցել երեք տղա եւ երեք աղջիկ: Առաջնեկը՝ Բեգունը, ծնվել է 1913 թվականին: Երբ սկսվել է երկրորդ ազգամիջյան ընդհարումը, Հակոբջանը զինվորագրվել ու անցել է գյուղի ինքնապաշտպանությանը: Իսկ երբ հրամայվել է գյուղը հանձնել ու նահանջել՝ ապահովելով գյուղացիների տեղափոխությունը Շուշի (արդեն գյուղի մատույցներում էր Օսմանյան թուրքիայի կանոնավոր զորքը, որը մոտենում էր Հագար գետի հովտից), նա եւս տեղափոխվում է՝ պաշտպանությունն ապահովելով, սակայն կնոջից ու երեխայից անտեղյակ: Շատ քիչ ժամանակ Շուշիում մնալուց հետո զինվորագրվում է Ղարաբաղի պաշտպանության բանակին եւ 1920թ. հունիսի 15-ից մինչեւ հոկտեմբերի 15-ը մասնակցում Մարտունու շրջանի Ներքին թաղավարդ գյուղի պաշտպանությանը՝ որպես գումարտակի հրամանատար: Հանգամանքների բերումով (երեւի եղել է հատուկ հրաման) տեղափոխվում է Բաքու եւ ծառայությունը շարունակում N1 կարմիր հրաձգային զնդում՝ դարձյալ որպես ստորաբաժանման հրամանատար: Որոշ ժամանակից հետո Հակոբջան թունասյանը (դարձած Тумасов) Բաքվից գործուղվում է Պարսկաստան (Ռեշտ), որտեղ եւ մինչեւ 1921թ. հուլիսի 1-ը նրա հրամանատարությամբ ծավալում են մարտական գործողություններ Կուչիխանի եւ անգլիական զինված ջոկատների դեմ: Այս մասին տրված տեղեկանքը վավերացված է կլոր կնիքով ու թվով տասը ստորագրություններով: Հենց այդ տարում էլ զորացրվել է Հակոբջան թունասյանը, հավանական է, վատառողջ լինելու պատճառով (գործում կա երկու տեղեկանք այն մասին, որ նա տեւական ժամանակ բուժվել է Բաքվի Սեմաշկոյի անվան հիվանդանոցում): Ըստ որդու՝ Պավել թունասյանի վկայության՝ Հակոբջանին երաշխավորվել է բուժվելուց հետո տեղափոխվել ծննդավայր, քանի որ հարթավայրային շրջանների կլիման նպաստաբար չէր սարերում ծնված-ապրած մարդու համար:

Հակոբջան թունասյանը 1922թ. վերադարձել է հայրենի Բերդաձոր եւ աշխատել որպես Քյուրդիստանի (Լաչինի) շրջանի կոմունալ տնտեսության վարիչ, ապա՝ ճանապարհաշինության 2-րդ կարգի վարպետ, ավելի ուշ՝ բանվորական կոմիտեի նախագահի պաշտոնում: Նրա աշխատանքային գործունեությունը շարունակվում է մինչեւ 1954 թվականը:

Հակոբջան թունասյանի դին հողին է հանձնված հայրենի Բերդաձորի գերեզմանատանը: Շիրմաքարին գրված են անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան եւ մահվան տարեթվերը եւ ուրիշ ոչինչ: Նման բերդաձորցիներ շատ են եղել, որոնց մասին, սակայն, ոչինչ չգիտենք: Ո՞վ է մեղա-

վոր: Ո՞վ պետք է մեծարեր նման մարդկանց: Ժողովուրդն ասում է՝ «Խաչը տերն է զորավոր դարձնում»: Ովքեր պետք է մեծարեին նման մարդկանց ի պաշտոնե, չարախնդում էին, վերենների աչքից հեռու պահում, քանզի իրենք հազիվ էին քարշ գալիս՝ վերենների ոտքերին քսմսվելով: Եվ այդ դեպքում մեզ համար զարմանալի չէր լինի անցյալ դարասկզբին Շուշիում հունահայ Մովսես Պաղղատյանի հայտնվելը, իսկ Արցախյան շարժման տարիներին՝ Ավոյի (Մոնթե Մելքոնյան) առասպելական կերպարը:

Չնայած հողվածը կարելի է ավարտված համարել, սակայն միտումնավոր ուզում են առանձին ներկայացնել մի կարեւոր փաստաթուղթ՝ գրված պարսկերեն եւ ռուսերեն ու վավերացված Պարսկաստանի հեղկոմի նախագահի ստորագրությամբ, կնքված հեղկոմի կնիքով:

Ներկայացնում են թարգմանաբար. «Վկայական. տրվում է հեղափոխական կոմիտեի կողմից առ այն, որ Հակոբջան թունասյանը 1920-21թթ. մասնակցել է Պարսկաստանի ազատագրական պայքարի մարտական գործողություններին Գիլանում, պարտիզանական կռիվներին, որ մղվում էին անգլիական իմպերիալիստների, ռուսական սպիտակգվարդիականների ու ներքին խռովարարների դեմ: Թունասյանը հանձնարարությունները կատարել է ազնվորեն ու բարեխիղճ:

Իրանի ազատագրման պարսկական
հեղափոխական կոմիտեի նախագահ Էխսանուլլա:
Պարտիզանական գրքույկ N161/661»:

Իսկ ի՞նչ է գրված եւ ի՞նչ է խորհրդանշում կնիքի կենտրոնում պատկերված դրոշ բռնած տղամարդը: Աջից ձախ շրջանածեւ գրված է. «Իրանի ազատագրման հեղափոխական կոմիտե»: Կենտրոնում գրված է. «Քավե»: Պա անունն է պարսկական լեզբենդի ազատարար հերոսի: Ինչպես տեսնում ենք, հիշաչար չէ հայը: Թոնրի պատերի ներսի կողմերին գրելով դարեր առաջ «ճաշակածը» իր օգնության ձեռքն է մեկնել դրացուն: Արժե հիշել, ինչո՞ւ չէ, նաեւ մեկ-մեկ էլ հիշեցնել, որ մեր երկրամասում նման այրեր էլ կան, որոնք վատությունն էլ լավությամբ են հատուցում:

ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ

Կամ մեր ազատագրական պայքարի
պատճառահետեւանքային կապերը

Սույն վերտառությամբ նյութ վաղուց էի ուզում գրել, սակայն, չգիտես ինչու, միշտ հետաձգում, վաղվան էի թողնում: Երեւի գրելու գաղափարը, ավելի ճիշտ՝ ցանկությունը, չէր հասունացել: Այսօր այդ ցանկությանը նպաստեց Շահեն Սկրտչյանի «Արցախյան գրառումներ» փաստա-վավերագրական ժողովածուն: Ժողովածու, որի 400-ից ավելի էջերը լեցուն են խոսող փաստերով ու թվերով, Արցախի եւ արցախահայության տագնապների ու ողբալի (ինչպես տնտեսական, այնպես էլ՝ քաղաքական) վիճակի մասին:

Խոսելով Շուշիի շրջանի մասին, Շ. Սկրտչյանը գրում է. «Բաքվից հատուկ նպատակով գործուղված այդ «ռոմանտիկ» արձակագիրը (խոսքը 1973-86թթ. շրջկոմի առաջին քարտուղար Գաշամ Ասլանովի մասին է.՝ հեղինակ) էն գլխից ազատագրված լինելով տնտեսական պլաններ կատարելու հոգսերից, իր եւ Բաքվի ուշադրությունն անմիջապես ուղղեց Լեռնային Ղարաբաղի մի հատվածում պատմության հետքերը հողի երեսից սրբելու, հայկական հուշարձանները կործանելու, մեռածների ոսկորներին հանգիստ չտալու, Շուշիի ռեակցիոն խաների եւ նրանց գաղափարակիցների հիշատակը հավերժացնելու արկածախնդրությամբ»:

Տողերիս հեղինակը 1973-74 թվականներին աշխատել է Շուշիի կոմերիտշրջկոմի երկրորդ քարտուղարի պաշտոնում եւ շատ բանի է ականատես եղել այդ ժամանակ, դրանից առաջ ու հետո: Եվ այսպես, կփորձեմ ընթերցողի ուշադրությանը ներկայացնել մի քանի հայահալած դեպքերի մասին, որ կատարվել են Շ.Սկրտչյանի նշած քարտուղարի անմիջական պլանով ու վերահսկողությամբ:

Ասեմ, որ խտրական քաղաքականություն վարում էր ոչ բոլոր հայերի նկատմամբ: Նա սիրում եւ ընդունում էր այն հայերին, ովքեր միշտ համաձայն էին իր բոլոր առաջարկներին ու ցուցումներին եւ միշտ ասում էին՝ «բաշ ուստա» (հայերեն՝ «աչքիս վրա»): Գիշտ է, նման մարդիկ մեծ թիվ չէին կազմում, սակայն մեծաթիվ էին նրանց «օգնությամբ» հային հասցրած վնասները: Եվ այդպիսիների պատճառով է, որ Շուշիյն օրեցօր հայաթափվում էր, իսկ անցյալ դարակեսին հինգ հազարից ավելի բնակիչ ունե-

ցող Բերդաձորի բնակչությունը հինգ անգամ արդեն պակասել էր, մեկ մոլոկան չէր մնացել: Մոլոկանների հիմնադրած Լիսագորում, մաղվում էր Քարին տակը (նույնիսկ արդեն պետականորեն անվանափոխվել էին Կալադարասի, Թուրշու, Դաշալթի):

Խոսենք կոնկրետ փաստերով այն քաղաքականության մասին, որ իրականացրել էր Գաշամ Ասլանովը իր աշխատած տարիներին շրջանի հայության նկատմամբ:

Միավլած չենք լինի, եթե ասենք, որ շրջկոմը ոչ թե կոմկուսի շրջկոմ էր այդ տարիներին, այլ հատուկ ծրագրերի կոմիտե: Ծրագրեր, որոնք իրենց հետ բերել էին Հայաստանի Սիսիանի շրջանում ծնված, սնված, Բաքվի կուսակցական դպրոցն ավարտած, հայերեն էլ իմացող մի անձնավորություն: Չիմացողների համար հատուկ նշեմ, որ Բաքվի կուսակցական դպրոցն այն ժամանակ միակն էր երեք հանրապետությունների համար: Ավելին՝ Հայաստանից սովորելու մեկնած աղբրեջանցիները հետ ուղարկվելու փոխարեն ուղարկվում էին Աղբրեջանի հայաշատ շրջաններ ու Արցախ: Եվ սխալմամբ չեմ շրջկոմը համարել հատուկ ծրագրերի կոմիտե: 1969-ից ի վեր, ինչպես շրջանի ամենակարեւոր պաշտոնները (առաջին քարտուղար, դատախազ, միլպետ, դատավոր), այնպես էլ մարզիկը, ընտրովի-նշանակովի էին Բաքվից: Եվ այդ պաշտոններից ոչ մեկը զբաղեցնել, չէր կարող երազել նույնիսկ Արցախում ծնված աղբրեջանցին: Մեկ փորձ եղել է: 1960-ին հայի հետ ամուսնացած Նուրադդին Աղաեւն ընտրվեց շրջկոմի առաջին քարտուղար, սակայն տարին չլրացած, Բաքվից եկան ու փոխեցին, «ընտրվեց» հետները բերված ոմն Արիֆ Յահյա օղլի Աղաքիշեւ: Որոշ ժամանակ անց՝ 1972-ին, հայտնի Վեգիրովները «Պեխի աղբրին» նրան մի լավ հարբեցնելուց հետո նստեցրին միշտ այնտեղ գտնվող՝ երաժիշտ Շիրին Բալասանյանի էջին, լուսանկարեցին եւ ուղարկեցին Մոսկվա...

Գիշտ է նշել Շ.Սկրտչյանը, որ Գ. Ասլանովի նպատակը շրջանում, առաջին հերթին Շուշի քաղաքում վերացնելն ու ձեւափոխելն էր այն ամենը, ինչ ստեղծել է հայը: Այն, ինչ կատարվել է նրա իրահանգով ու վերահսկողությամբ դրսում, այսօր մեր աչքի առաջ է: 1974թ. քանդվել են Մեղրեցոց եւ Ագուլեցոց եկեղեցիները, Կուսանաց վանքի կիսավեր պատերը, ձեւափոխվել է Պեխի աղբյուրը, հանվել-ջարդվել արձանագրությունը այն մասին, որ աղբյուրը կառուցվել է 1871թ. շուշեցի Աստվածատուր Դավթի ճգնավորյանցի հիշատակին, Խանդամիրյանների կառուցած «Բորժոմի»

երկհարկանի հյուրանոցի, նրա հարեւանութեամբ մինչեւ շուկա ձգվող՝ Ազուլեցոց եկեղեցապատկան սրբատաշ քարից կառուցված խանութների շենքերը:

1974-ի ամռանը Բերդաձորի գյուղերից ընտանիք-ընտանիքի ետեւից բռնել էր հարկադիր-կամավոր գաղթը: Գիննականում գնում էին բազմազավակ ընտանիքներ: Ընտանիքներ, որոնց կերակրողը կամ մեխանիգատոր էր, կամ անասնաբույժ, կամ էլ՝ ֆերմայի անասնապահ: Երբ մեկ ամսվա ընթացքում ենթաշրջանից գնացող ընտանիքների քիվն անցավ տասից, որոշեցի այդ ցավալի երեւոյթի մասին իրազեկ դարձնել շրջանի քիվ մեկ ղեկավարին:

Ղեկավար, որին որոշ շողոքորթ հայեր առանձնակի մեծարանքով «ընկեր Ասլանյան» էին ասում, այն էլ մեծաթիվ մարդկանց ներկայութեամբ՝ իսկ ինքն էլ ընդունում էր սուլթանական ժպիտով. այդ էլ էր պետք իրեն, իսկ մեր հղկված-քսվածները չէին զգում: Մեր գրույցը շատ կարճ տեւեց, նա պատասխանեց.«Ջիանդամը քոչեն, անասուն պահողներ կգտնվեն»:

Իմ մասնակցած վերջին ակտիվի ժողովում կատարվածի մասին որոշ մանրամասներ անպայման ուզում եմ նշել, քանի որ շրջանի հայութիւնը մեկ տարում «հետախուզելուց» հետո անցել էր բացահայտ հարձակման: Այո, հարձակման, քանի որ լրիվութեամբ համոզվել էր, որ քար լռութիւն է տիրելու այն դիրքերում, որտեղից ինքը պիտի «հրետակոծվեր»: Դա 1974թ. հոկտեմբերի առաջին կեսին էր, աշխատանքային օրվա վերջին, փոքր դահլիճում հավաքվել էին շրջանի տնտեսական ու կուսակցական ղեկավարները (ներկա էին նաեւ հաշվապահներ): Սպանիչ քննադատութեան ենթարկված չորս մարդկանցից երեքը հայեր էին, որոնց հասցեին հնչում էին ամենակոպիտ արտահայտություններ, որ կուլ էին տրվում: Արդեն վաղուց հարմարվել էին, սակայն ինձ համար արտասովոր էր: Լավ էլ հիշում եմ՝ երբ խոսում էր տնտեսական հարցերից, շրջվեց դեպի սպորտկոմիտեի նախագահ Լ.Մուսայեւյանն ու ասաց.«Աշխատում ես՝ աշխատիր, չես աշխատում՝ դուրս արի ջիանդամը գնա»: Գաղթողը տեղարդկոմբինատի գլխավոր հաշվապահ Ավետիս Ավետիսյանն էր: Մի հաշվապահ, որին զիտեին նաեւ շրջանի սահմաններից դուրս՝ որպէս օրինապաշտ մարդ (կինը՝ Նինան, շրջժողկրթբաժնի հաշվապահն էր): Քննադատվածներից միակն էր այդ ցածրահասակ, ալեհեր հաշվապահը, որ տեղից բարձրանալով ասաց. «Որտեղից ուզում եք մասնագետ բերեք՝ թող ստու-

գի կոմբինատի հաշվապահությունը»: Ասաց ու նստեց: Ֆինբաժնի գլխավոր հաշվապահ Տրոյանովը ճշմարտությունը հաստատող քննիչի տվեց ու արժանացավ սաստող հայացքի:

Այնուհետեւ, նայելով կոմբինատի շրջանի քարտուղարներին, որ, ինչպէս միշտ, նստած էինք առաջին շարքում, դիմեց ինձ. «Գարությունյան, կոմսոմոլուն ի՞նչ նայա գյուրա յախչի գեթմիր?» (կոմբինատիության գործը ինչո՞ւ լավ չի գնում): Ես ասացի, որ լավ կլինի հարցին պատասխաններ կողքիս նստած առաջին քարտուղարը: Շրջանի ղեկավարն ասաց, որ ուզում է ինձնից իմանալ: Արդեն պարզ իմանալով, որ սա մի տեսակ հարձակում է հայ կադրերի վրա, ջղայնացած ասացի. «Ստացվում է այնպէս, որ 1918-20-ականներին, Գայրենական մեծ պատերազմի տարիներին հայերը կարողանում էին հերոսաբար աշխատել ու մարտնչել Քելբաջարի սարերում ու անտառներում թափառող զինված ավազակների եւ դասալիքների դեմ, իսկ այս խաղաղ ժամանակաշրջանում անճարակ են»: Ասացի եւ առանց իրավունքի սպասելու նստեցի, որին հետեւեցին երկու բառ՝ յախչի, օթուր (լավ, մտիր): Դահլիճում չգտնվեց մեկ հայ, որ գոնե ռեալիկով աջակցեր:

Նիստն ավարտվեց, բարձրացա չորրորդ հարկ՝ աշխատասենյակս: Աստիճաններով բարձրանալիս որոշեցի կողպել մետաղե պահարանս ու աշխատասենյակս, բանալիները հանձնել: Չնայած տարիքս 27 էր, որոշումս հաստատ էր ու միանշանակ: Նոր էի նստել, երբ բախելով դուռը՝ ներս մտավ միլիցիայի շրջբաժնի պետ Գաղաշովը: Ժպտալով (ընկերական էին մեր հարաբերությունները) ասաց, որ մի խնդրանք ունի: Արդեն գուշակել էի նպատակը: Մերժեցի նրա խնդրանք-առաջարկը, որ պետք է մտնեմ Ասլանովի աշխատասենյակն ու ներողություն խնդրեմ: Դաղաշովը (աղբբեջանցի համարվող, բայց իրականում ազգութեամբ թախչ) վեր կացավ տեղից, սեղմեց ձեռքս ու գնաց: Քիչ անց հանձնեցի բանալիներն ու գնացի: Մոտ մեկ ամիս աշխատանքի չգնացի, սակայն աշխատավարձ ստացա:

Նոյեմբերի կեսերին տնեցիներն ասացին, որ շրջանի առաջին քարտուղարին ներկայանամ: Չնայած չէի ուզում, բայց եւ այնպէս, գնացի: Գնեց մտա ընդունարան, նա դուրս եկավ աշխատասենյակից: Ներքին հեռախոսով կանչեցին, դիմացի սենյակից եկավ երկրորդ քարտուղարը: Մտանք նրա աշխատասենյակը եւ սկսեցինք զրուցել: Չթաքցնելով ասաց, որ իրենք երկուսով արդեն խոսել են: Առաջարկվեց ետ գալ ու շարունակել աշխատել, ամռանը ուղարկելու են բարձրագույն կուսակցա-

կան կրթություն ստանալու կամ Բաքվում, կամ Մոսկվայում՝ իմ ընտրությամբ: Երկար տեւեց զրույցը, որի ժամանակ հայ 2-րդ քարտուղարին մի քանի անգամ հիշեցրի, որ չեմ կարողանում հաշտվել այն մտքի հետ, թե ինչու հայ ղեկավարներն այն օրը ծպտուն անգամ չհանեցին: Նա փորձում էր գլուխս մտցնել այն գաղափարը, որ մենք՝ հայերս, փոքրամասնություն ենք կազմում ու պետք է լռենք:

Հրաժարվեցի ու հեռացա, ընդմիջտ հրաժեշտ տալով քաղաքական ասպարեզին: Ասպարեզ, որը լեցուն էր շողջորթությամբ, կեղծիքով եւ անբարոյականությամբ, որոնք էլ հետագայում պատճառ դարձան մի հսկա պետության փլուզման ու ազգամիջյան թշնամանքի:

Հայահալած քաղաքականության շատ փաստեր կարելի է ներկայացնել ընթերցողին, սակայն սահմանափակվենք Սիսիանի շրջկոմի 1980-ական թվականների առաջին քարտուղար Շչորս Դավթյանի հետ իմ ունեցած զրույցից մի հատվածով: 1983թ. հոկտեմբերի 3-ին Ստեփանակերտում տոնվում էր ԼԴԽ կազմավորման 60-րդ տարեդարձը: Աղբբեջանի կոմկուսի առաջին քարտուղար Քյամրան Բաղիրովին դուր չէր եկել Շչ. Դավթյանի «Հայկական Ղարաբաղ» արտահայտությունը, որն էլ պատճառ էր դարձել, որպեսզի քիչ անց լքի դահլիճը (նրա ետեւից դուրս եկավ մարզկոմի առաջին քարտուղար Բ.Ս.Կեւորկովը): Երեք տարի հետո, 1986թ. հուլիսին, Սիսիանի շրջկոմի առաջին քարտուղար Շչորս Դավթյանը նորից եղավ Ղարաբաղում, սակայն այլ նպատակով՝ Համո՝ Սահյանի հետ եկել էին Շուշի, որպեսզի տեսնեն վերանորոգվող Ղազանչեցոց եկեղեցին: Եկեղեցի, որի կառուցման աշխատանքները հովանավորվում էին սիսիանցիների կողմից, Շչորս Դավթյանի անմիջական ղեկավարությամբ: Ի դեպ, նա մշեց նաեւ, որ բարերարական մեծ աշխատանքներ է կատարել նաեւ Հյուսիսային Կովկասի սովխոզներից մեկի մի հայ տնօրեն: Պարզվեց, որ տնօրենը բերդաձորցի, սոցիալական աշխատանքի հերոս Չերքեզ Մարգարյանն է եղել, որի կատարածին առայսօր էլ ժողովուրդն անտեղյակ է:

Ինչ որ է: Երբ եղան Ղազանչեցոց եկեղեցու բակում, քիչ հետո հայտնվեց Գ. Ասլանովը: Կարճատեւ զրույցից հետո ասաց, որ Համո Սահյանի գալու մասին չի կարող չիրազեկել մարզկոմի առաջին քարտուղարին (իբր Բ. Կեւորկովին զանգելուց առաջ Բաքու չի զանգել): Թե ինչ եղավ հետո, ընթերցենք Շչորս Դավթյանի տողերը. «Երեկոյան իջեւանեցինք Ստեփանակերտի հյուրանոցում, որտեղ մեզ դիմավորեց քաղխորհրդի նախա-

գահ Վ. Թովմասյանը: Հոգնության եւ զայրույթի կնիքը դեմքին, բանաստեղծը նոր էր քիչնեւ բազմոցին, երբ շնչակտուր ներս մտավ մարզխորհրդի գործկոմի նախագահ Արամայիս Ասլանովը (ժազունով Սիսիանից): Ասաց, որ մարզկոմի առաջին քարտուղար Կեւորկովը իմացել է Համո Սահյանի գալստյան մասին եւ հրավիրում է հանդիպման: Համոն, «համեմունքի» մի քանի խոսքեր նետելով Կեւորկովի հասցեին, ասաց, որ ինքը նրան ասելիք չունի եւ եկել է ոչ թե նրան, այլ Շուշիի եկեղեցին տեսնելու: Ասլանովն ուղղակի պապանձվեց: Երկար լռությունից հետո վարպետը շարունակեց. «Ես հանդիպման չեմ եկել ոչ ձեզ, ոչ էլ որեւէ մեկի հետ: Լսել եմ, որ սիսիանցիները՝ իմ հայրենակիցները, օգնում են Ղազանչեցոց եկեղեցու վերանորոգմանը, եկել եմ դրանով միսիթարվելու»:

Բայցեւայնպես, հանդիպումը, որին մասնակից էին Շչ. Դավթյանը, Հ.Սահյանը, Բ.Կեւորկովը եւ Արամայիս Ասլանովը, կայացավ: Վարպետը, որ չորսժամյա հանդիպման ընթացքում լուռ լսողի դերում էր, ասաց. «Ինչքան լավ կլիներ, եթե ձեր հաջողությունների եւ ժողովրդի լավ ապրելու մասին ձեր հավաստիացումները լսեի հենց ժողովրդից: Դե, դուք էլ չեք թողնում ժողովրդի երեսը տեսնենք»: Հրաժեշտ տվեցինք եւ բռնեցինք ետդարձի ճանապարհը: Ամբողջ ճանապարհին վարպետը չէր խոսում: Մի պահ շուռ եկավ ու հետեւի նստարանին նստածներին ասաց. «Բայց երեւի ինչ-որ մի գործ կատարվում է ես անտեր Ղարաբաղում»:

Շարունակեմ վավերագրությունս: Մեկ տասնյակ տարուց ավել իր միսիան կատարած Ասլանովը պետք է բռներ ետդարձի ճանապարհը: Դիմել էր մարզկոմի բյուրոյին, որպեսզի ազատեն զբաղեցրած պաշտոնից: Լուրեր էին պտտվում, որ պետք է գնա Ապշերոնի շրջան: Նրան միայն երկրորդ անգամ դիմելուց հետո ազատեցին զբաղեցրած պաշտոնից: Մի առիթով, պարզապես վերջերս կայացած զրույցի ժամանակ խնդրեցի, որ ուրոշ տեղեկություններ տա 1980-ական թվականներին մարզկոմի 3-րդ քարտուղար Ե.Սարգսյանը: Համարյա նույնությամբ ներկայացնում եմ. «Առաջին դիմումի մերժումից հետո, երբ հարցրիք Բ.Կեւորկովին, թե ինչո՞ւ չհամաձայնվեցիք, որ ազատենք զբաղեցրած պաշտոնից, ասաց. «Ասլանովը բարձր մակարդակ չունի, չի խանգարում, ինձ համար վտանգավոր չէ, իսկ ինչ ինքը չի կատարում ի պաշտոնե, ես եմ կատարում»:

Նպատակ ունենալով իմանալ, թե ինչպե՞ս «հրաժեշտ» տվեց Գ. Ասլանովը Արցախին, ավելի շուտ իր՝ համարյա ավերած Շուշիի շրջանին, խնդրեցի Ե. Սարգսյանին մի երկու խոսք ասել նաեւ այն մասին, թե ի՞նչ հրա-

ժեշտի խոսք ասաց, երբ իր խնդրանքը բավարարեց մարզկոմի բյուրոն: Ասլանովն ասել էր «Ես եկել էի Ղարաբաղ որպես հայ, գնում եմ որպես հայ»: Ա՛յ քեզ բան...:

Իսկ հիմա դառնանք «խանգարել-չխանգարելուն»: Իհարկե, Ասլանովը մարզի ղեկավարներին չէր խանգարում ու չէր էլ խանգարի, քանզի իրեն խանգարող չկար: Պատասխանատվության ենթարկելը մի կողմ, հարցնող էլ չկար, թե ինչով էր զբաղված: Ասլանովը, ինչպես իրենք էին ասում, չէր խանգարում, իսկ մարզի ղեկավարներին ո՞վ էր խանգարում, որ տարիներ շարունակ շրջանի հայկական ոչ մի գյուղում մարզկոմի երեք քարտուղարներից ոչ ոք չէր լինում, ժողովրդի վիճակով չէր հետաքրքրվում:

Երկար չաշխատեց Գ.Ասլանովը Ապշերոնի շրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնում, քանզի հեռահար էր արցախահայության անեծքը (Բալաջարի կամրջի տակով անցնելու ժամանակ ծառայողական ավտոմեքենան ճգնվում է կամրջի վրայով անցնող բեռնատարի թափքից ընկած ցեմենտբետոնե սալի տակ, ու տեղում ստացած ծանր վերքերից մահանում են եւ Ասլանովը, եւ վարորդը): Չէր էլ կարող չանհիծվել, քանի որ նրա նախածեռնությամբ տնկված ակացիաներից չենք կարողանում տարիներ շարունակ մաքրել Շուշիի ութ քրիստոնեական գերեզմանները: Իսկ 1986 թվականին նրա որդին (անունը չեմ հիշում ու կարելու էլ չի) ներկայացավ ԼՂ ներքին գործերի վարչություն, որպեսզի համաձայնություն ստանա ու փոխարինի հորը՝ այս անգամ արդեն մարզի ՆԳ վարչությունում, սակայն համաձայնություն չստացավ:


ՇԻՐՍԱՔԱՐԵՐԸ ՈՉ ԹԵ ՄԵՐ ՊԱՏԱՆԴՆԵՐՆ ԵՆ, ԱՅԼ՝ ԿՈՎԱՆՆԵՐԸ

Անուն հանած բարերարներ են եղել շուշեցիներ Առաքելով եղբայրները, Թադեոս Բաբայի Թամիրյանցն ու բաքվաբնակ արցախցի Ղազարոս Մայիլյանը: Առաքելով եղբայրների սեփական միջոցներով Շուշիում կառուցվել են հսկա երկհարկանի ռեալական ուսումնարանի շենքն ու նրա մերձակա աղբյուրը, Մայիլյանն անցկացրել է Գանձասարի յոթ կիլոմետրանոց ջրատարը, իսկ Թադեոս Թամիրյանցը՝ 18 կիլոմետրանոց Սարի Բաբա-Շուշի ջրատարը: Բերդապարսպի Երեւանյան դռներից մոտ 150 մետր հեռավորության վրա, համանուն փողոցի աջ կողմում, կառուցված է մի ջրամբար, արեւելահայաց պատի վերնամասում գտնվող կամարածե սրբատաշ քարի վրա գրված՝

«1893-1901թթ.

ի յիշատակ յաւերժական բարութեանց
կառուցեալ այս ջրամբար եւ ջրուղին
ի Թադէոսէ Բապայեան Թամիրեանց
անմահ նուէր Շուշույ համայն բաղաքին,
ТАТЕВОСЪ БАБАЯНЪ ТАМИРЯНЦЪ

Սույն արձանագրությունը գրված է նաեւ պարսկերէն:



Թադեոս Թամիրյանցի ջրամբարը

Մեկ անգամ եւս ուզում եմ անդրադառնալ Թադեոս Թամիրյանցի հիշատակը հավերժացնող շիրմաքարին, որը, թեկուզ ջարդված, նորից իր տեղը դնելը դժվար, կամ էլ մի տեսակ անլուծելի «խնդիր» է դարձել, չնայած նրա հարեւանությամբ գտնվող շիրմաքարերի ներկայիս գտնվելու վայրը իրենց իսկական տեղից հեռու է ընդամենը 100 մետրով, սակայն՝ աղբանոցում, այն էլ փակ՝ ժողովրդին անտեսանելի: Կարելորելով ջարդված շիրմաքարը Թադեոս Թամիրյանցի շիրմին տեղադրելու անհրաժեշտությունը, իմ հեղինակությամբ «Գերեզմանն ի՞նչ հուշարձան» վերտառությամբ հողված է տպագրվել «Դեմո» թերթում այն հույսով, որ առաջարկությանս կընդառաջեն: Ամիսներ են անցել, սակայն ոչ դրական, ոչ էլ բացասական խոսք ասող չի եղել: Տեսնելով, որ «սայլը տեղից չի շարժվում» (իսկ շարժող կա՞ր, որ...), որոշեցի հոգեւորականներից մեկի միջոցով դիմել Հայ Առաքելական եկեղեցու Արցախյան թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Սարտիրոսյանին: Երկու-երեք օր հետո միջոցորդ տեղեկացրեց, որ իբր ես շիրմաքարի մասին լավ չգիտեմ: Ես ոչինչ չպատասխանեցի, հեռացա, կասկածելով ինքս ինձ վրա, որ կարող է՝ ճիշտ են ասում, չնայած շիրմաքար-հուշարձանի չափսերին ու ձեւին քաջատեսույակ եմ 1960-ից ի վեր եւ շատ էլ տեղեկություններ ունեմ սովետական տարիներին նրա հետ կատարված փորձությունների մասին ու ստիպված եմ ներկայացնել: Կասեմ կարճ: Առաջին անգամ շիրմաքարը Հայրենական մեծ պատերազմից հետո շուշիաբնակ ճարտարապետ Միրֆասեհ Բաղիրովի ղեկավարությամբ տարվել է Աղդամ: Մեծ աղմուկից հետո այն վերադարձվել ու տեղադրվել է իսկական տեղում: Երկրորդ անգամ 1955 թ 1956 թվականին գողանալու փորձը կասեցվել է Շուշիի մանկավարժական տեխնիկումի մաթեմատիկայի ուսուցիչ Սամվել Ալեքսանդրի Շինականյանի կողմից ֆիզիկական դիմադրություն ցույց տալուց հետո միայն: Հուշարձանը կանգուն է մնացել մինչեւ Արցախյան շարժումը: Մարդկանց համար մի տեսակ պարծանք էր լուսանկարվել այդ շիրմաքար-հուշարձանի մոտ: Նախ՝ նրա համար, որ մեծ բարերարին էր, հետո էլ՝ արվեստի հոյակապ գործ էր: 1992 թվականին տարօրինակ բաներ կատարվեցին մեզ մոտ: Նախ՝ Ստեփանակերտում Շահումյանի արձանը հանեցին: Հաջորդ «գոհերը» դարձան Գանձասարի պատմամշակութային արժեք համարվող գերեզմանատունն ու մեծ բարերարի շիրմաքարը: Սա անօրինություն է ու խայտառակ երեւոյթ, ինչի համար, վաղ թե ուշ, պատասխան պիտի պահանջվի: Իրավունք չունենք արդարանալու համար ասել, որ 1989 թվակա-


նի սեպտեմբերի 14-ին Թադեոսի շիրմաքարը պայթեցրել են աղբբեջանցիները: Այո՛, բոլորս գիտենք ու տեսել ենք, թե ինչպես են նրա հիմնաքարից ու պատվանդանից, նաեւ հարեւանությամբ գտնվող շիրմաքարերից հատուկ ավազանանման տեղ պատրաստել հանգած կրի համար: Թե ինչու են նրանք դա արել՝ գիտենք, բայց ահա մեզ ի՞նչ պատահեց, որ Ղազանչեցոց եկեղեցու զանգակատան հարավային կողմի շիրմաքարերը հավաքեցինք՝ հանգուցյալների շիրմները թողնելով կովերի ու ձիերի սմբակների տակ: Գուցե հավաքել ենք, որ անասունները չկեղտոտե՞ն: Իսկ դրա համար կարելի էր եկեղեցու տարածքը պարսպապատել՝ նրանից մոտ 100մ հեռու կառուցված, սակայն՝ այժմ հիմնովին քանդած քառահարկ միամուտք շենքի քարերով (հիշողները կվկայեն, որ պատ կար եկեղեցու եւ նրա հարավային կողմում կառուցված Խանդամիրյանների երկհարկանի թատրոնի շենքի միջեւ): Լավ չէ՞ր լինի շիրմաքար-հուշարձանի պատվանդանի մյուս կտորներն էլ հետը թողնել տեղում, որպես թանգարանային նմուշ, կողքին էլ նախկին ձեւով մի հուշաքար կանգնեցնել: Մի՞թե ժողովրդի համար միլիոններ ծախսած բարերարի հիշատակը հավերժացնելու համար դա շատ կծվար: Ինչպես նշված է վերը, մարդիկ սիրում էին լուսանկարվել հայտնի մարդկանց շիրմաքարերի մոտ: Այդպիսիներին եմ եղել բերդածորցի, Արցախի ռացիոնալիզատորների խորհրդի նախագահ Ռաֆայել Կասյանը, Թադեոս Թամիրյանցի թոռ Տեր-Սահակովա էլզան ու ծոռը՝ Իննան, որոնք 1960-ականներին Մոսկվայից գալով Արցախ՝ այցելել են իրենց պապի շիրմին եւ լուսանկարվել: Հիմա ի՞նչ պիտի պատասխանենք, եթե մի օր նորից Թադեոսի սերունդները Մոսկվայից գան ու ցանկանան այցելել իրենց պապի շիրմին: Հարցին պատասխանել չեմ կարողանում, սակայն պատկերացնում եմ, որ մեր ամոթի զգացումը ոչ մի չափով չի չափվի, ոչ մի կշեռք չի կշռի: Մենք մի անգամ եւս հնարավորություն ենք տալիս հետագայում ավելի ամրապնդելու Բաքվի «Зеркало» թերթում չորս տարի առաջ գրածն առ այն, որ Շուշիի ջրատարը անցկացրել է իբր ո՞ն թ. Թաիրով: Դեռ լավ է, որ ջրամբարի արձանագրությունը պահպանվում է: Իմ պատկերացմամբ՝ մեր նախնիներից մեզ հասած յուրաքանչյուր արձանագրված հասարակ քարն անգամ (արժեքների մասին խոսելն ավելորդ է) մի խոսք է կամ էջ հայ ժողովրդի պատմությունից, որը տեղաշարժելու իրավունք չունի ոչ ոք, անկախ զբաղեցրած պաշտոնից ու հասարակական դիրքից: Գերեզմաններն ու շիրմաքարերը պատանդ չեն մեր ձեռքին, այլ՝ մեր կռվանները:

ԳԵՐԵԶՄԱՆՆ ԻՆՉ ՀՈՒՇԱՐՉԱՆ

Շուշի քաղաքի Ղազանչեցոց եկեղեցու զանգակատան հարավային կողմում սեւ մարմարից շիրմաքար է եղել կանգնեցված, վրան գրված՝ Թադեոս Թամիրեանց եւ ուրիշ ոչինչ: Այո, կանգնեցված է եղել, սակայն այսօր չորս կտորից բաղկացած այն հայելանման փայլուն շիրմաքարերը, որին նայողն իր պատկերն էր տեսնում, չկա: Այն, ինչպես նաեւ նրա երբեմնի կանգնած տեղը, հիշողության մեջ են: Կան նաեւ լուսանկարներ, եւ կանգուն է 100 խոր. մետր ջրատարողությամբ կամարծեւ ջրամբարը, որը տասնյակ տարիների «ընդմիջումից» հետո վերսկսել է կատարել իր «պարտականությունները»: Ինչպես 18 կիլոմետր երկարություն ունեցող ջրատարի, այնպես էլ հսկա ջրամբարի կառուցման ժամանակ Թադեոս Թամիրյանցը ոչ թե վերահսկող է եղել, այլ մի մարդ, որը սեփական գրպանից հատկացնելով 100 հազար ռուբլի ոսկեդրամ, քաղաքն ապահովել է ջրով: Ջրատարի անցկացման համար օգտագործվել են մոտ 40 հազար կեսմետրանոց խոշոր տրամաչափի կավե թրծված խողովակներ, որոնք պատրաստվել էին Թամիրյանցների գերդաստանին պատկանող աղյուսի երկու գործարաններում, որոնցից մեկը գտնվում էր քաղաքի հարավային կողմում, իսկ մյուսը՝ Պեխի աղբյուրից ոչ հեռու: Ասք կա այն մասին, որ ջրատարի ժայռոտ տեղամասի յուրաքանչյուր մետրի փորման համար բանվորը ստացել է մեկ ռուբլի: Մեծ բարերարը մահացել է 1899թ. դեկտեմբերին՝ կտակելով հոգեւոր դպրոցին 300 հազար, իսկ ռեալական ուսումնարանին, Մարիամյան օրիորդաց, ռուսական ու թաթարական դպրոցներին՝ 100 հազարական ռուբլի եւ նույնքան էլ՝ քաղաքի որբ երեխաներին: Բարձր գնահատելով Թադեոս Թամիրյանցի ծառայությունը, ժողովրդի որոշմամբ դիակը հողին է հանձնվել Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու զանգակատան հարավային կողմում, Արցախյան թեմի առաջնորդ Անդրեաս Արքեպիսկոպոս Պոլսեցու շիրմի հարեւանությամբ:

Այսքանը՝ որպես նախաբան, ինչից հետո ուզում են խոսել Թադեոս Թամիրյանցի հիշատակը հավերժացնող շիրմաքարի անհետացման մասին: Սովորաբար հեռացնում են այն, ինչը վնասում կամ խանգարում է մատի փուշը, աչքի մծեղը, ճանապարհին ընկած քարը...

Ինչպես տեսնում ենք, անհետացած շիրմաքարը նշված առարկաներից ոչ մեկին նման չէր, այլ մի սքանչելի ճարտարապետական ձեռագրով Մոսկվայում պատրաստված ու Շուշիում տեղադրված:



*Թադեոս Թամիրյանցի
հուշակոթողը*

Մյո մասին վկայում էր գրությունը պատվանդանի կողին՝ МОСКВА, ДВОРЕЦКАЯ КАБАНОВ. Խորհրդային շրջանի 1955-60-ական թվականներին փորձեր են արվել շիրմաքարը տեղահան անելու, նույնիսկ գողանալու, սակայն կասեցվել են ազգասեր մարդկանց ջանքերով, ու այն կանգուն մնացել է մինչեւ 1990 թվականը: Արցախյան շարժման այդ օրերին հայաթափվեց Շուշին: Շուշին ազատագրելուց հետո ականատես եղանք, որ ոչ մի շիրմաքար չկա եկեղեցու զանգակատան հարեւանությամբ: Միայն տեղում որոշ վնասվածքներով մնում էին Թադեոսի քառակտոր ու երեքմետրանոց բարձրություն ունեցող հուշարձան-շիրմաքարի հիմնաքարն ու պատվանդանը՝ վերը նշված ռուսերեն գրությամբ: Որոշ ժամանակ անց դրանք էլ, ինչպես նաեւ նրանց կողքին ընկած, բայց ջարդված հրեշտակների արձաններն էլ անհետացան, տեղը հարթվեց ու խճապատվեց, նույն տեղում էլ սկսեցին մոմ վաճառել, որ մարդիկ մոմ վառեն հանգուցյալների հոգու հանգստության եւ այլ նպատակների համար:

Տարիներ են անցել: Մի առիթով խոսք եղավ ինչպես ջրի, ջրատարի, այնպես էլ եկեղեցու բակի շիրմաքարերի մասին: Կարծում էի, թե գոնե Թադեոսի շիրմաքարը կվերականգնվի ու հարեւանությամբ էլ մի փոքրիկ տարածք կհատկացվի ջարդված շիրմաքարերին ու հրեշտակների արձանները տեղադրելու համար: Նաեւ նրա համար, որ մի մոմ էլ վառեն բարերարի շիրմաքարի մոտ ու ասեն. «Հավերժական բարությանդ համար շնորհակալ ենք, հանգստություն ոսկորներիդ»: Սակայն, ցավոք, սխալ էին իմ պատկերացումները արցախցիներիս երախտագիտության մասին: Այսօր էլ ոտնակոխ ենք անում այդ տեղը, առանց մտաբերելու, թե ում ոսկորների վրայով ենք քայլում:

Մի գրույցի ժամանակ ինձ ասացին, որ եկեղեցու պահեստ-ավտոկառանի բակում շիրմաքարեր կան: Մի երկու օր անց գնացի նշված տեղը: Աշխատողներ կային. պարզվեց որ «Վանական» հանքային ջրի շշալցման արտադրամաս կա այդտեղ: Իմ խնդրանքով աշխատող մարդկանցից մեկը ինձ ցույց տվեց ջարդված շիրմաքարերի տեղը: Կարծում էի, թե տեղափոխել են, որ հետագայում նորից տեղադրեն: Բայց երբ ակամատես եղա՝ ուղղակի շճեցի:

Տեղը, որտեղ ցաքուցրիվ գետնին են գլորված շիրմաքարերի ու զանգակատան նախկին երկու հրեշտակների 12 կտորները, որոնց թվում է Թադեոս Թամիրյանցի 96x38x116 սմ չափսերի շիրմաքարի պատվանդանը, ոչ ավել, ոչ պակաս, աղբանոցի է նման: Իսկ քիչ հեռվում խնամքով դարսված են քարեր, որոնցով փողոցների մայթերը բաժանվում են երթուկների մասերից:

Պարզ է, որ 1990-ին հայաթափված Շուշիին տիրացածներին այն ժամանակ պետք չէին Թադեոսի անունն էլ, շիրմաքարն էլ, ուստի ջարդել են: Բայց մեզ ի՞նչը ստիպեց, որ նման վերաբերմունք ցուցաբերենք: Տեղին է մեջբերել Արցախի թեմի հոգեւորականներից մեկի հետ երկխոսությունից մի դրվագ՝ կապված հուշարձանների պահպանության հետ: Նա կասկածանքի տակ առավ գերեզմանի՝ հուշարձան լինելու հանգամանքը. «Գերեզմանն ի՞նչ հուշարձան, դրանք բոլորը պետք է քանդվեն-վերացվեն: Վանքերի մոտ ոչ մի գերեզմանոց էլ չպիտի լինի»:

Ցավալի է, շատ ցավալի... Այնուամենայնիվ, լավատես լինենք ու հուսանք, որ եթե ոչ բոլորը, ապա զոնե Թադեոսի շիրմաքարի պատվանդանը ետ կբերվի իր տեղը, քանի որ ազգն է որոշում, թե իր սիրելի զավակի ոսկորները որտեղ պիտի հանգչեն:



Տեսերան ներկայիս Շուշիից



Դատված հին Շուշիից (Երեւանյան դռների աջակողմյա մասը)



Ելիզավետպոլի դռներ



18-19-րդ դարի Շուշիի գլխավոր կոյուղին (այժմ չի գործում)




Պաշտպանությունն ամրակայող պատ հարավահայաց ժայռում



Ագուլեցոց եւ Ղազանչեցոց եկեղեցիների միջեւ գտնվող թոնիրների շարքից մեկի մնացորդները




Միրզա Մելքուն խան



*Հովհաննես Մելքոն բեկը (Մելքուն խանի ծոռը)
Մաթոս Մաթոսյանի հետ*



*Առանց գրությունների խաչքարեր Շուշիի
շրջանի Ենգիբար (այժմ Ծաղկաձոր)
գյուղի գերեզմանատանը*




*Շուշեցի մաջարների պատրաստած
քարե տախտակը՝ տեղադրված քաղա-
քի Օրիորդաց դպրոցի 2-րդ մուտքի ա-
ջակողմյա պատուձ, առանց արձանագ-
րության*



*Շուշեցի մաջարների ձեռքի աշխատանքը
(Ռեալական ուսումնարանի մուտքի դուռը)*



*Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցու ճարտարապետ Սիմոն Տեր
Յակոբեանցի, կնոջ և ուրիշ հուշակոթողը*



Ռուսական եկեղեցի Գեորգավանում (Մարտունու տարածք)




Հոնուտի կիրճի կամուրջը




Քարանձավ Հոնուտի կիրճի աջակողմյա ժայռում



Տեսարան Հոնուտ գյուղատեղիից



Ագուլիսի եկեղեցին իր շրջակայքով



Ջուղայի խաչքարերը, որոնք այսօր չկան




Առաքել Թավրիզեանցի կառուցած աղբյուրն ի հիշատակ գերդաստանի ննջեցյալների

ԱՂԵՐՐ ՇՐՇԱԿԱԿՐՅԻ
ԱՌԱԿԵԼ ՄՆԱՅԱԿԱՆ
ԵԱՆ ԹԻՎԻՉԵՆՑ ՅՒՇՆԿ
(ՀԱՄՃՐԵ)Ն ՉՁԵՑԵԼՈՅ ԻԻ
ՐՈՑ 1863 ✱ ԱՄԻ ✱



Լուսանկարիչ Չայկ Մանուչարյանի որդի Արկաղիան
Պեխի աղբյուրի մոտ (1954 թ.)

յիշատակ է աշբու
 րս աստուաճատրոյ,
 դաւթ՝ Կ, Ճգնար՛ենց՝
 18 7/71 

ԱՂՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԳԶԿՈՏՈՑ ՅՈՐԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՈՍԿԵԴՐԱՄԻ ՇՈՒՐՋ

Գաղտնիք չէ, որ Շուշիի ազատագրման 15-ամյակի կապակցությամբ Չայաստանի կենտրոնական բանկի պատվերով Լեհաստանում պատրաստվել ու շրջանառության մեջ է դրվել 10000-դրամանոց ոսկեդրամ: Այն պատրաստվել է բարձրորակ ոսկուց, քաշը՝ 8,6 գրամ, շրջագիծը՝ 22 մմ: Մետաղադրամի երեսին պատկերված են թեւատարած արծիվ եւ Չայաստանի զինված ուժերի զինանշանը, իսկ հակառակ կողմին՝ մեդալ՝ «Շուշիի ազատագրման համար»: Այն պատրաստվել է Չայաստանի նկարիչների միության անդամ Չարություն Սամվելյանի գծագրած էսքիզի հիման վրա: Եվ դա առիթ է հանդիսացել, որ պաշտոնական Բաքուն, նորից բորբոքված, ամբողջ աշխարհով մեկ գոռգոռա ու սովորեցնի, թե ով ինչպես կազմակերպի իր գործերը: Նշված հորեյլանական ոսկեդրամի՝ շրջանառության մեջ մտնելն այնպես է ազդել Աղրբեջանի ղեկավարության տրամադրության ու տրամաբանության վրա, որ իրար են խառնվել մեծ ու փոքր, նույնիսկ Լեհաստանում Աղրբեջանի դեսպան Վ.Գուլիեւը: Ըստ աղրբեջանցի բարձրաստիճան դիվանագետի՝ ոսկեդրամի պատվիրումն ու Լեհաստանի մետաղադրամների պատրաստման ձեռնարկության կողմից դրա պատրաստումը արտակարգ երեւույթ է, գաղտնի գործարք կողմերի միջեւ (տվյալ դեպքում՝ Չայաստանի եւ Լեհաստանի): Այդ «հույժ կարեւոր» հարցը ստիպել է, որ նա լինի ձեռնարկությունում եւ ի պաշտոնե գրուցի տնօրինության հետ: Դիվանագետը նշում է, որ իրեն ասել են, թե ձեռնարկությունն իրավաբանական միավոր է, անկախ է, գործում է օրենքների սահմաններում ու պատրաստ է աշխատել ցանկացած պատվիրատուի համար՝ ըստ պայմանագրի: Եվ զավեշտական է, որ այսպիսի պատասխան ստացողը բառացի ներկայացնում է ընթերցողին, թե իբր ձեռնարկությունը վերջում իրենից ներողություն է խնդրել ու խոստացել, որ այսուհետեւ կլինեն ուշադիր: Միեւնույն ժամանակ դեսպանը նշում է. «Հուսով եմ, որ հետագայում նման երեւույթ չի կրկնվի: Բայցեւայնպես, մեզ անհրաժեշտ է շարունակել տեղեկատվական պայքարը այն հաշվով, որ մեր պատմական փաստերը չաղավաղվեն ու չխեղաթյուրվեն: Մինչեւ մենք հետ չվերադարձնենք մեր օկուպացված հողերը, ապահովագրված չենք լինի Չայաստանի կողմից նման սադրիչ քայլերից»:

Որպես ծննդով շուշեցի եւ միաժամանակ Շուշիի պատմա-ճարտարապետական հնությունների, հին հայկական գերեզմանատների արձանագրությունների ուսումնասիրող ցանկանում եմ մեկնաբանել ադրբեջանցի դիվանագետի նշված հրապարակումը՝ հենվելով կոնկրետ փաստերովրա, որպեսզի ընթերցողներն էլ իմանան, թե ինչ է կատարվում:

Քաղաքի հին գերեզմանատներում ի հայտ բերված արձանագրությունները վկայում են, որ հայերը Շուշիում բնակվում են ավելի վաղուց, քան օղուզների քոչվոր հետնորդները, ինչպես նաեւ Իրաքից, Արեւելյան եւ Արեւմտյան Պարսկաստանից եկած մաշադի, քերալա, քուլանի, ջիննի, օվշար եւ դաջար ցեղերը, որոնց հետագայում ասիմիլացիայի (ծուլման-ուծացման) են ենթարկել մեկ ընդհանուր անվան տակ (վկայում են մի շարք արձանագրություններ՝ հավաքված քաղաքի հյուսիսային կողմում գտնվող պարսկական գերեզմանատան տարածքից): Փոքր ցեղերի եւ լեռնական հրեաների ծուլման մասին խոսում են նաեւ այլ տեղեկատու աղբյուրներ եւս (տե՛ս, Ջ.Ու. Մահմուդովա, «Դերբենդը XIX-XX դարասկզբին», Մոսկվա, ռուսերեն, 2006թ.): Նշված մահմեդական ցեղերը մի քանի անգամ անվանափոխվել են, սկզբում ստացել «կովկասյան թաթարներ», իսկ խորհրդային շրջանում՝ «ադրբեջանցի» անվանումը: Իսկ քրդերին ասիմիլացիայի են ենթարկել 1960-ական թվականներին: Շատերը կիիշեն, որ Լաչինում քրդերն իրենց բողոքի ձայն էին բարձրացնում, նրանց պատվիրակությունը Մոսկվայի դռներն էր ծեծում, բայց այդպես էլ հօգուտ քրդերի ոչինչ չստացվեց: Նրանց ազգությունն էլ մյուս «երջանիկների» նման գրվեց՝ ադրբեջանցի:

Այսքանից հետո մնում է ասել՝ Բաքվի էֆենդիներ, դուք չեք դատողը եւ ոչ էլ վճիռ կայացնողը, թե մենք՝ հայերս, ունենք թե չունենք իրավունք այս կամ այն հորեյանը նշելու, հորեյանական հուշանմուշ պատրաստելու (այս պարագայում՝ հորեյանական ոսկեդրամ): Ավելի լավ ու պատվաբեր կլինի, եթե զբաղվեք ձեր գործերով. ոչ ոք ձեզ չի խանգարի, հավատացած եղեք: Նորից խոսենք կոնկրետ փաստերով՝ նախապես հիշեցնելով, որ խոսքն ասելիս անհրաժեշտ է մտածել նաեւ ստանալիք պատասխանի մասին: Ինքներդ էլ լավ գիտեք, մեզնից էլ լավ, որ Ադրբեջան կոչված հանրապետությունը ստեղծվել է խորհրդային ժամանակներում Դաղստանի, Արցախ-Ղարաբաղի եւ Պարսկաստանի տարածքների հաշվին: Վերոհիշյալ մահմեդական ցեղերի՝ Շուշիում հայտնվելուց ի վեր մեր պատմությունը զոհ է դարձել կրոնական հակամարտության: Մահմեդականները երեք անգամ հրի են մատնել քաղաքը: Վառվել է քաղաքի 75

տոկոսը կազմող հայկական թաղամասը, որի պատճառով էլ մեծ վնաս է հասցվել ճարտարապետական կառույցներին, այդ թվում՝ XIX դարի սքանչելի կառույց Դազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցուն, հիմնովին ավերվել են 1830թ. կառուցված ռուսական, 1822թ. կառուցված ազուլեցոց Սուրբ Աստվածածին եկեղեցիները, Կուսանաց անապատը եւ այլ արժեքներ:

Խորհրդային տարիներին Ադրբեջանը բազմապիսի ծրագրերի իրականացմամբ միշտ ձգտել է Շուշիում վերացնել կամ էական փոփոխության ենթարկել այն ամենը, ինչ հայկական է, մասնավորապես՝ վերացնել հայկական ճարտարապետության հետքերն ու հայերեն արձանագրությունները: Ճարտարապետություն, որը բավականին մոտ է եվրոպականին: Միաժամանակ նպատակահարմար են գտնում իրազեկել, որ պարզապես վերջերս Շուշիի հին գերեզմանատներից մեկի տարածքում հողի տակից հանված 40x65x110 սմ չափսեր ունեցող շիրմաքարերի հարավահայաց կողերին խոշոր տառերով գրված է. «Իմ հավատով քրիստոնյա քաղաք», իսկ հյուսիսահայաց կողերին՝ հանգուցյալների մասին տեղեկատու արձանագրություններ (տե՛ս ցարական բանակի զինվորականների գերդաստանի՝ Դուլուխանյանների տոհմական գերեզմանատունը): Ներկայացնում են ավագ սպա, մայոր Դուլուխանյանի շիրմաքարի արձանագրությունը, որն ասում է.

զիւներ մայօր Սարգիսջանբէկ Դօլուխանեանց
ծնեալ է 1821 ամի եւ վախճանեալ 1885 ամի
Յոկտեմբերի 30
64 ամաց Յասակի

Ի հայտ եկած արձանագրությունները միաժամանակ վկայում են, որ քաղաքի հայությունը տնտեսական, հոգեւոր, առեւտրային եւ այլ ամուր կապեր է ունեցել արտաքին աշխարհի հետ, եղել է Կովկասի ամենագարգացած քաղաքներից մեկը: Եվ զարգացել է հայերի ջանքերով: Այնպես որ, ոչ ոք իրավունք չունի կեղծել Շուշիի պատմությունը, իսկ Ադրբեջանը պիտի լռի ընդմիջտ:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԳՈՂԳՈԹԱՆ

(Վկայում են Շուշիի արձանագրությունները)

Ապրիլի 24-ը հայի հիշողության մեջ դաջվել է որպես ցեղասպանության օր: Արեւմտյան Հայաստանում Օսմանյան Թուրքիան, օգտվելով առաջին համաշխարհային պատերազմի հետեւանքով ստեղծված իրավիճակից, 1915-ին սրի քաշեց խաղաղ ու ստեղծագործ աշխատանքով ապրող մեկուկես միլիոն հայի: Դա դարասկզբի աննախադեպ ոճրագործությունն էր, որն իր չափերով գերազանցեց Կամպուչիայում կատարվածին: Այն եղեռն էր, որ իրականացվել էր արաբական անապատներում գենքի, սովի ու այլ զրկանքների միջոցով: Այն մեզ համար շարունակում է մնալ օրակարգային հարց, քանի որ շատ հարցեր դեռեւս լուծված չեն: Պիտի լուծենք մենք, իսկ չլուծված մասը՝ մեր սերունդները: Սկզբունքային են վնասի փոխհատուցումն ու տարածքային հարցերը:

Առաջին անգամ հայը կեսդարյա լռությունից հետո միայն համարձակություն ունեցավ իր ձայնը բարձրացնել ու հավուր պատշաճի նշել Հայոց մեծ եղեռնի 50-ամյա տարելիցը՝ հարգելով անմեղ զոհերի հիշատակը: Փաստորեն, սա հայ ազգի ցավն ու դարդն էր, որի մասին ավելի շատ խոսել են օտարները: Եվ այսօր էլ հիշողությունից չեն ջնջվել բազմաբնույթ բիրտ ու դաժան այն հակամիջոցները, որ գործադրվում էին բոլոր նրանց նկատմամբ, ովքեր առաջարկում էին վառ պահել ցեղասպանության զոհերի հիշատակը: Չենք մոռացել, որ 60-ական թվականներին ազգային գաղափարներ դավանելու, հայ ժողովրդի նկատմամբ իրականացված մեծ ոճիրին զնահատակական տալու համար «նացիոնալիստի» պիտակով Ղարաբաղից վտարվել են տասներեք մտավորականներ, որոնց թվում՝ Բագրատ Ուլուբաբյանը, Բոգդան Ջանյանը, Գրիգոր Ստեփանյանը: Սակայն հնարավոր չէ արգելակել մարդու մտածողությունը: Հառնեցին հարյուրավոր հուշարձաններ, պսպարեց հանվեցին մեծ թվով փաստեր ու պատմագիտական աշխատություններ, որոնք լուսաբանեցին ու սերունդներին հանձնեցին բարեսիրտ մարդիկ:

Այսօր, հենվելով այդ մտքերի եւ փաստերի վրա՝ գրված մեր մեծերի կողմից, որի համար պետք է երախտապարտ լինենք նրանց, հարկ է ի հայտ բերել նոր փաստեր, գումարել եղածին ու հետամուտ լինել, որ լուծվեն ազգի պահանջատիրական խնդիրները: Արդեն շատ բան է արված, ու էստաֆետը հանձնված է մեզ, որպեսզի այսօրվա սերունդը գործը հասցնի

հաղթական վերջնագծին: Իսկ այդ վերջնագիծ կոչվածը քաղաքակիրթ եվրոպա մտնելու ակնկալիքով արյունոտ ձեռքերով եվրասիոսիդի եւ միջազգային այլ առյուծների դռները ծեծող Թուրքիայի կողմից խոստովանություն ու ներողություն կորզելն է, որը պիտի վավերացվի միջազգային իրավաբանական փաստաթղթերով: Փաստաթղթեր, որոնք կապացուցեն, որ Թուրքիան դարի ամենավայրագ ոճրագործն է, Գերմանիան էլ՝ նրա խորհրդատուն: Այս կապակցությամբ արժե նշել գերմանացի հեղինակ Կարլ Ոռթի խոսքերը. «Գերմանիան թուրքերի անմիջական խորհրդատուն էր: Այնտեղ, որտեղ թուրքերն անճարակ էին զազանային վայրագության գործադրության մեջ, գերմանացի սպաները դառնում էին ջարդերի, առեւանգումների, կողոպուտի եւ տարագրության առաջնորդները, եւ Գերմանիան իրեն հպարտ կարող է զգալ թուրքերի պես աշակերտներ ունեցած լինելու համար, աշակերտներ, որոնք գերազանցեցին իրենց ուսուցիչներին» (Մ.Ս. Կարապետյան, Հայոց ահավոր եղեռնը պատմագրության մեջ, Երեւան, 1993, էջ 9-10): Իսկ ազգությամբ արաբ լիբանանցի իրավագետ Մետր Մուսա Պրենսը առաջինն է եղել, որ պատմագիտության մեջ մտցրել է «արմենոցիդ» տերմինը, որ նշանակում է ցեղասպանություն՝ կիրառված հայերի նկատմամբ: 1967թ. հուլիսին Փարիզում կայացած՝ Ռճիրի կանխարգելման երկրորդ համագումարում, որտեղ քննվել է նաեւ Հայոց մեծ եղեռնը, իրավագետն իր զեկուցագրում հայերի կոտորածը, որ իրագործվել է Օսմանյան Թուրքիայի տարբեր շրջաններում ու նրա կողմից կառավարվող Արեւմտյան Հայաստանի տարածքում, անվանել է հայասպանություն՝ որակելով այն որպես «ցեղասպանությունների նախահայր» (ՀՍՀ, հ.6, էջ 134):

Մ. Կարապետյանը, մեջբերելով Մուշեղ արքեպիսկոպոսի «Հայկական մղձավանջ»-ից, իր վերը նշված գրքի վեցերորդ էջում գրում է. «Հայ ազգի տառապանքը արդյունք է հայ հեղափոխական գործունեության, եւ թե հայկական վերջին բնաջնջումի եղեռնը ի գործ պիտի չդրվեր, եթե Կովկասի սահմանազուխներուն վրա կամավորական շարժումներ չըլլային» (նույն տեղում, էջ 6): Ոչ մի հեղափոխություն, սակայն, ոչ մի գործողության պատճառ երբեք չի հանդիսացել: Հեղափոխությունները միշտ ծնունդ են եղել ու կլինեն այն բոլոր կուտակված զրկանքների ու տառապանքների, որ կրել է ժողովուրդը: Այնպես որ, Կովկասում 18-20-րդ դարերում սկսված, շատ դեպքերում ճնշված շարժումները եւս ծնվել են տառապանքներից: Շարժումները Կովկասում կարող էին չլինել կամ այլ ձևով

ընթացում, եթե չլինեին թուրքական գործակալները, որոնց նշանաբանն էր՝ «Թուրքիան՝ թուրքերին»: Սա հասարակ բառակապակցությունն է, մի մեծ գաղափար է, որ հանդիսանում էր երիտթուրքերի «Իթթիհաթ վա Թարազ-գի» (Միությունն էլ առաջադիմությունն) կուսակցության ծրագրի ողնաշարը: Իսկ ի՞նչ նպատակով էր 1889թ. Ստամբուլում ստեղծվել երիտթուրքական «Իթթիհաթ վա Թարազգի» կուսակցությունը, կուսակցություն, որի գլուխ կանգնած էին Թալեթ փաշան, Ջեմալ փաշան, Էնվեր փաշան (վերջինս Միջին Ասիայում սպանվել է բերդածորցի գորավար, Թուրքեստանի օկրուգի հրամանատարի տեղակալ Չակոբ Արշակի Մելքունյանի ձեռքով) ու դոկտոր Նազիմը, որոնք էլ դարձան պետության լիդերներ:

Նպատակը մեկն էր՝ Փոքր Ասիան միայն թուրքերինը դարձնելուց հետո միջոցներ ձեռնարկել ու յուրացնել նաև բոլոր այն հարակից շրջանները, որտեղ թուրքալեզու ապրողներ կան: Այդպիսի տարածք էր Կովկասը: Եվ միշտ, սկսած 18-րդ դարի կեսերից, տարբեր միջոցների էին դիմում ազգամիջյան հակասություններն արհեստականորեն այնպես սրելու, որ հետագայում դրանք վերածվեն անկանխատեսելի հետեւանքներ ունեցող ազգամիջյան զինված ընդհարումների: Մերձավոր Արևելքում դարեր շարունակ կրկնվող ազգամիջյան շարժումներն ու զինված ընդհարումները Կովկասի համար եւս անխուսափելի էին նշված ժամանակաշրջանում: Եվ կարծես այդպես էլ պիտի լիներ, քանի որ փոքր ազգերին շատ էին ճնշում մեծամասնություն կազմող ազգերը, որոնց ձեռքում էին գտնվում կառավարական բոլոր լծակները: Լավագույն դեպքում, փոքրամասնությանը տարբեր առիթներով հեռացնում էին հիմնական բնակավայրից: Դուրս ռազմական բժիշկ Իօաննիսը նկարագրում է. «Տաճկաց կառավարությունը պատերազմից յետոյ (խոսքը նախկինում տեղի ունեցած ռուս-թուրքական պատերազմների մասին է. - Չ.Չ.) ընդօրինակել է մի «բըօհիկ» (բաղաբա-կանություն)- չը գիտեմ ումից. օրինակ, յոյներին տէրութեան պաշտօններով ուղարկում են Չայաստան, իսկ հայերին Ռումելիայից եւ ուրիշ տեղեր, միայն Չայաստանից դուրս: Այսպես էլ Իօաննիս-էֆենդին ուղարկվում է զինուորական բժշկի պաշտօնով Չայաստանի զանազան կողմերը՝ Երզն-րում, Մուշ, Վան եւ այժմ՝ Դվին»: Ապրելով Չայաստանի տարբեր վայրե-րում՝ նա սովորել է հայերեն խոսել: Նա «...տաճիկներից անուանուած «Քիվրդիստանում» այնքան հին հայկական յիշատակներ էր տեսնում, որ ամեն մի քայլափոխում զգում էր, թե գտնվում է մի երկրում, որտեղ ամեն քար, փլատակ, ամեն մի թիգ հող կրում է հայկական անջնջելի հետքեր:

ուր Երզրումի, Բաղէշի եւ Վանայ վիլայէթների ազգաբնակութեան ամե-նաստուար մասը հայերն են, այնպես որ օտարականը, այլազգին, ճարա-հատեալ սովորում է այդ կողմերում հայերեն խոսել» (տես Լեւոն Սարգ-սեանց, «Այց Թուրքաց Չայաստանին», էջ 63-64, Թիֆլիս, տպարան Մ.Դ. Ռոտինեանցի, 1890թ.): Իսկ Արագածի Ծանծաղ գյուղի բնակիչները ա-սում էին. «Մեր թեւերը կտրեր է այլազգը: Չայը միշտ պետք է թաքցնի իր հարստութիւնը տաճկի ազահ աչքերից, որի համար ոչինչ է հայի գլխին խփելը եւ ունեցածը խլելը: Չայն աշխատասիրութիւնը ժառանգելով հա-սել է, նորան, որ այն մտել է արյան եւ նեարդերի մէջ, բարձր է տաճկից, ո-րի ցեղը, ինչպես անընդունակ զարգանալու, եկել է Միջին Ասիայի խորքե-րից, այնպես էլ մնում է մինչեւ այժմ: Տեսէք, հայը այստեղ, շրջապատուած ամեն տեսակ կամայականութիւնով եւ միայն մի փոքր ազատ լինելով քր-դերի ու չէրքէզների վայրագութիւններից, ինչպես էլի յաջողութեամբ յա-ռաջ է տանում իւր կեանքի կռիվը: Չային տուր հող եւ անդորրութիւն ու ա-զատութիւն իւր գործով պարապելու, զարգանալու, եւ նա շուտով կը վե-րականգնի, կը կենդանանայ (նույն տեղում, էջ 71):

Կովկասը մի տարածաշրջան է, որտեղ ապրել ու ապրում են տարբեր կրոնական պատկանելության եւ ազգային սովորություններ ունեցող ազ-գեր ու ազգություններ: Այն եղել, կա ու կմնա որպես կրակ՝ անթեղված մոխրի մէջ: Դենց փչի քամի՝ նորից կերեալ: Այսպիսի տարածքում իր հե-ռանկարային ծրագրի իրականացումն Օսմանյան Թուրքիան յուրովի եւ շատ խորամանկ եղանակով էր սկսում: Առանձին հատուկեմտ սպանու-թյուններ կազմակերպելով (կարելի է որակել որպես պատվերով սպանու-թյուն) ձգտում էր ազգերին առճակատման համել ու ստեղծել մի իրավի-ճակ, որ նախ՝ «հաշտարարի» մանդատով տարածաշրջան մտնի, ապա նոր՝ լուծի ամենակարեւորը՝ տարածքի էթնիկական մաքրման ու յուրաց-ման հարցերը միաժամանակ: Եվ դրա համար նախադրյալներ կային. հող վաղուց էր ստեղծված Շուշիում: Զաճախակի էին կատարվում սպանու-թյուններ ինչպես հրազենով, այնպես էլ սառը զենքի տարբեր տեսակներով: Եվ սպանվողը միշտ քրիստոնյան էր, առաջին հերթին՝ հայը: 1905-06թթ. հայ-թուրքական (թաթարական) ընդհարման մասին խոսելիս նշվում է, որ հիմնականում մեղավորը տարածաշրջանում իշխող ցարական կառավա-րությունն է, իսկ պատճառը՝ ռուս-ճապոնական պատերազմի հետեւան-քով ստեղծված տնտեսական ճգնաժամը (տես, Ա-Դո, 1905-06թթ. հայ-թուրքական ընդհարումները Կովկասում, Թիֆլիս, 1907թ.): Որոշ աղբյուր-

ներ հիմք են տալիս համոզված ասելու նաև, որ հակահայկական տրամադրությունները տարածաշրջանում իրենց զգացնել են տվել, երբ Պարսկաստանից Ղարաբաղ է անցել Փանահ խանը իր խմբով: Պարսիկ հեղինակ Միր Մեհթի հազանին գրում է. «Կամաց-կամաց Փանահ խանի նկատմամբ Նադիր շահի վստահությունը հատում է: Այս զգալով՝ Փանահ խանը, օգտվելով, որ Նադիր շահը բացակայում էր խորասանից, փախչում է Ղարաբաղ: Իր շուրջը հավաքելով ավազակախումբ՝ սարերում ու անտառներում ապրում» (տե՛ս, «Քիթաբի թարիխի Գարաբաղ», էջ 114): Նույնն է ասում նաև ադրբեջանցի պրոֆեսոր Ն. Ախունդովը (տե՛ս, «Գարաբաղնամալար», Բաքու, 1991թ., էջ 355): Իսկ կարո՞ղ է ավազակն իր համար ապրուստի միջոցներ ստեղծել հայկական միջավայրում առանց սպանության:

Չենք առարկում: Սակայն եկեք դիմենք ի հայտ եկած արձանագրություններին եւս ու մի քիչ խորհենք:

Շուշին ունի ութ քրիստոնեական գերեզմանատուն քաղաքում ու նրա շրջակայքում, որոնցից միայն երկուսի մասին ունենք պատկերացում: Առաջօր Շուշիի գերեզմանատները կարելի է համարել անտարբերության մատնված մատյաններ, որոնց էջերը լեցուն են բանաստեղծություններով, պատգամներով, երեսելի մարդկանց ու գերդաստանների կենսագրություններով, պատմական կարեւոր դեպքերի մասին տեղեկություններով: Դրանք Շուշիի կենսագրությունն են, եւ ոչ մի օտարի հզոր գրիչ չի կարող ժխտել կամ հերքել:

Կան բազմաթիվ արձանագրություններ, որոնք կոնկրետ են խոսում ու վկայում, որ ազգամիջյան թշնամանքը գալիս է ոչ թե 1900-ական թվականներից, այլ՝ էլ ավելի հեռվից: Որպես օրինակ, ներկայացնում ենք մի արձանագրություն.

Իվան դուկասեան Տեր Մկրտիչեանց
Անգութ հրացանը թուրք ավազակին
Ինձնից յավիտեան խլեց իմ հոգին
Թողեց քարհատում իմ անշունչ մարմին
Քառասուն եւ հինգ տարոյս հասակին
1876 ամի 15 մայիսի

Արձանագրությունները հավաստում են, որ մեծ մասշտաբի հասած ազգամիջյան զինված ընդհարումները, ընդհուպ ցեղասպանությունը՝

կազմակերպված պետական մակարդակով, ծնունդ են նման սպանությունների: Սպանություններ, որ կատարվել են ունեւոր քրիստոնյայի, առաջին հերթին՝ հայի անձնական ունեցվածքին տիրանալու նպատակով: Այդ է վկայում փաստը, որ 1895թ. սրով սպանելով, տիրացել են 60-ամյա ոսկերիչ Առուստամ Գասպարյանցի ունեցվածքին: Իսկ հուլիսի 16-ին թուրքի ատրճանակից արձակված գնդակից գլխին մահացու վերք է ստացել ոսկերիչ Յարությունը: 1905թ. հուլիսի 9-ին Շուշիից ոչ հեռու գտնվող թուրքաբնակ Ջառսլու գյուղում սպանվել է պետական փոստը Գորիս ուղեկցող կրտսեր սպա Ֆյոդոր Անտոնովիչ Օնոցկին: Այստեղ իրական է ամեն ինչ, աչքի առաջ է ժամանակը՝ 18-20-րդ դարերը՝ իրենց ամեն ինչով, այդ թվում նաև դաժանությամբ: Սրանք վկաներ են, որոնք հուշում են, որ Շուշիում անհանգիստ է բարախել ժամանակի սիրտը ոչ միայն 1905-06, 1918-20թթ., այլևս դրանցից էլ առաջ: Եվ հենց նշված տարիներին կատարվածները ծնունդ են նախկինում կատարված սպանությունների, որ անուշադրության էին մատնվել ու համարվել մանրուք բոլոր ժամանակներում: 1905թ. երեսուներեք հազար բնակիչ ունեցող Շուշիում ապրում էր 18000 հայ, որից զոհվել է մոտ հազարը, որը կազմում է Կովկասում զոհվածների զգալի մասը:

Նորից դիմենք առաջին անգամ շրջանառության մեջ դրվող արձանագրություններին, որպեսզի իրենք ասեն այն կործանարար աղետների մասին, որ կրել է հայը Շուշիում 1905-06թթ. եւ հետագա տարիներին: Ալ. ձանագրություններ, որոնք տեղեկացնում են մեզ նաև թուրքի գործադրած մեթոդների մասին: Կան, պահպանվել են հարյուրավոր արձանագրություններ, որոնք ներկայանում են մեզ յուրովի: Այսպես, 68-ամյա «նարողնի սավետնիկ» Ալեքսան բեկ Տեր Ղեւոնդի Յեթումյանին, 61-ս.մյա կնոջը՝ Անուշկային եւ 8 տարեկան Պողոս թոռանը հրդեհել են տան մեջ, 1905թ. օգոստոսի 18-ին: Նույն օրը սպանվել են 17-ամյա Նաբաթ Ավանեսյանը, 70-ամյա Եղիշկազուկի Գայանե Վարդապետյանը, տեր Ներսես Բախտանյանը, Յապարծում Տեր Ստեփանի Տեր Աստատյանցը, ազուլեզոց Սուրբ Աստվածաձին եկեղեցին ազատագրող 25-ամյա տասնապետ Ասլան Աղաբաբյանցը, 20-ամյա Յերսիլիա Աթանեսի Վարդապետյանցը, Շուշիի N6 ստիմանապահ գնդի շարքային զինվոր Աբրահամ Մակարովը, կրտսեր սպա (ուստերօֆիցեր) Իվան Պրիվոյնովը եւ մի քանի հարյուր այլ շուշեցիներ, որոնց անմեղ արյամբ ավելցվել են քաղաքի մարմարե փողոցները: Նույն թվականի օգոստոսին էլ սպանվել են քաղաքի նախկին հասարակարգի տավոր, սպա կապալառու Լուկասկինը, որը 1890 թվականին ծնել էր Մեհ-

տի Ղուլի խանի աղջկա՝ Նաթավանի տունը (կարելի է եզրակացնել, որ սպանությունը կատարվել է տունը հետ վերցնելու նպատակով.- Գ.Յ.):

Ընդհարումից առաջ՝ 1905 թվականին, քաղաքի հյուսիսային գերեզմանատան տարածքում ի հայտ եկավ մի սրբատաշ քար, մի զարմանալի պատկեր՝ խաչ, հրացան եւ աղեղնածեւ մի գրություն, որն ասում է. «Սա է մեր կիանքը վտանկից պաշտպանողը Ա.», իսկ պատկերների տակ գրված է. «Վերոյ յիշեալ գրուածքը կատարուեց 1905 թիւ փետրվարի 6-իցը»: Արձանագրության իմաստը խորն է, զգուշացնող եւ պահանջող: Արձանագրության բացակայության դեպքում անգամ շատ բան են ասում խաչն ու հրացանը. միանշանակ հասկացնում են, որ մեզ եւ մեր հավատը անվնաս պահելու համար պետք է զինվենք: Իսկ ինչո՞ւ է շեշտվում 1905թ. փետրվարի 6-ը, եւ դա ի՞նչ ամսաթիվ ու տարեթիվ է Կովկասի հայերի համար: Այդ թիվը հայտնի է որպէս Բաքվի հայերի ջարդերի, կոտորածի թիվ: Սա զգուշացում եւ պահանջ է, որ պատրաստ լինեն, քանզի ուշ թե շուտ իրենց դուռն էլ է ծեծելու հայ-թուրքական ընդհարումը, ինչը եւ անխուսափելի եղավ Շուշիի համար եւս:

Ափսոսանքով ենք նշում, որ առանձին գերեզմանատուն հանդիսացող այս սրբավայրը, որ կարելի է անվանել 1905-06թթ. Շուշիի հայ զոհերի գերեզմանատուն, զրկվել է իր երեք քառորդ մասից, որի քարերից թուրքը տներ է կառուցել: Տասնյակ տարիներ շարունակ այն դուրս է մնացել բուլոբիս տեսադաշտից՝ բավական չէ, այսօր էլ նրա տարածքում՝ հենց զոհերի շիրմաքարերի արանքում, նոր շիրիմներ են ի հայտ գալիս, ինչը ո՛չ իշխանություններին է մտահոգում, ո՛չ էլ մտավորականներին:

Ցավոք, հետեւություն չի արվել, սթափ չի մտածվել, որի համար էլ նույնը Շուշիում կրկնվել է նաեւ 1918-20թթ. եւ ավելի ահավոր ծեւով ու հետեւանքով...

Ինչո՞ւմ է կայանում ահավորությունը: Բավական ենք համարում նշել, որ այդ տարիների ազգամիջյան ընդհարումները այնպիսի պատրաստվածությամբ էին տարվել Թուրքիայի կողմից, որ ոչ մի զոհ գերեզման չունեցավ: Չեն ուզում խոսել ո՛չ այդ տարիներին կատարվածի, ո՛չ էլ այս անգամ արդեն Անգլիայի քաղաքականության մասին, որը Բաքվում նավթային հարցերն էր լուծում իր օգտին եւ հայերիս հաշվին: Այստեղ հիշվում են ինչպէս կշեռքի ծանր նժարի, այնպէս էլ ուրիշի կորած ձիուն մեկ ուրիշի կողմից շվշվացնելով փնտրողի մասին մեր խելացի պապերի խոսքերը: Եվ ճիշտ են ականատեսների պատմածները սերունդներին, որ Աղդանում

նստած թուրք պարետ Ջամիլ Ջահիդ բեկի հրամանով նախ՝ զինաթափեցին հայերին, շեյխ-ուլ-իսլամը (մահմեդական հոգեւոր առաջնորդ) անարգել եկավ-զնաց, ապա՝ կարճ ժամանակամիջոցում անխնա կոտորեցին հայերին ու դիակները լցրին ջրհորերի մեջ: Ճշմարտություն է սա, եւ ոչ ոք ժխտել չի կարող, քանի որ այդ կապակցությամբ իրենց խոսքն են ասել նաեւ քաղաքի ութ քրիստոնեական գերեզմանատներն այն մասին, որ քաղաքի շուրջ 130 հայ գերդաստանների 3300-ից ավելի շիրմաքարերից միայն մեկի վրա կա արձանագրություն: Չարք է ծագում մի՞թե 20 հազարից ավելի հայ բնակչություն ունեցող Շուշիում երկու տարվա ընթացքում բնական մահ կամ որել է պատահարի հետեւանքով մահացող չի եղել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր առաջ խնդիր ենք դրել որպէս սկզբնաղբյուր օգտագործել շիրմաքարերի արձանագրությունները, որոնք ավելի հստակ ու կոնկրետ են խոսում, ներկայացնում ենք ի հայտ եկած այն միակ արձանագրությունն ամբողջությամբ, որ գրված է մեծ գորավար Գարեգին Նժդեհի զինակից, հունահայ (Ռոդոստո) Մովսէս Պաղղատլեանի շիրմաքարի երեսին ու կողերին.

Համաշխարհային արիւնահեղ պատերազմը.

Որը կորոշէր ազգերու բաղդը,
Ձգալով հայի պատկանող նուիրական
պարտքը, առանց վարանելու խառնեց իր
Կեանքը հազարավոր անձնուրացների հետ
Չորս տարուայ ահռելի պատերազմների
ընթացքում մահից զենծ մնացած
թանգակին մատաղ կեանքը հերոսաբար
զոհեց Շուշի եղբայրաօգնութեան
կարոտ օրհասական կռուի մէջ:

Աստ հանգչի
մարմին Մարտիրոս
Մովսէս Պաղղատլեանի,
Կ.Պոլիս, Ռոդոստո,
երանի նահատակի
յիշատակին, որը ան
ծն. 1883թ.

Նահատակեցավ 1918 թ. յուլիս 29-ին:

Դարեր շարունակ հայերի կոտորածներն իրենց անմիջական ներգործությունն ունեցան հայ մտավորական միջավայրի վրա, որոնք առայսօր մտահոգություն են արտահայտում յուրովի, որոնցից մեկն էր 1918-ի արյունահեղ օրերին թուրքի արձակած զնդակի զոհ դարձած Գրիգոր Սաֆարյանի որդին՝ բերդածորցի Մովսես Յախշունցը, որը «24 ապրիլի» բաճառագրության տողերում այսպես է արտահայտվել.

Եվ դարը անանց ցավը ապրելիս,
Երբ ամեն գարնան կանաչ ապրիլին,
Անսալով արյան կանչին կաթոգին,
Պսակ են տանում հուշակոթողին,
Վերքս բացվում է, ցավը՝ նորոգվում,
Բայց ծառն ին կարմիր նա չի ոռոգում,
Նա դեռ մնում է անսաղարթ ու մերկ,
Կորուստն անհատույց, վրեժը՝ խոպան:

Կա տարածված կարգախոս՝ եթե ուզում ես ջնջել մի ազգ, գլխատիր, վերացրո՛ւ մտավորականներին, որոնք գաղափարապես զինում են ժողովրդին: Ինչպես տեսնում ենք, նշված կարգախոսով բոլոր ժամանակներում առաջնորդվել են թուրքիան ու Ադրբեջանը: Դրա վառ ապացույցն են դեռևս 1905-06թթ. ազգամիջյան ընդհարման ժամանակ (1906թ. հուլիս-օգոստոս ամիսներին) Շուշիի անուն հանած ճարտարապետներ Գասպարյանի եւ Տեր-Եսայանց ընտանիքների բնաջնջումը, որի մասին դարձյալ վկայում են քաղաքի երկու գերեզմանատներում հայտնաբերված շիրմաքարերի արձանագրությունները:

ՂԱՅԲԱԼԻՆ՝ ԳՅՈՒՂԱՏԵՂԻ

Երբեմնի հայաբնակ այս բնակավայրը, որն այսօր դարձել է գյուղատեղի, գտնվում է Շուշիի հյուսիս-արեւմտյան կողմում՝ համանուն գետակի ձախ ափին: Շուշիի հետ կապված է եղել սայլերի համար անցկացված ոլորապտույտ ճանապարհով, որն անցնում էր գետակի երկու ափերը միացնող միաթռիչք կամարածեւ կամրջով: Նրա կամարի կենտրոնի բարձրությունը գետակից 9 մ է, աջակողմյան ժայռից, որտեղից սկսվում է կամարածեւ պատը, 4 մ է, ձախակողմյանից՝ 4,3 մ, իսկ լայնությունը՝ 5 մետր: Հարավ-արեւմտահայաց կամարում տեղադրված են 41, իսկ հյուսիս-արեւելյանում՝ 54 սրբատաշ ուղղանկյունածեւ քարեր: Կամարի ներսը լրիվ անտաշ քարից ու կրի շաղախից է, որն այժմ էլ պահպանում է իր կարծրությունը: Ճանապարհը աջ լանջով բարձրանում եւ Շուշի է մտնում՝ հատելով Ստեփանակերտ-Գորիս-Երեւան մայրուղին, քաղաքի հյուսիսային գերեզմանատան տարածքը: Ի տարբերություն Հոնուտ գյուղի՝ այստեղ հորիզոնը բաց է, օդն ու խմելու ջուրը՝ մաքուր: Գյուղը Ջրաբերդի գավառի վարչական տարածքի մեջ էր, ինչպես Կարկառի ձախափնյա մյուս բնակավայրերը: Պատմական աղբյուրներում նշված է, որ Ղայբալի (Ղայիբալի) գյուղն ունեցել է 78 տուն (ծուխ) եւ 580 բնակիչ (տե՛ս, Մ. Բարխուդարյան, «Արցախ», Բաքու, 1895թ., էջ 98): Տեղական բերքերն են՝ ցորեն, գարի, հաճար, կորեկ, խաշխաշ (նույն տեղում): Այսքանը՝ ըստ տեղեկագրական-ազգագրական-երկրագիտական աղբյուրի: Իսկ հիմա տեսնենք՝ ինչ է մեզ հասել վերը նշված 78 տներից ու այլ շինություններից որպես պատմական հուշարձան:

Գյուղի կենտրոնական մասում՝ բլրի վրա (գյուղը փոքր բլուրների վրա է եղել հիմնված) պահպանվում է Սուրբ Աստվածածին եկեղեցին: Այն կառուցված է կամարածեւ՝ հենված վեց սյուների վրա, որոնք նկատելի են միայն կառույցի ներսից: Տանիքը գոգավոր է: Շենքը կառուցված է տեղական քարով ու կրե շաղախով: Սրբատաշ քարից են միայն հենասյուները՝ ներսի կողմից, որոնցից յուրաքանչյուրն ունի 11 մ երկարություն, 5 մ լայնություն, 6 մ բարձրություն: Մուտքի դուռն ու մեկ պատուհանը տեղադրված են հարավահայաց պատում, իսկ մյուս փոքրիկ պատուհանը՝ արեւելահայաց պատում, որը լուսավորում է բեմը: Մուտքի դռան վերնամասում տեղադրված կաթնագույն սրբատաշ ուղղանկյունածեւ քարին զրված է 4

տողից բաղկացած արձանագրություն, որը քերված է, պահպանվում են տառերի հազիվ ընթեռնելի հիմքերը: Բեմն առանձնացված է 0,5 մ բարձրություն ունեցող պատով, իսկ պատից աջ տեղադրված է դուռ՝ բեմ բարձրանալու համար: Ըստ Մ.Բարխուդարյանի՝ եկեղեցուն հոգեւորականի պարտականությունները կատարել են երկու քահանա, որոնք միաժամանակ սպասարկել են հարեւան Կրկժան գյուղը:

Ղայբալի գյուղի գերեզմանատունը տեղակայված է հյուսիսային կողմում՝ եկեղեցուց մոտ 100 մ հեռավորության վրա: Վիճակն անմխիթար է, շրջված ու ջարդված շիրմաքարեր շատ կան: Գյուղը 1920թ. մարտի սկզբներին, մինչև Շուշին հրի մատնելը, Շուշիի մահմեդականների ուղեկցությամբ հրդեհվել է անգլիական եւ օսմանյան բանակների զինվորների կողմից: Եղել են մարդկային զոհեր, կենդանի մնացածները լքել են հարազատ բնակավայրերը եւ մուսնիսկ խորհրդային կարգերի հաստատումից հետո վերադարձող չի եղել:

Իսկ ի՞նչ են վկայում պահպանված շիրմաքարերի արձանագրությունները: 1700-ական թվականների երկրորդ կեսից սկսած գյուղում բնակություն են հաստատել Աբաղյանների, Անդրեասյանների, Խաչատրյանների, Աղասյանների, Խալիփյանների (երեւի Խալափյան), Առաքելյանների գերդաստանները, որոնց հիմնական զբաղմունքը եղել են անասնապահությունն ու հողագործությունը: Այդ մասին է փաստում Չամբարձում Թունյանցի շիրմաքարի կողին քանդակված մարդու պատկերը, ով, եզներն արորին լծած, հող է հերկում: Քանդակի տակ գրված է. «ԱՅՍԻՆՔ ԷՐ ԱԽՇԱԴԱՈՐ» (այսինքն աշխատավոր էր): Ներկայացնում են լուսանկարն ու արձանագրությունը, որն ասում է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԼՈՒՍԱՅՈՒԳԻ
ՉԱՄՓԱՐՑՈՒՄԻ ԱՆԴՐԻԱՍԵԱՆ
ԹՆԻԵԱՆՑ Ի 1857 ԱԻ

Գերեզմանատան կենտրոնական մասը զբաղեցնում է Առաքելյանների գերդաստանի տոհմական գերեզմանոցը: Այստեղ հողին է հանձնված գյուղի տերտեր Եփրեմ Առաքելյանը, որի ուղղանկյունածեւ 32x 80x102 սմ չափեր ունեցող շիրմաքարին արձանագրված է.

վախճ ի 1889 ամի 7 յունվ ի, Գ ղայբալի
Չանգիստ լուսահոգի Չան
գուցեալ Եփրեմ Տր Յ. Տր Առա
Քելեանց 34 ամաց Չասակի

Քիչ հեռվում, Ազի Առաքելյանի շիրմաքարի արձանագրությունը վկայում է, որ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցու մյուս տերտերի անունն էր Վրթանես: Ներկայացնում են նշված արձանագրությունը.

իսմին տապանի ամփոփեալ է
մարմինն լուսահոգի ազիյի
առաքելեան եւ է մայր տր
Վրթանեսի 1882 ամի տկմբրի 10

1920թ. տաճիկների ու Օսմանյան Թուրքիայի զինվորների կողմից հրդեհված այս գյուղն առայսօր անմարդաբնակ է, իսկ միակ կանգուն մնացած եկեղեցու շենքը՝ փլման վտանգի տակ:

ԱՐՑԱՆԻ 90-ԱՄՅԱ «ԴԵԿԱԲՐԻՍՏԸ»

Կամ՝ հանդիպում Բոգդան Ջանյանի հետ

Խոստովանեմ՝ կյանքում երբեւէ Բոգդան Ջանյանին չէի տեսել, սակայն նրա ստեղծագործություններին տեղյակ էի, հաճախ էի լսում գրույցներ նրա մասին: Եվ միանգամայն անսպասելի հանդիպեցի նրան Երեւանում, 2007թ. ապրիլի 12-ին: Այդ օրը՝ ժամը 11-ի սահմաններում, Կոջոյանի թանգարանում էի: Ներս մտավ մի տարեց մարդ, բարեւեց, տնօրենի գրասեղանի մոտ կանգնեց ու հայացքով լուռ զննեց ներկաներին: Դեմքիս նայեց (երեւի ներկաներից միակ անծանոթն էի), շրջվեց դեպի տնօրենի կողմն ու հարցրեց. «Շահե՞մ, ես երիտասարդն ո՞վ է»: Արցախի ճարտարապետական հուշարձաններն ուսումնասիրող Շահեն Սկրտչյանը պատասխանեց. «Բոգդան Շամիրովիչ, նա էլ մեր կողմերից է, Շուշիի հին գերեզմանատների եւ պատմա-ճարտարապետական հուշարձանների արձանագրություններն է ուսումնասիրում, Երպետհամալսարանը շուտով գիրքը պիտի տպագրի»: Նա նորից դեմքով շրջվեց, բարի հայացքով նայեց, թեւս բռնեց ու շարժվեց դեպի քիչ հեռվում տեղադրված բազմոցը: Երբ նստեցինք կողք-կողքի, նա ձգվեց, արդեն կորացած մեջքը շտկեց եւ այսպես սկսեց. «Հրա՛չ ջան, դու զգո՞ւմ ես, որ Շուշիի դռները յուրովի ես բացում, Ղարաբաղի անկեղծ պատմությունն ես գրում: Պարզվում է՝ հազարավոր արձանագրություններ հավաքել ես միայն Շուշիից. դա շատ լավ է: Իսկ գիտե՞մ, որ Թաթուլ Հուրյանին աղբրեջանական իշխանությունները հալածել են նրա համար, որ Բաղարայի հին գերեզմանատան շիրմաքարերից մի երկու-երեք արձանագրության հիման վրա հողված է տպագրվել թերթում: Բա հիմա այդ կարելու գործի տպագրության համար մերոնք ի՞նչ են մտածում...»: Այդ մասին խոսեց երկար, հասավ մինչեւ ազգասիրություն, ազգային մտածողություն: Ես լուռ լսելուց հետո նայեցի նրա դեռ կրակոտ աչքերին ու ասացի՝ չգիտեմ, դժվարանում եմ այդ հարցին պատասխանել: Նա խորհուրդ տվեց անպայման լինել Բաղարայի հին գերեզմանատանը: Դա, ավելի ճիշտ, պատվիրել էր, որն էլ սիրով ընդունեցի: Արդեն հոգնել էր. մոտ երկու ժամ գրուցել էինք, ավելի ճիշտ՝ դասախոսություն էի լսում ուշադիր ուսանողի պես: Իսկ երբ տարիքն իննսու, որոշեցի, իրեն էլ տեղեկացրի, որ անպայման հողված եմ գրելու ծննդյան 90-ամյակի կապակցությամբ: Նա նորից նայեց դեմքիս ու ասաց. «Դե որ այդպես է, հոգնել եմ, արի գրույցը շարունակենք վաղը՝ նույն ժամին: Տանը լուսանկար ունեմ. 1948-ին խմբովին նկարվել էինք Շուշիի

ռեալականից վերեւ գտնվող գերեզմանատանը, կբերեմ հետս»: Հաջորդ օրը՝ ապրիլի 13-ին, պայմանավորված ժամին կարգապահ զինվորի պես Բոգդան Շամիրովիչը ներկայացավ: Քայլվածքն ավելի լավ էր, աչքերում էլ փայլ կար: Մեկուսացանք ու սկսեցինք գրուցել: Կարծես Ջանյան-հանրագիտարանը ոչ թե գրուցում էր, այլ թերթում էր կյանքի էջերը: Էջեր, որոնք լեցուն են ինչպես հաճելի, այնպես էլ դառնալից պատմություններով: Ես կնշեմ սահմանափակ տեղեկություններ նրա մանկության օրերի, աշխատանքային գործունեության, հայտնի մարդկանց հետ ունեցած հանդիպումների եւ, ամենակարևորը, 1948թ.-ին ձերբակալվելու մասին: Նաեւ գաղութի կյանքից, որ ընդմիջտ կպահպանվեն գրուցակցիս, մեծ մտքի տեր մարդու անսպառ աղբյուրի նմանվող բանաստեղծի հուշամատյանում: Այո՛, անսպառ, քանի որ նրա գրիչն այսօր էլ գործում է: Բոգդան Շամիրի Ջանյանը (իսկական ազգանունը՝ Օհանջանյան) ծնվել է 1917 թվականի հուլիսի 3-ին, Հաղորթի շրջանի Տումի գյուղում: Ի վերուստ, ճակատագրի կամոք նրան փշոտ ճանապարհն է բաժին ընկել: Իսկ նա, հեռու չփախչելով ճակատագրից, իրեն նետված ձեռնոցները ասպետավայել ընդունել ու քայլել է իր ճանապարհով:

Մանուկ հասակում զրկվել է մորից: Տեղի միջնակարգն ավարտելուց հետո սովորել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական բաժնում: Բուհն ավարտելուց հետո՝ 1939-ին, հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում դասավանդել է հայոց լեզու եւ գրականություն: 1939-41թթ. աշխատել է Ստեփանակերտում լույս տեսնող «Երիտասարդ բոլշևիկ» թերթի խմբագրությունում, նույն թվականին էլ նշանակվել է ԼՂ գրողների մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղար: Մասնակցել է 1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմին: Հասել է մինչեւ Բեռլին: Պարգևատրվել է մեդալներով, արժանացել կառավարական այլ պարգևների: Զորացրվելուց հետո նորից է նշանակվել գրողների միության մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղար: ԽՍՀՄ գրողների միության անդամ է 1940 թվականից: Իսկ երբ 1945-ին հաղթանակով տուն եկածների հետ ամենուրեք հանդիպումներ էին կազմակերպվում, աղբրեջանական կառավարությունը, բանաստեղծ Բ. Ջանյանին մեղադրելով «նացիոնալիզմի» մեջ, աքսորում է հյուսիս-արեւելյան Ղազախստանի Զեզկազգան քաղաքը՝ վերջինիս մերձակայքում գտնվող պղնձահանքերում աշխատելու (մարդուն ուղիւնրկել էին «վերադաստիարակվելու»):

Նպատակահարմար եմ գտնում չնշել տաղանդաշատ հայրենասերի ժողովածուների մասին, որոնց թիվը 20-ից ավելի է (շատերն են գրել, վերլուծել ու ներկայացրել ընթերցողին): Գերադասում եմ խոսել նրա կյանքի

մի քանի էջերի մասին, որոնք չնայած դառնություններով լեցուն են, սակայն պողպատե կամքի տեր մարդու շուրթերից այլ կերպ էին հնչում. թվում է՝ հեքիաթ ես ունկնդրում: Եվ ես այդ «հեքիաթն» եմ ուզում ներկայացնել ընթերցողին, պատմություն, որը սկիզբ է առնում 1948 թվականի դեկտեմբերի 18-ից եւ շարունակվում մինչեւ 1952 թվականը: Այդ մասին ոչ մի աղբյուրում չկա, չի նշված նույնիսկ 1981թ. Երեւանում հրատարակված «Գրական տեղեկատու»-ի մեջ, որի 378-379 էջերը հատկացված են Բոգդան Ջանյանին: Ստացվում է այնպես, որ մարդը կյանքի նշված տարիներին չի գործել ու հանկարծ 1954թ. հայտնվել է «Սովետական Ղարաբաղ» թերթում: Կփորձեմ ներկայացնել հարազատ երկրամասին ամբողջ էությամբ նվիրված անվանի բանաստեղծի կյանքի, կենսագրության չգրանցված ու անհայտության գիրկն ուղարկված դրվագներ՝ ներառյալ Բաբվում թուրք զնդապետի հարցաքննությունը.

- Ո՞վ է Ձեզ նշանակել գրողների միության մարզային բաժանմունքի քարտուղար:

- Մի՞թե մարզկոնը չգիտեր, որ Դուք հակախորհրդային մարդ եք:

- Շատ էիք պարծենում, որ եղել եք Լեհաստանում, Պրահայում ու Վիեննայում, Գերմանիայում: Ի՞նչ էիք փնտրում, ո՞ւմ էիք փնտրում: Երբ Ջանյանի համբերությունը հատում է ու ստիպված ասում է, որ ինքը մենակ չի եղել, բանակի շարքերում է եղել, զնդապետի կողքին նստածը մոտենում է նրան եւ բռնաբռնված ձեռքը խփելով սեղանին՝ բղավում «հանցագործի» ականջին.

- Մենք գիտեինք՝ ինչպես էիր կռվում, դու դաշնակ Դրոյին էիր փնտրում, դու նույնիսկ բանաստեղծություններ ես տպագրել դաշնակցական «Հայրենիք» թերթում:

Սկսվեց հարցաքննություն. հարցաքննում էր Դուկասով ազգանունով մի հայ, որը հայերեն չգիտեր, միշտ հրավիրում էր Մարգո անունով մի կնոջ: Մի քանի օր հարցաքննելուց հետո, երբ արդեն ձեռքի տակ ունեին Բ. Ջանյանի բոլոր ձեռագրերը, «ապացուցեցին», որ մարդը հայրենասիրական գաղափար չունի, գրել է իբր միանգամայն գաղափարազուրկ գործեր: Եվ որպես ապացույցի օրինակ՝ առանձնացրին նրա «Հացի պատգամը» ստեղծագործությունը: Երեւի ընթերցողները ժամանակին հիացել էին բանաստեղծության մեջ ամփոփված այն գաղափարով, որ հացը մեծագույն արժեք է, հացը ուժ է, հացը սեր է, հացը այն մեծությունն է, որով երգվում են բոլոր երգումների վերջում. այն՝ որպես կնիք, դրված է բոլոր երգումների վրա: Մեջբերում եմ երկու քառատող.

Հիշում եմ՝ երբ դեռ մանուկ էի ես, մանուկ խաղասեր, թե հաց ուտելիս իմ ձեռքից հանկարծ մի կտոր ընկներ, Հայրս վրդովված ինձ կնախատեր, հայրս ինձ կասեր.
- Վերցրու՛ հացը, համբուրիր ու կեր:

Հացով երգվում են, հացով բաժանվում: Հացը բարիքն է, Հզորությունն է հայրենի հողի, հայրենի երկրի, երբ դու մեծանաս, թե հացը կրծքով չպահես, Մեզ հայրդ, մանկիկ, երբեք չի ների:

Սխալ է ու ցավալի, սակայն եւ զավեշտական, որ մինչեւ հեղինակին մեղադրելը կշտամբանքի են արժանացրել «խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագիր Սերգեյ Յարամիշյանին, ով տպագրել է «հակասովետական» բանաստեղծությունը...

Այլեւս ամեն ինչ վերջացած էր, ու նա բռնեց Բաբու-Ջեզկազգան ճանապարհը՝ դեպի մի երկրամաս, որտեղ տարին ունի միայն երկու եղանակ ծնեռ եւ ամառ. ծնեռն իր սառնամանիքով ու գիշեր-ցերեկ տափաստանային գայլի պես ոռնացող քամիով, իսկ ամառը՝ անտանելի շոգով (ավելի ահավոր, քան ծնեռը), ճիշտ այնպես, ինչպես հարեւան Ալթայի երկրամասում: Դառն էին օրերը, սակայն նա կարողանում էր ուժ հավաքել՝ հավատալով, որ բոլոր դառնություններն էլ, դժբախտ օրերն էլ անցողիկ են, հուշեր կդառնան հետագայի համար: Հարմարվել էր անգամ նրան, որ իրեն կանչելիս ո՛չ ընկեր Ջանյան, ո՛չ Բոգդան Շամիրովիչ, ո՛չ էլ պարզապես Բոգդան, այլ թվային համարանիշով էին կոչում, իսկ իր անձնական համարն էր 434, որը կրում էր վերնագրեստին (ձախ մասին):

Ճնշված էր, որովհետեւ շատերի պես ինքն էլ օրենքից դուրս էր, զրկված ազատությունից ու տարրական իրավունքներից, միեւնոյն ժամանակ՝ անպաշտպան: Նա բռնաբռնված, ուժերը լարած լուռ տանում էր այդ արճճե ծանրությունն ու հավատում, որ հավերժական, հարատեւ ոչինչ չկա, եթե կա սկիզբ, կլինի եւ վերջ: Եվ այս միտքը ուժ ու եռանդ էր տալիս Բ. Ջանյանին: 1952թ. աշնանը Ստալինին նամակ է գրում ու ասում, որ ինքը ոչ մի մեղք չունի, հանցանք չի գործել, զոհն է այն հանցավոր քաղաքականության, որը վարում է բաղիրովյան Ադրբեջանը հայոց աշխարհի նկատմամբ: Նամակը տալիս է 25-ից ավելի տարիներ Ջեզկազգանում գտնվող Նիկոլայ Վասիլեիչ Օրլովին՝ Մ.Գորկու մտերիմ ընկերոջը, որպեսզի որոշ շտկումներ կատարի: Վերջինս ընթերցում է, ժպտում ու ասում. «Наивный ты, Богдан Шамирович, очень наивный»: Չլսելով Օրլո-

վին նամակն ուղարկում է, որին ի պատասխան՝ երկտողն ասում է. «Դուք ճիշտ եք դատապարտված, բողոքի համար հիմք չունեք»: Սա այնպիսի պատասխան է, որ ընդմիջտ փակում է յուրաքանչյուր բողոքողի բերանը: Եվ նա ստիպված էր սպասել մինչև վերջ: Էլ ի՞նչ պիտի աներ: Այդ կապակցությամբ գրել է.

Երկար սպասեցի այս անպատում,
Ուր դեռ չի հասել հաղթող մարդը մեր,
Մահվան շունչ ունի եւ վիշտ անպատում
Այստեղ ամեն ինչ:
1952թ., Ջեզկազգան

Իր իսկ վկայությամբ, Բոգդան Ջանյանը միայն գաղութում է իմացել, որ Ջեզկազգանում հայտնվելու պատճառը ոչ թե իր գրիչն է, այլ Ջախար Սուվարյան անունով տարեց մի մարդու՝ վաշինգտոնաբնակ բերդաշենցու եւ Ավետիք Իսահակյանի Արցախ գալը (Բ. Ջանյանի հետ միասին եղել են Շուշիի հին հայկական գերեզմանատան տարածքում, փնտրել են Իսահակյանի տիկնոջ՝ Սոֆյայի պապերի՝ մեծահարուստ Քոչարյանների տոհմական գերեզմանոցը, սակայն չեն գտել): Իսկ երբ այդ մասին լսել է Վարպետը, ասել է. «Ուրքս կոտորեր, Ղարաբաղ չգայի»: Այժմ հայտնի է՝ տոհմական գերեզմանատան տարածքում առկա են մոտ 16 շիրմաքարեր, որոնք վկայում են հանգուցյալների՝ հայտնի մտավորականներ լինելու մասին:

Լուրը հասել էր Բաքու՝ Միրջաֆար Բաղիրովին: Ջանյանի ճակատագրին է արժանացել նաեւ Սուվարյանը:

Չնայած երկաթե կամքի տեր Արցախի զավակի համար այս անգամ «մեղադրական եզրակացություն» չգրվեց, «Բաքվի» թելադրանքով, սակայն, այնպիսի պայմաններ ստեղծվեցին, որ Արցախի հայտնի մտավորականները՝ Բ. Ուլուբաբյանի գլխավորությամբ բռնեցին Երեւան տանող ճանապարհը: Հարկադրված գնացողների թվում էր նաեւ Բ. Ջանյանը: Երբ ժամանակավոր տեղավորվեցին հյուրանոցում, հենց հաջորդ օրը նա առաջինը գնաց Հայաստանի գրողների միություն: Երբ բացեց Երեւանում իրեն միակ ծանոթ շենքի դուռը, նա հանդիպեց այն ժամանակվա երիտասարդ բանաստեղծ Կառլեն Հակոբյանին, որը, տեղյակ-անտեղյակ Բ. Ջանյանի անցյալին ու ներկային, օդ շարտեց մի քանի բառ, որոնք այսօր էլ պահպանվում են անվանի մարդու հիշողության մեջ: Ներկայացնում են. «Ո՞ւր ես եկել, Բոգդան Ջանյան: Ինչո՞ւ ես թողել քո Ղարաբաղը»:

Հարցը թողնելով անպատասխան (ուժեղ կամք ունի, շատ կրակներով էլ անցած, թրծված), վերադարձավ հյուրանոց: Չնայած այդ օրը մնաց

անտրամադիր, իբր մնացած օրերին ուներ, սակայն երեկոյան գրեց մի ութնյակ, որը տպագրվեց «Գրական թերթում»: Այն է.

Ես դեռ այնտեղ եմ, որտեղից եկա,
Որտեղից եկա՝ Ձերն է եւ իմը,
Եկա՛, որ ասեմ, ասեմ՝ իմանաք՝
Ես էլ եմ Ձերը եւ Դուք էլ իմը:
Ես ոչ Արաքս եմ, ոչ էլ Հրազդան,
Ոչ էլ Որոտան ժայռեղեն հունով,
Ես լոկ Տրտու եմ, եկա՛ իմանաք՝
Մի գետ էլ ունենք Տրտու անունով:

Ինչպես տեսնում եք, այս տողերում առկա է եւ պատասխան, եւ մոխիրների տակ պահպանվող, սակայն բացվող կրակ: Բոգդան Ջանյանն անտարբեր մնալ չէր կարող, քանի որ առաջին ներշնչանքն ու հոգեւոր սնունդը ստացել է գեղատեսիլ Արցախ աշխարհից, նրա աշխատասեր ու անդրդվելի մարդկանց հետ շփվելուց: Նրա տողերում առկա է մի գաղափար, որը ժամանակի եւ տարածության վրա ցույց է տալիս Արցախի փրկության անհրաժեշտությունը: Եվ դա 1988-94թթ. Արցախյան վերսկսված ազատագրական շարժման արդյունքն է, որին ականատես ենք ինչպես մենք, այնպես էլ անվանի բանաստեղծը, որին ներկայացնում են որպես ոչ միայն անվանի բանաստեղծի, այլ նաեւ ամբողջ կյանքում Արցախի ցավով տառապող գաղափարական մարտադաշտի խիզախ զինվորի:

Անցավ ժամանակ, եւ եկավ նրա սպասումի «վերջը»: Բ. Ջանյանին կանչեցին-տարան մի երկհարկանի շենք, որն իր ձեւով տարբերվում է մյուսներից: Այդ շենքում էր միշտ կայանում մոսկովյան հատուկ հանձնաժողովի միստը: Ընդունված կարգով Բ. Ջանյանը ներկայանում է ու զեկուցում. «Ես կալանավոր Բ. Ջանյանն եմ, դուք եք կանչել»: Ձեկույցին ի պատասխան՝ լսում է. «Դուք այլեւս ո՛չ կալանավոր եք, ո՛չ դատապարտյալ, ստացե՛ք Ձեր անձնագիրը: Ներեցե՛ք: Հուսով եմ՝ հայրենիքի նկատմամբ ոխ չեք պահի, կծառայեք Ձեր գործով ու գրչով»:

Բոգդան Ջանյանը ոխ չպահեց, սակայն անդրդվելի մնաց ու շարունակեց նույն թափով սահեցնել գրիչը՝ ակոսելով նոր երգեր՝ նվիրված հարազատ ժողովրդին ու Արցախին: Նախկին «սխալների», «ազգայնամոլության» համար կրած պատիժը չկարողացավ նրան վախ ներարկել: Նա նորից եղավ Շուշիի հին հայկական գերեզմանատներից մեկի տարածքում այս անգամ 1960թ. անվանի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի, Բորիս Հարությունյանի եւ Բագրատ Ուլուբաբյանի հետ: Ըստ նրա

նկարագրածի՝ եղել են 1905-06թթ. հայ նահատակների գերեզմանատան տարածքում: Բոգդան Ջանյանի այս տողերը ծնունդ են մի ժամանակի, երբ Ադրբեջանի իշխանավորները արցախահայ անվանի մտավորականների՝ Մոսկվա ուղարկած նամակը ստորագրողներին հոշոտում էին: Նրանց՝ հայտնի «13-ին», պաշտոնաթող չկար, իսկ Արցախը դեռ լուռ էր: Եղավ երկրորդ «աքսոր», եւ 1968-ին՝ էլի դեկտեմբերին, կամավոր-հարկադրաբար տեղափոխվեց Երեւան ու շարունակեց իր ծառայությունը Հայաստանի ռադիոյի «Հայրենիքի ձայն» խմբագրությունում: Դեռ հյուրանոցում էր ապրում, երբ գրեց.

Ես դեռ այնտեղ եմ, որտեղից եկա,
Որտեղից եկա՝ Ձերն է եւ իմը,
Եկա, որ ասեմ, ասեմ՝ իմանաք՝
Ես էլ եմ Ձերը, եւ Դուք էլ՝ իմը...

Հարագատ Արցախում այսօր էլ մոռացված չէ անվանի բանաստեղծ Բոգդան Ջանյանը: Արցախի պետհամալսարանի բանասիրական բաժնի գրականության եւ ժուռնալիստիկայի ամբիոնը ուսումնական պլանում մտցրել է «Արցախահայ գրականություն» առարկան: Առարկայի մի մեծ բաժին հատկացված է Բ.Ջանյանի պոեզիային, որը լայն արծագանք է գտել բանասեր ուսանողների շրջանում: Բ.Ջանյանի ստեղծագործությունների մոտիվներով ուսանողներին հանձնարարվում են կուրսային ու դիպլոմային աշխատանքներ: Վերջերս լույս է տեսել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼԴՀ գիտության վաստակավոր գործիչ Ս. Խանյանի «Հայ պոեզիայի զարգացման միտումները Արցախում» աշխատությունը, որտեղ զգալի տեղ է հատկացված Բ. Ջանյանի ստեղծագործություններին: Ինչպես տեսնում ենք, իսկապես փշոտ ու քարքարոտ, դառնություններով լեցուն են եղել 90-ամյա արցախցի «դեկաբրիստի» տաղանդավոր բանաստեղծ, հարագատ Քիրսի պես անդրդվելի Բոգդան Ջանյանի կյանքի համարյա բոլոր տարիները: Սակայն, անտեսելով այդ դժվարությունները, նա իր վեհ գաղափարները փոխանցել է գալիք սերունդներին: Եվ այսքանի համար արժե սրտանց ասել.

«Հարգելի՛ Բոգդան Շամիրովիչ, շնորհավորում եմ Ձեզ՝ ծննդյան 90-ամյակի կապակցությամբ: Ձեր գրիչը թող միշտ զորեղ լինի: Թող ինը մեկ դառնա, մի գրո էլ ավելի»:

Շուշի-Երեւան-Շուշի
15.06.07թ.

ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ ԿԵՐՏՎԱԾ ԳՐՉՈՎ

Կամ՝ Ղարաբաղը Վազգեն Օվյանի ստեղծագործություններում

Եիշտն ասած, դեռ տարեսկզբին էի ուզում Արցախի նշանավոր գրող՝ պոեզիայի, դրամատուրգիայի, երգիծանքի, արձակի եւ այլ գրական ժանրերում դեռնես երիտասարդ տարիներին իր հաստատուն տեղը գտած Վազգեն Օվյանի ծննդյան 75-ամյակի կապակցությամբ մի հոդված ներկայացնել ընթերցողին: Խոստովանեմ, որ դժվար է խոսք ասել մի մարդու մասին, որին լավ ծանոթ են ոչ միայն Արցախում, այլեւ նրա սահմաններից դուրս: Համենայնդեպս կփորձեմ:

Իմ ծեռքին են Վ. Օվյանի հետմահու տպագրված գրքերը, այդ թվում՝ «Լեռների լեզունը» 500 էջից բաղկացած գիրքը (կազմված չափածո «Այս Ղարաբաղն է» բանաստեղծությունների շարքից եւ արձակ ստեղծագործություններից): Գրքին հավելված են տասնյակից ավելի հրապարակախոսների, գրականագետների, բանաստեղծների եւ լրագրողների կարծիքներ: Ծանաչված լրագրող Գեղամ Բաղդասարյանի ընտրած «Հանգած հրաբխի ջահակիրը» վերնագիրը, նույնիսկ առանց տեքստի, ասում է, թե ինչպիսի հրաբխի զորություն ունի Վ. Օվյանի գրիչը:

Խոստովանեմ նաեւ, որ տաղանդավոր գրողի մասին հոդված գրելուս ամենից առավել նպաստեց, դրդապատճառ դարձավ Կանադայի Տորոնտո քաղաքի «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի ատենապետ Սկրտիչ Սկրտչյանի «Այս Ղարաբաղն է» վերնագրով հուզիչ խոսքը: Ուղիղ հինգ տարի առաջ, գրողի ծննդյան 70-րդ տարում, մայիսի 21-ին մշակույթի պալատում հավաք էր՝ նվիրված հիմնադրամի 10-ամյակին: Այստեղ նա առաջին անգամ լսեց Վ. Օվյանի «Այս Ղարաբաղն է» բանաստեղծությունը, հիացավ ու ցանկություն հայտնեց գոնե մեկ հատ ունենալ, իր խոսքերով ասած, այդ գլուխգործոցից: ԼԴՀ նախագահի աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ Բորիս Ալավերդյանի միջնորդությամբ Վազգեն Օվյանի դուստրը՝ Նարինեն, այդ բանաստեղծության անտիպ մի օրինակը մակագրեց ու հանձնեց նրան: Այդ անգուզական գործը Մ. Սկրտչյանը ներկայացրեց տորոնտոհայությանը, եւ նույն տարվա հունիսի 10-ին Տորոնտոյում կայացած հավաքում իր խոսքը սկսեց հենց այդ ստեղծագործությամբ, որը ցնցել է ներկաներին: «Ժողովուրդը մեծ հուզումով ունկնդրում էր եւ նույն ատեն ուրախանում, որ Արցախից այսքան ուժգին եւ խորիմաստ գրող է դուրս եկել՝ հակառակ 70-80-ական թվականների դաժան տա-

րինների: «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Տորոնտոյի Մարմնի համար մեծ պատիվ է՝ մասնակցել հեղինակի գործերի հրատարակությանը, եւ արցախյան գրչի մշակույթն այս ձեւով ներկայանալու համայն հայությանը: Վստահ ենք, որ Վազգեն Օվյանի հոգին այսօր ճախրում է Արցախի երկինքներում, որի անկախությունը ինքը չկարողացավ տեսնել իր ողջ կյանքում»,- գրում է կանադահայ արվեստասեր բարերարը:

ՀՀ ժողովրդական նկարիչ Հրաչյա Ռուխկյանի կարծիքով՝ Վ.Օվյանի մեջ զուգակցված են տաղանդավոր բանաստեղծը, հրապարակախոսը, առակագիրն ու մեծ հայրենասիրությամբ օժտված պայծառ մարդը:

Իսկ իմ կարծիքով՝ Վազգեն Օվյանը ոչ միայն բանաստեղծ է, արձակագիր, երգիծաբան ու դրամատուրգ, այլև նկարիչ, այն էլ նկարիչ՝ բառերով, որ պարզ նկատվում է նրա յուրաքանչյուր բանաստեղծական տողից: Ընդամենը մի փոքրիկ օրինակ.

Մաննուտն ի վեր ձգված
Ուր-մուր կածան,
ժայռի հոնքին ծաղկած
Հոնին՝ ոսկե դեղձան:
Արտեր դեղին-կանա՜չ
Ու երկինքը կապույտ
Արտերի մեջ կակաչ
Ու երկնքում արտույտ,
Հազարագույն պարտեզ...

Կարդալով այս տողերը, ոչ արհեստավարժ նկարիչն անգամ կարող է, նույնիսկ առանց գյուղը տեսնելու, կտավի վրա ստեղծել մի սքանչելի տեսարան՝ սկսած Քարին տակ գետի աջ ափից մինչև Շաղասար, ու կստացվի թարխունի եւ ռեհանի համով-հոտով Քարաշեն գյուղը: Հենց այստեղից է սկսել իր սերն արտահայտել հայրենի երկրամասի նկատմամբ ժամանակի համարձակ, գրչով զինված արցախահայ առաջամարտիկը՝ Վազգեն Օվյանը, իր համեստ ապրելակերպով, սեփական մատներով հողը տրորող մարդը, հայրենի երկրի սիրով «հիվանդ» գրողը:

Վազգեն Օվյանին առաջին անգամ մոտիկից տեսա 1964-ի ապրիլին՝ Շուշիի մանկավարժական ուսումնարանի ուսանողության հետ մի հանդիպման ժամանակ: Նրանից հետո էլ հայ գրողներ եկան: Հիշում եմ շատ կլիմեն: Երկրորդը մանկագիր Գուրգեն Գաբրիելյանն էր: Իսկ Վազգեն Օվյանի Շուշի գալը առաջին եւ վերջինն էր, առաջին եւ վերջին հանդիպումը Շու-

շիի ուսանողության հետ: Այդ եւ հետագա տարիներին մտքներովս չէր անցնում, չէինք հետաքրքրվում, թե ինչու չչարունակեց հանդիպումներ ունենալ Շուշիում Վազգեն Օվյան բազմաժանր գրողը, որը 30 տարեկանում «կրակ» էր թափում ամբիոնից:

Միայն Արցախյան շարժման ու հետագա տարիներին սկսեցինք նորից անդրադառնալ նրա գրածներին ու հասկանալ, որ մեր ազգային-ազատագրական շարժումը Վազգեն Օվյանը սկսել էր դեռ 1960-ականներից ու զարգացրել մինչև 1985-87 թվականները՝ երբ ծանր հիվանդ, զամված էր անկողնում:

Գրիչ վերցնել ու Ղարաբաղն իր իրական վիճակով ընթերցողին ներկայացնելը, իմ կարծիքով, մեծ ռիսկի գործ է, այն էլ 1970-ականներին: Նշանակում է աչքի առաջ պահել Հյուսիսային Ղազախստանի, Ալթայի երկրամասի տափաստանները, ուր գիշեր-ցերեկ գայլի պես ոռնում է քամին, իսկ ձմռանը՝ ցուրտն ասեղի պես ծակում մարդու զուկսը: Վազգեն Օվյանն այսքանը մեզից էլ լավ գիտեր, սակայն գրում էր: «Ղարաբաղ» բանաստեղծության տողերում նկատվում է, որ երբ Ղարաբաղ է ասում՝ հոգին բաց է լինում, միեւնույն ժամանակ էլ՝ սիրտը լաց է լինում, երբ տեսնում է իրական վիճակը.

Ղարաբաղ եմ ասում՝
Դրախտին եմ հասել,
Ղարաբաղ եմ տեսնում...
Ա՛խ, ես ձեր ինչն ասեմ:

Տողեր են, գրված 1981-ին, եւ յուրաքանչյուր ղարաբաղցի գիտի, թե ինչեր ասես, որ իր մեջ չի տեղավորում «Ա՛խ, ես ձեր ինչն ասեմ» արտահայտությունը, որ գրողի բողոքի ու ցասման ճիչն է...

Աղբբեջանի դրածոների ձեռքերով ու տեղական վայ-ղեկավարների մասնակցությամբ հայաթափվող Ղարաբաղի նույն պատկերն է խորացված «Դէլե յաման» բանաստեղծության մեջ, որը բողոքի ու ահազանգի կոչ է ասես համայն հայությանը.

Դէլե յաման,
Ղարաբաղում հայ չմնաց,
Վայ, դէլե յաման
Մեր հայրենին անտեր մնաց,
Յաման, յաման...

Բոլորիս ծանոթ բառեր, սակայն յուրաքանչյուրը տեղադրված այնպես, ինչպես զինվորը՝ մարտադաշտում:

Եվ կասկածը բացառված է էն գլխից՝ Ղարաբաղի զավակ Վազգեն Օվյանը մարտադաշտում էր շատ վաղուց, եւ դրա փայլուն վկաներն են նրա բանաստեղծությունները, առակները, պարոդիաները («Նազար-Նամեն», «Յեքիաթ փառամուղ էջի մասին», «Յեքիաթ Մեծ գայլի, շնագայլի եւ այլոց մասին», «Յայրենադավը», «Յուղային», «Բասարական», «Ջեւեւ, խելոք կաց», «Յիմա է՞լ լռենք», «Դլե յաման», «Ղարաբաղ եմ ասում...», «Դու հպարտ չես, իմ Ղարաբաղ», «Կկորչեն հավետ եւ փառք, եւ անուն», «Իմ Ղարաբաղը տեսե՞լ ես, ասա» եւ այլն), որոնք արտացոլում էին կուռքերի ու ծափերի վրա հիմնված խորհրդային իրականության իրական դեմքը («Այս շքերթներից հոգնել եմ արդեն», «Կրկես», «Տրիոլետներ», «Ութնյակներ», «Ամարաս» ուղեգրությունը (1975-78թթ.)), «Ղարաբաղի արծիվը» վիպակը եւ այլն): Դրանք, բնականաբար, չէին կարող տպագրվել այն տարիներին եւ մնացել էին անտիպ: Ստեղծագործություններ, որոնք ղարաբաղյան զինու հատկություն ունեն. ինչքան հնանուն՝ ավելի են ուժեղանում:

Վազգեն Օվյանի պիեսները բեմադրվել են Ստեփանակերտի պետական դրամատիկական թատրոնում: Նրա «Մեծ լռեցիկ» Երեւանում մեծ հավանության է արժանացել եւ ստացել երկրորդ մրցանակ:

«Պատմության դասին» խորագրի տակ նրա 28 բանաստեղծություններում պատմական տարբեր ժամանակաշրջանում մտավորականության ճշմարիտ խոսք ասողների նկատմամբ կիրառվող նվաստացուցիչ, նույնիսկ կործանիչ վերաբերմունքն է պատկերված կոնկրետ փաստերով՝ սկսած Մոցարտի, հեղափոխական Շանդոր Պետեֆիի ճակատագրից մինչեւ «Սեւ վեզիրը» (Յ. Ալիեւ): Չնայած նշվածների եւ ուրիշների ճակատագրերն էլ առանձին բանաստեղծություններով է ներկայացրել, ամբողջական տեսքով մի մեծ պատմություն է ներկայացրել «Մեծերի բախտը» բանաստեղծության տողերում:

Յենվելով ռուս բանաստեղծ Ռ. Ռոժդեստովենսկու «Նշան բռնեցեք բանաստեղծներին, եւ պատմության մեջ կմնաք հավետ» տողերին, օրինակներ է բերում, թե ինչպես հղկված, մշակված պլանով Պուշկինի համար Դանտեսն է «ծնվել», Մոցարտի համար՝ Սալիերին, Լեոնոնտովի համար՝ ոմն Մարտինով, Գրիբոեդովի համար՝ մի խումբ պարսիկ մարդասպաններ, Շանդոր Պետեֆին այրվել է կրահորի մեջ, իսկ անմարդկային վերաբերմունքի արդյունքում՝ թոքախտից մահացել է Պետրոս Դուրյանը: Վ. Օվյանի

բազմաթիվ բանաստեղծություններ (չափածո եւ արձակ) վկայում են, որ ինքն էլ «նշան բռնվածներից» էր: Այլապես «Մեծերի բախտը» բանաստեղծությունը գրելիս չէր վերհիշի ռուս գրողի նշված տողերը: Գրողի ուշադրությունից դուրս չեն մնացել ո՛չ մարդկային ճակատագրերը, ո՛չ ժամանակաշրջանը, ո՛չ վարվող քաղաքականությունը, ո՛չ էլ պատմական դեպքերն ու դեմքերը: «Ամարասի վանքում» եւ «Ամարաս» ողբերգության միջոցով հեղինակը արտացոլել է այն վերաբերմունքը, որ 1960-70-ականներին ցույց էր տրվում ազգի պատմաճարտարապետական հուշարձանների նկատմամբ՝ Աղբբեջանի կառավարության կողմից ինտերնացիոնալիզմ եւ բարեկամություն երգելով, ամբիոններից լոզունգներ արտասանելով: Եվ դա այն դեպքում, երբ շուկայի հարեւանությամբ Աղդամում մգկիթն էր գործում:

Վազգեն Օվյանի ստեղծագործություններում ընթերցողը անմիջապես կնկատի, թե ինչպիսի համարձակությամբ է գործել նրա գրիչը. չի սպասել, որ դեպքերը հնանան ու համարվեն վաղեմության ժամկետն անցած: Երեւի մտավորականներից շատերը կհիշեն, որ 1970-ական թվականներին ոչ բոլորն էին համարձակվում ճշմարտության աչքերին ուղիղ նայել, իրերն էլ կոչել իրենց անուններով: Նա այն համարձակն էր, ում համար գրական հարթությունում կուսակցականություն չկար եւ իսկապես իրերը նրա կողմից կոչվում էին իրենց իսկական անուններով:

Բերենք մի օրինակ «Ամարասի վանքում» ուղեգրությունից՝ մի կողմ թողնելով վանքի միտումնավոր մասնակի ավերածությունները, ոչխարների յուրատեսակ փարախ դարձնելը, որոնք եւս չեն վրիպել նրա սուր աչքից:

Էքսկուրսավար, ոմն հրահանգիչ Արտաշես Սահակյան զբոսաշրջիկներին պատմում է «Ամարասի վանքի» մասին. «Ահա Ամարասի վանքը, այն կառուցվել է Փանահ խանի օրոք եւ նրա մեծ օժանդակությամբ»: Ռուսներին եւ ուկրաինացիներին այսքանն ասում էր հայը, այն էլ պատմության մասնագետ հայը:

Ճիշտ է, հետագա տարիներին՝ 90-ականներից հետո էլ Ամարասի, Գանձասարի եւ այլ վանքերի մասին ուրիշներն էլ գրել են, սակայն Վ. Օվյանը մնում է առաջին համարձակը:

Պարզ նկատելի էր, որ ամեն ինչ քաղաքական անիվների վրա էր դրված: Եվ ազգի պատմության՝ նրա հոգեւոր ժառանգության նկատմամբ նման վերաբերմունքն անընդունելի էր անվանի գրողի համար: Ընտրություն կատարելու կարիքը չի զգացվում՝ այդ մասին խոսում է նրա յուրաքանչյուր տողն անգամ: Գրողը ցավով է խոսում այն մասին, որ Ստեփա-

նակերտի բանգարանի սրահից դուրս է տարվել Մեսրոպ Մաշտոցի մարմարե կիսանդրին, մինչդեռ այն պետք է ունենալ ամենուրեք, իսկ յուրաքանչյուր հայկական կրթօջախում՝ պարտադիր:

Իրոք, ամեն ինչ քաղաքականացված էր, կամք էր թելադրվում վերից-վար: Եվ դրա հլու վերջինը պիտի լիներ հասարակ ժողովուրդը: Այս ամենը չէր կարող չփոթորկել հայրենասեր գրողի հոգին, ու նա իր գրչով առճակատվել է վարից-վեր բոլոր արձանների հետ՝ մինչև Բրեժնև: Անհնար է խոսել բոլորի մասին. դա կնշանակի գրել Օվյանի գրածի 3-4 չափ, որ պետզի ընթերցողին մատուցի մեծ գրողի գաղափարները:

Քանի որ խոսվեց ժամանակի քաղաքականության հետ առճակատվելու մասին, բերենք կյանքից մի օրինակ: ՆԳ Հաղորդի շրջափակի աշխատակիցների ուժերով 1980թ. վառելափայտ էր կուտակվել բաժնի համար: Աշխատանքի դիմաց հասանելիք գումարով որոշվեց գնալ Գանձասար՝ ճարտարապետական գլուխգործոցը տեսնելու: Երբ ավտոբուսը հայտնվեց Սարսանգի էլ տանող ճանապարհին, միլպետն իրագեկեց, որ կուսչորջկոմի առաջին քարտուղարն արգելել է՝ ասելով. «Դուք հոգեւորական չեք: Մի՛ գնացեք, կամ էլ գնացեք Սարսանգ»:

Ուշագրավ են նաև գրողի «Ղարաբաղի արծիվը» եւ «Լեռնակերտ» (նախկին «Խանքենդի») վեպերը: Առաջինը բաղկացած է 3 մասից եւ ներկայացնում է Ղարաբաղի տնտեսական, քաղաքական, ռազմական ու դիվանագիտական վիճակը՝ սկսած Մելիք Ջունշուղի (Ս. Շահնազարի որդին) 1796թ. ճանապարհորդությունից դեպի Պետերբուրգ՝ Ցարական Ռուսաստանի հովանավորության հարցով, մինչև 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմի ավարտը՝ վավերացված փետրվարի 10-ին թուրքմենջայ գյուղում կնքված պայմանագրով, եւ Ռուսաստանի խաղաղ ճանապարհով Հարավային Կովկասում հաստատվելը: Վեպում արտացոլված են սոցիալական, հոգեբանական վիճակն ու պատմական դեպքերն Արցախում, մի կողմ չթողնելով ազգային այրերին ու հայ-ռուսական հարաբերությունները:

Ի դեպ, հանգիստ ու խաղաղ մեր ժամանակներում Արցախի մասին պատմավեպ գրող տիկին ժաննա Հակոբյանին (որը շեշտում է, թե առաջինն է, որ Արցախի մասին պատմավեպ է գրում) հիշեցնեմ, որ «Ղարաբաղի արծիվը» Վ.Օվյանը գրել է մինչև 1980 թվականը: Մի՞թե կան տարբեր պրիզմաներ միեւնույն կենսագրության համար: Արցախյան շարժումից շատ տարիներ առաջ գրված այդ վեպում կան նաև այսպիսի տողեր. «...Մենք նախ եւ առաջ կռվել ենք ոչ թե ռուսների, այլ մեր ժողովրդի ազատության համար: Մեր ժողովուրդը Շուշիում ոչ թե ռուսաց թագավորի,

այլ իր հայրենի քաղաքը, իր պատիվն է պաշտպանել, միաժամանակ փրկելով նաև ռուսների կյանքը, նրանց պատիվը... Ռուսները, համենայն դեպս, ո՛չ պարսիկներ են, ո՛չ թուրքեր... Նրանք ոչ թե մեզ համար են եկել այստեղ, այլ իրենց կայսրության հողերն ընդարձակելու... Քանի մեր հարեւանները Աբաս Միրզան ու թուրք սուլթանն են... մեզ պետք է ռուսների բարեկամությունը, բայց մենք նախ պետք է ապավինենք սեփական բազկին...»,- ասում են վիպակի հերոսներ Վանի յուզբաշին ու իր եղբայրը:

Իսկ ինչ վերաբերում է «Լեռնակերտ» վեպին, որի մասին գրականագետ Սերգեյ Աթաբեկյանը գրել է. «Վազգեն Օվյանի «Լեռնակերտ» վիպակն իր «ելման» կետում առնչություններ ունի Չարենցի «Երկիր Նաիրի»-ի, Բակունցի «Կյորես»-ի, Խանգաղյանի «Մատյան եղելությանց»-ի հետ...», այն այսօրվա Ստեփանակերտի 18-20-րդ դդ. նիստուկացն է՝ իր հոգսերով ու հուժորով: Հետո ի՞նչ, որ վեպի նախնական տարբերակը «Խանքենդի» կամ «Խանքենդուց մինչև Ստեփանակերտ» է կոչվել: Ո՞վ չգիտե, որ մինչև Ստեփանակերտ դառնալը մեր քաղաքն այդպես էր կոչվում: Մյուս կողմից՝ ինչքան էլ տարբեր գույներով ներկվի, միեւնույն է, պարզից էլ պարզ ու հասկանալի է, որ բնակավայրը հայկական է, բնակիչները՝ հայեր, որի վկան ուստա Ծատուրն է՝ իր դավթար-օրագրով...

Գրչով իր հուշարձանը կերտած Վազգեն Օվյանը հետմահու արժանացել է ԼԴՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանի: Չերկարացնենք, նշենք, որ Պարույր Սեւակի «Մարդ կա ելել է շալակն աշխարհի, մարդ էլ կա աշխարհն է շալակած տանում» ոսկե խոսքերի «աշխարհը շալակած» տանողներից է նաև Վ. Օվյանը: Նա Արցախ աշխարհը «շալակած» տարավ մինչև Կանադա, եւ հայ համայնքը «Այս Ղարաբաղն է» վերնագրով նրա առաջնեկով ճանաչեց Արցախը, տեղեկացավ նախաշարժումյան Ղարաբաղի իրավիճակին:

Վազգեն Օվյանը վախճանվեց արցախյան շարժումից ուղիղ մեկ տարի առաջ, բայց իր ապրած կյանքով երբեք չպոկվեց իր փոքրիկ Ղարաբաղի փոքրիկ երամից, միշտ հավատարիմ ու նվիրված մնաց հարազատ երկրամասին, իրեն ծնած, սնած ու փայփայած հարազատ արցախահայությանը:

Նա փառք էր ու պատիվ ամենուր, եւ 1987-ի փետրվարին հավերժ գնալուց հետո նրա տեղն առայժմ մի տեսակ թափուր ենք տեսնում: Տա Աստված, որ նոր սերունդներից որեւէ մեկով լրացվի այդ բացը...

ՇՈՒՇԻԻ ԱՐՅԵՍՏՆ ՈՒ ԿԵՆՅԱՂԸ ԸՍՏ ՎԻՍԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Մարդը դարեր շարունակ մշակել է տնային մետաղյա իրեր, տնտեսական գործիքներ, զենքեր ու զարդարանքներ: Աստիճանաբար մարդուն հայտնի են դարձել տարբեր մետաղների յուրահատկությունները: Այսօր ոչ մասնագետներն անգամ տեղյակ են շատ մետաղների վարքին վերամշակման պրոցեսում ու կիրառության մեջ: Քիչ հավանական է հաստատ ու կոնկրետ փաստերով նշել, թե մարդիկ երբ եւ որ մետաղներն են սկսել արդյունահանել ու օգտագործել, սակայն ենթադրվում է, որ դրանք այն մետաղներն են, որոնք բնության մեջ ի հայտ են եկել բնակտորների ձեռով: Այսօր էլ նման մետաղատեսակներից են ոսկին ու պղինձը, որ հանքային պայմաններում լինում են կիլոգրամների հասնող կտորներով: Եթե ժամանակաշրջանի որոշ տարբերությամբ մետաղի տարբեր տեսակներ մշակվել են ու անմիջապես օգտագործվել Եգիպտոսում, Չինաստանում, Եվրոպայում, Մերձավոր Արեւելքի որոշ շրջաններում, ապա Շուշիում մետաղի ոչ մի տեսակ չի մշակվել: Շուշեցի վարպետները մետաղը, որպես հումք ձեռք են բերել առեւտրական ճանապարհով: Հայ առեւտրականների միջոցով հիմնականում Մերձավոր Արեւելքի երկրներից ստացվել է ոսկի, արծաթ, աղամանը, երկաթ, կապար, ցինկ, պղինձ: Առեւտրականների միջոցով էլ շուշեցի արհեստավորը հասել Ֆրանսիայի, Ռուսաստանի, Մերձավոր Արեւելքի ու Միջին Ասիայի շուկաները, որի մասին հստակ նշված է մեզ հասած վիմագրերում:

18-20-րդ դարերում քաղաքում գործել են երկու տասնյակից ավել հիմնադրված արհեստի տեսակներ, որոնք գործել են մինչև 1970-ական թվականները հենց նույն արհեստանոցներում: Եվ եթե նախախորհրդային շրջանում գործել են ինքնուրույն, ապա խորհրդային շրջանում գործել են որպես տեղարդկոմբինատի արհեստանոցներ: Արհեստանոցները կառուցված են եղել սրբատաշ տեղական սպիտակ քարից, ունեցել են առանց լուսանուտի երկփեղկ դռներ: Քանի որ հիմնական նպատակս է ներկայացնել վերը նշված ժամանակաշրջանում քաղաքում գործող (առկա) արհեստները, այլ ոչ արհեստավորներին, որոնց թիվն անցնում է հարյուրից, որպես օրինակ կներկայացնեն ըստ մասնագիտության այն հանգուցյալ արհեստավորների շիրմաքարերի արձանագրությունները, ովքեր կենդանության օրոք համարվում էին առաջատար ու փորձառու մասնագետներ: Մի շարք արձանագրություններում շեշտված են ուստա (վար-

պետ), քաջ ոսկերիչ բառերը, շիրմաքարերի երեսին կամ հարավահայաց կողի արձանագրության աջ կամ ձախ մասում քանդակված է տվյալ արհեստը խորհրդանշող գործիք - սիմվոլ (դարբնի, պղնձագործի եւ կլայեկիչի ձեռով իրարից տարբերվող զնդան, մուրճ ու մկրատ), ոսկերչի մկրատ, խանջալ (երկապր սուր), ձեռագործության հարմարանք, դալլաքի (վարսավիր) ծալովի ածելի, դերձակի մկրատ, հրագեն, կացին, սղոց, կոշիկ եւ այլն:

Շուշիում «Բորժոմի» երկհարկանի հյուրանոցի հարեւանությամբ, գործել է շարժական լուսանկարչական արհեստանոց, որը պատկանել է նկարիչ Քրիստափոր Ասրյանցին: Այս արհեստանոցում 1946-1989 թթ. աշխատել է նաեւ Հայկ Մանուչարյանը, որն ունեցել է «ԳՈՄՁ» մականիշի ապարատ:

Արձանագրությունները վկայում են, որ կարեւորագույն համարվող արհեստները (ոսկերչություն, ակնագործություն, զինագործություն, պղնձագործություն, դարբնություն) համարվում էին գերդաստանի «սեփականություն» եւ փոխանցվում էին սերնդից սերունդ (ժառանգաբար): Եվ այդ գերդաստաններն էլ անվանակոչում էին կրելով տվյալ արհեստի ազդեցությունը: Օրինակ ղոնդաղսագ-Ղոնդաղսագենց, միսկար (պղնձագործ)-Միսկարյան (Միսկարով), նալբանդ-Նալբանդյան, բարութչի-Բարութչյան, ղլիչ (ղլեչի- կլայեկիչ)-Ղլեչյան եւ այլն, որոնք առկա են տեղում: Շուշիում երկու հարյուրամյակից ավել գործած կարելոր նշանակություն ունեցող արհեստանոցները հիմնականում տեղակայված են եղել երբեմնի երեսանյան փողոցի (չգիտես ինչու, այսօր կոչվում է Ղազանչեցոց փողոց) աջ ու ձախ կողմերում: Ղազանչեցոց եկեղեցուց ցած՝ համանուն փողոցի վրա երկու քարավանատների, խանդամիդյանների «Բորժոմի» հյուրանոցի (նշված երկհարկանի հյուրանոցի տեղում կառուցված է ներկայիս ինը հարկանի հյուրանոցը) եւ քաղաքային շուկայի հարեւանությամբ: Դա էլ իր օբյեկտիվ պատճառն է ունեցել: Հեշտ էր լինում եւ ապրանքափոխանակություն կատարելը, եւ ապրանք վաճառքի հանելը, քանի որ մարդաշատ ու ապրանք փոխադրող սայլերի համար հարմար տեղեր էին: Նախապես նշեմ, որ որոշ արհեստների անվանումներ արձանագրություններում ներկայացված են՝ կրելով պարսկերենի եւ արաբերենի ազդեցությունը զուտ այն պատճառով, որպեսզի ճանաչվեն Մերձավոր Արեւելքի շուկայում: Առանց ծավալուն



Ք. Ասրյանցի լուսանկարչական արհեստանոցի զինանշանը

մեկնաբանության ներկայացվում են արհեստները հերթականությամբ: Որպեսզի մերկապարանոց չստացվի եւ ընդունվի ընթերցողի կողմից որպես փաստ, կներկայացվեն նաեւ անհրաժեշտ թվով վիճազիր արձանագրություններ, նշելով համապատասխան համարներն ըստ տեղակայման եւ, ինչու չէ, նաեւ նրա համար, որպեսզի փաստովի տվյալ արհեստի ժառանգական լինելը:

Եվ այսպես, ոսկերչություն (զարգարություն), ակնագործություն: Արհեստի այս տեսակը մարդկությանը հայտնի ամենահին տեսակներից է, որը կարելի է համարել նաեւ արվեստ, քանի որ նրանով զբաղվողները տիրապետում էին քանդակագործությանն ու նկարչությանը: Այս բնագավառի մասնագետները կոչվել են ոսկերիչներ: Մերձավոր Արեւելքի լեզուների ազդեցությունը կրելով՝ կոչվել է նաեւ զարգարություն, իսկ արհեստավորը՝ զարգար, որից էլ առաջացել է «Ջարգարյան» ազգանունը: Շատ աղբյուրներ տեղեկություն են տալիս, որ ոսկերչության կենտրոններն էին Դվինը, Անին, Կարսը, Կարինը, Վանը, Արդվինը, Կ.Պոլիսը, Արդահանը, Երզնկան, Ալեքսանդրապոլը, Շուշին, Ախալցխան (տե՛ս, ՀՍՀ, հատոր 8, էջ 63, Երեւան): Ինչպես մյուս արհեստավորները՝ ոսկերիչներն ու ակնագործները՝ հունք ձեռք էին բերում դրսից, առետրականների միջոցով: Շուշիի ոսկերիչներին հունքը մատակարարել են հայտնի առետրականներ Արստակես Մարգարի Խանդամիրյանը, Աստվածատուր Մելիք-Շահնազարյանը, Բեզլար Սահակյանցը եւ ուրիշներ, որոնք սերտ առետրական կապեր ունեին Մերձավոր Արեւելքի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, եւ Միջին Ասիայի հետ: Ըստ արձանագրության՝ Բեզլար Սահակյանցը հաստատված էր Թուրքմենստանի Դզըլարվատ քաղաքում:

Շուշիում ոսկերիչների արհեստանոցները տեղակայված են եղել քաղաքային շուկայի արեւելահայաց մուտքի աջ անկյունում: Դրանք գործել են նաեւ Խորհրդային ժամանակաշրջանում, որտեղ աշխատողը զբաղվել է միայն իրերի նորոգմամբ, Կազարմայի թաղամասում (կոչվում էր նաեւ Գյանջեցոց թաղամաս, սկսած Դազանջեցոց եկեղեցու վերնամասից մինչեւ Թաղեւոսի ջրամբարը, իսկ փողոցը կոչվում էր Երեւանյան ու վերջանում էր Երեւանյան դարպասների մոտ): 18-19-րդ դդ. ոսկերիչները մեծ թիվ են կազմել քաղաքում: Այդ մասին են վկայում քաղաքի հին հայկական, հայ-ռուսական համատեղ գերեզմանատներում ի հայտ եկած շիրմաքարերի արձանագրությունները: Ոսկերիչ Դանիելի մասնագիտությունը ժառանգել են երեք որդիները՝ Արզումանը, Գրիգորն ու Գովհաննեսը, բոռները՝ Գովհաննեսի որդի Արթինը, Արզումանի որդիներ Միքայելն ու

Դանիելը եւ ծոռը՝ Դանիելի որդի Գովհաննեսը: Անվանի ոսկերիչներ լինելու մասին տեղեկացնում են շիրմաքարերի արձանագրությունները, որոնք ասում են.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՅՈՎՀԱՆԵՍԻՆ ԼՈՒՍԱՅՈՒԳԻ ՔԱՆ ՈՍԿԵՐՉԻՆ
ՈՐ Է ՈՐԴԻ ՂԱՆԻԷԼԻՆ ԵՎ ՀԱՅՐ ՈՒՍՏԱ ԱՐԹԻՆԻՆ
1841 ԹԻՎԻՆ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԴԱՆԻԷԼԻՆ ԼՈՒՍԱՅՈՒԳԻ
ՄԵԾ ՈՍԿԵՐՉԻՆ ՈՐ Է ՈՐԴԻ ՄԻՔԱԷԼԻՆ
1838 Թ.

Հայտնի ոսկերիչ է եղել Ավետիս Գովհաննեսի Դանիել-Բեկյանցը, որին ըստ արձանագրության կոչում էին զարգար Ավետիս.

Հանգիստ Ջարկեար
Աւետիսի Յոհաննիսյան
Դանիել - բեկեանց
1818-1888

Ոսկերչությանը զուգընթաց Շուշիում գործում էր նաեւ ակնագործական արհեստանոց: Անհրաժեշտության դեպքում ոսկերիչների պատրաստած պերճանքի իրերի վրա ակնագործները տեղադրում էին ադամանդե եւ այլ թանկարժեք քարեր, հիմնականում ականջողերի եւ մատանիների վրա: Այս արհեստանոցում պատրաստում էին նաեւ ակնակուռ խաչեր, գավազաններ բարձրաստիճան հոգեւորականների եւ աստվածաբանության բնագավառի գիտական կոչում ունեցող մտավորականների համար: Նշվածը փաստող Վանո Գյանջումյանցի շիրմաքարին գրված է.

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ԹԻՓԼԻՉԵՑ ԲՈԼԵԱՆՏՉԻ
ՎԱՆՈ ԳՅԱՆՋՈՒՄԵԱՆՑ
ՎԱԽԾ. 1903Թ. 65 ԱՄՍՑ

Կրելով արաբերենի եւ պարսկերենի ազդեցությունը, արհեստները Շուշիում եւս անվանակոչվում էին նշված լեզուներով ու այժմ էլ խոսակցական լեզվում գործածական են:

Օրինակ՝ ոսկերիչ - զարգար, փականագործ - չլինգար - տոկար, հրացանի ագուստ (կոթ) պատրաստող - ղոնդաղսագ, հրացանի փող պատ-

րաստող-սագ անող, ամրացնողը կոչվում էր լուլասագ, վառողագործ - բարուբջի, խանչալսագ-թուր (սուր) պատրաստող, չախմախսագ - կայծ, կրակ արծակող մաս հրացանի փողի եւ ագուստի միջեւ, որի գործողությունը փողի (լուլա) մեջ լցված վառողը վառելն է, միսկար- պղնձագործ, բաշմակչի - բաշմակ (գեղջուկի կոշիկի տեսակ) կարող, կոշկակար, սապոճիկ (արհեստավոր, որի մասնագիտությունը սովորական եւ երկարաճիտք կոշիկներ կարելն է), ղիչ (կլայեկիչ)-արհեստավոր, որի մասնագիտությունը պղնձե ամաններ կլայեկելն է (նիկելապատել), տապաղ - տավարի կաշին տարբեր նյութերով մշակող: Մշակված, դիմացկուն ու փափուկ կաշին օգտագործում էին կոշկակարները՝ կոշիկ, ձիու թամբ, սանձ եւ այլ հարմարանքներ կարելու համար, իսկ դարբիններն ու կլայեկիչներն էլ հազվագյուտ դեպքերում առնում էին փուքս պատրաստելու համար (տախտակից ու կաշվից պատրաստված երկու օղանցքով, որոնցից մեկը կափարիչով է, իսկ մյուսը՝ կլոր խողովակով: Առաջինը նպաստում է օղ հավաքելուն, իսկ երկրորդով օղը մղվում է դեպի քուրայի կրակը): Փուքսը դարբնի օգնականի հիմնական գործիքն է, որով փչում ու վառ է պահվում քուրայի կրակը, երբ քուրայում շիկացվում էր մետաղ, որեւէ առարկա պատրաստելու համար (խոփ, կացին, պայտ, մեխ եւ այլն):

Քուրայի մեջ դարբինները ստանում էին երկաթի կոչեղան (կարծր նյութ, որ առաջանում է ածուխի ու մետաղի այրումից առաջացած մասսաների խառնուրդից): Իսկ ինչպես էր կատարվում այդ գործընթացը: Հիմնականում հնամաշ խոփերին նոր ակոսող ծայրեր ամրացնելու համար մետաղը սկսում է հալվել, որի ժամանակ առաջանում եւ վեր էին թռչում աստղաձեւ արեւագույն կայծեր: Հենց այդ ժամանակ հալվող մետաղից քուրայի հիմքի մոխրի վրա արեւագույն կարծր մասսա է առաջանում, որը դժվարացնում է փուքսի աշխատանքը: Երբ դարբինը կրակխառնիչով մասսան հանում է քուրայից, որոշ ժամանակից հետո այն ստանում է փայլուն տեսքով քարածխի գույն: Այդ մասսան դարբիններից առնում են ղիչները (ղլեչի, կլայեկիչ), մուրճով մանրացնում, հետը խառնում ծծմբաթթու եւ նրանով մաքրում պղնձե ամանների կանաչավուն (օքսիդացող - քայքայվող) մասերը, վերականգնում պղնձի իսկական տեսքը եւ կլայեկում:

Արհեստներից միայն քարահանությունն ու քարտաշությունն (քարհան, քարտաշ) են, որ օտարահունչ չեն, այդ էլ պայմանավորված է նրանով, որ նրանց աշխատանքի արդյունքը մնացել է Արցախում:

Ինչպես արդեն նշվել է, Շուշիում գործող 20-ից ավելի արհեստի տեսակներով զբաղվել ու տարածաշրջանում հայտնի են եղել հարյուրավոր

արհեստավորներ, որոնցից շատերին, ինչպես վկայում են արձանագրությունները դիմել են՝ ուստա (վարպետ): Օրինակ՝ հնուտ դարբին Հարությունին, որ տիրապետում էր իր՝ դարբնի, կլայեկիչի, զողողի ու եռակցողի մասնագիտություններին, ասում էին՝ ուստա Հարություն:

Քանի որ «Նորահայտ արձանագրություններ շուշեցիների տոհմանունների եւ ազգանունների ծագումնաբանության վերաբերյալ (18-19-րդ դդ.)» վերնագրի տակ եւս խոսվում է արհեստի տեսակների մասին, ուստի անհրաժեշտ են համարում սահմանափակվել ու ներկայացնել մեկական արձանագրություն, որպես տեղեկատու եւ վկա յուրաքանչյուր արհեստի Շուշիում առկա լինելու մասին:

Վերը նշված հերթականությունը պահպանելով, հաջորդաբար ներկայացնում են քաղաքի հին հայկական ու համատեղ հայ-ռուսական գերեզմանատներում ի հայտ բերված այն բազմաթիվ արձանագրություններից, որոնք ներկայացնում են Շուշին, իր նիստ ու կացով՝ նախախորհրդային շրջանի երկու հարյուրամյակից ավել ժամանակաշրջանում.

1. ԱՅՍ Ե ՏԱՊԱՆ ԲԱՐՈՒԹՉԻ ԸՍՏԵՓԱՆԻ ԿՈՂԱԿԻՑ ԿՈԶԱԼԻՆ ԹՎՆ ՈՍԾ ՅՈՒՆԻՍԻ ԷՐ
2. ԱՅՍ Ե ՏԱՊԱՆ ԱՎՏՈՒԼԻ ՈՐԴԻ ԶԻԼԻՆԿԱՐ ՌԻՍԱ ՔԵԱՍԻՆ ԹՈՍԽԸ
3. Հանգիստ Ստեփանոսի եսայեան ղոնդաղսագեանց վախճանելոյ ի 5 յունվարի 1870 ամի 54 ամայ հասակի
4. Հանգիստ Գրիգորի Սայիեան ղոնդաղսագեանց վախճ 1897 ամի յուլիսի 6-ին 75 ամայ
5. Հանգիստ լուլասագ շարովին բեկլարեան Սիրգայեանց ծնեալ 1847 ամի վախճանեցալ 1884 ամի յունվարի 10-ին - այդ էր անդրեասին
6. ՏԱՊԱՆ ԲԱՐՈՒԹՉԻ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԳԱՍՊԱՐԻ ԹՈՍԾԻՆ
7. ԱՅՍ Ե ՏԱՊԱՆ ԸՆԴ ՈՐՈՒՄ ԱՄՓՈՓԵԱԼ Ե ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ԱՎԱՔԵԱՆՑԻ ԶԱԽՄԱԽԵԱՆՑ ՎԱԽՃ» 1861 ԱՄԻ 60 ԱՄԱՑ
8. Յոհաննես դանիելեանց պղնձագործ վախճանեցալ 1885 թիվ 60 տարեկան
9. Հանգիստ վաղաթառած խանչալսագ Յարութիվնի Հայրապետեանցին, վախճանեցալ 1891 ամի 71 ամայ

10. Հանգիստ լուսահոգի բալասան Սեժլունեան բաղնաղչի վախճանեալ է 1888 ամի հոգտեմբերի 10-ի 40 ամայ հասակի

11. Այս է տապան ուստայ խանչալսազ Ավանես Բինեաթեանցի վախճ 1768 թ. 50 ամայ վարպետ

12. Աստ հանգչի մարմին ժամագործ Հայրապետի Սարգիսեան Մխիթարեանց հանգուցելոց ի 27 յուլիսի 1880 ամի

13. Հանգիստ շրխրեցի սապոյնիկ Ավաքջան Ավաքեան Յայրապետեանց վախճ. 18/8/29 96 ամի

14. Հանգիստ Յակոբ Աղասիեանցին, քաղաքիս առաջին, կօշկակարը սապօժնիկ վախճանեալ է 1899 ամի յունուվարի 23-ին 75 ամայ հասակի

15. Հանգիստ Բեղինեի, որ էր կին ղլիչսազ Յովհաննեսի ղլիչսազ Ղահրամանեանց վախճանեցալ 31ին մայիսի 1900 թ. 96 ամայ հասակի

16. Խսմին տապանի ամփոփեալ է մարմին Հռիփսիմէ, կնոջ խանչալսազ պետրոս Յարութ., որ է դուստր տապաղ Յարութինի. վախճ 18 յունուվարի 1870 ամի:

Ասք կա այն մասին, որ մի քուրդ տապաղ Հարությունին տավարի կաշի հանձնելու ժամանակ նկատում է փայտե տաշտակի մեջ լցրած դարչնագույն թանձր հեղուկ: Կարծելով թե դոշաք է, դիմում է վարպետին. «Ուստա Հարություն, մի քիչ դոշաքիցդ տուր հացովս ուտեմ»: Վարպետը մի ամանի մեջ տալիս է նրան: Ուտել վերջացնելուց հետո քուրդը վերադարձնում է դատարկ ամանն ու ասում. «Ուստա չասես քուրդ էր՝ չհասկացալ, դոշաքդ համ չուներ»:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ժամագործ Հայրապետ
ՍԱՐԳՍԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑԻ
ՎԱԽՃ. 27. ՅՈՒԼԻՍԻ 1880 ԱՄԻ

Քաղաքի Երեւանյան դռների հարավ-արեւմտյան կողմի հին հայկական գերեզմանատան տարածքում ի հայտ բերված արձանագրությունը՝ զետեղված հանգուցյալ Աստվածատուր Ղուլյանցի շիրմաքարին, վկայում է, որ քաղաքում գործել է գինագործական մեծ արհեստանոց: Արհեստանոցի տեր, 1894 թվականի հունվարի 24-ին վախճանված գինագործ Ղուլյանցը միաժամանակ եղել է առեւտրական, որի մասին արձանագրությունն ասում է.

Ով դու անցավոր կանգ առ մոտ շիրմիս
Տես Աստվածատուր ղուլեանց սերունդիս
Շատ աշխատեցայ իբր մարդ փութաջան
աննշան գինագործ, հուսկ վաճառական:

Դժվարությունների հետ կապված, ծանր ու վտանգավոր, բայց եւ այնպէս անհրաժեշտ գործ էր քար հանելու գործը: Քարն էլ անհրաժեշտ է ինչպէս շինարարության, այնպէս էլ շիրմաքարեր պատրաստելու համար: Շիրմաքարեր, որոնց ակամատեսն ենք այսօր: Քար հանվում էր քաղաքի արեւմտյան սահմանը համարվող Գյավուրի սարից (անհավատների սար. այսպէս էին կոչում քաղաք եկած մահմեդականները հայերի ձեռակերտ տեղամասը), արեւմուտքից դեպի արեւելք ձգվող հարավային կողմի ժայռի վերնամասից, որտեղից երեւում է Քարին տակ գյուղն ու Հունոտի կիրճի ձախափնյա ժայռից՝ հենց Հունոտ գյուղատեղիի հարեւանությամբ, քաղաքի հյուսիսային կողմի գերեզմանատան տարածքում (բոլոր գերեզմանատներն, ըստ տեղակայման, ունեցել են իրենց քարհանքերը): Առկա են հետքեր՝ կան հատված, կիսամշակ քարեր, որոնք վկայում են այդ մասին:

Այդ մասին են վկայում նաեւ 1802, 1809 թվագրությամբ Բաբա Բալայանի, Առաքել Բալայանի եւ Հայրապետ Բաբայանի մասին ժայռափոր արձանագրությունները՝

այս Հանգիստայ դեղս կրպատկանի պապայ պալանեանին 1802թ.,
այս Հանգիստ կրպատկանի առաքել պալանցիս.,
այս Քարն եւ տակի հողն կրպատկանի Հայրապետ Բապայեանցին
1880 ամի.

Շիրմաքարերի վրա գրված են նաեւ շատ քարտաշների անուններ: Կատարված քանդակները վկայում են, որ ճանաչված վարպետներ են եղել Սամսոն Օհանյանցը, Բաբա Բալայանը, Առուստամ Բաղդյանցը: Վերջինիս շիրմաքարին արձանագրված է՝

Խսմին տապանի հանգչի մարմին աշխատայվոր լուսահոգի
քարտաշ առըսդամ պետրոսեան պաղրեանցի
վախճ. 1903 ամի 79 ամայ

Շուշիում քար հանելու գործը, իրոք, մասնագիտացված, միեւնույն ժամանակ ժառանգական էր, որի մասին վկայում են հայր ու որդի Համբարձում Քարհանյանցի եւ Հարությունի շիրմաքարերի արձանագրու-

թյունները: Նշված գործով զբաղվողին կոչում էին քարհան, իսկ գերդաստանը՝ Քարհանենց, որը փաստող արձանագրություններն ասում են:

Աննա խանում մելքում
իզբաշեան Քարհանեանց
վախճ 18/6/25 թ. 76 ամայ

Աստանոր հանգչի մարմին
բազմաշխատ Յարուբինի
Յամբարձումեան Քարհանեանց
վախճ. ի 25 նոյեմբերի 1882 ամի
ի 46 ամայ

Տարածված արհեստ էր ասեղնագործությունն ու շյուղերով (Արցախում կոչվում է ճաղ, որը պատրաստում էին բարակ կիսապողպատե մետաղալարից) գործելը:

Շուշիում նման գործով զբաղվող արհեստանոցի աշխատողներին ասում էին ճետ: Այդ մասին վկայող Երեւանյան դռների հարավ-արեւմտյան կողմի գերեզմանատանը՝ Շահնագարյանների ու Բարուբջյանների տոհմական գերեզմանոցների հարեւանությամբ ի հայտ եկած Սովիա Գալուստի Տեր Յակոբյանցի շիրմաքարին գրված արձանագրությունը.

իսմին տապանի ամփոփեալ դնի,
յոյժ վայելչագեղ մարմին Սովիայի,
ճետ տեր - յակեբեանց դուստր Գալուստի,
Յոտավետ ծաղիկ գերդ մանուշակի,
լեզուավ Քաղցրախոս նման սխակի,
փոխեցավ աստեն Քսան ամենի,
Թողեալ զայր եւ ծնողս ի սուգ տրտմնալի,
արժանի եղել տեսուն Քրիստոսի 1884 ամի:

Մեծ թիվ են կազմում այն արձանագրությունները, որոնք տեղեկություն են տալիս շիլայիության մասին: Շիլա - Արցախում տարածված կիսաջրիկ ճաշատեսակ է: Այն պատրաստվում է բրնձից, կորեկից ու սեւագույն ցորենից: ճաշատեսակը պատրաստող խոհարարը կոչվում է շիլայի: Քաղաքի բոլոր գերեզմանատներում առկա են դերձակության մասին խոսող շատ արձանագրություններ: Շիրմաքարերին պատկերված են նույնիսկ աշխատանքի գործիքներ (արդուկ, մկրատ, չափսեր առնելու գործիքներ):

Այսպես.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԼՈՒՍԱՅՈՒԳԻ ՇԻԼԱՅՉԻ
ԱՎԱՔԻ ՈՐԹԻ ԴԱՐՉԻ ԱՍԾԱՅԴՈՒՐԻՆ
1854 ԱՊՐԻԼԻ 13 ԻՆ

Յանգիստ շիլայի Ավաքի Գրիքորեն Ավաքենց
վախճնն 1851 ամի 75 ամայ Յասակի

Կար արհեստի տեսակ, որ կոչվում էր նալբանդ (պայտառ, պայթա): Այս արհեստի տեր մարդիկ կապված էին դարբինների հետ, իսկ ոմանք գործում էին ինքնուրույն: Պատրաստած պայտերը (ասում էին նալ) կապում-ամրացնում էին բանող անասունների սմբակներին հատուկ մեխերով: Դրանից էլ առաջացել են «նալբանդ» բարդ բառն ու Նալբանդյան ազգանունը՝ կրելով արհեստի ազդեցությունը: Նալբանդները եւս պահում էին աշակերտներ, քանի որ այս արհեստն էլ իր գաղտնիքներն ու նրբություններն ունի: Աղասի Ջալալյանցի շիրմաքարին գրված է.

իսմին տապանի ամփոփեալ է մարմին Շուշի քաղաքացի
նալբանդ Աղասի Ջալալեանց որ վախջանեցավ
ի 1860 ամի Ջայս տապան կանգնեցրեց
ի նշան երախտագիտութեան
աշակերտ նորա կարապետ Անդրեասեանց.

18-19-րդ դդ. երկու տասնյակից ավելի արհեստի տեսակ ունեցող Շուշին, ինչպես վկայում են վիմագիր արձանագրությունները, ունեցել է նաեւ զարգացած՝ ծննդով շուշեցի, սակայն Բեռլինում, Փարիզում, Պետերբուրգում կրթություն ստացած մտավորականներ՝ ուսուցիչներ (կոլլեժսկիյ ասսեսոր, կոլլեժսկիյ սեկրետար), բժիշկներ, ճարտարապետներ եւ մասնագիտացված զինվորականներ ու չինովնիկներ (աստիճանավորներ), որոնք պաշտոնավարել են պետական բարձր պաշտոններում: Սրանք քաղաքի ինտելիգենցիան էին՝ մտավոր խավը, որոնց շիրմաքարերի արձանագրության տողերում առկա նույնիսկ առանձին բառեր եւս հաստատում են, որ Շուշիի հայ մտավորականությունը մեծ համբավի տեր է եղել: Մեկ անգամ եւս վերահաստատվում են շուշեցի «մի մոռացված ուսուցչի»՝ Ավետիք Բաբայի Բահաթրյանցին հասցեագրված Ե. Չարենցի խոսքերը, որոնց մասին չնայած նշված է տողերիս հեղինակի «Չափանիշներ մենք ունեինք ի սկզբանե» հոդվածում, որն այլ թեմա է շոշափում, որին կանդրադառնան ընթերցողի ներողամտությունը խնդրելով: Յամարյա

բոլոր մասնագիտությունների մասին տարբեր առիթներով գրվել է, սակայն այլ է ըստ արձանագրությունների տեսնել եւ ընթերցել նշված դարերում Շուշիի վիճակի մասին, մեկ ընդհանուր վերնագրի տակ:

Ներկայացվում են արձանագրությունները՝ գրված այն ճարտարապետների շիրմաքարերին, որոնք վկայում են այն գործերի մասին, որ քաղաքում եւ նրա շրջակայքում պահպանվում են առ այսօր: Մենք մեկ անգամ եւս համոզվում ենք, որ նրանք եղել են տաղանդավոր, դրվատաճանքի արժանի եւ իսկապես, տվյալ մասնագիտության համար ծնված մարդիկ: Մարդիկ, որոնք անջնջելի ձեռագրեր են թողել կնքված սեփական կնիքով: Ի հայտ եկած շիրմաքարերին գրված է.

ընդ արժանաւ ճարտարապետ Սիմոն Տիրացու
Գրիքորեն Տր Յակովբեանց ծնեալ ի 1846 ամի

Սիմոն Հակոբյանցի շիրմաքարին արձանագրված է նաեւ նրա կնոջ՝ Սոփիայի, ծնվ. 1854 թ. եւ որդու՝ Մկրտիչի (1867-1877) մահվան մասին: Ճարտարապետի եւ տիկնոջ մահվան տարեթվերը չեն նշված: Հնարավոր է՝ շիրմաքարը, որ հուշարձանի տեսք ունի, կանգնեցրել է Սիմոն Հակոբյանցը 1877թ. որդու շիրմին, արձանագրել նաեւ իր եւ տիկնոջ մասին, եւս թողնելով մահվան տարեթվերի տեղը, սակայն հետագայում չի լրացվել:

Խանդամիրյանների եւ հոգեւորականների գերդաստան Երանիշյանցների տոհմական գերեզմանատների հարեւանությամբ մյուս ճարտարապետի մասին արձանագրված է.

Հանգիստ վաղաքառան ջարտարապետ Շուշվա քաղա-
Քացի Համբարցումի Ալեքսանեանց վախճանվեցաւ 1 ին
նոյեմբերի 1890 ամի 36 ամայ հասակի.

Ղարակոյանների տոհմական գերեզմանոցի կենտրոնում 7 կտորից բաղկացած 5,2 մ բարձրություն ունեցող շիրմաքարի կողերին, որի 80 սմ բարձրություն ունեցող խաչը ջարդված է, իսկ զարդաքանդակով երկու կտորները ցած են գլորած, ճարտարապետ Մարգարե Ղարակոյանի եւ իր տիկնոջ մասին արձանագրված է.

Հանգիստ ընդ արժանավս է աջակողմեան դասուն
ճարտարապետ Մարգարե Ամովսեան Մելիք ղարակեօզեանց
ծնեալ 1846 թ 17 Յունիսի վախճ 1906 ամի 18-ին մայիսի 60 ամայ
... Թամարայ իսաջանբէկեան կողակից Մարգարե Մելիք
ղարակեօզեանց ծնեւված է 1864 ամի վախճ 1906 ամի 18-ին մայիսի

Ինչպես վկայում են տարեթվերն ու ամսաթվերը, ճարտարապետ Մարգարե Ղարակոյանն ու տիկինը՝ Թամարան եւս սպանվել են թուրքերի կողմից քաղաքում հայ-թուրքական ընդհարման տարիներին, ինչպես շատ մտավորականներ ու խաղաղ, ստեղծագործ կյանքով ապրող հայեր: Նույն թվականին, երկու ամիս անց՝ հուլիսի 28-ին նույն ճակատագրին է արժանացել նաեւ լուսավորչադավան հայտնի ճարտարապետ Մարգիս Գասպարյանցն ու կինը՝ Մարգարիտը, որը նույնպես ակնհայտ է դառնում կողք-կողքի օրորոցածեւ շիրմաքարերի հարավահայաց կողերի արձանագրություններից.

Հանգիստ լուսավորչադավան Յայտնի ճարտարապետ
Մարգիս Գասպարեանցի ծնեալ է 1820 թիս վախճ. 1906թ.
յուլիսի 28-ին:

Շուշիի հյուսիսային կողմի հին հայկական գերեզմանատան կենտրոնական մասում, Աղամյանների տոհմական գերեզմանոցի հարեւանությամբ հողին են հանձնված քաղաքի ազնվատոհմ գերդաստաններից մեկի՝ Եսայանցների սերունդ Միքայել տէր Եսայանցի, տիկնոջ՝ Աննայի ու դստեր՝ Սոփիայի դիակները, որոնց վրա տեղադրված օրորոցածեւ շիրմաքարերից մեկի հարավահայաց կողին գրված է.

Հանգիստ լուսավորչադաւան ճարտարապետ
Միքայէլ Տր Եսայեանց՝ ծնեալ է 1834 ամի
վախճանեալ է (մահվան տարեթիվը չի նշված):

18-19-րդ դդ. առողջապահության ոլորտը այնքան էլ բարվոք վիճակում չէր: Երեւի անհրաժեշտ միջոցների եւ մասնագետների սուր կարիք կար, քանի որ մեծ էր մահացությունների թիվը: Այդ մասին վկայում են բազմաթիվ արձանագրություններում կրկնվող 1853-1862թթ.:

Ստեղծված վիճակից դուրս գալու համար շուշեցին մտածում էր իր մասին: 18-րդ դարավերջին ու 19-րդ դարասկզբին քաղաքն ուներ իր մասնագետները, որոնք կրթություն էին ստացել Գերմանիայում ու Ռուսաստանում: Բնիկ շուշեցի Շաքարյանների, Աղասարյանների եւ Առուստամյանների սերունդ՝ Մարգիս բեկ Շաքարյանի, Հովհաննես բեկ Աղասարյանի եւ Մարգարե Առուստամյանի շիրմաքարերին գրված է.

1. Հանգիստ բժիշկ Մարգիս բեկի Միքայէլեան Շաքարեանց ծնեալ
ի 10 ը մարտի 1834 ամի եւ մեռեալ ի հոկտեմբերի 11 ը հոկտեմբերի
1889 ամի:

2. տապան շուշաքաղաքացի աստիճանավոր բժիշկ յոհաննես բեկի քալայբեկեան աղասարեանց ծնեալ ի 16 մայիսի 1840 եւ հանգուցեալ ի 26 յուլիսի 1876 ամի

3. Հանգիստ հանգուցեալ բժշկաբետ Մարգարե Յովհաննեսեան, Առուստամեանց ծնված է Մայիսի 16ին 1852 թ. վախճ նոյեմ 1ին 1901 թ.

Հյուսիսային գերեզմանատան տարածքում ի հայտ եկած շիրմաքարի արձանագրությունը վկայում է, որ շուշեցին հայտնի բժիշկ է եղել նաեւ Արցախի սահմաններից դուրս: Աստվածաբանության դոկտոր, Գեւորգյան ճեմարանի ուսուցիչ Արշակ Ղազարի Տէր Միքայելյանի եղբոր՝ Հովհաննեսի շիրմաքարին այդ մասին գրված է.

4. «Պատուաւոր խորհրդական բժիշկ Յովհաննես Ղազարեան, Տէր-Միքելեան 1888 ին նշանակուեց Պրիշիբ, որ բազմատարբեր ժողովրդի մէջ արագ գրավեց ամենքի սէրը իւր քաղցր, պարզ եւ անշահատէր բնութեամբ»: Ծն 18/20 I 58, Վախճ. 18/20 V 94

Շուշեցիներին մտահոգել է նաեւ կրթության հարցը, քաջ գիտակցելով, որ ցանկացած արհեստի լավ տիրապետելու համար նախ եւ առաջ պետք է գրագետ լինել: Ինչպես վկայում են վիմագիր արձանագրությունները, Շուշիում ստեղծվել է մտավորականների մի հսկա ցանց, կրթված Փարիզում, Բեռլինում, Մոսկվայում եւ նվիրված աշխատանք է տարվել բնակչությանը կրթելու ասպարեզում: Եղել են բարձր մակարդակի, նույնիսկ արտասահմանում գիտական կոչում ստացած ուսուցիչներ, որոնք հայտնի են եղել նաեւ որպէս գրողներ: Հայտնի են Ավետիք Բաբայի Բահաթրյանցի, Արշակ Ղազարի Տէր Միքայելյանի եւ այլոց անուններ, որոնց մասին նշված է արձանագրություններում: Գործել են ինչպէս մասնավոր դաստիարակներ, քուլտի ուսուցիչներ, այնպէս էլ հայտնի ուսուցիչներ Արցախի թեմական եւ մյուս դպրոցներում, Գեւորգյան ճեմարանում, ռեալական ուսումնարանում: Չծավալվեց, թող այդ մասին խոսեն ներկայացվող արձանագրությունները՝ գրի առնված շիրմաքարերից.

«Արշակ Ղազարեան Տէր-միքելեանը ուսումն ավարտել է Գերմանիայում Աստուածաբանութեան Դոկտորի աստիճանով եւ դեռ ուսանողական նստարանից աշխատում էր իւր մայրենի գրականութեան համար».

տասն տարի վաստակավոր ուսուցիչ Գեորգ ճեմ եւ Ար Թ դպ.

Ծնեալ 18/1 II 64 վախճան 19/25/VI 01

Հայտնի են 15 գրքեր
Հանգիստ կոլեժակի սեկրետար իւանբեկ զէյնալբեկեան ավան իւզբաշեանց 1875 ամ 1 ն նոյեմբերի

Հանգիստ կոլեժակի սեկրետար Սիմեօն բեկի Թառունեանց ծնեալ 1822 եւ վախճանեցալ 1866 ամի

Աստ հանգչի կոլլեժակի ասսեսոր Ավետիք Բաբայան Բահաթրեանց վախճանեալ է 1909 թվ. 68 ամայ Հսկի Հանգիստ կլլեժակի Ասսեսոր Յոհաննես բեկի պետրոսեան բահաթրեանց վախճանեալ ի 4 մարտի 1876 ամի ի 54 ամայ ՀՍԻ

Իսմին տապանի հանգչի ազնիվ եւ իմաստասեր կոլլեժակի ասսեսոր ղահրամանբեկ Մելիքշահնազարեանց ծնեալ ի 1812 ամի եւ փոխուեցալ աստեմի կաւենկանուխի 23 ն ապրիլի 1880 ամի

Այս է տապան վաղաթառամ կոլլեժակի սեկրետար Արստակէս բեկի Ճաւատեան Սարուխանեանց որ փոխեցաւ ի տեր 23 ապրիլի 1879 ամի

Ուսուցիչ Սամել Գիւլզադենց
Նոր Ջուղայեցի 1832-1912 թ

Շուշեցիները չէին սահմանափակվում տեղի թեմական եւ մյուս դպրոցներում, ռեալական ուսումնարանում կրթություն ստանալով: Կան արձանագրություններ, որոնց միջոցով տեղեկանում ենք, որ Մոսկվայում ճեմարան են հիմնադրել շուշեցի Լազարյանները, որտեղ շատ հայերի հետ կրթություն էին ստանում շուշեցի հայեր, որի վկան է Աղամյանների սեբունդ Հովսեփի շիրմաքարի արձանագրությունը, որն ասում է.

Աստ հանգչի լազարեյան ճեմարանի
աշակերտ վաղաթառամ
Յովսեփ պետրոսեան Աղամեանց
վախճանեյալ 11 փետրվարի
1904 26 ամայ

Իսկ կոլլեժակի ասսեսոր Ավետիք Բաբայի Բահաթրյանի որդի Աշոտի շիրմաքարին գրված է.

Աստ հանգչի վաղաթառամ
Աշոտ
Ավետիքեան Բահաթրեանց
աշակերտ
Եօթներ որդ դասարանցի
րեյեալական դպրոցին,
ծն 1883 դեկ. 26
Մահ. 1901 սեպ. 20
վարպետ սամսոն Յ. օհանեանց

Շիրմաքարի հյուսիսահայաց կողին գրված են հոր բառերը՝ ուղղված որդուն ու Աստծուն՝ Աշոտի անժամանակ մահվան կապակցությամբ.

Ու Աշոտ,
ինչո՞ւ, ով Աստված,
մեր առոյգ, ուշիմ, անմեղ որդեակը
յանկարծ,
Անակընկալ
Մահի մատնուեց
Ու անգութ մահ,
Աւաղ Աշոտ,
Ողբամք գրեզ դառնագին

Ըստ վիճակագրությունների՝ 18-19-րդ դարերում Շուշին ունեցել է մեծ թվով բարձրաստիճան զինվորական, դատաիրավական համակարգի հայ ծառայողներ: Քաղաքի ազնվատոհմ Մելիք-Շահնագարյանների, Դուլուխանյանների, Ջուրաբյանների գերդաստանների մի քանի սերունդ ժառանգաբար եղել է ուսադիրների տակ: Որոշ աղբյուրներ վկայում են, որ 1820-30-ական թվականներին Շուշիի բերդապետը եղել է Գյանջում աղա Խանդամիրյանցը:

Ներկայացվում են համապատասխան արձանագրություններ, որոնք վկայում են շուշեցիների մասնակցությունը մարտական գործողություններին: Փոխգնդապետ Իսահակ Ղարամյանցի հրամանատարությամբ գերվել է Յուսիսային Կովկասի լեռնականների առաջնորդ Շամիլը, որը հաստատում են Պարսկաստանում Ռուսաստանի դեսպան, Գրիբոյեդովի տիկնոջ հայրը՝ գեներալ ճավճավաձեն ու վրաց իշխան Օրբելին, որոնք պատանդ են վերցված եղել Շամիլի միջնեկ որդի Գազի-Մագամեդի կողմից, իր ավագ եղբոր՝ Ջամալուդդինի հետ փոխանակելու համար:

Արձանագրություններն ասում են.

Հանգիստ
Հայազգի Քաջ զինվորական փոխ-գնտապետ իսայայ Յովհաննիսեան Ղրամեանց.
ծն. ի 1821 ամի եւ վախճ. ի 1866 ամի ի 12 մարտի
Քաջամարտիկն իսայ յաղթական փառօթ
Զինամն Շամիլ ի պարտություն մատնեաց
եւ յետս դաձոյց գերեալ զընտանիս,
ճավճավաղզե, Օրբել- վրաց իշխանաց
18=54

ԱՄՓՈՓԻ Ի ԴԱՄԲԱՐԱՆԻՍ ՄԱՐՄԻՆ
ԼՈՒՍԱՅՈՒԳԻ ՊՐԱՊՈՐՇԻԿ ՄԵԼԻՔ
ԲԵՅՐԱՍ ԲԵԿԻ, ՈՐԴԿՈՅ ՊՈԼԿՈՎՆԻԿ
ՄԵԼԻՔ ԶԻՎՄՇԻՏ ՄԵԼԻՔ
ՇԱՅՆԱԶԱՐԵԱՆ ԵՒ ՎԱՆՃԱՆԵՑԱԿ
ՍԱ Ի 12 ՅՈՒՆՎԱՐԻ 1850 ԱՄԻ
ԳՈԼՈՎ 56 ԱՄԱՅ Ի ԾՆՆԴԵՆԵՆ:

Այս է տապան Պողպոկկովնիկ Բաբաբեգի
Զոհրաբեանց վախճ 1894 ամի ի հասակի
64 ամայ

Հաշտարար դատավորի օգնական եւ Քննիչ
Տիտուլետարնիյ սովետնիկ Ալեքսանդր
Բաբայեան Զուրաբեանց
ծն 1860 թ. վախճ 1910 թ 29 հոկ.

ԱՍՏԱՆՕՐ ԱՄՓՈՓԵԱԼ Է ՄԱՐՄԻՆ ՇՏԱԲՍ-
ԿԱՊԻՏԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ ԱՂԱՅԻ ԲԱՂՏԱՄ-
ԱՐԵԱՆ ԴՕԼՈՒԽԱՆԵԱՆՅ ԾՆԵԼՈՅ 12 ՄԱՅԻՍԻ
1817 ՎԱՆՃԱՆԵԼՈՅՆ 12 ՓԵՏՐՎԱՐԻ 1871 ԱՄԻ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ Է ՇԻՐՄԻՍ ՀԱՅՐ
ԵՆՕՔ ՂԱԶԱՆՉԵՑԻ ԲԱՐԵՊԱՇՏՕՆ
ՊՕՏՊՕՐՈՒՉԻԿ ԿԱՆՁՈՒՄ ԱՂԱ
ԱՌԱՔԵԼԵԱՆ. ԽԱՆՂԱՄԻՐԵԱՆՑ
ՈՐ ՎԱԽՃԱՆԵՑԱԿ 78 ԱՄԱՅ

Ցարական Ռուսաստանի հպատակությունն ընդունելուց հետո (1805թ. մայիս), շուշեցի հայերը եղել են պետական աստիճանավոր խորհրդականներ ու Ելիզավետպոլի նահանգի քարտուղարներ (սեկրետար):

ի տապանիս հանգչի մարմին իշխանագին
նատվորնի սովետնիկ եւ ասպետ բարեհռչակ
Ջիմշիտ - բեկի Մելիք – խուտատեան
Մելիք Շահնագարեանց ծնեալ 1814 ամի
եւ վախճանել ի 1864 ամի օգս. 16

1. Հանգիստ գուբերնսկիյ սեկրետար
ազնուատո՞ՅՄ Սարգիսջանբեկի
Ջալալբեկեան Հասան Ջալալեանցի
զանձասարեցւոյ վախճանելոյ ի 1876
ամի 55 ամայ Հասակի
2. Այս է տապան Գուբերնսկիյ սեկրետար
Մովսես բեկի տր Ստեփանեան
Յովհաննես Քելխայեանց Ռեւ գիւղացւոյ
վխճ 10 փետրվարի 1897 ամի 53 ամայ Հասակի
3. իսմին տապանի հանգչի Մարմին
գուբերնսկի Սեկրետար Ազնուազգի
Գեորգբեկի Շահիջանեանց Առաջածոր-
եցւոյ վերաբնակ ի Շուշի Քաղաքի
վախճանեալ ի 1903 ամի 75 ամայ Հասակի:

Արխիվային փաստաթղթերի բացակայության դեպքում անգամ, ինչ-
պիսի կեղծումներ էլ որ կատարվեն օտարների կողմից, այս երեք արցախ-
ցիների շիրմաքարերի արձանագրությունները վկայում են, որ 1840-ական
թվականներից ի վեր հայերը Ելիզավետպոլի նահանգի տարածաշրջա-

նում մասնակից են եղել պետական կառավարման գործերին, ու զբաղեց-
րել են կարեւոր պետական նշանակություն ունեցող պաշտոններ:

Վիմագիր արձանագրությունները վկայում են նաեւ, որ Շահնագա-
րյանների, Խանդամիրյանների եւ Սարուխանյանների գերդաստանների
սերունդները զբաղվել են առետրով, կապ հաստատելով Արեւմտյան Եվ-
րոպայի, Ռուսաստանի եւ Միջին Ասիայի առետրական խոշոր քաղաքնե-
րի հետ: Կան արձանագրություններ, որոնցում նշվում է այն քաղաքի ա-
նունը, որտեղ իր՝ առետրականի գործունեությունն է զարգացրել ու սերտ
կապ հաստատել Շուշիի հետ: Ասծատուր Մելիք-Շահնագարյանն այնպի-
սի կապեր է ունեցել Փարիզում, որ նրա որդին, ուսանելով կայսերական
ճեմարանում, դարձել է Ֆրանսիայի դեսպանը Պարսկաստանում:

Մի շարք առետրականների շիրմաքարերի արձանագրություններից
ներկայացնում են երկուսը, որոնք ասում են.

Հանգիստ Շուշի քաղաքացի վաճառական
Արիսդակեսի Անդրեասեան խանդամիրեանց
ծնելոյ ի 15 օգոստոսի 1840 եւ վախճ. ի 4
Ապրիլի 1879 ամի

Հանգիստ լուսահոգի
դղարվատի վաճառական
Բեկլար Սահակեանցի
Վախճանեալ՝ 1902 թ. 44 ամայ

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԱՐՅԵՍՏՆԵՐՆ
ԸՍՏ 18-19-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՏԱՊԱՆԱԳՐԵՐԻ

1. Ակնագործություն (բրյանտչի-թանկարժեք քարերով զարդեր պատրաստող)
2. Ատթարություն (ատթար-արդուզարդի առետրով զբաղվող)
3. Անիվագործություն
4. Ատաղծագործություն
5. Բաշմաղչություն (բաշմաղչի-չուստեր կարող)
6. Բազագություն (բազագ-կտորեղեն վաճառող)
7. Բրուտություն
8. Բաննահություն (որմնադիր-պատ շարող)
9. Բաղնիսպանություն
10. Գդակագործություն- (ճոն, փափախչի)
11. Գորգագործություն (ճետ)
12. Դարբնություն
13. Դանակագործություն
14. Դեղագործություն
15. Դերծակ-դարզի
16. Դաբաղ (տապաղ-կաշի դաբաղող)
17. Զինագործություն
18. Ժամագործություն
19. Լուլասագ (հրազենի փող պատրաստող)
20. Լուսանկարչություն
21. Խանչալսագ (թուր, սուր պատրաստող)
22. Խոհարարություն (ապշագ)
23. Կլայեկող (ղլիչ, ղլիչսագ)
24. Կոշկակարություն (սապոժնիկ)
25. Կրագործություն

26. Համբալություն (բեռնակիր)
27. Հյուսն-տուկար
28. Դոնդաղսագ (զենքի փայտե մաս պատրաստող)
29. Մսագործություն (ղասար)
30. Մաջար (տաշած քարերը զարդաքանդակող)
31. Նաջար (փայտի վրա նախշեր քաշող)
32. Ներկարարություն (կրասիլչիկ)
33. Նալբանդ (պայտառ)
34. Շիլաչի (բրնձից, կորեկից ու ձավարից կերակուր պատրաստող)
35. Շեշխան
36. Ոսկերչություն
37. Չախմախսագ (զենքի մաս պատրաստող)
38. Չիթչի (չթե կտոր դաջող, ներկող)
39. Պղնձագործություն
40. Ջրաղացպան (պղնձե ամաններ պատրաստող)
41. Ջիլավչի (սանձ պատրաստող)
42. Սվաղչի
43. Վարսավիրություն
44. Վառողագործ (բարութչի)
45. Փականագործություն (չիլինգար)
46. Փայտոնչի
47. Քարհանություն
48. Քարտաշություն
49. Հացթուխ

ՋՈՒՂԱՅԻ ՎԱՆԴԱԼԻՉՍԸ ՇՈՒՇԻՒՑ Է ՍԿՍԿԵԼ

Շուշիին վերաբերվող հավաքած հազարավոր վիճագիր արձանագրությունները յուրատեսակ անսպառ ակունքի են նման, որ հնարավորություն են ընձեռում հանդես գալ տարբեր թեմաներով:

Գերթական անգամ որոշել էի գրել քաղաքի 18-19-րդ դարերի հին գերեզմանատներում տարվող վերանորոգման աշխատանքների ընթացքի, նոր ի հայտ բերված արձանագրությունների, մի քանի գերդաստանների (առանձին թեմա կղառնա հետո) անխտիր թաղված շիրմաքարերի մասին, որոնց միջոցով տեղեկացա, որ Շուշին ունեցել է նաև սառը զենքերի պատրաստման արհեստանոց: Պիտի խոսվել մտավորականների գերդաստան Բահաթրյանների, Չիթյանների (նաև Չիչյան), զինագործների գերդաստան Բունիաթյանների մասին: Երեք տասնյակից ավել այս գերդաստանների շիրմաքարերը թաղվել էին, երբ ադրբեջանական իշխանությունները քաղաքից դուրս տեղակայված հացի գործարանի, արելեյան երաժշտական գործիքների ֆաբրիկայի ու շրջսպառընկերության համար ջրատար էին անցկացրել: Սա ամենեւին էլ զարմանալի չէ, քանի որ ադրբեջանականացում էր կատարվում ոչ թե սեփականը ստեղծելով, այլ՝ հայկականի մի մասը ձեւափոխելով ու անվանափոխելով (օրինակ՝ «Պեխի աղբյուրը», որ կառուցված է եղել Դավիթ Աստուրի ճգնավորյանցի հիշատակին վարպետ Իսահակի ձեռքով, 1871թ. ապրիլին, դարձրել են՝ «Իսաբուլաղ»), մյուսը վերացնելով:

Ինձ զարմանք պատճառեցին, որ մենք դարեր շարունակ ակամատես լինելով միայն ավերածությունների՝ սկսած Չինգիզ խանից (ըստ ակադեմիկոս, ռուս արելեյագետ Վ. Բարտոլդի՝ նույնիսկ մոնղոլերեն գրել չգիտեր, պահում էր չինացի գրագիր) մինչև մեր օրերը, չենք մտահոգվել: Այո՛, ավերածություններ, այն էլ շատը մեր աչքի առաջ: Էլի հուսով ենք, որ իբր Ադրբեջանը ՅՈՒՆԵՍԿՕ-ին պատասխան կտա Ջուղայի համար:

Չանդես գալով Երեւանի «Փակագիծ» ակումբում կայացած մամուլի ասուլիսում Գայաստանի պատմության եւ մշակութային հուշարձանների պահպանության գործակալության պետ Արտյոմ Գրիգորյանը նշել է, որ ինքը եւս հույս ունի: Իսկ Գայ Առաքելական եկեղեցու տեղեկատվական ծառայության ղեկավար Տեր Վահրամը նշել է. «Ջուղայում կատարված ոճրագործության առթիվ Ամենայն Գայոց կաթողիկոսության կողմից հերթական գրությունն է հղվել Անդրկովկասի մահմեդականների հոգեւոր առաջնորդ Շեյխ Ուլ Իսլամ Փաշազադեին, բայց մինչև օրս մենք որեւէ պա-

տասխան չենք ստացել»: Իսկ ես լավ հիշում եմ, որ, հանդես գալով Բաքվի ռադիոյով, նույն Փաշազադեին ասել է. «Կարիք չկա մտահոգվելու: Ջուղայում թաղված են ալբաններ (աղվաններ), իսկ ալբանները մեր նախնիներն են»: Այս կապակցությամբ «ՌԵԳՆՈՒՄ» ինֆորմացիոն գործակալության թղթակցին տված հարցազրույցում արտահայտել եմ զարմանքս, թե ինչպե՞ս կարող է օղուզների սերունդն իրեն մի ուրիշ ազգի սերունդ համարել, այն էլ հոգեւոր առաջնորդը: Այսպիսի դեպքում է, որ ռուսական հայտնի ասացվածքն ասում է. «Наглость второе счастье»: Այս կապակցությամբ Ադրբեջանից պատասխան կարելի է սպասել միայն 1915-ին Արեւմտյան Գայաստանում Օսմանյան թուրքիայի կողմից կատարած ցեղասպանության համար պատասխան ստանալուց հետո: Ցեղասպանություն, որ լիբանանցի իրավագետ Մետր Սուսա Դրենսը 1967թ. բառացի անվանել է. «Արմենոցիդ» եւ որակել որպես «Ցեղասպանությունների հայր» (տես, ԶՄՅ, հ.6, էջ 134):

Խոսենք կոնկրետ՝ բերելով համապատասխան օրինակներ եւ, որպես իրեղեն ապացույցներ ու անխոս վկաներ, ընթերցողի ուշադրությանը ներկայացնել Շուշիի Դազանչեցոց եկեղեցու հարավ-արելեյան կողմի հին հայկական գերեզմանատան վիճակը պատկերող լուսանկարներ:

Առաջ անցնելով ուզում եմ մեկնաբանել բաքվեցի հրապարակախոս-լրագրող Ամիրխան Աբբասովի «Страна вандалов» համակարգչային երկու էջանոց ֆոտոռեպորտաժը: Զեղինակն իբր մտահոգված է ու խոսում է Բաքվի եւ Սունգայիթի քրիստոնեական գերեզմանատների վիճակի մասին: Առաջին պարբերության տողերում իբր կշտամբանքի խոսք է ասում նրանց, ովքեր ավերում են գերեզմանատները (խոսք չի ասվում ոչ հայերի, ոչ էլ ռուսների մասին, սակայն նկարներն ու գրությունները հուշում են, որ ավերվում են քրիստոնյաների գերեզմանատները): Զպանցիկ նշում է, որ այդ ամենը սադրանք է, իսկ նման քայլին դիմողները՝ կեղծ հայրենասերներ: Զամոգված է, որ իբր նշված քաղաքների գերեզմանատներում տիրող բարբարոսությունը հանցագործություն է: Զետաքրքիրն այն է, որ ջարդարարներին կեղծ հայրենասերներ համարողը չի նշում ոչ պատճառ, ոչ էլ կոնկրետ ժամանակ եւ զարմացած հարց է տալիս. ո՞ւմ է դա ձեռնտու: Իր իսկ հարցն անպատասխան թողնելով, ռեպորտաժի հեղինակն անցնում է հարձակման՝ բազմապիսի մեղադրանքներ ներկայացնելով հայերին: Ներկայացնում են չորրորդ պարբերությունից մի հատված՝ թարգմանաբար. «...Քողարկված կեղծ հայրենասիրական լոզունգներով, ավերում են գերեզմանատները: Դրանով իսկ սկսել են նմանվել վայրենի հայացքների

տեր դաշնակներին, ովքեր օկուպացված տարածքներում ոչնչացնում են այն ամենը, ինչ հիշեցնում է ադրբեջանցիների մասին: Ինչո՞ւ ենք զննում վայրենիների հետքերով»:

Ըստ Ամիրխան Աբբասովի՝ ստացվում է մոտավորապես այսպես: Եթե չհամարենք, որ հայերը ազատագրել են Արցախի հողերի մի չնչին մասը, այլ օկուպացրել են, ինչպես ինքն է նշում, պատճառ է դարձել այն ամենի, ինչի մասին նշում է եւ օրինակ են վերցրել դաշնակներից ու շոփինիստներից:

Եկեք ճշմարտության աչքերին ուղիղ նայենք, մի կողմ թողնելով ԼՂԻՍ եւ հարակից շրջանների գինվորական պարետ տիրաառչակ գեներալ-մայոր Սաֆոնովի կողմից 1989-91թթ. իրականացված բուն բնակչության բռնատեղահանումները Հյուսիսային Արցախում (Գետաշեն, Կամո, Մարտունաշեն, Արմավիր, Բուզլուխ, Շահումյան), Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանում, Հադրութի շրջանի հարավային գյուղերում: Եվ այսպես, ինչպիսին էր հայկական հին գերեզմանատների ու հայկական մշակութային մյուս հուշարձանների վիճակը Շուշիում մինչև 1988թ. փետրվարի 12-ը՝ մինչև արցախահայության ազգային-ազատագրական պայքարը:

Եվ քանի որ այսօր Ադրբեջանը կռվախնձոր է դարձրել հին հայկական Շուշին, որի մասին վկայում են առկա պատմա-ճարտարապետական կառույցներն իրենց օռնամենտով, շատ վիճաբեր ու պատմական այլ գրավոր աղբյուրներ, խոսենք քաղաքի տարածքում ադրբեջանցիների թողած «հետքերի» մասին, եթե կարելի է այդպես անվանել, այլ ոչ ավերածություն:

Այո՛, հայկական Շուշիի: Եթե հայկական չէր, ինչո՞ւ թուրքերը, սրի քաշելով հայերին, 1920թ. մարտին հրկիզեցին քաղաքի 75 տոկոսը, որ ավերված պահպանվել է մինչև 1960-ական թվականները, ապա հողի երեսից վերացվեցին եղբայրության, ինտերնացիոնալիզմի մասին երգերով: Եկեք անհրաժեշտ համարենք քաղաքի հայաստեղծ ու հայապատկան լինելը վկայող նշված ահավոր ժամանակաշրջանից մինչև 1926թ. Կոմկուսի Կովկասյան բյուրոյի նախագահ, ապա՝ քարտուղար Գրիգորի (Սերգո) Օրջոնիկիձեի խոսքը: 1920թ. մայիսին Շուշիից հետ վերադառնալուց հետո ասել է. «Сегодня я с ужасом вспоминаю те картины, которые мы видели в мае 1920 года в городе Шуши. Красивый армянский город был разрушен до основания и лежал в руинах...: (см. Ш. Мкртчян, Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, стр. 193, Е., 1988г.):

Այո՛, Շուշիի մասին է, որ Բաքվից ռադիոյով ու հեռուստատեսությամբ հանդես եկող պատմաբան Իսրաֆիլ Մամեդովը հաղորդավարուհի Ալմազ Ջաֆարովայի վերջին հարցին ի պատասխան ասել է, որ չունեն Շուշիի հստակ պատմությունը, ոմանք ասում են, որ քաղաքի յուրաքանչյուր քար

խոսում է ադրբեջանցիների կուլտուրայի մասին, իսկ հանրապետության նախագահ Ի.Ալիևը 14.12.2005թ., հանդես գալով Ադրբեջանի ԳԱ գիտաշխատողների առաջ, առաջարկել է աշխարհին հանձնել, որ հայերը Ղարաբաղ են եկել 20-րդ դարում:

Ադրբեջանցին Շուշիում պատմություն չունի, գիտենք, Ադրբեջանի նախագահի ասածն էլ լավ գիտենք, գիտենք նաեւ, որ ամեն քար, իրոք, ադրբեջանցիների մասին է խոսում: Բայց թե ի՞նչ են խոսում Շուշիի քարերը, շատ քչերը գիտեն, ուստի նպատակահարմար են գտնում ներկայացնել մի պատկեր առանց չափազանցելու: Այո՛, ձեր մասին են խոսում, էֆենդի պատմաբաններ, այն էլ դարեր շարունակ անխոս վկաները հայկական գերեզմանատների հազարավոր ջարդված շիրմաքարերը, որ օգտագործել եք յուր ժամանակին՝ որպես շինանյութ ձեր տների համար՝ կառուցված հենց հայերի շիրիմների վրա: Այսօր հրաշքով փրկված շիրմաքարերի ենք հանդիպում, որ թողել եք ձեր բանջարանոցներում ու ցանկապատերում: Այսօր էլ ի հայտ են բերվում հայկական շիրմաքարեր, որ թաղված էին մնում թուրքերի տների նկուղներում եւս: Այդ մասին են վկայում Ղազանչեցոց եկեղեցու հարավ-արեւելյան կողմում գերեզմանատան տարածքում կառուցված երկհարկանի տան բակում, ցանկապատի տակ մնացած թվով վեց շիրմաքարեր, որոնց արձանագրություններն ու լուսանկարները ներկայացվում են: Եվ ընթերցողը կզարմանա, թե ոչ՝ դա իր գործն է, իսկ երբեմնի Բալուջա գյուղի բնակիչ Հակոբի կողակցի՝ Ազիզոյուլի 120x80x40 սմ չափսեր ունեցող շիրմաքարը ի հայտ է բերվել տներից մեկի առաջին հարկի ձախ պատի մոտ: Հարեւան տներն իրարից բաժանող ցանկապատում է գտնվում Տող գյուղացի փարրաշ (պարսկական բանակի սարդարի/զորավարի հրամանատար) Ղազարի որդու՝ Բաղդասարի շիրմաքարը:

Էֆենդիներ, այսպես են խոսում ձեր մասին Շուշիի ոչ սովորական, այլ հազարավոր անմեղ հայերի՝ ձեր իսկ ձեռքով ջարդոտված, կիսաջարդ, ճանապարհների տակ ու ցանկապատերում թաղված շիրմաքարերը:

Եվ այսքանից հետո 11.06.2006թ. ժամը 08:20 րոպեին Բաքվի հեռուստատեսությամբ 1950-ական թվականներին գրական ասպարեզ մտած ոմն Վիդադի մուալիմ, հանդես գալով «Ovgat» (ժամանակներ) հեռուստածրագրի հերթական հաղորդման ժամանակ, ասել է. «Թշնամուն մնաց Շուշին, հիմա էլ Նախիջևանի վրա է աչքը թշնամու: Քարվաճառի, Ջանգելանի եւ Ջանգեզուրի մասին մտածել է պետք»:

Իր բաժին կյանքը համարյա ապրած մտավորականը Բաքվում նստած Ջանգեզուրն էլ է ուզում:

Իշտահիդ քացախ...

ՀՈՆՈՒՏ

Հոնուտ - նշանակում է հոնի ծառերով հարուստ հատված տարածքում: Այսպիսով՝ «հոնուտ» բառը շրջանառության մեջ է մտել որպես հատուկ անուն: Շուշիի արելեյան կողմում գտնվող կիրճը, որտեղով հոսում են Քիրսի հյուսիսահայաց, Շահնաբարի (մասե Սղսաղան) ու Սարի Բաբայի հյուսիս-արելեյան փեշերից սկիզբ առնող, ապա Քարին տակ գյուղի մատույցներում միախառնվող գետակներ, կոչվում է Հոնուտի կիրճ: Կիրճի երկարությունը մոտ 300մ է, լայնությունը՝ վեր խոյացող ժայռերի արանքում՝ 20 մետր: Համարյա նույն բարձրությունն ունեն պղնձա-մոխրագույն աջափնյա եւ ծախափնյա ժայռերը՝ մոտավորապես (130 մ): Կիրճն իր անունն ստացել է շնորհիվ տեղամասում հոնի ծառերի առկայության: Եթե մարտ ամսին քաղաքի արելեյան կողմում գտնվող ձիարշավարանի տարածքից նայենք դեպի կիրճը, կհամոզվենք դրանում:

Հոնուտի մասին պատմական աղբյուրներում նշված է. «Հիվնուտ չէն: Հիմնուած է Գարգար գետակի հարավային օժանդակ ձախ ափի վերայ, մի սարսափելի խոր ձորում, որի գլխին է Շուշի քաղաքն եւ խիստ մեղ է հորիզոնն. Բացի ջրաղացներից չունին ուրիշ եւ ոչինչ: Ծուխ 19 բնակիչ՝ արական 70, իգական 60» (տե՛ս, Մ.Բարխուդարյան, Արցախ, էջ 133, Բաբու, 1895թ.):

Հոնուտը փոքրիկ գյուղ է՝ տեղակայված նշված կիրճում: Այսօր այդ գյուղի մասին խոսվում է անցյալ ժամանակով, քանի որ այժմ անմարդաբնակ է: Միայն գոյություն ունի որպես ավերված գյուղատեղի: Երբեմնի բնակավայր լինելը վկայում են 18-19-րդ դարերից պահպանվող կիսափլված կամարածեւ կացարանները եւ այլ կառույցներ, ջրաղացների տեղեր եւ ամենազխտավորը՝ դեռ պահպանվող գերեզմանատան շիրմաքարերը՝ իրենց արձանագրություններով: Հոնուտ գյուղի ու գերեզմանատան զբաղեցրած տեղի մասե արձանագրությունները շատ բան են հուշում: Կաշխատեմ հնարավորության սահմաններում կատարած իմ ուսումնասիրության հիման վրա որոշ տեղեկություններ ներկայացնել ընթերցողի ուշադրությանը:

Հոնուտը, որպես գյուղ, զբաղեցրել է կիրճով հոսող գետի երկու ափերը: Տները կառուցված են եղել քարից՝ կրե շաղախով: Առաստաղները եղել են կամարածեւ: Կամրջի մոտ կիսավեր վիճակում պահպանվում է մեկ բնակարան: Այն ունի 8մ երկարություն, 4մ լայնություն եւ 3,5մ բարձրու-

թյուն: Նրա դուռն ու երեք լուսամուտները տեղադրված են հարավ-արելեւլահայաց պատում: Չախ կողմում տեղադրված է 2x1մ չափսեր ունեցող դուռը, իսկ նրանից դեպի աջ՝ երեք պատուհաններ: Սենյակի ներսում՝ դռան աջ կողմում, կառուցված է բուխարի: Առաստաղի կենտրոնում կա 30x30 սմ չափսեր ունեցող օդանցք: Ըստ տեղակայման՝ բոլոր տները մի պատով հենված են ժայռին, կամ էլ մեծ ժայռաբեկորի: Գյուղը հողագործությանը զբաղվելու հնարավորություն չի ունեցել տարածքի սակավահողության պատճառով: Ապրիլ ամսին գյուղի ծախափնյակը արել է տեսնում առավոտյան ժամը 10-ից մինչեւ 16-ը, իսկ աջափնյակը՝ 12-ից մինչեւ 17-ը: Չնայած արելը կարճատեւ է հյուրընկալվում գյուղին, սակայն այստեղ օդի ջերմաստիճանը վաղ գարնանից մինչեւ խոր աշուն ավելի բարձր է (25-30), իսկ ամռանն ավելի քան ծովի մակերեւույթից նույն բարձրության վրա գտնվող հարեւան Քարին տակ գյուղում: Թուքն այստեղ ավելի շուտ է հասնում (առկա են թթենիների եւ ընկուզենիների տասնյակ ծառեր), քան Քարին տակ եւ մյուս շրջակա բնակավայրերում: Դրան նպաստում է արելից ստացած բարձր ջերմությունը:

Գյուղի աջափնյակից ծախափնյակ հնարավոր է անցնել միայն գետի երկու ափերն իրար միացնող կամրջով: Այն կառուցված է կամարածեւ: Կամրջի երկու հենակների միջեւ հեռավորությունը 4մ է, իսկ բարձրությունը կենտրոնական մասում՝ 5 մետր: Միաթռիչք կամրջի հենակները հիմնված են խոշոր ու կարծր ժայռաբեկորների վրա, որոնք կիրճի ամենանեղ տեղում են ու «խեղդվող» գետի ջրերը հորդ ժամանակ այնքան են ծեծում, որ ավելի սրբատաշ են, քան կամրջի կամարի քարերը: Այս կամուրջը միակ միջոցն է, որի վրայով կարելի է Շուշի գնալ:

Հոնուտը, համարյա կպած է Շուշիին (իրարից բաժանվում են ձիարշավարանի դաշտով, որտեղ այժմ գործում է Բելգիայի թագավորական պալատի հայտնի բժիշկ, բնիկ շուշեցու սերունդ, բարերար Հովհաննես Մելքոն Բեկի կառուցած ինը անցքերով վայրի գոլֆի դաշտը), բայց եւ այնպես, գործող ճանապարհի երկարությունը 2 կմ է: Ճանապարհը սկսվում է գյուղի ծախափնյակի վերնամասից ու ձգվում դեպի հյուսիս: Այն անցնում էր հայ-ռուսական համատեղ գերեզմանատան արելեյան կողմով ու մտնում Շուշիի բերդապարսպի երրորդ դռնով, որ կոչվում է Մխիթարի դուռ: Այժմ այդ դուռը փակված է պատով այն պատճառով, որ 1868թ.-ին Ելիզավետպոլի նահանգապետի հրամանագրով 2000 մ² տարածք է հատկացվել, որ բանտ կառուցվի (այն շահագործման է հանձնվել 1869թ.-ին եւ գործում է առ այսօր): Հետագա տարիներին նշված ճանա-

պարիզը որոշ չափով երկարել է: Ճանապարհը նշված դռնից (մոտ 200մ.) թեքվելով, շրջանցել է բանտի պարիսպը, ժայռի ստորոտով ձգվել մինչև պարսկական գերեզմանատան վերնամասն ու միացել Ելիզավետպոլի դռներով Շուշի մտնող ճանապարհին: Նոր ճանապարհը դեպի բանտի տարածք տանող ճանապարհի հետ մի յուրատեսակ սահմանագիծ է ռուսական եւ պարսկական գերեզմանատների միջև: Հոնուտի ճանապարհն այժմ գործում է միայն հետիոտն զբոսաշրջիկների համար: Ժամանակակից տրանսպորտային միջոցների համար այն բանուկ չէ, չնայած համարյա նույնությամբ պահպանվում է:

Իսկ ուլթե՞ր էին բնակվում Հոնուտ գյուղում եւ ինչո՞վ էին զբաղվում: Այս եւ այլ հարցերի պատասխանելուն մեզ հիմնականում օգնում են գյուղին (ձախափնյակում) կյած գերեզմանատան շիրմաքարերի արձանագրությունները: Նրանք վկայում են, որ այստեղ ապրել է մեկ գերդաստան իր սերունդներով: 17-րդ դարի վերջին, 18-ի սկզբներին ոմն Ներսես իր որդիներ Մելքումի (Մելքում), Դանիելի ու թոռներ Գրիգորի, Ավանեսի եւ Տատամի (Դանիելի որդիները) հետ միասին բնակություն են հաստատել նշված վայրում: Ըստ արձանագրությունների տեղեկատվության, գերդաստանը նահապետի անունով կոչվել է Նեսունց (Նեսի՝ այսպես է գրված արձանագրություններում, որը Ներսես անձնանվան յուր ժամանակի կրճատ գրելածն է):

Կիրճում ջրաղացների իր ժամանակի առկայությունն ու միակ գերդաստանի տեղամասում բնակություն հաստատելը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ գերդաստանը եղել է ջրաղացպանի գերդաստան: Ըստ գերեզմանատան արձանագրությունների, գերդաստանի նահապետ Ներսեսի որդի Մելքումն ունեցել է Ավանես, Բաղդասար, Գրիգոր եւ Տատամ որդիներ, որոնցով էլ պայմանավորված է եղել գերդաստանի գոյատևումը տեղում՝ մոտավորապես երկու դար: Շիրմաքարերը հատված են ձախափնյա ժայռից (առկա են հետքերը) եւ մշակված տեղում: Գերդաստանի առաջին հանգուցյալներից է եղել Բաղդասարի կինը՝ Անային (հավանական է Աննա), որի շիրմաքարին արձանագրված է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՆԱՅՈՒՆ
ՈՐ Է ԳՈՂԱԿԻՑ ՄԵԼՔՈՍԻՆ
ՈՐԴԻ ԲԱՂՏԱՍԱՐԻՆ
1828

Հավանական է՝ գյուղը 1905-06թթ. առաջին հայ-թուրքական ընդհարման տարիներին չի տուժել, քանզի չկան տեղեկատու արձանագրություն-

ներ գոհերի մասին: Առհասարակ, այդ տարիներին մահացությունների մասին էլ վկայություն չկա: Տոհմը մեծ մահացություն է ունեցել 1855-60-ական թվականներին: 1856թ.-ին մահացել են տոհմի հաջորդ ավագի՝ Մելքումի որդիներ Բաղդասարն ու Գրիգորը: Իսկ ինքը՝ Մելքումը մահացել է 1862թ.-ին: Նրա շիրմաքարին արձանագրված է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԼՈՒՍԱՅՈՒԿԻ ՄԵԼ
ՔՈՒՄԻՆ ԵՄԴԻ ԷՐ
ՀՕՀԱՆԻՆ 1862 ԱՄԻ

Այս արձանագրության տողերում առկա «եմդի» (եմ-ուտելիք, պարսկական ծագում ունեցող բառի առկայությունը հաստատում է, որ հանգուցյալ Մելքումը եղել է պարենի՝ ավելի ճիշտ բոլոր ջրաղացների պահեստապետ, եւ պահեստը պատկանել է ոմն Օհանի, արձանագրված է Հօհան):

Մի տեսակ առեղծվածանման են այս գերեզմանատան տարածքում պահպանվող շիրմաքարերի արձանագրությունները: Եթե Շուշիի գերեզմանատների շիրմաքարերի արձանագրություններում միաժամանակ առկա են ծննդյան, մահվան տարեթվերն ու երբեմն էլ ապրած տարիների թիվը, կամ մահվան տարեթիվն ու ապրած տարիների թիվը, որը հնարավորություն է տալիս որոշել ծննդյան թիվը, ապա այստեղ անխտիր նշված են միայն մահվան տարեթվերը: Սա խնդրո առարկա է եւ պահանջում է հատուկ ուսումնասիրություն: Գյուղի վերջին հանգուցյալը եղել է Բալասանի կին Թալիթան՝ վախճանված 1908թ.-ին:

Շոշ եւ Քարին տակ գյուղերի տարեցների վկայությամբ (լսել են իրենց ծնողներից) Հոնուտի բնակիչները գյուղը լքել են 1918-20թթ., երբ Օսմանյան Թուրքիայի զորքը մտել է Շուշի, սրի քաշելով, հայաթափել ինչպես քաղաքն, այնպես էլ հարակից հայաբնակ գյուղերը: Հետագայում Հոնուտի բնակիչների մի մասը վերաբնակվել է Շոշ, իսկ մյուս մասն էլ Քարին տակ գյուղերում:

Նշված գյուղերի ներկայիս շատ սերունդներ հաճախ են առիթ եղած դեպքում նշում, որ իրենց պապական հայրենիքը Հոնուտն է:

ԱԿՆՅԱՅՏ Է ՎԱՐՊԵՏԻ ՓՆՏՐԱԾԸ

Շուշին 18-19-րդ դարերում ունեցել է մոտ 140 հայկական գերդաստաններ, որոնցից շատերը բարեկամական կապեր են ունեցել իրար հետ: Շատ անվանի մարդիկ են ծնվել այդ գերդաստաններում ու ժամանակի ընթացքում իրենց բարեգործական ծառայությունը մատուցել հարազատ քաղաքին: Դարեր առաջ նրանց կատարածը անջնջելի է խոր հետք է թողել պատմության մեջ: Նրանք այն կնիքներն են, որ առանձին-առանձին հեղինակներ դրել են ինչպես քաղաքի, այնպես էլ հարազատ երկրամասի՝ Արցախ աշխարհի ընդհանուր պատմության յուրաքանչյուր էջի տակ, որը հերքելն անկարելի է, ինչպես անկարելի է սեւին սպիտակ ասելը: Ինչպես այսօր, ապագայում եւս անհնար կլինի մոռացության տալ Առաքելով եղբայրներին, ժամհարյաններին, Ղազարոս Մայիլյանին, Թադեոս Թամիրյանցին, Մահտեսի Յակոբյանցին, Թառունյանց եղբայրներին, Բահաթրյաններին եւ այլոց, որոնց անուններն այժմ ընթերցում ենք ինչպես պատմաճարտարապետական կառույցների պատերին, այնպես էլ շիրմաքարերի արձանագրություններում:

Այս անգամ ուզում եմ խոսել մի գերդաստանի մասին, որն իր մեծաթիվ շիրմաքարերի արձանագրություններով թվում էր որպես սովորական հայի գերդաստան: Եվ գուցե առայժմ բավարարվեի միայն Քոչարյանցների գերդաստանի հանգուցյալների շիրմաքարերի արձանագրություններն ընդհանուր ցանկի մեջ մտցնելով, եթե մի առիթով անվանի բանաստեղծ Բոգդան Ջանյանի հետ զրուցելիս խոսք չբացվեր այս գերդաստանի մասին:

2007թ. ապրիլին երեւանում մեր ունեցած զրույցի ժամանակ ահա թե ինչ պատմեց Բ. Ջանյանը: «Գրողների միության Ղարաբաղի բաժանմունքի քարտուղարն է: 1948թ. գարնանը Ստեփանակերտ է գալիս Ավետիք Իսահակյանը տիկնոջ՝ Սոֆյա Քոչարյանի հետ: Միասին գնում ենք Շուշի, այնուհետեւ հին հայկական գերեզմանատուն, հույս ունենալով գտնել Սոֆյայի պապական (Քոչարյանցների) գերեզմանոցն այդ մեծ գերեզմանատան տարածքում: Տեղը մեծերի պատմածով էր հիշում: Մեր որոնումներն արդյունք չտվին եւ մենք հուսահատ թողեցինք քաղաքն էլ, գերեզմանատան տարածքն էլ»:



Սոֆյա Քոչարյան, Ավետիք Իսահակյան, Դովհաննես Բաղրամյան, Արամ Խաչատրյան

Զրույցից պարզվեց, որ դա Վարպետի՝ Ավ. Իսահակյանի այցելությունն էր Ղարաբաղ՝ առանձնապես Շուշի, որը դառը հետք էր թողել Բոգդան Ջանյանի կենսագրության էջերում: (Սույն այցելությունից հետո Բաբվի հրահանգով Ջանյանին ձերբակալել են): Զրույցից տեղեկացա, որ շուշեցի Քոչարյանների գերդաստանը եղել է հարուստ, միեւնույն ժամանակ բարյացական մտավորականների գերդաստան: Երբ վերադարձա Շուշի, որոշեցի նորից տնտղել հավաքածս արձանագրությունները ու մեկ անգամ եւս գննել նշված գերդաստանի անցյալին վերաբերող նյութերը:

Քոչարյանների տոհմական գերեզմանոցը գտնվում է քաղաքի հյուսիսային կողմում տեղակայված հին հայկական գերեզմանատան տարածքում՝ Շուշի մտնող ավտոճանապարհի ձախակողմյա հատվածի կենտրոնական մասում: Որոշ հեռավորության վրա կողք-կողքի շարված են թվով 16 շիրմաքարեր: Այստեղ հողին են հանձնված դպիր Մկրտիչ Քոչարյանցի, նրա դստեր՝ Դերիքնազի, կնոջ՝ Մալբիի, որդու՝ Դանիելի, Ալեքսան Բոչարյանցի եւ նրա զավակների՝ Դանիելի, Գրիգորի, դստեր՝ Դերիքնազի, Մկրտիչ Քոչարյանցի կնոջ՝ Ջառնիշանի, Մազանդարանում (Պարսկաստան) ծնված, այնտեղ էլ մահացած Աղաջան Քոչարյանցի, Մահտեսի Դովհաննես Քոչարյանցի, նրա տիկնոջ՝ Բագունի, երկրորդ տիկնոջ՝ Ալի Լալայանցի, որդու՝ Միքայելի, դստեր՝ Սոֆյայի, Մահտեսի Յակոբ Քոչարյանցի դստեր՝ Սոնայի (Դովհաննես Տեր Լալայանցի տիկինը) եւ Ավետիս Բո-

չարյանցի տիկնոջ՝ Մինայի անյունները: Յուրաքանչյուրն ունի իր առան-
 ձին շիրմաքարը՝ համապատասխան արձանագրությամբ: Կան շիրմաքա-
 րեր, որոնց հյուսիսահայաց կողերին կողք-կողքի քանդակված է 3-ական
 խաչ՝ չորս սյուների արանքում, որոնք իրենց վրա պահում են երեք կամար:



Քոչարյանցների տոհմական գերեզմանոցը

Եթե բնիկ շուշեցի Քոչարյանների գերդաստանը հայտնի է որպես մտա-
 վորականների գերդաստան, ապա նրա սերունդներից մեկը՝ Մահտեսի
 Յովհաննես (Յոհաննես) Հայրունի Քոչարյանցը հայտնի է նաև որպես բա-
 րեգործ: Առանձնացնելով մյուսներից եւ հաշվի առնելով այն հանգաման-
 քը, որ ծավալուն տեղեկատվություն տեղում չկա, նշենք, որ Քոչարյանցն
 այն չորս բարեգործ շուշեցիներից է, ում սեփական միջոցներով 1883-
 1886թթ., Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու երկրորդ
 հարկի պատերում տեղական սրբատաշ քարից քանդակված սրբապատ-
 կերներով վեմեր են տեղադրվել:

1. Բարձրաքանդակ Աստօն պատկերը, խաչն ուսին, ձախ ձեռքով
 բռնած: Քանդակի տակ՝ երեք տող արձանագրություն, որն ասում է.

Ձայն Կրկնական պատկեր
 Շուշեցեաց Ծ.Ք - Խաչա
 տուր Բէկն Ալլաւիքեր
 տի Բէկէն Ճաւալէնց 1883

2. Մարիամ Աստվածածինը մանկան հետ, գլխավերելում՝ թելերը
 տարածած աղավնի.

Հուհրեաց պառկեր Միքայէլ Յո
 սեփեանցն և իւր Ծնող Յուի
 Եփսիմէն 18-85-9-25

3. Աստվածամոր պատկերը՝ մանկան հետ.

Յիշատակ Ե Վեմա Մահտեսի
 Յովհաննես և կողակից բակումայ
 Քօչարեանցից ի 1886 ամի

4. Հայր եւ որդի Աստվածներ, հոր ծնկանը՝ գլորուս, իսկ որդու ուսին՝
 խաչը.

Բաբայ Դամիրենց Ծ.Ք Հուհրեաց
 ի յիշատակ հորեղբոր իւրոյ
 ՄՆ, Մարգարէյի և բաբայի և
 Ճնողաց իւր 1883 ամի

Հորիզոնի կողմերի արեւելահայաց պատում տեղադրված է Մահտեսի
 Յովհաննես Քոչարյանցի եւ նրա տիկնոջ՝ Բագունի անունից քանդակված
 փրկչական պատկերը: Չորսն էլ կառուցված են նույն ճարտարապետական
 ոճով՝ առնված սյուների եւ կամարների մեջ: Միայն քանդակված պատկեր-
 ներն են տարբեր: Փրկչական պատկերի տակ առանձին ուղղանկյունաձեւ
 քարե տախտակ է տեղադրված պատում, որի վրա արձանագրված է եղել.

Ուլիբեաց պաղկեր մահտեսի
Յոհաննես Քոչարեանցն եւ կողա
կից Բակուն ի 1986 ամի

Այո, գրված եղել է, սակայն չգիտես որ չարականի ձեռքով, կոպիտ ձե-
ւով եղծվել (քերվել) է փրկչական պատկերը: Հետքերը հուշում են, որ
Աստվածամայրն է եղել՝ երեխան գրկին: Անչափ զարմանալի, ավելի ճիշտ,
զավեշտական է, որ մարդ արարածը կարողանում է ձեռք բարձրացնել՝ ա-
վերելու նպատակով: Ցավոք, ականատես եմ այլ նման «գործերի» եւս,
նույնիսկ գերեզմանատան տարածքում:

Մահտեսի Հովհաննես Հայրունի Քոչարյանցի շիրմաքարի հարավա-
հայաց կողին արձնագրված է.

Աստ հանգչի մարմին
Մահտեսի Յոհաննես Յայրունեան
Քօչարեանցի վախճանվեցա
յունիսի 6-ին 1896 ամի
80 ամաց հասակի

Կնոջ՝ Բեգունի շիրմաքարին գրված է.

ի սմին տապանի ամփոփեալ է մարմին
վաղթառամ բակունին կնոջ ՄՀի յոհաննես
յայրունեան Քոչարեանց 1863 ամի
օգոստոսի 3-ին

Այսքանով բավարարվենք, քանի որ նպատակս էր նախ՝ իրագեկել
անվանի բանաստեղծին՝ Բոգդան Ջանյանին, որ վեց տասնամյակ առաջ
տխրահռչակ 1948-ի գարնանը, իր, Ավետիք Իսահակյանի եւ տիկին Սո-
ֆյայի փնտրած, սակայն չգտնված Քոչարյանցների տոհմական գերեզմա-
նոցն այսօր ակնհայտ է: Գերդաստանի սերունդները կարող են այցելել:
Հնարավոր է, որ հետաքրքիր նոր փաստեր եւս բացահայտվեն:

23.04.07թ., Շուշի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՇԳՐՏՈՒՄ ԵՆ ՊԱՅԱՆՁՈՒՄ

Շուշիի շրջանը զբաղեցնում է Կարկառ գետի վերին հոսանքը: Ղարա-
բաղի ամենափոքր շրջանն է: Նրա վաղեմի կենտրոնն Շուշին, բազմած սա-
րահարթի ուսին, շրջապատված է 3390 մ պարսպապատով եւ 6894 մ ան-
մատչելի ժայռերով, որը մի յուրատեսակ բերդ է հանդիսանում:

Մեր հնամայն Շուշին իր շրջապատում ունի 6 հայկական, մեկ համա-
տեղ հայ-ռուսական եւ մեկ առանձին ռուսական գերեզմանատներ, որոնք
զբաղեցնում են համարյա նույնքան տարածք, ինչքան քաղաքը: Այս գե-
րեզմանատների շիրմաքարերին փորագրված արձանագրությունները հս-
տակ տեղեկություններ են հաղորդում քաղաքի եւ նրա բնակիչների զբաղ-
մունքի մասին: Կան հազարավոր շիրմաքարեր, որոնց արձանագրու-
թյունները ավանդում են 18-19-րդ դարերի իրադարձությունները: Ավելի
վաղ շրջանն են ներկայացնում բազմաթիվ շիրմաքարեր, որոնք տեղադր-
ված են անմշակ (անտաշ) քարերից: Որոշ արձանագրություններ տեղե-
կացնում են պատմական կարեւոր դեպքերի մասին ու միաժամանակ
հնարավորություն են ընձեռում կատարել ճշգրտումներ: Կոնկրետ խո-
սենք երեք արձանագրության մասին: Դրանք են՝ Միրզա Ֆարուխ Մինա-
սեան (Մինասի) Ամիրիխանեանցի (Ամիրխանյանց) շիրմաքարի, «Պեխի
աղբիր» (ասում են «Իսա Բուլաղի»), քաղաքի Սուրբ Մկրտիչ (Կանաչ
ժամ) եկեղեցու եւ Սուրբ Աստվածածին եկեղեցու արձանագրությունների
մասին: Հայտնի չէ, թե որոշ ուսումնասիրողներ ինչպես են գրի առել այդ
փաստերը, որ չեն համապատասխանում իրականությանը:

Ներկայացնենք հերթով: Խոսելով Միրզա Ֆարուխ Մինասի Ամիրխա-
նյանցի մասին, հեղինակ Ս.Գ.Ավագյանը գրում է. «Ծնվել է Շուշի գավառի
Թաղուտ գյուղում: Իսկական անունը Հարություն էր: 1805թ. ռուս-պարս-
կական կռիվների ժամանակ, երբ նա ընդամենը 5-6 տարեկան էր, գերի է
վերցվում: Պարսկական արքունիքում նա ստանում է Ֆարուխ անունը:
Կարճ ժամանակամիջոցում տիրապետում է մի քանի լեզուների: Քսան
տարեկանում նա արդեն Թեհրանի Սարդարի քարտուղարն էր: 1826թ.
ռուս-պարսկական պատերազմի օրերին՝ հարմար առիթն օգտագործե-
լով, Միրզա Ֆարուխը փախչում է եւ գալիս Շուշի»: [1]

Ադրբեջանցի հեղինակ Նազիմ Ախունդովը գրագրին ներկայացնում է
որպես Միրզա Յուսիմ Ներսես օղլու, ծնված 1798թ.-ին, մահացած
1864թ.-ին, առանց նշելու ծննդավայրն ու թաղման տեղը: [2]

Ինչպես գիտենք, Շուշիի գավառը նախ՝ չի ունեցել Թաղուտ անունով գյուղ, ապա՝ Ֆարրուխը ծնվել է Դիզակում: Նշված գյուղը եղել է ու կա Դիզակի գավառում (Հաղրութի շրջան), Տող գյուղից 2 կմ դեպի հարավ:

Ինչպես աղբրեջանցի հեղինակ Ն.Ախունդովի, այնպես էլ Ս.Ավագյանի կողմից չի նշվում, թե տվյալները հայտնի գրագրի մասին որտեղից են գրի առել: Մի բան, որ պարտադիր է: Միայն են երկու հեղինակների կարծիքները Ֆարրուխ Մինասի Ամիրխանյանցի մասին: Երկուսի կարծիքն էլ հերքվում է ի հայտ բերված արձանագրությամբ՝ գրված գրագրի շիրմաքարին: [3] Այն ասում է.

ЗУСУ СУՊԱՆԻ ԱՄՓՈՓԵԱԼ Է ՄԱՐՄԻՆ ԼՈՒՍԱՅՈՒԳԻ
ԳԻՏՆԱԿԱՆ ՄԻՐՁԱՅ ՖԱՐՐՈՒԽԻ ՄԻՆԱՍԵԱՆ ԱՄԻՐԽԱՆԵԱՆՑ
ԳԵՐԵՎԱՐԵԼՈՅՆ Ի ՊԱՐՍՍ Ի 1805 ԱՄԻ ՈՒՍԵԼՈՅՆ ԱՆԴԱՆՕՐ,
ԵՎ ՎԵՐԱԴԱՐԾԵԼՈՅՆ Ի ՀԱՅՐԵՆԻՍ ԻՎՐ Ի ԴԻՁԱԿ Ի ԱՄԻ,
ՈՐ ԵՎ ԸՆԿԱԼԵԱԼ ՎԵՐՍՏԻՆ ԶՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԻՎՐ ՀԱՎԱՏ,
ՓՈԽԵՑԱԿ ԱՌ ՔՍ ՓՐԿԻՉՆ ԻՎՐ Ի ՆՈՅՆԲԵՐԻ 1855 ԵՎ ՈՅԴ ԱՄԻ:

Իսկ հարեւանությամբ հողին են հանձնված կնոջ՝ Խանումի եւ դստեր՝ Եղիսաբեթի մարմինները:

Միայն է նաեւ հեղինակ Ս.Ավագյանի կողմից նշվածը, թե իբր Ֆարրուխի անունը եղել է Հարություն եւ մահացել է 1864թ.: Եթե այդպես լիներ, ապա վերստին քրիստոնեությունն ընդունելուց հետո, որպես սեփական հավատ, նա անպայման կկարողանար վերականգնել նաեւ հեղինակի նշած անունը (Հարություն):

Շուշիից մոտ 3 կմ դեպի արեւմուտք, Ստեփանակերտ-Գորիս ավտոճանապարհի աջակողմյա բոխիների անտառում, Թամիրյանցների աղյուսի ու թունգերի (կավե խողովակ) գործարանի (թուրքերը հրդեհել են 1905թ. հուլիսին) [4] հարեւանությամբ կառուցված աղբյուրի, որ կոչվում է «Պեխե աղբյուր», ջրածորակների վերնամասում փոքրիկ արձանագրություն է եղել, որը, ճիշտն ասած, չի ընթերցվել, որ գոնե մոտավորապես ճիշտը հիշենք:

Միայն գիտենք, որ այն կառուցվել է վարպետ Իսահակի կողմից: Ժամանակի ընթացքում անվան «հակ» մասն աղբրեջանցիները կրճատել ու աղբյուրը կոչել են «Իսա բուլաղի» եւ այդպես մնացել է շրջանառության մեջ: 1975 թվականին նկատվել է, որ քարը տեղից հանված ու ջարդված է: Կասկածներ կային, որ, երեւի, կամ Իսահակն է ինչ-որ բան գրել, կամ հենց

իր մասին է եղել գրված: Աղբյուրի արձանագրությունը վերականգնելու նպատակով փնտրվեց լուսանկար, որ նկարահանված լինի աղբյուրը մինչեւ 1975թ.: Երբ գտնվեց 1957 թվականի լուսանկար, պարզվեց, որ նշված աղբյուրը Իսահակի անվան հետ ոչ մի անմիջական կապ չունի: Նշված աղբյուրի ներկայացվող լուսանկարի արձանագրությունից պարզվում է, որ աղբյուրը կառուցվել է 1871-ին, բնիկ շուշեցի Աստվածատուր ճգնավորյանցի հիշատակին, որի մասին մեկուկես դար առաջ գրված, սակայն այսօր միայն լուսանկարում պահպանվող արձանագրությունը վկայում է այսպես.

Յիշատակ է աղբուրս
Աստուածատրոյ
Դավթն ճգնարոց
- 1871 -

Աստատուր Դավթի ճգնավորյանցի աճյունը հողին է հանձնված Շուշիի հին հայկական գերեզմանատանը: [5] Նրա շիրմաքարին արձանագրված է.

Տապան լուսահոգի
Ածատրոյ ճգնավորեանց
Ծնեալ ի 1774 ամի եւ
Վախճանեալ 1856 ամի 82 ամաց:

Այստեղ են նաեւ նրա կնոջ՝ Նախշունի եւ որդու՝ Բալասանի շիրիմները: Շուշիի Սուրբ Հովաննես Մկրտիչ (Կանաչ ժամ) եկեղեցու արձանագրությունը ներկայացված է, եկեղեցուն արեւմուտքից կցված է հետագայում կառուցված գմբեթավոր զանգակատունը, որի մուտքի վերնամասում փորագրված է.

«ԲԱԲԱՅՆ ԱՏԵՓԱՆԵՆ ՅԻ ՀԻՇԱՏԱԿ ՀԱՆԳՈՒՑԻԱԼ ԵՂԲԱՅՐ ՄԿՐՏԻՉ
1847 Թ»:[6]

Եիշտ է, մուտքի վերնամասում սրբատաշ քարե տախտակ է տեղադրված, սակայն այն մաքուր է, արձանագրության հետք անգամ չկա: Արձանագրություն եկեղեցու մասին, բաղկացած երկու մասից, գրված է երկու քարե տախտակների վրա, որոնք տեղադրված են նրա մուտքի ձախ եւ աջ կողմերում: [7] Ի տարբերություն վերը նշածի, ինչպես վկայում են լուսանկարները, եւս ասվում է.

«Կառուցին Մ՞բ Յովհան-
Նես Մկրտչի եկեղեցին
Շուշաքաղաքցի Պարոն
Յովհաննէսն եւ»
Բաբայն Ստեփանեան
Յովնանենց ի յիշատակ
Յանգուցել՝ եղբոր ի վրեճ
մկրտչին 1847թվին»:

Ինչպես նկատում ենք, գրքում բացակա է նշված արձանագրության առաջին չորս տողը (կամ չեն նկատել, կամ դժվար ընթերցելության պատճառով չեն արտագրվել): Պարզապես գրքում տեղադրված է միայն երկրորդ մասը, որ սկսվում է եղբայրներից մեկի՝ Բաբայի անունով: Միաժամանակ պարզ նկատելի է, որ գրքում տեղ գտած արձանագրության այդ մասն էլ մի տեսակ փոփոխության է ենթարկված: Համեմատենք: Ըստ գրքում եղածի, ստացվում է, որ Բաբան, Ստեփանեսն ու Յովհանեն (Յովհաննես) են կառուցել եկեղեցին իրենց եղբոր՝ Մկրտչի հիշատակին: Գրչագիրը տեղադրված է որոշ ձեւափոխություններով՝ փոխված են որոշ տառեր, սուղի նշանները, արձանագրության նշված հատվածից հանված է «իրենց» բառը: Եթե երկրորդ տախտակին գրվածը անփոփոխ էլ տեղադրված լիներ, պարզ կնկատվեր ցանկացած ընթերցողի կողմից, որ արձանագրության կեսը չկա:

Նշված եկեղեցում իր պարտականություններն է կատարել Գրիգոր Քահանա Տէր Կարապետեան Տէր Ղազարեանցը՝ շուրջ 44 տարի:

Նրա շիրմաքարին արձանագրված է.

Այստեղ հանգստանում է երջանկայիշատակ
Գրիգոր Քահանայ Տէր Կարապետեան Տէր
Ղազարեանցը, որ 44 տարի Յովվում էր իր
հօտին վերին թաղի ս. Յովհաննու. եկեղեցում
վախճանուեց 1902 թիւ սեպտեմբերի 8
73 տարեկան հասակում:

Շուշիի Ազուլեցոց Ա.Աստվածածին եկեղեցու կառուցման մասին տեղեկատու արձանագրության երկրորդ կեսը չկա:

Ներկայացնում են.

Կաման Աստուծոյ Սուրբ Աստուածածնայ աւագ եկեղեցիս կառուցին արդեամբք եւ ծախիւք իւրեանց իշխանք ազնուագգի հարազատ աղայք Զօհրապ, Յովհանջան. Մարկոս եւ Բաբա տէր Մատթէոսեան Թառու մեանց...ի 1822 ամի Տեառն»:[8]

Հետաքրքիր է, թե ինչո՞ւ Թառունեանց ազգանունից հետո դրվել է բազմակետ ու բաց թողնվել արձանագրության շարունակությունը եւ գրվել կառուցման տարեթիվը:

Ներկայացնում են.

«... ընդ որս եւ որդիք մոցա Յովհաննէս աղայն եւ Աւետիս աղայ ի յիշատակ եւ փրկութիւն հոգւոց իւրեանց եւ սոցա ծնողաց. ամուսնոց. ըրդւոց. դստերաց իւրեանց ամենից եւ առհասարակ ննվեցելոցն ի տէր ի կայանս երկնից»:[9]

Գրականություն

1. Ա.Դ.Ավագյան, Նյութեր Ղարաբաղի նախասովետական շրջանի մանուկ պատմությունից, Երեւան, 1969թ:
- Ա.Դ.Ավագյան, Արցախը հայ մշակույթի կարեւորագույն օջախ, Երեւան, 1991թ., էջ 106-108:
2. Ն. Ախունդով, Գարաբաղնամալար, Բաքու, 1991, էջ 405:
3. Շուշիի Երեւանյան դռների հարավ-արեւմտյան կողմի հին հայկական գերեզմանատուն, արձ. NN 208-209:
4. Ա.Ռո, Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում, 1905-06թթ., Թիֆլիս, 1907թ.
5. Շուշիի Երեւանյան դռների հարավ-արեւմտյան կողմի հին հայկական գերեզմանատուն, արձ. NN 417-419:
6. Շ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երեւան 1982թ., էջ 227:
7. Շուշիի հյուսիսային գերեզմանատուն, արձ. N 121:
8. Մ.Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895:
9. Շուշիի հյուսիսային գերեզմանատուն, արձ. N 225:

ԿԱՑԻՆԸ ԴԱՐՁԱՎ ՅԱԹԱՂԱՆ

Երբեմն պատահում է, որ ռադիոյով կամ հեռուստատեսությամբ հաղորդումներ են լսում Բաքվից, Թուրքիայից, Իրանից թուրքերեն լեզվով: Չերթական անգամ 02.12.2004թ. ժամը 21.25-ին հեռուստատեսությամբ լսեցի, որ Կուրբան Գուլիերը Բաքվում սպանել է ոմն ռուս Սերովի: Իսկ ինչո՞վ եւ ինչպե՞ս: Էլի կացնով: Սպանելուց հետո պատռել է որովայնը, նետել ջրի մեջ, որպեսզի ջրով լցվի դիակը եւ խորտակվի: Երբ տեսել է դիակը դեռ շարունակում է մնալ ջրի երեսին, հանել է ափ, կացնով կտորների բաժանել ու թափել ջրի մեջ: Նշվեց նաեւ, որ տարվում է նախաքննություն:

Դրան հաջորդած հաղորդման ժամանակ խոսք եղավ Բուդապեշտում Չայաստանի գինված ուժերի հայ սպայի սպանության մասին, որ էլի գործի էր դրվել կացինը: Ավելի ճիշտ, ոչ թե սպանության մասին էր խոսքը, այլ՝ սպանողի: Ոչ ավել, ոչ պակաս, ժողովրդին ասում էին. «Գործադրելու ենք բոլոր միջոցները, որպեսզի ազատենք մեր ազգային հերոսին: Չհաջողվելու դեպքում, կձգտենք մինիմումի հասցնել պատիժը»: Եթե երկրորդի մասին չնշվեր, ինչ-որ չափով կարելի էր հավատալ, որ կքննվի Սերովի սպանության գործը եւ կկայացվի արդար դատավճիռ հատուկ դաժանության կատարված սպանության համար:

Ակամայից ես սկսեցի խորհել, թե ինչպես են Թուրքիայի եւ Ադրբեջանի պետական այրերը տարբեր միջազգային ատյաններ դիմում Եվրախորհուրդ մտնելու համար, երբ իրենց ժողովուրդը դեռ չի հասկանում, որ կացինը հյուսնի գործիք է, նրանով շինարարություն են կատարում:

Ի՞նչ ասեմ: Տասնյակ տարիներ առաջ սատիրիկ հաղորդման ժամանակ ասում էին. «Աղ շավլարդա գարա յամաղ, կոմունիզմա գեդիրիք բիզ» (Ապիտակ վարտիքի վրա սեւ կարկատան, կոմունիզմ ենք գնում մենք): Երբեք կարծում են, թե կարելի է Եվրախորհուրդ մտնել կացնով ու շատ հարցեր լուծել, կամք թելադրել Եվրոպային:

Ուրիշները չգիտեմ ինչ կարծիքի են, սակայն ես այնպես եմ հասկանում, որ վերը նշված եղանակով մարդասպանությունը մի յուրատեսակ մասնագիտություն է: Մարդիկ ժառանգաբար արհեստն են սերունդներին փոխանցում (ոսկերչություն, ակնագործություն, պղնձագործություն, դարբնություն...), իսկ սրանք՝ կացնով մարդասպանությունը հատուկ դաժանությամբ: Կարո՞ղ է սա էլ արհեստ է, եւ մենք տեղյակ չենք:

Ինձ մոտ եղած արձանագրությունները հիմք են, որոնց վրա հենվելով, ասում եմ, որ բոլոր ժամանակներում մարդուն կացնահարելը ընդունված մեթոդ է եղել Շուշիում:

Այսպես: 1905-06թթ. Կովկասում հայ-թուրքական (թաթարներ, տաճիկներ) ընդհարումները հենց սկսվել են, Շուշիում 1906թ. հուլիսին սպանվել է հաշտարար դատարանի դատավոր Լուսյակինը, որն առաջին քրիստոնյան էր, որ փողով առել էր մահմեդականի տունը 1890-ական թվականներին (խոսքս խանի աղջկա՝ Նաթավանի տան մասին է, որը, չգիտես ինչու, իսկական տիրոջ անունով չի կոչվում): Չասկանալի է, որ սպանության պատճառը տունը ետ վերցնելն է եղել:

1918թ. մայիսի 30-ին իր տան առաջին հարկում գլխատվել ու կողք-կողքի շարվել են ռազմական ոստիկանության ատենապետ, զնդապետ Ռաշկովսկու, նրա կնոջ, տղայի եւ աղջկա դիակները զուտ նրա համար, որ ռուս աղջիկը հրաժարվել է ամուսնանալ մահմեդականի հետ: Կատարվածի մասին իմացել են այն ժամանակ, երբ ամեն առավոտ կաթ տանող տղայի կանչին չեն պատասխանել:

1989թ. Աղղամում «Մոսկվիչ» մակնիշի ավտոմեքենան շրջել ու հրկիզել են ԽՍՀՄ ՆԳ նախարարության երեք ռուս սպաների: Արցախահայությանը վախ ներարկելու նպատակով նույն եղանակով շատ թվով հայեր են սպանվել Ասկերանի, Մարտունու, Չադրուքի շրջաններում: Բաքվի իշխանություններն ասում էին. «Եզակի դեպքերի համար պետք չէ մեծ աղմուկ բարձրացնել»: Չամարյա այսպես է ասել նաեւ Զիադխանովը 1905-06թթ. Կովկասում հայ-թուրքական ընդհարումների ժամանակ: Նա ելույթով հանդես է եկել հունիսի 12-ին, Պետական Դումայի առաջ: Թարգմանաբար մեջբերում եմ. «Այս ամբիոնից ես հայտարարում եմ, որ մեր ու հայերի մեջ տնտեսական հողի վրա թշնամություն չի եղել, մենք ապրում էինք իբրեւ բարի դրացիներ եւ սիրում էինք միմյանց: Զինված ընդհարումներ երբեք մենք չենք ունեցել, եթե եղել են մասնակի սպանության դեպքեր, դրանք չէ՞ որ մինչեւ այժմ էլ տեղի ունեին, բայց երբեք իսկայական չափեր չէին ստացել» (տե՛ս, Ա-Դո «Չայ-թուրքական ընդհարումները Կովկասում 1905-06 թթ.», էջ 415):

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ ՆՈՐ ՇԻՐՍԱՔԱՐԵՐ

Երբ ազերիները ջարդում-ավերում էին Ջուղայի հին հայկական գերեզմանատները Արաքսի ծախս ավազ ու խճաքար ստանում արվեստի գլուխգործոց խաչքարերից, իսկ աշխարհը քար լռությամբ հետեւում էր, նույն ժամանակ «Ջուղան Շուշիից է սկսվել» վերտառությամբ հողված էի տպագրել «Դեմո» թերթում: Անցած-գնացած բաներ են, բայց երբեք չի կարելի մոռացության մատնել: Առավել եւս մենք իրավունք չունենք մոռացության մատնել մեր մշակութային արժեքները:

Հարգելի ընթերցող, այս անգամ, էլի «աթա-բաբաներից» ժառանգած ձեռագրով գրված՝ մի նոր էջի մասին եմ ուզում խոսել: Այն եւս, մյուսների նման, կապված է Շուշիի հին հայկական ու ռուսական գերեզմանատների հետ:

Ղայբալի գյուղի հին արձանագրություններով ծանրաբեռ՝ կարճ ճանապարհով Շուշի էի բարձրանում: Անտառի բացատում երեք խաչքար տեսա, լուսանկարեցի եւ ճանապարհս շարունակեցի: Հետո, երբ այս մասին խոսք բացվեց, անտառապահ Հակոբը (Շահումյանի շրջանից տեղահանված, Շուշիում վերաբնակված) տեղեկացրեց. «Անտառում մի քանի տեղ գերեզմանաքարեր կան, սակայն տարածքը գերեզմանատան նման չէ, իսկ բենզալցակայանի կողքով դեպի Ղայբալի ու Կրկժան տանող ճանապարհը կարծես գերեզմանաքարերի վրայով է անցնում, նկատել եմ խնձորենու շիվ պոկելու ժամանակ»:

Երբ առանց համապատասխան գործիքների, թուղթուգրչի, եղա տեղում, շատ զարմացա: Տարածքը զննեցի, մոտենալու հնարավոր տեղ գտա, մոտիկից տեսա, որ այստեղ ազերիները յուրօրինակ ճանապարհաշինարարություն են կատարել 1989-90 թվականներին, երբ կառուցվել է Շուշի-Ղայբալի-Կրկժան-Քյոսալար-Ջանհասան-Խոջալու-Հասանաբաղ-Մալիբեկլու ավտոճանապարհը եւ օղակել Ստեփանակերտը:

Մի փոքր հեղեղատի «բերան» փակելու համար ազերի շինարարները մտածել են, որ ընդամենը հարյուր մետր հեռավորության վրա գտնվող հսկա ժայռաբեկորներով հնարավոր չէ դա անել: Որոշել են հայկական շիր-

մաքարերով այն փակել: Վերամբարձ կռուկներն ու ինքնաթափ մեքենաները գործի անցան Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու հարավ-արեւելյան կողմի հին հայկական գերեզմանատան տարածքում: «Մեկ ձեռքով երկու ձմերուկ բռնելու» սկզբունքով են առաջնորդվել: Տարածքում սկսվել են մասնավոր տների շինարարություն հենց այդ շիրմաքարերով, իսկ մի մասն էլ տեղափոխել են նշալ վայրը: Ահա թե ինչու այս անգամ թալանից զերծ է մնացել քաղաքի հյուսիսային կողմի գերեզմանատունը:

Սույն թվականի մարտի 3-ին սկսեցի ուսումնասիրել բենզալցակայանից ոչ հեռու այդ ճանապարհահատվածը: Երբ տարածքը մի քանի օրում հագիվ թփերից մաքրեցի, եկա այն եզրահանգման, որ կա-չկա, մի քանի տասնյակ, գուցե հարյուրից ավել շիրմաքարեր են լինելու թաղված այստեղ: Մարտի 15-ի դրությամբ հաջողվել է խճաքարերից ու կավահողից ազատել 23 շիրմաքար, որոնցից մեկը՝ երեք մասի բաժանված: Լուսանկարեցի տարածքն ու սկսեցի արտագրել արձանագրությունները:

Թեման չեմ փակում, քանի որ պարզ չէ, թե ինչքան ժամանակում ավարտին կհասցնեմ հետազոտական աշխատանքներն այստեղ, սակայն նպատակահարմար եմ գտնում ընթերցողին որոշ տեղեկություններ տալ, խոստանալով վերջում հանդես գալ ծավալուն հոդվածով: Իսկ հիմա բավարարվեմք այս պահին իմ ձեռքի տակ գտնվող մի քանի լուսանկարներով ու արձանագրություններով, որոնք իմ տասնամյա հետազոտության ժամանակաշրջանում միանգամայն նոր տեղեկատուներ են:

Ես միշտ փորձում էի ավելի հանգամանալից տեղեկանալ, թե քաղաքում ինչով էին զբաղվում 18-19-րդ դարերում: Առանց օժանդակ աղբյուրի, արձանագրությունների միջոցով, պարզվել էր, որ Շուշիում գործել է արհեստի 49 տեսակ: Ջարմանում էի, թե ինչու որեւէ երաժշտի մասին տեղեկատու արձանագրություն չկա 6 գերեզմանատներից գեթ մեկի տարածքում: Եվ հիմա հոգեկան մեծ բավարարվածություն ստացա, երբ հողի տակից հանեցի մի շիրմաքարի կտոր, վրան գրված՝ «որդի սազանդար»: Եռօրյա փնտրտունքս սովեց արդյունք՝ գտնվեց շիրմաքարի երկրորդ կեսը եւս: Պարզվեց, որ մաջարի (քարի վրա նուրբ քանդակներ կատարող) ձեռքով վերջնական տեսքի բերված այս գեղեցիկ շիրմաքարը տեղադրված է եղել սազանդար (երաժիշտ) Ասլանի շիրիմին, 1801թ.: Ներկայացնում եմ շիրմաքարի կտորների լուսանկարները իրար կողքի, եւ արձանագրությունը, որն ասում է.



ԱՅԱՆ ✱ ՏԱՂՆ ՈՍԿԱՆԻ
 ՈՐԻ ՍԱԶԱՆԴԱՐ ԱՍԼԱՆԻՆ
 ԹՎԻՆ ✱ ՌՄԾ ✱ Զ✱ ՅԴՆ

Այստեղ ի հայտ եկավ «Ըղեքար» (երեւի Աղաքար) տեղանուն հիշատակող արձանագրությամբ շիրմաքար էլ, կողքին գրված.

ԱՅԱՆ ՏԱՂՆ ԸՂԵՔԱՐՅԻ՛
 ՔՈՐԱՆԻՆ՝ Բ ԴՄԻ՛

- Ծանոթ. 1. Ըղեքարցի-հավանաբար «աղաքարցի», Լոռու համանուն բնակավայր, որն այժմ անմարդաբնակ է:
 2. Քորան - տղամարդու անձնանուն:

Այստեղ շիրմաքար կա նաեւ քաղաքի ռուսական գերեզմանատան տարածքից: Ավելի ճիշտ, շիրմաքարից մի կտոր՝ 110x100x90 սմ չափսերի (այս չափսերն ունեցող արձանագրություն պարունակող քարը վեց կտորից բաղկացած բրգածեւ շիրմաքարի երրորդ կտորն է), որի երկու կողերին գրված է.

Ее ПРЕВОСХОДИТЕЛЬНОСТЬ
 СОФЬИ ФЕДОРОВНЫ КРАББЕ
 СКОНЧАВШЕЙСЯ 30 ЯНВАРЯ
 1835 ГОДА НА 43 ГОДУ
 ОТ РОЖДЕНИЯ

Հնարավոր է՝ շիրմաքարի մնացած կտորներն էլ այստեղ են, քանի որ ռուսական գերեզմանատան կենտրոնական մասում ցարական սահմանապահ թիվ 6 գնդի հրամանատար Սեմյոնովի շիրմաքարի հարեւանությամբ կա պատվանդան, որը համապատասխանում է նշված չափսերին:

Դե ի՞նչ: Հարկ է տարածքը մաքրել, նույնությամբ պահպանել, որպես մի ուրույն տեսարժան վայր զբոսաշրջիկների եւ արտերկրյաներից Արցախ ժամանած պաշտոնյաների համար: Թող տեսնեն ու զարմանան:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հրապարակելով այս նյութը՝ հերթական անգամ տարակուսում եմք, որ այսպիսի մշակութային-քաղաքական կարեւորագույն գործով զբաղվում է մի անձ: Եթե Հ.Հարությունյանը չլիներ, ապա այս եւ բազում այլ շիրմաքարեր այդպես էլ կմնային հողի տակ, մենք էլ՝ դրանց անհաղորդ: Եթե Հ.Հարությունյանը չլիներ, ապա մի շարք այլ տապանաքարեր հողի տակ կհայտնվեին արդեն ոչ թե ազերի, այլ մեր իսկ ճանապարհաշինարարների «շնորհքով»: Մարդն աշխատում է, պրպտում, գտնում, խնամում, փրկում, եւ այս ամենը՝ իր սուղ հնարավորություններով: Մինչդեռ կան պատկան գերատեսչություններ, կարգին աշխատավարձ ստացող բազմաթիվ պաշտոնյաներ, կա, վերջապես, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմ: Թվում է՝ ով-ով, բայց նրանք հաստատ պիտի շահագրգռված լինեն այս ամենով: Թվում է... Իսկ մինչեւ թվում է՝ մարդն իր հնարավորություններով պայքարում է այսօր, որովհետեւ վաղը կարող է ուշ լինել: Մինչեւ աշխատասենյակներում արթնանան՝ նա փորձում է հնարավորինն անել: Այսքանն անում է մի մարդ, մի անհատ: Պատկերացրեք, թե ինչքան կարող է անել մի նախարարություն, մի երկիր, մի ժողովուրդ: Գոնե պատկերացնե՛ք:

«Դեմո», 31 մարտի 2008թ.

ԻՆՉՊԵՍ ԲԵՐՂԱԶՈՐԸ ՀԱՅՏՆԿԵՑ ՇՈՒՇԻՈՒՄ

«Եվ իրավ, դարադշլաղեցիք հայտնի են իբրեւ շատ քաջ եւ արիասիրտ մարդիկ. տեղը եկավ՝ կռիվ էլ կսկսեն, կծեծեն, ամուն ունեն շրջակա թուրք ազգաբնակչության մեջ եւ հենց այդ անունին հենած, այդպէս ցիրուցան տնակներ են շինել եւ ապրում են» (Լեո, հ. 8, էջ 38):

Կովկասում երկրորդ անգամ վերսկսված 1918-1920թթ. հայ-թուրքական (տաճկական) ընդհարումները, ինչպէս մյուս հայաշատ տարածքների, այնպէս էլ Բերդաձորի համար ճակատագրական էին: Ի տարբերություն 1905-1906թթ. ընդհարումների, որի ժամանակ բերդաձորցիներն իր վճռական խոսքն ասաց, ապացուցելով իրեն շրջապատող թուրքերին ու քրդերին, ինչու չէ նաեւ նրանց միացած քոչվորներին, որ անհնարին է իրեն տեղաշարժ անել, ինքն անդրդվելի է, այս անգամ մարտականորեն տրամադրված բերդաձորցիներն (միշտ էլ այդպիսին է եղել) տասնմեկ զոհ տալով, թողնում է հարազատ երկրամասն ու զինվորական շտաբի, որ տեղակայված էր Բերդաձորի Ենգիբար գյուղի փոստում, զրավոր հրամանագրով (հրամանատար՝ մայոր Մարդի Այվազյան, շտաբի պետ՝ Սամսոն Մելիք-Շահնազարյան) օժանդակ ուժեր պետք է գային: Ասում են, որ զորավար Անդրանիկն էլ իր զորախմբով պետք է գար օգնության, պիտի Շուշիում ճակատամարտ տար, սակայն ոչ օժանդակ ուժերը, ոչ էլ զեներալ Անդրանիկը չանցան Բերդաձորով, չհասան Շուշի: Յետագա տարիներին շատ բանավոր զրույցներ են եղել այն մասին, որ իբր զորավար Անդրանիկի օգնության չհասնելու (չգալու) պատճառը եղել են բերդաձորցիները: Իբր բերդաձորցիները հաղորդել են Անդրանիկին, որ խաղաղ է տարածաշրջանը, համերաշխ են ապրում թուրքերի հետ: Մեկ-մեկ նման զրույցներ լսում էի նաեւ ես ու դժգոհում՝ ինչպե՞ս կարող էին նման քայլի դիմել: Ստիպված ես լինում լռել, երբ «կշեռքի» մյուս նժարին դնելու ոչինչ չունես, երբ ապացույց չունես ասվածը հերքելու համար: Անցածն անցած է, այն մնում է որպէս հիշողություն: Եվ կարծես, տարիներն անցել են, անցել են տասնամյակները, եւ յուրաքանչյուր նոր էջ «ջնջել», պատմության գիրկն է ուղարկել իրենից առաջ եղած-կատարվածն ու փակել իբր չբացվող կողպեքով:

Հիմա տեսնենք ի՞նչ է կատարվել 1918-1920թթ., ինչպէս Շուշի-Գորիս զուտ հայկական տարածքում, այնպէս էլ նշված բնակավայրերն իրար կապող Բերդաձորում, որտեղով անցնում է երկու շրջաններն իրար կապող ճանապարհը: Սա միակ ճանապարհն է, եւ այստեղ, Բերդաձորից հավասարապէս 15 կմ հեռավորության վրա, գտնվում են թուրքական Ջառուլու եւ Ջաբուղ գյուղերը: Այս երկու գյուղերի անունները նշվում են, որովհետեւ ամենակարեւոր դեպքերը կատարվել են հենց այս գյուղերում:

1918-1920թթ. Բերդաձորի տարածքում կատարված մարտական գործողությունների եւ ենթաշրջանի անկման մասին հարուստ ու փաստացի տեղեկություններ կան Ջաբեհ Մելիք-Շահնազարյանի «Ղարաբաղյան զինվորի հաղորդագրությունները» գրքում, որի 4-րդ գլուխը կոչվում է «Գրոհի Ջառուլու գյուղի վրա», իսկ 5-րդը՝ «Գրոհի դեպի Ջանգեզուր եւ նրա պարտությունը: Մենք թողնում ենք Ղարաղշլաղը»: Գիրքը ռուսերեն հրատարակվել է Մոսկվայում: Այն թարգմանվել է նաեւ անգլերեն:

Գրքում տեղ գտած փաստերը վերահաստատող փաստաթղթեր կան՝ ստացված ՌԴ Արտգործնախարարության Ասիական գործակալության արխիվից, որի համար խորին շնորհակալություն են հայտնում փայլուն դիվանագետ, հանգուցյալ Աշոտ Մելիք-Շահնազարյանի որդուն՝ Արսեն Մելիք-Շահնազարյանին:

Վերը նշված գրքում ներկայացված փաստերը լրիվությամբ համապատասխանում են արխիվային փաստաթղթերում նշվածներին, որոնցից որոշ մանրամասներ թարգմանաբար ներկայացնում են ընթերցողին, որպէսզի հետադարձ հայացք ձգի եւ տա իր գնահատականը:

Եվ այսպէս: Թիֆլիսում տեղակայված պահեստից հագուստ ու զինամթերք ստացած գնդապետ Միքայել Մելիք-Շահնազարյանի հրամանատարությամբ զորախումբը 300 սայլերով հասել էր Գորիս, որ պիտի անցներ Շուշի: Մինչեւ Գորիս հասնելը Շուշի ուղարկած նամակները չէին հասել կառավարությանը: Դրանում նա հանդգնել էր, քանի որ պիտի ստանար պատասխան, իսկ ոչ մի պատասխան չէր ստացվում: Նրա մոտ սկսում են առաջանալ կասկածներ, որ նամակները կորել են կոմիսար Հովակի (Հովակիմ) ձեռքով, քանի որ երկուսի ստորագրությամբ էին լինում, իսկ ուղարկողն էլ կոմիսարն էր լինում միշտ: Գնդապետն առանձին նամակ է գրում իր եղբորը՝ Սամսոն Հովսեփի Մելիք-Շահնազարյանին, նույն ծրարում տեղավորում Շուշիի շտաբին հասցեագրված երկրորդ ծրարը եւ

այս անգամ ուղարկում հավատարիմ զինվորի միջոցով, համոզված լինելով, որ նա՛մակն անպայման հասցվելու է: Նա խնդրում է, որ ուղարկեն 300 սայլ, նույնքան էլ ստանալու է տեղում, որպեսզի զինամթերքն ու հագուստը տեղափոխի Շուշի: Երբ Շուշիից Ջանգեզուր շարժվող ջոկատը գտնվում էր Բերդաձորում, շրջափակվում է Ջառսլու եւ Ջաբուղ գյուղերի կողմից: Խնդիր է դրվում, որ Բերդաձորի զինված 400 հոգանոց ջոկատը պիտի ճեղքի Ջառսլուն՝ որոշակի օգնություն ստանալով Շուշի քաղաքից, իսկ Ջաբուղը պիտի ճեղքեն զանգեզուրցիները: Ռուսական բանակի շարքերում ծառայած, ձեռնամարտում (ближний бой, рукопашная) վարպետացած բերդաձորցիները ճգնում են հակառակորդին, բացում ճանապարհը դեպի Շուշի եւ շրջվում դեպի Ջաբուղ, նպատակ ունենալով միանալ Ջանգեզուրից հարձակման անցնողներին, որոնք գրավելով 3 թուրքաբնակ գյուղեր, մոտենում էին Ջաբուղին: Նախապես զանգեզուրցիների եւ բերդաձորցիների միաժամանակ վառած խարույկները բարձունքների վրա, որպես Ջաբուղի կամրջի ուղղությամբ հարձակվելու ազդանշան, նախատեսված արդյունքը չտվեցին: Հագուտ եւ Աղավնու գետերի հովիտը լրիվությամբ արդեն զբաղեցրել էին Օսմանյան Թուրքիայի զորքերը, որոնց նպատակն էր Բերդաձորի վրայով, սրի քաշելով ժողովրդին, անցնել Շուշի:

Երբ հետախուզությունը զեկուցում է զանգեզուրցիների առաջխաղացման մասին (գրավել էին ուժեղ պաշտպանվող 3 գյուղեր), Բերդաձորում գտնվող ջոկատը բերդաձորցիների հաշվին թվաքանակը հասցնում է 1250-ի եւ, մարտնչելով, շարժվում դեպի Ջանգեզուր: Եվ հանկարծ հետախուզությունը լրացուցիչ հաղորդում է, որ զանգեզուրցիների առաջխաղացումը հապաղել է, պատճառը հայտնի չէ, իսկ իրենք էլ, թողած գրաված 3 թուրքաբնակ գյուղերը՝ նահանջում են, տեղում մնում էր միայն Շուշիի գնդի մեկ վաշտ, որն էլ կազմում էր զանգեզուրցիների 20 տոկոսը: Իսկ երբ Բերդաձորի շտաբի պետ Սամսոն Մելիք-Շահնազարյանը լուր է ստանում, որ Ջանգեզուրի տարածքում մնացած Շուշիի գնդի զինվորներն էլ հետ են նահանջում դեպի Տեղ-Գորիս, հրամայում է, որ առաջխաղացումը դեպի Ջաբուղ դադարեցնեն, դիրքավորվեն ու անցնեն կազմակերպված պաշտպանության: Հենց նույն օրը Բերդաձորի յոթ գյուղերից մեկական սուրհանդակ է կանչում, սայլերը բաժանում ու հրամայում, որ տները չվառեն, ունեցվածքով տեղափոխվեն Շուշի: Դա 1918թ. սեպտեմբերի 8-ին էր, մի ամպամած օր: Վերջում տեղափոխվել է 10 հոգուց բաղկացած շտաբը, որոնց թվում էր նաեւ Ջարեհ Մելիք-Շահնազարյանը՝ շտաբի 15-ամյա գրագիրը:

Բերդաձորի եւ Շուշիի հետ կապված առ այսօր հիշողությանս մեջ պահպանվող մի փոքրիկ զրույց ներկայացնեմ: Թամար տատս ճախարակով թել էր մանում ու ինչ-որ խոսքեր էր ասում երգի ծայնով: Երբ ծիծաղում էինք, մեզ սաստում ու ասում էր. «Ձե՛ններդ կտրեք, մեզ կոտորել են, իսկ դուք ծիծաղում եք»: Իսկապես, ձե՛ններս կտրում էինք ու գնում այգի: Տարիներ անցան, տարիք առանք, ցանկություն եղավ հարցնել տատիս, թե ինչ է նշանակում «մեզ կոտորել են...»: Նույնիսկ ստիպեցինք, որ բացի հուշամատյանը: Եվ նա պատմեց. «Տասներեք տարեկան էի, երբ սկսվեց 1918թ. հայ-թուրքական կռիվը: Յախշունց խութում, մեր տան մոտ սպանվեց հայրս՝ Գրիգորը: Մորս հետ մի կերպ հասանք Շուշի: Մեզ տեղավորեցին Գյանջացուց (Գյանջեցեանցների) թաղամասում: Մի կերպ մնացինք երկու տարի: Վիճակն այստեղ 1920թ. ձմռան վերջին, գարնան սկզբին սկսեց վատանալ: Քաղաքում դարիք զինվորականներ էին շրջում: Ասում էին՝ անգլիչաններ: Մայրս չէր թողնում տնից հեռու գնանք, բայց պատճառն էլ չէր ասում: Մարտի 16-ին բակում հավաքված տղամարդիկ ասացին, որ թուրքերը վառել են Ղայբալի գյուղը: Կենդանի մնացած բնակիչները փախել են դեպի Կրկժան: Մի շաբաթ չանցած, հրդեհվեց նաեւ քաղաքի հայկական թաղամասը, եղան շատ զոհեր: Շուշիից էլ Քարին տակ գյուղով փախանք ու մի կերպ հասանք Վարազաբուն գյուղը: Երբ դրությունը մի քիչ լավացավ, 1922թ. վերադարձանք գյուղ»:

ՍԻՐԱՅԻՆ ՄՈՏԻՎՆԵՐՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նախ այն մասին, թե ինչ է սերը: Այն մարդու հոգեկան ապրումների ամբողջությունն է, զգացմունք է, որ բխում է սրտից: Այն մի յուրատեսակ վերաբերմունք է մեկի (անձ) կամ էլ որեւէ բանի նկատմամբ: Սերը միաժամանակ ատելության հակառակն է: Ինչպես մագնիսական դաշտ՝ հակառակ բեւեռներ են: Զգացմունքի նշված երկու տեսակները կարելի է համեմատել կախարդական ծողի հակառակ ծայրերի հետ եւս: Սերը նաեւ կեցվածք ու վերաբերմունք է:

Այդ ներքին զգացմունքները (ապրումները) մարդը կարող է ուղեղի թելադրանքով արտահայտել դիմացինի նկատմամբ: Այն սկսվում է համակրանքով, որ մի սեռի անհատը տածում է հակառակ սեռի անհատի նկատմամբ: Այն անձնվեր կապվածության, նվիրվածության, հավատարմության զգացում է: Կա վաղ հասակի սեր, առաջին սիրո զգացում, մայրական սեր, որդիական սեր, հայրենիքի սեր, քրոջ-եղբոր փոխադարձ սեր:

Հոգեբաններն ու սոցիոլոգները այս շարքը կարող են շարունակել: Սահմանափակվելով նշվածով, տեսնենք ի՞նչ են ասում այս մասին Շուշիի հին հայկական գերեզմանատների շիրմաքարերի արձանագրությունները:

Շիրմաքարը, որի կողերին գրված արձանագրությունը մեկնաբանելով ուզում են ներկայացնել ընթերցողին, տեղադրված է 1905-06թթ. Շուշիում հայ-թուրքական (տաճկական, թաթարական) զինված ընդհարման ժամանակ զոհված հայդուկների տասնապետ, քսանհինգամյա Ասլան Աղաբաբյանի շիրմին: Այն գտնվում է քաղաքի ռեալական ուսումնարանից ոչ հեռու՝ վերը նշված ընդհարման ժամանակ զոհված հայերի գերեզմանատանը: Արձանագրությունը սկսվում է հարավային կողմից, ավարտվում՝ հյուսիսահայաց կողմ: Կողերը բաժանված են երկուական մասերի, որտեղ աջը ձախի շարունակությունն է հանդիսանում: Արձանագրությունը, որ էպիտաֆիա է (դամբարանական բանաստեղծություն՝ փորագրված գերեզմանաքարի վրա), բաղկացած է 45 տողից: Այն իրենից ներկայացնում է մի յուրատեսակ բնութագիր, որը մեզ՝ սերունդներիս տեղեկացնում է հերոսի մի շարք զգացմունքների մասին (մարտունակություն, հայրենասիրություն, նվիրվածություն ազգին, ընկերասիրություն, սեր եղբոր եւ սիրած էակի նկատմամբ):

Էպիտաֆիան մեզ պատմում է, թե ինչպես է հոգու խորքում նշված զգացմունքներն ունեցող երիտասարդ տասնապետը Ազուլեցոց Ս. Աստվածածին եկեղեցուց դարանակալված թշնամիներին դուրս վռնդելու ժամանակ անձամբ առաջին գիծ անցել, լուծել իր հրամանատարության տակ գտնվող տասնյակի առջեւ դրված խնդիրը անձնագոհությամբ: Առաջին տողերում գրված է.

Ուր գնացիր քաջադրեցիր
Չես մոռացել հավիտյան
Շուշիի մեջ կռվեցիր
Ակուլեաց մայր ժամունը էիր
Տասնապետ ու Քաջընտիր...

Ինչպես տեսնում ենք, տողերը խոսում են նրա քաջության, լավ կազմակերպիչ, լավ հրամանատար ու լավ էլ մարտունակ լինելու մասին: Նա փափագել էր եկեղեցին ազատ, իսկ քաղաքը՝ խաղաղ կյանքով ապրելիս տեսնել: Սակայն քաջընտիր ու խիզախ կռվող հայդուկը չկարողացավ այդքանը տեսնել: Նրա փափագը մնաց թերի: Այդ մասին վկայող տողերն ասում են.

Քաջ կռվում էիր դու հատուկ
փափակտ թերի հայտուկ...
Շատերը թողիր քեզ փափագ
գիշերվան սուրբ նահատակ...

Ասլան Աղաբաբյանի հետ մեծ հույսեր էր կապում ժողովուրդն օրհասական պահերին: Նրան համարում էր իր իսկական փրկիչը: Փրկիչ, որի մուրազը թերի մնաց՝ բավական չէր, ժողովրդին էլ մեծ կսկիծ պատճառեց նրա սպանվելը: Ճիշտ է, նա գնացել է անձնագոհության ու ազատագրելով եկեղեցին, ստիպել, որ թուրքը հետ քաշվի, սակայն ժողովուրդն ուզում էր ձեռք բերած հաջողության հետ, հաղթանակի հետ կենդանի տեսնել նաեւ սիրված երիտասարդին, խիզախ զինվորին ու վճռական, կտրուկ որոշումներ կայացնող հրամանատարին: Ժողովուրդը ողբում ու ափսոսում է.

Փափակտ թերի մնացաւ
եղավ մեզի սրտացաւ

Էպիտաֆիայում պարզ արտացոլված է եղբայրներ Արսենի եւ Թումասի սերը Ասլանի նկատմամբ: Ութեր, ծնողներին սիրտ տալով, խոստանում են իրենց քաջընտիր ընկերների հետ միասին անպայման վրեժ լուծել: Նրա եղբայրների եւ ընկերների վրեժխնդրության մասին ասվում է.

Եղբայրք ունիս Քաջընտիր
Արսենն է վրեժխնդիր

Ասլան Աղաբաբյան հայդուկի, քաջ երիտասարդի մահը մի առանձնահատուկ կսկիծ է պատճառում երիտասարդ աղջիկներին, որը ներկայացվում է այսպես.

Օրիորդները միաձայն
կանչում են Քեզ ազրեր ջան...

Առանձնահատուկ ձեռով է ներկայացված Ասլանի նշանածի (անունը չի գրված, երեւի հաշվի առնելով այն հանգամանքը, որ կարող է հետագայում անուսնանալ) ընկճվածությունը, կենդանի մեռած վիճակն ու դիրքը, նրա հոգեկան ապրումներն ու դիրքը: Ներկայացնում են բոլոր տողերը.

Նշանածտ վիզը ծռած
լալէն աչքերն է ուռած
չըարժանացավ պսակիտ
ծնողներից ամաչելով
կանչում էր քեզ ողբալով
խընայե ինձ ով անգին
հողը մտնենք միասին

Տողերի հեղինակը չէր կարող արհեստական գունազարդել, եթե նրանց սերը փոխադարձ չլիներ, միմյանց նվիրված չլինեին, միասին ապագա կերտելու հստակ ծրագիր չունենային: Նրանց չի վիճակվել միասին ճաշակել կյանքի քաղցրությունն ու դժվարությունները: Հենց դրա համար է, որ սիրո խոստում տված աղջիկը հողը մտնել է ուզում սիրած տղայի հետ՝ անիմաստ համարելով իր ապրելը:

Աղջիկը որտեղից իմանար, որ ասլան Ասլանը գիտակցաբար գոհվել է հանուն ազգի, հանուն սիրած աղջկա: Վեհ գաղափար է, այդ գաղափարով զինված է նա առճակատվել թշնամու հետ փողոցային մարտում, Ազուլեցոց քաղամասում:

Արձանագրությունը, որը խոսում է փոխադարձ սիրո, անզգույշ սպանության, ներման, ներումը չընդունելու եւ ողբերգական մահվան մասին, գրված է Թունյանների սերունդներ՝ 17-ամյա Օվսաննայի եւ եղբոր՝ Հայկի, յոթ կտորից բաղկացած բրգածեւ շիրմաքարի չորս կողերին (գտնվում է քաղաքի հյուսիսային կողմի գերեզմանատանը):

Որ փոխադարձ էր ու նախանձելի Օվսաննայի ու Հայկի սերը, կիմանաք վերջում: Այժմ ներկայացնենք արձանագրությունը մաս-մաս՝ ըստ դեպքերի հաջորդականության:

Արձանագրությունից պարզվում է, որ տասնչորսամյա Հայկը խաղացել է հրազենով: Անզգույշ մի շարժում, կրակոց, որի արդյունքում մահացու վիրավորվել է նրա քույրը՝ տասնյոթամյա Օվսաննան: Դեպքն արձանագրությամբ ներկայացվում է այսպես.

Քո գնդակը կրծքիս դիպավ
Հայկ, քո խաղը ինձ մահ տվավ
Աչքս ընդմիշտ փակում եմ ես
Քեզ ներում եմ, դու անմեղ ես:

Ըստ արձանագրության, անզգույշ, սակայն ողբերգական սպանությունը կատարվել է 1897թ. հունվարի 2-ին: Ինչպես վկայում է արձանագրությունը, քույրն անմեղ է ճանաչում ու ներում եղբորը, չնայած վերջինս գրկել է նրան ապրելու իրավունքից:

Հակառակ կողին գրված արձանագրությունը վկայում է, որ չնայած քույրը ներել է եղբոր կատարած ծանրագույն, անզգուշության հետեւանքով կատարած հանցագործությունը, սակայն ներումը չի ընդունել եղբայրը՝ Հայկը: Դիմելով քրոջը՝ Օվսաննային, ասում է.

Իմ գնդակը քեզ սպանեց
Քո մահդ էլ՝ ինձ, Օվսաննա
Ների՛ր, քույրիկ, ես անմեղ եմ
Մարդ փորձանքի է եմթակայ

Քառատողը վկայում է, որ քրոջը սպանելու համար չնայած Հայկը չի կանգնել դատարանի առաջ, քույրն էլ նախապես ներել է նրան, այնուամենայնիվ, տղան իրեն հանգիստ ու անմեղ չի համարել, քրոջ մահը շատ ծանր է տարել: Իր հոգեկան ապրումների մասին ոչ ոքի տեղյակ չի պահել, ոչ ոքի հետ, երեւի, հաշվի էլ չի մտել: Հետո ի՞նչ, չեն դատել: Նա ոչ

մի ներում չընդունելով, ինքն իրեն դատելով, կայացրել է դատավճիռ՝ ինքնասպանություն:

Չգիտենք ինչ է կատարվել Հայկի սիրտ-ուղեղ-հոգի եռանկյուն հարթությունում շուրջ իննը ամիս՝ հունվարի 2-ից մինչև նույն թվականի սեպտեմբերի 14-ը՝ հարազատ քրոջ ծննդյան օրը կայացել է նշված դատավճիռը:

Եվ ի՞նչ: Եթե Ասլան Աղաբաբյանը գիտակցաբար գոհվել է (կարող էր եւ կենդանի մնալ կամ վիրավորվել) հանուն ազգի եւ սիրած աղջկա, ապա Հայկի հրազենով խաղալը վերածվել է ողբերգության, որից էլ ծնվել է ահավոր ողբերգություն՝ գիտակցված ինքնասպանություն:

Սովորաբար ասում են՝ ինքնասպանություն գործում են թույլերը: Այս պարագայում տղան անիմաստ է համարել ապրել միայն նրա համար, որ հարազատ քրոջը զրկել է ապրելու իրավունքից: Պարզապես նա չի ցանկացել, որ կատարվածը որպես մի յուրատեսակ ցեց՝ կրծի իր հոգին:

Շուշի, 02.02.2007թ.

ԽՆԴՐԱԳԻՐ՝ ՇՈՒՇԻԻՑ

Կամ՝ Ալիբեկովի վկայությունները մահմեդականների դաժանության մասին

Անցյալ դարասկզբին Կովկասում տեղի ունեցած հայ-թուրքական (հայտաճկական, հայ-թաթարական՝ ըստ արձանագրությունների վկայության) զինված ընդհարումների եւ դրանց հետեւանքների մասին շատ են գրվել ինչպես ծավալուն հոդվածներ, այնպես էլ գրքեր: Հայ հեղինակները հիմնականում մեղավոր էին ճանաչում իշխանություններին: Իսկ աղբյուրաբան-ցիները, անմեղ ձեւանալով՝ եւ իշխանություններին, եւ հայերին:

Սալմանբեկ Ալիբեկովը 1918 թվականի իր խնդրագրում՝ հասցեագրված Բաքվի իշխանություններին, տալիս է այդ դեպքերի իրական պատկերը: Ուշագրավ է, որ գտնվել է զոնե մի մահմեդական, որ օբյեկտիվորեն գրել է այդ ամենի մասին եւ իր բողոքի ծայրը բարձրացրել:

Սալմանբեկ Ալիբեկովի խնդրագիրը՝ բաղկացած հինգ մեքենագիր է-ջից եւ գրված 1918թ. դեկտեմբերի 18-ին, իմ ձեռքին է: Բազմիցս ընթերցել եմ, սակայն չեմ հավատում աչքերիս, որ այսքան կարեւոր մանրամասներ կարող է մի մարդ լրիվությամբ պահ տալ թղթին: Եվ զարմանալի է, որ այդ մարդը վկայում է իր հավատակիցների գազանությունների, արցախահայության դեմ կատարված ոճրագործությունների մասին, չթաքցնելով ոչ չինչ: Խնդրագրի հեղինակը լրիվությամբ ներկայացնում է բոլոր հակահայկական ու հակառուսական ոճրագործությունները, ավազակային գործողությունները՝ Ղազախից մինչեւ Դիզակի եւ Կարյազինոյի գավառները:

Նախ՝ ներկայացնենք ավազակախմբի այն անդամներին, որոնք, ըստ Սալմանբեկ Ալիբեկովի, վերահսկում էին իրավիճակը տարածաշրջանում: Դրանք էին՝ գավառապետ Խոսրովբեկ Փոլադով, Ալիբեկ Բերուտով, Միրզաբեկ Բերուտով, Աբդուլֆատեկ Հասանբեկով, Իբրահիմբեկ Հյուսեինբեկով, Իսմայիլխան Զիատխանով, Հյուսեինաղա Ջեւանշիր, Հյուսեինբեկ Վեզիրով, Բեգյարբեկ Սայբալիմսկի: Չարմանալի է, թե ինչու ավազակախմբի այս ցուցակում չկա Արիբքի գյուղի բնակիչ, հայտնի ավազակ (ղաչաղ) Սուլթանբեկի անունը, քանի որ սերտ համագործակիցներ են եղել: Սրանք, իրոք, վերահսկում էին, այն էլ ոչ թե ինքնուրույն, այլ՝ թուրքերի հետ համագործակցված:

Հիմա տեսնենք, թե իրականում ինչ է կատարվել Արցախում ու նրա կենտրոն Շուշիում 1918 թվականին՝ սկսած օգոստոսից: Ըստ Սալմանբեկ

Ալիբեկովի՝ 1905-06թթ. առաջին ազգամիջյան զինված ընդհարման կոնկրետ դրդապատճառները չեն եղել: Պարզապես վերոնշյալ անծինք, իրենց բեկեր ու իշխանություն հռչակած ավազակախումբը տարածաշրջանը հայաթափելու միտումով ընդհարման ծրագիր էին մշակել Կոստանդնուպոլսում՝ թուրքական կառավարության հետ ու Գերմանիայի հովանու տակ (տե՛ս, «Ռուսակիե վեդոմոստի», թիվ 173, 1905թ.): Ծրագրի նպատակն էր Կովկասը լրիվ մաքրել հայերից, ջարդել նաև ազգային փոքրամասնություններին: Օգտվելով մահմեդականների խավարամտությունից, հենց նրանք են նախաձեռնել հարձակումը հայերի ու ռուսների դեմ: Ալիբեկովը նշում է, որ մուսուլմանների շրջանում տարածվում էին լուրեր, որ իբր Թավրիզում ռուսները կախաղան են բարձրացրել մուշտափոյին (հոգեւոր առաջնորդին), ավերել են Մեդինա եւ Մեքքա քաղաքները:

Երբ Սալմանբեկ Ալիբեկովը փորձել է համոզել, որ անհմաստ ու վնասաբեր են ազգամիջյան ընդհարումները, նրան ու գաղափարակիցներին բանտարկում են: Բանտում գտնվելու ամիսներին շատ զրկանքներ է կրել Ալիբեկովը՝ քաղց, ծարավ, ծեծ: Ականատես է եղել, թե ինչպես կարելի է պահակի թողտվությամբ ներս մտնել, բացել բանտախցի դուռը եւ սպանել ում ուզում ես: Այդպես է սպանվել Ղահրամանբեկը՝ շուշիաբնակ մարդասպան Աղամիրովի կողմից:

Խնդրագրում Ալիբեկովը նշում է, որ իր հետ կատարվող բռնությունների մասին տեղյակ է պահել զավառապետի տեղակալ Նազարովին, սակայն համոզված էր, որ դրական արդյունք չի ստանալու: Նույնիսկ գտնում էր, որ Ղահրամանբեկի ճակատագրին կարժանանա նաև ինքը: Սալմանբեկ Ալիբեկովն այն վկաներից է, ով տեղյակ է Արցախում երկու ազգամիջյան ընդհարման ժամանակ կատարված բռնություններին՝ Բերդաձոր, Խնապատ, Նախիջևանիկ, Փրջամալ, Արանգամին, Աղբուլաղ, Ղահրավ, Քյաթուկ գյուղերում: Նա գրում է. «Երկու ամիս առաջ (հոկտեմբեր, 1918թ.) Չերքեզբեկ Շափիբեկովը օրը ցերեկով Շուշիում մարդ է սպանել ու ձերբակալվել, սակայն տալով 5000ռ. կաշառք, ազատվել է, չնայած քաղաքում հայտարարված էր ռազմական դրություն եւ մի հայ կոշկակարի նույն իշխանությունները կախաղան էին բարձրացրել նրա տանը մեկ հրացան հայտնաբերելու համար: Շուշիաբնակ Իսա Շափիբեկովը իր կնոջը սպանելու համար բանտարկությունից ազատվել է՝ տալով 3000 ռուբլի: Դուշիլար գյուղի 15 ավազակներ հողալու գյուղում սպանել են չորս ռուսների: Դեռ տվել են 15000 ռուբլի կաշառք, ազատ են արձակ-

վել: Բանտի հսկիչ Շափիբեկ բանտի պահեստից 50 հազար ռուբլի արծուրությամբ ապրանք է գողացել, ձերբակալվել, սակայն 10 հազար ռուբլի տալուց հետո ազատվել: 1918թ. հունիսին բանտում սպանվել է Ղահրամանբեկը, սակայն մարդասպանը՝ Խուրուշ Գուլիեւը, չի էլ ձերբակալվել»: Դա բավական չէ, թուրքերը Շուշի մտնելիս նրանց դիմավորողների թվում է եղել՝ որպես քաղաքի պատվարժան մարդ:

Փաստը, որի մասին մակերեսորեն է նշվում, Բաբվին հասցեագրված խնդրագրում, ուզում են որոշակի մանրամասներ ներկայացնել ընթերցողին: Խոսքը վերաբերում է Շուշիի ռազմական ոստիկանապետ, գնդապետ Ռաշկովսկու չորս հոգուց բաղկացած ընտանիքի բոլոր անդամների գլխատմանը: Այլ պատմական աղբյուրներ տեղեկացնում են (տե՛ս՝ «Վավերագրեր հայոց եկեղեցու պատմության», հատոր 5), որ գնդապետի ընտանիքը՝ ինքը, կինը, աղջիկն ու Թբիլիսիի ռազմական դպրոցի ուսանող տղան, 1918թ. մայիսին, գիշերը, գլխատվել են Խուրուշի պատվերով զուտ նրա համար, որ գնդապետի աղջիկը հրաժարվել է ամուսնանալ Խուրուշի տղայի հետ:

Արդեն պիտի հասկանալի լինի, որ հանցագործը եղել է Ղահրամանբեկը, իսկ պատվիրատուն՝ Խուրուշ Գուլիեւը: Որպեսզի ամեն ինչ «մաքուր» մնա, վերջինս վերացրել է հանցագործին ու ինքը մնացել որպես արդար եւ ազնիվ մարդ: Նշված գործով որպես վկա քննիչի մոտ էին ուղեկցում Սալմանբեկ Ալիբեկովին: Քննիչը գտնվում էր բանտի այն թևում, որտեղ միայն հայեր էին (հաշվի առնելով իրավիճակը՝ բանտը բաժանել էին երկու մասի): Դամարյա քննիչի աշխատասենյակ էին հասցրել, երբ մի խումբ հայեր զինաթափում են ուղեկցողներին ու հնարավորություն ստեղծում Ալիբեկովի փախուստի համար: Չգիտեմ՝ այդ փախուստն ինչ օգուտ է բերել հայերին, բայց այն էլ քիչ չէ, որ նա գրել է այդ ամենի մասին ու տպագրել 1919թ. հունվարի 23-ին՝ «Իսկրա» թերթի 3-րդ էջում:

ՅԱԽՇՈՒՆՑԻ «ԿԱԼԱՇՆԻԿՈՎԸ»

Իմ ձեռքին է բերդածորցի, Բերդածորի առաջին ռուսաց լեզվի ուսուցչի՝ Մովսես Գրիգորի Յախշունցի (Սաֆարյան) «Առեղծվածներ» բանաստեղծությունների ժողովածուն, Սաղաթել Հարությունյանի խմբագրությամբ: Այն բաղկացած է՝ «Իմ հազարան հավքը», «Արցախ, Արցախ, իմ Հայաստան», «Գոյատևեման ձեռը խրթին», «Քո անունը մնում է դեռ», «Երիցուկի աչքերով», «Բնության առեղծվածը», «Անձրեւից հետո» եւ «Տարբեր տարիներ» շարքերից:

Յախշունցի եւ նրա բանաստեղծությունների մասին ինչ պիտի ասվի, արդեն ասված է խմբագրի կողմից, որտեղ շեշտը դրված է տասնչորս տողից բաղկացած «Իմ հազարան հավքը» բանաստեղծության վրա: Եվ ավելին, ոչ ոք, հավատացած եմ, չի կարող ասել: Եթե բանաստեղծը խոստովանում է, նշում է, որ ինքը, իբր, չբռնեց հազարան հավքին: Այո՛, բռնել է, այն էլ ոտքերից ու թևերից, այլ ոչ պոչից (կարող է հավքը պոկվել՝ «պահ տալով» պոչից մի քանի փետուր): Իրոք որ, նրա յուրաքանչյուր բանաստեղծություն հավք է՝ հանձնված ընթերցողին:

Նշելով իր, բանաստեղծ Համո Սահյանի եւ Սերո Խանգաղյանի՝ 1959թ. Բերդածորում Յախշունցի հետ ունեցած հանդիպման մասին, միաժամանակ տեղ տալով Հ. Սահյանի հուշերին, խմբագիրն ասում է, որ Մովսեսը սիրում էր եւ անգիր գիտեր Չարենցին: Կավելացնի, որ ոչ միայն Չարենցին: Նա սիրում էր նաեւ Պուշկինին, Լերմոնտովին, Գոգոլին, Բալզակին, Գյոթեին, Դրայզերին եւ շատ շատերին, որոնց հատորներն ուներ սեփական մեծ գրադարանում: Նա լավ պատմություն գիտեր, լավ համաշխարհային գրականություն: Որեւէ հարցում՝ կապված գրականությանը, պատմությանը, նրա հետ վիճելն անիմաստ էր: Վիճել կարող էր սկսել միայն անծանոթը, այն էլ հաշվի առնելով, որ գյուղական դպրոցի ուսուցիչ է: Մի քանի բառ փոխանակելուց հետո, գրույցի թեմայում դեռ չխորացած, ետ կնահանջի զգալով, որ նվաճելն անհնարին է, ինչպես Բերդածորը՝ սկսած Լենկ Թեմուրից մինչեւ մեր օրերը:

Ես պիտի խոսեի 1959թ. օգոստոսի վերջին Բերդածորում կայացած հանդիպման մասին, քանի որ այդ հավաքությանը ներկա էինք նաեւ հայրս՝ Մայրո Սարգսի Պետրոսյանն ու ես (տասներկու տարեկան էի): Հիմա եմ վերհիշում, որ իսկական մտավորականների հավաքույթ էր: Վիճում էին տարբեր հարցերի շուրջ, ջղայնանում, ծիծաղում ու նորից... Հա՛, հետնեղը երկար, ցրված մագերով մի գեղանկարիչ էլ կար: Նա լուռ մի կողմ քաշ-

վեց, ավտոմեքենայից հանեց անհրաժեշտ գործիքները, անցավ արեւտահայաց սենյակն ու այլեւս ներս ու դուրս չէր անում, ինչպես մեծ պատշգամբում նստածները: Մենք էլ խաղում էինք բակում: Մի առիթով, մտա այդ մեծ սենյակը: Եվ ի՞նչ: Նկարիչը նստած բաց պատուհանի մոտ, մի մեծ պաստառի վրա յուղաներկով նկար էր նկարում: Պարզ երեսում էր, որ սկսել էր նկարել Ջանգեզուրը այստեղից, անցել էր Տեղ գյուղը, Ջաբուղի ծորը ու այսպես դեպի Բերդածոր էր գալիս: Միայն ուշացած ճաշի նստելիս նկատեցին, որ նկարիչը չկա: Յախշունցի տղա Սեւակն ասաց, որ մեծ սենյակի պատուհանի մոտ նստած, նկարում է: Մի քանի անգամ կանչեցին, չեկավ: Մովսեսը ստիպված մտավ սենյակ, մի քիչ ուշացումով դուրս եկավ ու լիաթոք ծիծաղելով, ասաց. «Խաբար չեք, է՛, մարդը գործ է անում, Ղարաբաղը Հայաստանին է միացնում, գնացեք, տեսեք»: Բոլորը լուռ անցան սենյակ: Եաշն ավելի ուշացավ: Ավելի ճիշտ, ճաշելն ուշացավ, բայց նկարը նկարվեց: Չգիտեմ նկարը ինչ անուն ստացավ, բայց մի բան հիմա իմացա, որ բանաստեղծ Յախշունցի «Արցախ, Արցախ, իմ Հայաստան» բանաստեղծությունների շարքի գաղափարը հղացել է հենց այն օրը, որին հաջորդել է Արցախին, Բերդածորին, ինչու չէ՞ նաեւ Արցախյան շարժանը նվիրված բանաստեղծությունների ծնունդը, որոնցում պատկերվում է ամբողջ շարժումը, ինչպես որ եղել է: Իսկ Սեւակն այդ օրը որոշեց ու նկարիչ դարձավ:

Խորհրդային տարիներին՝ 1960-70-ական թվականներին, երբ Ադրբեջանի իշխանությունների ձեռնարկած հայախալած քաղաքականությունից ու անգործության ճիրաններից փրկվելու միջոցներ փնտրող արցախցիներ սկսում է գյուղերից հեռանալ, թողնելով փակ սեփական տուն ու ժամ, Յախշունցը սրտի կսկիծով գրում է.

Գյուղից հեռանում, գնում եմ քաղաք՝
Թողնելով թափուր իրենց տները:

Նա լավ գիտեր, որ գնացողն էլ հետ-հետ նայելով, սրտի կսկիծով է թողնում գյուղը: Ավելի ճիշտ, մարդը ոչ թե գնում, այլ քշվում է: Դիմելով նրան, Յախշունցը հարցնում է.

- Քո ակունքներից ո՞ր ես քշվում, մարդ,
Ում ես թողնում դու այս լեռնապարը-
Ապուլապարիդ աճյունն ու քարը,
Քեզ ո՞ր է տանում այս խիղճը մեռած
Ուրբանիստ դարը:

Յախշունցի համար ծովերում՝ մի կաթիլ, ցամաքում փոքրագույն մայր Արցախը մի ողջ երկրագնդի մեծություն ունի, որն արտահայտված է «Արցախ» բանաստեղծության տողերում այսպես.

Մայր ծովերում դու՝ մի կաթիլ,
Ցամաքներում մայր՝ փոքրագույն,
Բայց ինձ համար դու՝ Ծիր Կաթին,
Ինձ համար՝ մի ողջ երկրագունդ:

1980 թվականին, երբ արդեն ակնհայտ էր, որ աշխարհի աչքի առաջ պիտի լրիվ հայաթափվեր Արցախը, ի մի բերելով 1923թ. Ադրբեջանին բռնակցելու փաստը «Աստղապատկան գողտրիկ աշխարհ» բանաստեղծությունն այսպես է ավարտվում.

Թուրքն է վխտում քո շուրջը բոլոր,
Ինչպես հոշոտող գիշատիչ գայլ,
Երեկ դարձրին կռվախնձոր»
Այսօր՝ արդեն մատաղի գառ:

Այսպես ասելու իրավունք ունեն Յախշունցը: Եվ այդ իրավունքը նրան հենց ինքը թուրքն էր տվել 1918-ի օգոստոսին, երբ իր տան բակում, նենգ թուրքի հրացանից արձակած գնդակից Մովսեսի հայրը՝ Գրիգորը մահացու վիրավորվել էր թիկունքից ու նորածին Մովսեսին թողել հայրական սիրո կարոտ:

Յախշունցը միշտ երազել է Արցախը Հայաստանին միացած տեսնել: Այդ են պատկերում «Արցախ» ութնյակի տողերը.

...Ինչքան շատ եմ երազել
Տեսել քեզ հանց տիրանվեր
Աստվածակերտ մի մատանի
Միակ տիրոջ՝ մեր մեծամայր
Հայաստանի չքնաղ մատին:

Արցախյան շարժման առաջին տարիներին, երբ Արցախի Հայաստանին վերամիավորելու հարցին, բոլոր ատյաններում քար լռություն էր տիրում, բարձրաստիճան այրերը միանշանակ ասում էին, որ դա անկարելի է, լուծման ոչ մի տարբերակ չկա, որ չլինի ոչ պարտվող, ոչ էլ հաղթող կողմ, Յախշունցը «Խոսք Արցախին» բանաստեղծության տողերում հարցի լուծումն այսպես է գտնում.

Այսուհետեւ եւ հավիտյան
Ապավինիր դու քեզ միայն
Եվ հույսդ դիր քո սուրբ արյան
Անլռելի կանչի վրա:

Երկու տարի ոնց երկու դար
Սպասեցիր արդարության
Եվ ստացար քեզ դիմադարձ
Շրջափակում, զորքեր ու տանկ:

Նա կոչ է անում խտանալ ու վարարել, հավաքվել կաթիլ-կաթիլ, ոչինչ չաղերսելով ո՛չ կանխակալից, ո՛չ էլ վերադաս կաշառվածից: Յախշունցը նկատում է, որ շարժման առաջին երկու տարում «բացվել ու տեսունակ» են դարձել Արցախի աչքերը, բանաստեղծությունն ավարտում է հետեւյալ տողերով.

Եվ քո արյան կանչից բացի
Ողջը թվաց փուչ ու ունայն:

Յախշունցն ավելի քան հավատացած էր, որ հարկադրաբար հեռացածները հայրենիքի արյան կանչով օրհասական պահին կգան առանց ցավի ու վախի, լի հաղթելու վճռականությամբ: Այո՛, եկան նրանք, իրենց հետ բերելով աշխարհով մեկ ցրված շատերին, որոնց արմատներն Արցախում են: Նրանց վերադարձն այսպես է պատկերված «Սարյակները Արցախի» բանաստեղծության մեջ.

Թողած օտար ափ, եզերք,
Բռնած ճամփան տունդարձի,
Կանցնեն ուղին դժվարին,
Ամպամշուշ ու բարձրիկ:

Իսկ երբ լուծվեց անլուծելի թվացող հարցը՝ Արցախն Ադրբեջանից անջատելը, Յախշունցը գրեց.

Քանիցս եկան՝ շրջափակումը,
Սադրիչ ուժերը, գները, շուկան,
Իրենց քոռ աչքով տեսան հայի մեջ
Դեռես ինչքան կորով եւ ուժ կա:

Հաստատ համոզված լինելով, որ արցախահայության ազգային-ազատագրական շարժումը համայն հայության աջակցությամբ կպսակվի հաղթանակով, Արցախը վերստին կմիանա մեծամայր Հայաստանին, դառնալով դեպի ազգի ակունքները, կդառնան ինքնիշխան նոր պետություն, «Արցախ, Արցախ իմ Հայաստան» բանաստեղծությունների շարքն ավարտվում է «Օրհներգով», որի առաջին եւ վերջին չորս տողերն ասում են.

Ելիր, Հայաստան չքնաղ, մեծամայր,
Ելիր, հայություն համայն աշխարհի,
Մի սիրտ մի հոգի, մի բռունցք դարձած՝
Հանուն ինքնիշխան մեր նոր պետության:

Ինչպես տեսնում ենք, անկեղծ է Յախշունցի սերը հայրենի հող ու քարի նկատմամբ, որը մեկ անգամ եւս ապացուցվեց, երբ Շուշիի եւ Հադրութի շրջանների հայաբնակ գյուղերում Սաֆոնովի «Кольцо» միջոցառումն իրականացնելիս (ինչպես պարզվել է, միջոցառման անմիջական ղեկավարը եղել է Ադրբեջանի ՊԱԿ-ի նախագահ Յուլեսինովը) Բերդաձորի բռնագաղթի օրը (16.05.1991թ.) Ադրբեջանի օմոնականների ռետինե մահակները չկարողացան նրան ստիպել, որպեսզի ստորագրի մի փաստաթուղթ, որ իբր կամավոր հանձնում է իր տունը: Ծեծից թուլացած Յախշունցն ուժ հավաքեց եւ բարձրաձայն հայտարարեց. «Ինչ ուզում եք արեք, ես ոչ մի սրիկայի տուն չեմ տա: Տունը տալ, նշանակում է Բերդաձորն էլ տալ, Արցախն էլ»: Այդպես էլ անդրդվելի մնաց: Այլապես նրա բանաստեղծությունների «գունարելիների» արդյունքը գրոյի կհավասարվեր:

Շարժման տարիներին, երբ շատ տարբերակների հետ առաջ էր քաշվում արցախահայության տեղահանության հարցը, նա «Ցուգ-ցվանգ» բանաստեղծության տողերում ասաց.

... Իսկ ռուս եղբայրը մեզ հետ անսխալ
Իր նախասիրված դեբյուտն է խաղում:
Քայլեր է անում նենգորեն վստահ
Ղարս-Նախիջեւան տարբերակներով,
Եվ ստեղծվել է մի խաղավիճակ,
Որը կոչվում է իրոք ցուգ-ցվանգ:

«Ցուգ-ցվանգը» շախմատում այն վիճակն է, երբ հաջորդ քայլը կողմերից մեկի համար մատ է: Իսկ արցախցու «մատ դառնալը» նշանակում

է, ինչպես Ավոն (Մոնթե Մելքոնյան) կսիրեր ասել՝ շրջել հայ ժողովրդի պատմության վերջին էջը:

Բանաստեղծ Յախշունցը ավելի քան համոզված է, որ աշխարհը ծուռ է Արցախի հարցում ու բանաստեղծությունն էլ «Ծուռ աշխարհ» վերնագրով ասում է.

Ամեն մի հայի եւ ազգի համար
Երեկ դժվար էր, այսօր՝ դժվարին:
Արդարությունը այս ծուռ աշխարհի
Սիրում է նստել ծանր նժարին:

Արցախյան շարժման ժամանակ, երբ պետական գաղափարախոսությունը հային այլեւս չէր կարողանում համոզել, որ Արցախը շարունակի մնալ Ադրբեջանին բռնակցված, տարածաշրջանի պարետ գեներալ Սաֆոնովը իրականացնում էր հայտնի «Кольцо» ռազմական միջոցառումը Բերդաձորում: Նրա նպատակն էր տեղահան անել հայերին: Ամեն ինչին անտեղյակ բերդաձորցիները վաղ առավոտյան գյուղերը ռուս զինվորներով ու թուրք օմոնականներով՝ շրջապատված տեսան: Եվ 73-ամյա բանաստեղծը գրեց.

Թուրքերով շրջապատված,
Չորքերով շրջապատված,
Մենք ենք, մենք, ուրիշ ոչ ոք,
Մեկ էլ հայի մի աստված
Գողերով շրջապատված,
Գելերով շրջապատված,
Մենք ենք մեզ լոկ զորավիգ
Եվ հայագութ մի աստված:

Այո՛, Յախշունցի «Արցախ, Արցախ, իմ Հայաստան» շարքի յուրաքանչյուր բանաստեղծություն մի յուրատեսակ «Կալաշնիկով» է լիցքավորված, որ կարելի է տեսնել միայն ոգու խորաթափանց աչքերով:

06.05.2005թ.

ՇՈՒՇԻԻ ՎԻՍԱԳԻՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Արցախի վաղեմի կենտրոն Շուշին, բազմած սարահարթի ուսին՝ շրջապատված 3390 մ պարսպապատով եւ 6894 մ անմատչելի ժայռերով, զբաղեցնում է մոտ 600 հա տարածք: Քաղաքն իր շրջապատում ունի վեց հայկական, մեկ համատեղ հայ-ռուսական, մեկ առանձին ռուսական գերեզմանատներ, որոնք զբաղեցնում են համարյա նույնքան տարածք, ինչքան քաղաքը:

1988թ.-ից զբաղվում են Շուշիի 18-19-րդ դդ. պատմա-ճարտարապետական հուշարձանների եւ հին հայկական ու ռուսական գերեզմանատների արձանագրությունների ուսումնասիրությամբ: Ի հայտ են բերված հազարավոր արձանագրություններ, որոնք հստակ տեղեկություններ են տալիս ինչպես մեր երկրամասի, այնպես էլ նրա սահմաններից դուրս հայության պատմության՝ ապրելակերպի, արվեստի, արհեստի, կրթության, զինվորական, առողջապահական, դատաիրավական եւ այլ համակարգերի մասին: Յուրաքանչյուր ի հայտ բերված արձանագրություն մի տեսակ ոգեւորել, ստիպել ու ավելի է խորացրել հետաքրքրությունը մեր ժողովրդի անցյալի նկատմամբ: Քայլ առ քայլ առաջ գնալով, համոզվել են, որ դրանք այն հիմքերն են, որոնց ճանաչումը մեծ ազդակ է մեծ հավատով ու հստակ քայլերով ընթանալու դեպի մեր ազգի ապագան:

Գաղտնիք չէ, որ ի տարբերություն նորերի, հին հայկական գերեզմանատները յուրատեսակ դպրոց են արվեստի բնագավառում: Եվ դրանցով ենք մենք՝ հայերս տեղ զբաղեցնում աշխարհի քաղաքակիրթ ազգերի շարքում: Միշտ հպարտությամբ ենք խոսել մեր պապերի ստեղծածի մասին եւ ուրախություն զգացել, երբ գովեստի խոսքեր են հնչել հայի հասցեին եվրոպացի ուսումնասիրողների եւ արվեստագետների շուրթերից: Մի տեսակ թեւավորվել ենք, երբ որեւէ երկրում հայ արհեստավորի, արվեստագետի ծեռագիր ենք տեսել: Միշտ ոգեւորվել ենք հեռուներում գտնվող մեր հուշակոթողներով՝ մոռացած մեր կողքին գտնվողները: Դա անհերքելի ճշարտություն է: Եվ բավական է նշել միայն այն փաստը, որ մենք՝ տեղացիներս, Շուշիի շրջակայքում գտնվող նշված ութ քրիստոնեական գերեզմանատներից միայն երկուսի մասին գիտեինք, այն էլ մակերեսորեն, միաժամանակ մնալով անտարբեր նրանց վիճակի նկատմամբ:

Յետազոտության ժամանակ ծանոթանալով հին գերեզմանատների ներկա վիճակին, եկա այն եզրակացության, որ երկու հազարամյակից

ավելի գոյատեւած, միշտ անուշադրության մատնված, մեզ հասած զարդաքանդակներով, տարբեր ձեւի խաչերով ու պատկերներով սրբատաշ գերեզմանաքարերը ժամանակի ընթացքում բնության տարերքների կողմից կբայքայվեն, կջնջվեն նրանց արձանագրությունները, որոնցից շատերն այժմ էլ դժվար ընթեռնելի են (որոշ քարերի վրա լրիվ անընթեռնելի են): Ի վերջո, կգա մի ժամանակ, երբ հնարավոր չի լինի ոչ միայն վիճագրերը ցույց տալ, այլեւ՝ քարերը, քանի որ ներկայիս վիճակն այդ է հուշում: Միայն քաղաքի Երեւանյան դռների հարավ-արեւմտյան կողմի գերեզմանատան տարածքում Գյավուրի սարից մի հսկա ժայռաբեկոր է թեքված ու, վաղ թե ուշ, փլվելով գերեզմանատան համարյա կենտրոնական մասում, հարյուրավոր շիրմաքարեր կթողնի իր բեկորների տակ:

Գաղտնիք չէ, որ խորհրդային իշխանության 70 տարիների ընթացքում ոչ միայն բաց երկնքի տակ գտնվող այս թանգարանը, որ Սփյուռքից եկողներին շատ է զարմացնում, չի բարեկարգվել, այլեւ՝ տարբեր եղանակներով վնաս է հասցվել, ավելի ճիշտ՝ ավերվել է:

Քաջատեղյակ ենք, որ անողոք ժամանակները (1905-06, 1918-20թթ.), ինչպես նաեւ բարբարոս թուրքի սրբապիղծ ծեռքերը կործանել են Շուշի քաղաքում հայի կերտած թանկարժեք կոթողները, գեղեցիկ եկեղեցիները՝ կառուցված հոյակապ ճարտարապետական ոճով, սքանչելի խաչերով մահարձանները: Այդ են վկայում մի շարք հանգամանքներ: «Ձաստավա» կոչվող տեղամասի գերեզմանատան տարածքով անցկացվել է ավտոճանապարհի դեպի անտառ, քաղաքի հյուսիսային կողմի գերեզմանատան տարածքում, աղբբեջանական իշխանությունների թողստությամբ, 1960-80-ական թվականներին կառուցվել են երկու ճաշարան, մեկ խառն ապրանքների, մեկ շինանյութերի խանութ՝ իր պահեստով, երկու ավտոնորոգման եւ մեկ ավտոդղերի նորոգման պահեստներ՝ որպես շինաքար օգտագործելով շիրմաքարերը: Ավելի ահավոր ու ողբերգական է Ղազանչեցոց եկեղեցու հարավ-արեւելյան կողմում գտնվող քաղաքի ամենաափինը հանդիսացող հայկական գերեզմանատան վիճակը: Տարիներ շարունակ շիրիմների վրա այս տարածքում տասնյակ տներ է կառուցել, որ ապրի, երեխաներ ունենա ու դաստիարակի «ինտերնացիոնալիզմի» ոգով, պետական ոչ մի մարմին չէր տեսնում:

Երբ ահագին տարածք զբաղեցնող այս սրբավայրը իրեն հագիվ էր զգացնել տալիս (սակավաթիվ շիրմաքարեր են պահպանվում թառույնյանցների գերդաստանի հանգուցյալների շիրիմներին, այն էլ կիսաջարդ, որոնց թվում նաեւ Մերձավոր Արեւելքի 18-րդ դարի հայտնի գրա-

գիր (միրգա) Սուրաբի Թառունյանցի շիրմաքարը) շուշիաբնակ Անանյանը 28.04.1982թ. նամակ է գրում Ամենայն Չայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինին: Նամակն այժմ գտնվում է իմ ձեռքին: Ըստ բովանդակության, այն ոչ դիմում է, ոչ նամակ, այլ մի յուրատեսակ աղերսագիր:

Ներկայացնում եմ մի հատված այդ նամակից. «...Գերեզմանոցի շուրջն ամեն կողմից անհատական մարդիկ բնակելի շենքեր են կառուցում, տապանաքարերից շատերը մնացել են տների բակերում. քանդուկոտրատում-փչացնում են: Տապանաքարերից շատերը վայր են գցել իրենց հիմնաքարերից, նրանց տեղը աղբանոց է դարձել... Դարգելի Սուրբ Չայր, իմ կարծիքով բոլոր ազգերն իրենց պապական հնությունները պահպանում են անհապաղ: Չեն երկարացնում. կարծեմ պարզ կլինի, միայն խնդրում եմ, եթե հաճելի լինի, ուղարկեք Ձեր կողմից, կամ հնության պահպանության կոմիտեից հատուկ լիազորված մարդ, տեղում ուսումնասիրելու...»: Նշված նամակը հայտնվել է Չայոց եկեղեցու խորհրդում, որտեղից խորհրդի նախագահ Ա.Չարությունյանի ստորագրությամբ ուղարկվել է ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմա-մշակութային հուշարձանների պահպանման եւ օգտագործման վարչություն՝ մեկ նախադասության ուղեկցությամբ. «Կաթողիկոս Վազգեն Առաջինի ցանկությամբ Ձեր տնօրինությանն ենք ուղարկում քաղաքացի Անանյանի ապրիլի 28-ի նամակը»: Ավելացել են եւս մի քանի մակագրություններ ու ավարտելով «շուրջերկրյա» ճանապարհորդությունը, շուշիաբնակ Անանյանի նամակը վերադարձել է Շուշի, որտեղ հատուկ ծրագրով վերացվում էր այն ամենը, ինչ հայկական է: Այսօր հիմնովին վերացված են քաղաքի Կուսանաց վանքը՝ կառուցված 1816թ., Բահաթրյանների գերդաստանի միջոցներով (ըստ մենաստանի 99-ամյա կույս եվայի շիրմաքարի արձանագրության, մայրապետները եղել են քույրեր Դեփսիսն եւ Վարվառա Բահաթրյանները, Ազուլեցոց Սուրբ Աստվածածին (կառուցված 1822թ. Թառունյանների բարեգործությամբ, որտեղ 1822թ. մինչեւ կյանքի վերջը իր՝ հոգեւորականի ծառայությունն է մատուցել Ստեփանոս Քահանան, ծնվ. 1776թ. մայիսի 8-ին, մահացած՝ 1871թ. փետրվարի 16-ին), Մեղրեցոց Սուրբ Ամենափրկիչ միաբանական (կառուցված Մահտեսի Չախունյանցի միջոցներով, 1833 թվականին, որը փաստող՝ արձանագրությունն ասում է. «Հանգիստ բնիկ թաղլարեցի Դանիել Քահանայի տեր Դանիելեանց, որ է եղբայր Թադեոս վարդապետի յաջորդի վիճակի Գանձակու եւ միաբան սբ ածածնայ եկեղեցուց, մեղրեցուց Շուշի քաղաքի, որ ի հս-

կի 40 ամյա փոխեցավ առ քե ի 19 դեկտորի 1878 ամի» եւ ռուսական եկեղեցիները: Լուրջ վնաս է եղել հասցված «Սուրբ Մկրտիչ» (Կանաչ ժամ, կառուցված 1847թ.) եւ Ղազանչեցոց «Սուրբ Ամենափրկիչ» եկեղեցին, կառուցված 1886թ., որոնք վերանորոգվել են, սակայն, չգիտես ինչու, Ղազանչեցոցի պատին գրված արձանագրության մեջ նշված է, որ իբր վերակառուցվել է:

Այսօր չունենք ճարտարապետ, որ ունենա Սիմոն Տեր Չակոբյանցի ձեռագիրը: ճարտարապետ, որ հեղինակն է եղել Ղազանչեցոցի: Անունը գրված է եկեղեցու բեմաճակատին, իսկ շիրիմը գտնվում է Երեւանյան դռների հին հայկական գերեզմանատան տարածքում: Այստեղ են հողին հանձնված եկեղեցու առաջին հոգեւոր առաջնորդ Ավետիս Խաչատուրի Երամիշյանցը (01.01.1820-03.01.1903թթ.), գերիմաստ վարժապետ, խաչակիր Չարություն ավագ քահանա Չակոբ բեկի Մելքոնյանցը՝ մահացած 14.08.1893թ., մեծ գիտնական-վարժապետ Գրիգոր ավագ քահանա Տեր Ավագյանցը՝ մահացած 11.02.1874թ., 58 տարեկան հասակում: Քաղաքի հյուսիսային կողմի հին գերեզմանատանն ի հայտ բերված շիրմաքարի արձանագրությունը վկայում է, որ հողին է հանձնված Գերմանիայում կրթված աստվածաբանության դոկտոր, 1890-1900թթ. Արցախի թեմական դպրոցում եւ Գեւորգյան ճեմարանում դասավանդած Արշակ Ղազարի Տեր-Միքայելյանը (01.02.1864-25.06.1901թթ.): Արձանագրությունը գրված է հայերեն եւ գերմաներեն: Ըստ արձանագրության, ընդամենը 37 տարի ապրած գիտնականը եղել է տասնյակ գրքերի հեղինակ:

Շուշիի հին քրիստոնեական գերեզմանատների եւ պատմա-ճարտարապետական կառույցների արձանագրություններն այն հազարավոր անխոս վկաներն են, որ քաղաքում 18-19-րդ դդ. ապրել են 130-ից ավել հայկական գերդաստաններ ու վերը նշված համակարգերից բացի, գործել են 30-ից ավել կարեւոր նշանակություն ունեցող պահեստներ, որոնցից են՝ քարհանությունը, դարբնությունը, պայտառությունը, չլինգարությունը (փականագործությունը), ոսկերչությունը, ակնագործությունը, ժամագործությունը, աղյուսագործությունը, քարտաշությունը, զինագործությունը (ղոնդաղսագ, լուլսասագ, բարութքի, խանգալսագ), ճետը (ձեռագործություն), միսկարությունը (պղնձագործություն, կլայեկիչություն), տապաղությունը (կաշի դաբաղող), կոշկակարությունը (սապոժնիկ, բաշմաղչի), տպագրությունը, դերձակությունը, առետուրը եւ այլն:

Վիճագրերի ուսումնասիրությունը մեկ անգամ եւս հնարավորություն է տալիս ասելու, որ համարյա բոլոր արհեստները եղել են ժառանգաբար

փոխանցվող, որը շատ հանգամանքների հետ էր պայմանավորված: Նախ՝ որդին մանկուց է սկսում ընդօրինակել հորը, սովորում արհեստի ուրոշ գաղտնիքներ ու գործին առանձնահատուկ նրբություններ, ապա հայրը չէր ուզում, որ հային շատ մոտիկ ու միշտ պատվիրատուներ ունեցող մասնագիտությունները, ինչպիսիք են ոսկերչությունը, քարտաշությունն ու պղնձագործությունը, դուրս գան գերդաստանի սահմաններից: Այս փաստը հաստատվում է Շուշիի հին հայկական երկու եւ մեկ համատեղ հայ-ռուսական գերեզմանատների նորահայտ արձանագրություններով: Հայ-ռուսական համատեղ գերեզմանատանը հողին են հանձնված 13 հանգուցյալ ոսկերիչներ: Պարզվում է, որ ոսկերիչ Դանիելի մասնագիտությունը սովորել են նրա երեք որդիները՝ Արզումանը, Գրիգորն ու Հովհաննեսը, թոռները՝ Հովհաննեսի որդի Արթինը, Արզումանի որդիներ Միքայելն ու Դանիելը եւ ծոռը՝ Դանիելի որդի Հովհաննեսը: Քաղաքի հայտնի ոսկերիչներից է եղել նաեւ Դուկաս Դուկասյանը, որը եղել է նաեւ բահավաք:

Դեկորատիվ-կիրառական արվեստի տեսակ հանդիսացող ակնագործությամբ եւս զբաղվել են Շուշիի արհեստավորները, որոնք եւս, ինչպես Մերձավոր Արեւելքինը՝ օգտագործել են փորագիր թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր: Նրանց արհեստանոցներում ոսկյա մատանիներն ու այլ զարդեր լրացուցիչ զարդարվել են այդպիսի քարերով: Բարձրաստիճան հոգեւորականների համար պատրաստել են կնիք-մատանիներ եւ ակնակուռ խաչեր:

Արվեստի այս տեսակով համագործակցելով ոսկերիչների հետ, Շուշիում աշխատել է ակնագործ (թրյանտչի) Վանո Գյանչումյանցը, որի աճյունը հողին է հանձնված Երեւանյան դռների հարավ-արեւմտյան գերեզմանատանը:

Ղազանչեցոց եկեղեցու հարավ-արեւելյան գերեզմանատան տարածքում կա շիրմաքար՝ երեսին արձանագրված. «Այս է տապան Լաստապատցի Ալմաստի որդի Ասգատուրին (Ասծատուր) թվին Ռ.Մ.Է.Բ. (1751թ.)»:

Ի հայտ են բերված մի շարք արձանագրություններ, որոնց ազդեցությամբ պայմանավորված է գերդաստանների եւ ազգանունների ծագումնաբանությունը:

Օրինակ՝ «ժամհար», «բարութչի», «բարիան», «միսկար», «ղոնդաղսագ», «ճգնավոր», «կրասիլչիկ», «դալլաք», «զարգար» բառերից, որ նշանակում են արհեստ, իրենց ծագումն են ստացել ժամհարեանց,

Բարութչիանց, Քարիանենց, Միսկարենց, Ղոնդաղսագենց, ճգնավորեանց, Կրասիլնիկեանց, Դալլաքեանց, Ջարգարեանց գերդաստանների անվանումները, իսկ հետագայում՝ դարձել ազգանուններ:

Արձանագրությունները վկայում են նաեւ, որ 18-19-րդ դարերում Շուշիում գործել է նաեւ զինագործական արհեստանոց, որտեղ զինագործությամբ զբաղվել են Բունիաթյանների, Բարութչյանների եւ Ղոնդաղսագյանների սերունդները, որոնք պատրաստել են հրազեն, սառը զենքեր ու վառոդ:

Առաջատար մասնագետներ են եղել Աստվածատուր Ղուլյանցը՝ մահացած 1894թ. հունվարի 24-ին, 52 տարեկան հասակում եւ Սեփն Սարգսյանցը՝ վախճանված 1892թ., 80 տարեկան հասակում: Արձանագրությունը վկայում է, որ Աստվածատուր Ղուլյանցը միաժամանակ եղել է վաճառական:

Այս թեման հնարավորություն է տալիս հանդես գալ մեծածավալ հողավածով, ընդգրկելով շատ բնագավառներ:

Սահմանափակվենք այսբանով, քանզի հարմար է ներկայացնել առանձին-առանձին:

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԻՐԱԿԱՆՈՒՄ

*Գիտցե՞ք, քնու՞մ են գետերն ու քամի՞ն,
Սակայն չի քնու՞մ երբեք թշնամի՞ն:*

ԱՎ. ԻՍԱԴԱԿՅԱՆ

Շատ ճիշտ է և կարծես բոլոր ժամանակների համար է ասված ու մի տեսակ էլ մարտակոչ է եղել Հայրենական մեծ պատերազմի տարիներին:

Այսօր գաղտնիք չէ ոչ ոքի համար, որ պաշտոնական Ադրբեջանը պատերազմի մարտական գործողությունները տեղափոխել է գաղափարական հարթություն եւ չխորշելով ոչնչից, ձգտում է կեղծիքը որպես ճշմարտություն հրամցնելով, այս ճանապարհով հայ-ադրբեջանական հակամարտության գործում հասնել հաղթանակի:

Իմ ձեռքի տակ գտնվող բազմաթիվ փաստերից բերեմ օրինակներ, որոնցից պարզ երեւում է, թե հեղինակներն ինչպես են ձգտում մոլորության անդունդ տանել նախ՝ սեփական ժողովրդին, ապա՝ միջազգային հանրությանն ու էլ ավելի շիկացնել առանց այն էլ գերլարված ու պայթյունավտանգ ազգամիջյան հարաբերությունը:

Այսպես՝ 25.12.2004թ.-ին Բաքվի ռադիոյով 40 րոպե տևած ադրբեջաներեն հաղորդման ժամանակ, որ միայն մեր՝ հայերիս մասին էր խոսվում, պատմաբան Իսրաֆիլ Մամեդովը (ծնված Հայաստանում, բարձրագույն կրթություն ստացած Երևանում) պահանջում էր, որ Ձանգեզուրից ու Ղարաբաղից գնացած ադրբեջանցիները գրեն իրենց նախկին բնակավայրի պատմությունը, որպեսզի շուտափույթ տպագրեն: Անհրաժեշտ ֆինանսական միջոցներ կան: Առանձին խոսվեց Շուշիի մասին: Պատասխանելով հաղորդավարուհու՝ Ալմազ Ջաֆարովայի հարցին, պատմաբանն ասել է. «Այո, Ալմազ խանում, առաջին հերթին Շուշիի պատմությունը պետք է գրենք: Ներկա դրությամբ Շուշիի ստույգ պատմությունը գրված վիճակում չունենք: Այս հարցը պետք է մտահոգի բոլորին»: Գուցե հետո զոջացել է, բայց եւ այնպես ճշմարտությունն է ասել ադրբեջանցի պատմաբանը:

02.05.2005թ.-ին «Зеркало» թերթում ոմն Ռաֆայել Հուսեյնովի պատրաստած ու տարածած՝ «Հայաստանի հանրապետական քաղաքականությունը՝ ուղղված ադրբեջանցիների գենոֆոնդի եւ պատմական հուշարձանների խեղաթյուրմանը» գրության մեջ, որը փաստաթուղթ համարել չի

էլ կարելի, գրված է. «Լեռնային Ղարաբաղում անհնար է գտնել մի հայկական գերեզմանատուն, որ 160-ից ավել տարիք ունենա»: Ո՞ր խեղաթյուրման մասին է խոսքը: Մի՞թե հնարավոր է չեղածը խեղաթյուրել, այն էլ այն դեպքում, երբ թուրքիան առ այսօր զբոսաշրջիկներին ցուցադրում է Բյուզանդական կայսրության ու վրան կիսալուսիններ ամրացրած Անիի կոթողները: Հնարավոր կլինի հավատալ, եթե հնարավոր լինի ձիերով ճարտարապետական կոթողներ բերած լինեին Կովկաս, ճարտարապետ չունենալով հանդերձ:

Եթե Ռաֆայել Հյուսեյնովն ու պատմաբան Ի. Մամեդովն իմանային, որ Շուշիի մասին կան ի հայտ եկած գրականություն ու կարելու պատմական աղբյուր հանդիսացող շիրմաքարերի արձանագրություններ, որոնք վկայում են, որ հայկական գերդաստաններ այս քաղաքում ապրել են 1600-ական թվականներին, դարձյալ այսպես կգրեին, քանի որ ուզում են իրենց ազգի համար չեղածից պատմություն գրել: Չեն ուզում ընդունել, որ չի կարելի եւ հնարավոր էլ չի անտեսել փաստեր, որ Մերձավոր Արեւելքում ու նրա սահմաններից դուրս ճանաչում գտած գերդաստաններ են ապրել այստեղ: 1600-ական թվականների երկրորդ կեսին Շուշիում է եղել հայտնի առեւտրական, պարսից շահի մերձավոր Հովհաննես Մելքոն խանի գերդաստանը: Այստեղ է ծնվել 1700 թվականին նրա միևուճար որդին՝ բժիշկ Հակոբը, որն ունեցել է 3 արու գավակ՝ Աղանուր Մելքոն, Տիգրան Մելքոն եւ Աբրահամ Մելքոն: Արխիվային փաստաթղթերի հիման վրա կազմված է գերդաստանի տոհմածառը, որտեղ նշված է 10 սերունդների անուններ: Գերդաստանի մասին գրված գրքում, որ կոչվում է «Միրզա Մելքոն խան», հեղինակը գրում է. «Մելքոնի, Մելքոն/ւ/մի, Մելքոնի ընտանիքը բնիկ հայկական ընտանիք է Ղարաբաղ (Ձանգեզուր) Հայաստանի ռեզիդենտ» (տե՛ս, Համիդ Ալգար, «Միրզա Մելքոն խան», անգլերեն, Լոս-Անջելես, ԱՄՆ, 1973թ.): Լավ է հեղինակը ոչ հայ է, ոչ էլ ուրիշ քրիստոնյա, թե չէ կկարծեն իրենց գրածի նման հորինված է:

Համարյա նույն ժամանակաշրջանից ի վեր քաղաքում բնակվել են Մելիք-Շահնազարյանները, չնայած որոշ աղբյուրներում նշված է Ավետարանոցի (Ձանախչի) մասին: Քաղաքի՝ Գյավուրի սարից դեպի արեւելք, մոտ 500 մ² տարածքում 22 սենյակից բաղկացած առանձնատուն են ունեցել (տե՛ս, Ջարեհ Մելիք Շահնազարով, «Ղարաբաղյան զինվորի օրագրից» գիրքը, անգլերեն, Մոսկվա, 1995թ.):

Շահնագարյանների այստեղ բնակվելու փաստն է հաստատում քաղաքի Երեսնյան դռների հարավ-արեւմտյան կողմի հին հայկական գերեզմանատան կենտրոնական մասում մեծ տարածք զբաղեցնող տոհմական գերեզմանոցը, որտեղ կան ութ տասնյակից ավելի շիրմաքարեր: Այստեղ են ապրել Մելիք-Յոսեփինի որդին՝ դիվանի (դատարանի) կառավարիչ, իսկ հոր մահից հետո, 1736 թվականի հուլիսի 17-ից՝ Վարանդայի Մելիք Շահնագար 2-րդն ու իր ժառանգները: Գերդաստանի շատ հայտնի սերունդների հետ այս քաղաքում է ծնվել Միր Դավիթ Մելիք Շահնագարովը, որը 1801-1829թթ. եղել է բանագնաց (դեսպան) Ֆրանսիայի եւ Պարսկաստանի համար միաժամանակ: Գիտեմ, այս օրինակի համար ինձ կշտամբողներ կգտնվեն ու կասեն՝ նա մեր թշնամին է եղել, Շուշին ծախել է (չափագրել են՝ ընդամենը 600 հա տարածք է զբաղեցնում): Իսկ քի՞չ կոլխոզի նախագահներ ենք ունեցել նույն Շուշիի, Յաղուբի, Մարտունու եւ մյուս շրջաններում, որ մի քանի անգամ շատ տարածք են «նվիրել» Լաչինի, Ջաբրահիլի եւ Ֆիզուլիի շրջաններին: Եկեք այս հարցում մի կողմ դնենք մեր համառությունը եւ լինենք ողջախոհ: Շահնագարյաններին խաղից դուրս հայտարարելը կամ թողնելը ձեռնտու է հենց Ադրբեջանին: Չունեն մի աղբյուր, որում գրված լինի, որ Շահնագարյանները ապրել են Շուշիում եւ ունեն հսկա տոհմական գերեզմանոց: Եթե նշեին, չէին կարող քաղաքի հիմնադրումը անհիմն կերպով վերագրել Միրզա Ջամալ Ջավանշիրի խոսքերով ասած, չափավու (ղաչաղ-ավազակ) Փանահ Ալուն, որի ազգային պատկանելությունն էլ հայտնի չէ:

Իմ ձեռքի տակ է Մոսկվայի Արեւելագիտության ինստիտուտի արխիվից ստացված հրամանագրի պատճենը պարսկերեն ու նրա թարգմանությունը ռուսերեն: Ռուսերենից ներկայացնում եմ մի հատված.

К высочайшему престолу Вашего Августейшего Величества повергается со всеподданнейшею просьбу Еген управляющий пятью Армянскими частями Карабаха. Так как Мелик Гусейн, мелик округа Вереиды сделался жертвою за Августейшее Ваше Величество, и Шахназар, его сын, имеет способность быть владельцем в место отца, то всеподданнейше прошу пожаловать Высочайшую грамоту и утвердить его, Шахназара, по прежнему Закону, Меликом упомянутого округа, дабы он занимался управлением и обязанностями Дивана.

Մելիք Եգանի այս ներկայացմանը հաջորդել է Նադիր շահի վերը նշված թվագրությամբ հրամանագիրը՝ Շահնագարին Վարանդային Մելիք նշանակելու մասին:

Ղարաբաղի բոլոր հին գյուղերի գերեզմանատներում հանդիպում ենք բազմաթիվ խաչքարերի եւ արձանագրությունների՝ գրված շիրմաքարերի վրա, որոնք վկայում են այն մասին, որ Քուռ եւ Արաքս գետերի միջին հոսանքը զբաղեցնող բնակավայրերում սկսած Կրասնի մոսուից ու Խուղաֆիրինի կամրջից (համապատասխանաբար) մինչեւ գետերն իրար միախառնվելու տեղը (Ջարդոբ) հայերն ապրում են ավելի վաղ շրջանից:

Այսքանի առկայության դեպքում, երբ ամեն ինչի ականատես է մարդը, 2005թ. դեկտեմբերի 14-ին, Բաքվում Ադրբեջանի Գիտությունների Ակադեմիայում գիտնականների հետ ունեցած հանդիպման ժամանակ հանրապետության նախագահ Իլիամ Ալիևը կոչ է արել, որպեսզի գիտնականները միջազգային հանրությանը համոզեն, որ իբր հայերը տարածաշրջանում հայտնվել են 19-րդ դարում: Նա միեւնույն ժամանակ խոստացել է չխնայել ֆինանսական միջոցներ այդ նպատակով օգտագործելու համար:

05.01.2006թ.-ին ժամը 14:45-ին Բաքվի ռադիոյով հանդես եկած քաղաքական տեսաբան Գարա Մամեդլին մեր նկատմամբ ցուցաբերելով «հոգատարություն», նշում է.

1. Եվրախորհրդի համանախագահ՝ Յուրի Մերզլյակովը հայերի նկատմամբ կողմնապահ է, պետք է հայտնենք մեր պաշտոնական դժգոհությունը:

2. Պետք է հասնենք նրան, որ Հայաստանի զինված ուժերը հեռանան Ղարաբաղից:

3. Ռոբերտ Քոչարյանը այն եղանակով է իշխանության հասել, ինչ եղանակով հասել էր Լեւոն Տեր-Պետրոսյանը (թե ի՞նչ եղանակ է, որ ինքը գիտե, իսկ մենք՝ ոչ: Յ.Յ.):

4. Խաղաղապահ 10.000-անոց զորք մտցնել Ղարաբաղ:

5. Հայերը ետ հանձնեն գրավյալ յոթ շրջանները, որից հետո կորոշենք Ղարաբաղի կարգավիճակն ու որտեղով նրանց միջանցք տալու հարցը:

Շատ էլ լավ է ասում: Մեր տունը կամավոր հանձնենք Գարա Մամեդ-լուն ու սպասենք, խնդրենք, որ մեր տան միջով մեզ միջանցք տա: Բա ի-զո՞ւր են հենց էն զլխից «Լաչինի միջանցք», «գրավյալ տարածք» եւ այլ տերմիններ շրջանառության մեջ մտցրել, իսկ մենք էլ սիրով ընդունել ենք:

Եթե հետադարձ հայացք ձգենք, կտեսնենք, որ դարեր շարունակ էս-տաֆետն իրար փոխանցելով, միշտ գործում են նույն ձեռագրով ու գենե-րին հավատարիմ: Դարեր առաջ կատարվածները թողնելով մի կողմ, հի-շենք 1905-06թթ., 1915թ., 1918-1920թթ. եւ 1988-94թթ. կատարվածները: Ի՞նչ է փոխվել: Համարյա ոչինչ, բացի մեր ժողովրդի դառնություններով լեցուն հուշամատյանի ստվարացող ծավալից:

Այս հողի յուրաքանչյուր մետրին խառնված է մեր արյունը: Այն պատ-կանում է միայն մեզ եւ միայն մեր ժողովուրդն է իրավասու իր վերջնական ու վճռորոշ խոսքն ասել նրա հետ կապված բոլոր հարցերում: Ոչ ոք բարի նպատակներով ոչ օվկիանոսի այն, ոչ էլ այս ափերից ոտք չի դնելու մեր հողին:

Սա վերջին պահն է: Նման պահը չախմատում կոչվում է ցուգ-ցվանգ: Սխալ քայլ՝ մատ: Բոլորս պետք է գործենք ծայրաստիճան զգույշ ու մտա-ծելով մեր սերունդների ապագայի մասին:

ԱԶԳԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ Է

«Ազատ Արցախ» թերթում (07.02.06թ.) ընթերցեցի հարցազրույց բա-նասիրական գիտությունների թեկնածու, բանաստեղծ, արձակագիր Ժան-նա Հակոբյանի հետ: Անկեղծ ասած, հարցազրույցը հետաքրքրեց ինձ: Հատկապես իմ հետաքրքրությունը գրգռեց հետևյալը. «Ընդհանրապես, գրողի ստեղծագործական ընթացքը անկանխատեսելի է»: Մտահղացումս հանկարծակի եկավ: Անցյալ տարի՝ մայիսին, երբ Շուշիում նշվեցին Մու-րացանյան օրերը, մասնակցեցի հանդիսություններին: Քաղաքի մառախ-լապատ, անձրեային օրերը, հաղթանակած Շուշին ինձ համար խթան հանդիսացան՝ հետ նայելու դեպի Արցախի՝ հայոց հինավուրց քաղաքի պատմական անցյալը, եւ ես վերադառնալով Երեւան, հետեւեցի իմ ա-րյան կանչին»:

«Պետություն եւ գործարարություն» թերթում (հոկտեմբեր 2005թ.) ըն-թերցեցի մի հատված ապագա պատմավեպից, որի վերնագիրն է՝ «Շուշին որպես ստրկացման գործիք»: Ուրիշների համար չգիտեմ՝ ինձ համար տարօրինակ ու զարմացնող էր ընտրված վերնագիրը, ավելի զարմանալի էր վերնագրի տակ շարադրվածը:

Սկսած 1988թ.-ից, զբաղվում եմ Շուշիի պատմա-ճարտարապետա-կան հուշարձանների, քաղաքի հայկական ու ռուսական գերեզմանների վիճակների ուսումնասիրությամբ: Պարզապես ցանկանում էի իմանալ, թե ինչ են ասում արձանագրությունները մեր նախնիների մասին: Հնարավոր չէ պատկերացնել, որ ընդամենը 600 հա տարածություն զբաղեցնող մի փոքրիկ քաղաք կարող է իր շրջակայքում ունենալ ինը գերեզմանատուն, որոնցից վեցը հայկական, մեկը՝ հայ-ռուսական համատեղ, մեկը՝ ռուսա-կան, մեկն էլ պարսկական, որոնք խոսում են 17-19-րդ դդ. մասին:

1920-ական թվականներից ի վեր գործող հայկական եւ ադրբեջանա-կան գերեզմանատները չունեն արձանագրություններ, ուստի չեն տալիս ոչ մի տեղեկություն: Հազարավոր արձանագրություններ հնարավորու-թյուն են տալիս պարզ ու հստակ պատկերացում կազմել ինչպես հայերիս նախնիների զբաղմունքի, այնպես էլ 18-19րդ դդ. կարեւոր պատմական դեպքերի ու համաժողովրդական նշանակություն ունեցող կառույցների մասին: Եվ այնպես է ստացվել, որ սկսել եմ հատուկ ուշադրությամբ ըն-թերցել նաեւ այն ամենը, որ գրել են տարբեր հեղինակներ ու ճանապար-հորդներ Շուշիի մասին:

Ինչպես հարցազրույցն, այնպես էլ ապագա պատմավեպից հատվածն ընթերցելուց, խորհելուց ու զարմանալուց հետո եմ ուզում ասել խոսքս, քանի որ նշված հատվածը մի քիչ սարքովի գործի «մեղադրական եզրակացության» է նման, մնում է Արցախի եւ հայության արցախյան հատվածի համար «դատավճիռ» կարդալ:

Օտարները մեր կենսագրությամբ ավելի շատ են հետաքրքրվել, քան մենք: Անուն առ անուն չեմ նշում, սակայն համաձայնվեմք, իհարկե, եթե Շուշիի մասին ընթերցել եք տարբեր հեղինակների գրածը, ապա աչքի է զարնվում այն, որ բոլորն էլ քարկոծում են Մելիք Շահնազարին, այն էլ աղավաղումներով: Մի հեղինակ ներկայացնում է որպես եղբայրասպան ու պատվերով եղբոր կնոջն ու երեխաներին կոտորել տվող, ոմանք, որպես հորեղբորը սպանող (երկու դեպքում էլ մելիք դառնալու միտումով): Ոչ մի հեղինակ չի նշում ինչպես դեպքի տարեթիվը, այնպես էլ եղբոր կնոջ ու երեխաներից գոնե մեկի անունը: Կամա թե ակամա, սկսում ես կասկածել նշված վարկածների վրա: Թե ինչո՞ւ՝ կասեմ ստորեւ:

Բոլոր հեղինակներն էլ նշում են, որ Շահնազարյանները տեղափոխվել են Գեղարքունիքից ու հաստատվել Ավետարանոց (Չամախչի) գյուղում, սակայն Շուշիում բնակություն հաստատելու մասին ոչ ոք չի նշում:

Շահնազարյանները Շուշիում ունեցել են 22 սենյակից բաղկացած պարսպապատ ապարանք, որը զբաղեցրել է մոտ 500 քառ.մ. տարածք: Ըստ կողմնորոշող մանրատեղանունների (Քարին տակ գյուղը տանող հետիոտնի ճանապարհ, Պուլուր թուն՝ Կլոր բլուր, Ջաստավա, որ այսօր էլ գործածական են), ապարանքը գտնվել է քաղաքի հարավային կողմի ժայռից դեպի Քարին տակ գյուղը տանող արահետից մոտ 200 մ. դեպի արեւմուտք: Չնայած 1918թ. մարտի 23-ին հայ-թուրքական (թաթարական-տաճկական) երկրորդ ընդհարման ժամանակ այն եւս իրդեհվել է թուրքերի կողմից, սակայն որոշ հետքեր պահպանվում են: Գերդաստանն ունեցել է երկրորդ տուն եւս՝ Ղազանչեցոց եկեղեցուց քիչ դեպի արեւելք (տե՛ս, Ջարեհ Մելիք-Շահնազարյան, «Ղարաբաղյան զինվորի օրագիրը», Մոսկվա, 1995թ.):

Ենթադրեմք, հատուկ հանձնարարությամբ ճանապարհորդողներն ու օտարները չգիտեին, թուրքը չգիտե՞ր, որ Շահնազարյանների նման 1600-ական թվականներից ի վեր այստեղ ապրել ու առևտրով զբաղվել է եղել Միրզա Մելքոն խանի գերդաստանը (տե՛ս, Համիդ Ալզար, «Միրզա Մելքոն խան», անգլերեն, ԱՄՆ, Կալիֆորնիա, 1973թ.): Բաքվաբնակ շու-

շեցի Ֆ. Շուշինսկին չգիտե՞ր, որ իր ռուսերեն «ШУША» գրքում տեղադրված «мужинец из благородной семьи» լուսանկարից ընթերցողին նայողը հայտնի առևտրական Ծատուր Մելիք-Շահնազարյանի որդին՝ Պարսկաստանում Ֆրանսիայի եւ միաժամանակ Ֆրանսիայում Պարսկաստանի բանագնաց Միր Դավիթն է: Չգիտե՞ր, որ աշուսի երկու գործարանները պատկանում էին Թադեոս Թամիրյանցին: Չգիտե՞ր, որ զինագործական արհեստանոցը պատկանում էր Աստվածատուր Դուլյանին: Չգիտե՞ր, որ քաղաքի ժամագործներն ու ոսկերիչները միայն հայեր էին ու ոսկերիչների թիվը երկու տասնյակից անց էր: Շատ լավ էլ գիտեր: Պարզապես չի գրել, որպեսզի աշխարհին հավատացնի, թե իբր Շուշին հայեցի չէ: Իսկ մե՞նք: Մենք էլ լռել ենք ու հնարավորություն տվել, որպեսզի 1920 թվականից հետո աղբբեջանցի գրվող թաթարը Մոսկվա ներկայացվող փաստաթղթերի 1-ին սյունակում ներկայացնի «Коренные жители», երկրորդ տեղը տա հային, ռուսին ու մյուսներին գրի՝ «прочие»:

Շուշեցի հայը լավ գիտեր ապագայում կատարվելիքը, որի համար էլ «եղածը պահ էր տվել» շիրմաքարերին, որոնք իրենց լուռ վկայությամբ շատ անճշտություններ հերքում ու պահանջում են վաղուց շրջանառության մեջ գտնվող մի շարք տվյալների ճշգրտում: Առկա են արձանագրություններ եւ արխիվային փաստաթղթեր, որոնք միանգամայն այլ վկայություն են տալիս Վարանդայի մելիք Հուսեյնի իրավահաջորդի՝ Շահնազարի մասին: Ըստ փաստաթղթերի տվյալների, 1736թ. հուլիսի 17-ին՝ մելիք Հուսեյնի մահից հետո Դիզակի մելիք Մելիք Եգանի (նրա միջոցով էին կատարվում հինգ մելիքությունների գործնական գրությունները պարսից շահին) գրավոր ներկայացման հիման վրա, Նադիր շահի հրամանագրով, Վարանդայի մելիք է նշանակվել դիվանի (դատարանի) կառավարիչ Շահնազարը, որը պաշտոնավարել է մինչեւ 1791թ. (տե՛ս, Նադիր շահի հրամանագիրը, Արտգործնախարարության ասիական բաժին, Մոսկվա):

Երբ կողք-կողքի ենք դնում Շահնազարի մասին վերը նշված երեք վկայությունները, որոշ կասկածներ են առաջանում սպանության դեպքերի վերաբերյալ: Ինչպես նշվում է, եթե նա սպանած լիներ հորեղբորը, պետք է սպանած լիներ Մելիք Հուսեյնին, որի հետ ինքը եկել էր Վարանդա (տե՛ս, Ն.Ախունդով, «Գարաբաղնամալար», աղբբեջաներեն, էջ 110, Բաքու, 1991թ.): Իսկ ինչպե՞ս ասպարեզ եկան Մելիք Եգանի գրությունն ու Նադիր Շահի հրամանագիրը՝ 7 նախարարների կնիքով կնքված, որում շեշտվում է, որ Շահնազարը Մելիք Հուսեյնի որդին է:

Որոշ աղբյուրներում, ինչպես նաև հողվածում նշվում է. «Մեկ գիշերվա մեջ իր ձեռքով սպանեց հարազատ եղբորը՝ մելիք Յովսեփին եւ կոտորել տվեց նրա ընտանիքը: Այդպիսով նա դարձավ Վարանդայի մելիք» (տե՛ս, Րաֆֆի, «խամսայի մելիքություններ»): Իսկ Շահնազարյանների տոհմական գերեզմանոցում կա շիրմաքար՝ արձանագրված.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՔԱԻԶ ԽԱՆՈՒՄԻՆ ԻՍԱՀԱԿԵԱՆ ՈՐ ԷՐ ԿԻՆ ՅՈՎՍԵՓԵԿ
ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅԻ, ՎԱԽՃԱՆԵՑԱԻ Ի 18 ԴԵՔՏԵՄԲԵՐԻ 1894 ԱՄԻ
72 ԱՄԱՑ. ԾՆՎ. 1822

Այստեղ են նաև նրա 1-ին կնոջ՝ Զավահիր Գեւորգի Յուզբաշյանցի (վախճ.1862թ.) դուստրերի՝ Թարիփի (վախճ.1845թ.) եւ Նատալիայի (1858-1862թթ.) շիրմաքարերը:

Արձանագրություններ, որոնք եւս կասկած են առաջացնում: Ենթադրենք արձանագրություններն այլ Յովսեփ Շահնազարյանի ընտանիքի մասին են խոսում այն ամուսնով, որ անձնանունը կարող է կրկնված լինի: Իսկ ի՞նչ կարող ենք ասել, որ Շահնազարյանների գերդաստանում կային նաև Յովսեփի որդի Սամսոն եւ գնդապետ Միքայել Մելիք-Շահնազարյան, ծնված 1867թ. մարտի 22-ին, Շուշիում (տե՛ս, Միքայել Յովսեփի Մելիք-Շահնազարյանի ծառայության ցուցակը, արխիվ, Մոսկվա): Գուցե Յովսեփի անունը հենց այնպես շահարկա՞ծ է:

Ապագա վեպի վերոհիշյալ հատվածում նշվում է. «...պարսպապատվեց շոշեցիների, ապա՝ Ղարաբաղի հայկական զինված ուժերի սպարապետ Ավան Յուզբաշին Շուշին չի պարսպապատել, այլ՝ Յոնուտի կիրճի ձախ ափին, լեռան վրա 700 քառ. մ. տարածք զբաղեցնող ապարանք է կառուցել, որտեղ յուր ժամանակին Դիզակի մելիքի հետ ընդունել են Պետրոս 1-ի պատվիրակ, Պետերբուրգում անուն հանած առևտրական Իվան Կարապետին, ապա տարածաշրջանը զինված ուժերի սպարապետի պաշտոն չի ունեցել: Եղել են հարյուրապետներ, որոնք էլ կրելով Մերձավոր Արեւելքի ազդեցությունը, կոչել են Յուզբաշիներ: Սպարապետ ունեցել է Սյունիքը: Շարունակելով նշված միտքը, հեղինակը գրում է. «Այսպիսով Փանահ խանին մնում էր միայն աշտարակների կառուցումն ավարտել եւ այնտեղից իշխել Ղարաբաղի լեռնաշխարհին: 1754-56թթ. վերջնականապես ավարտվում է բերդ-ամրոցի կառուցումը...»:

Մերձավոր Արեւելքի մի շարք գրագիրների կողմից նշվում է, որ Շուշիի բոլոր «խոցելի» տեղերը սովորական պատ է եղել՝ շարված Փանահ

խանից առաջ էլ, հետո էլ: Շուշիի բերդապարիսպը, որպես յուր ժամանակի ռազմա-ինժեներական կառույց, կառուցվել է 1805թ. ցարական Ռուսաստանի տեղում հաստատվելուց հետո: Այդ մասին Ն. Ախունդովի նշված գրքում գրվածը թարգմանաբար մեջբերում են. «Յգոր ռուսական կայսրությունը քանդել է պատը, մասնագետների եւ հմուտ վարպետների միջոցով կառուցել նոր ամուր բերդ» (տե՛ս նույն տեղում, էջ 200): Նույն գրքում պարսից գրագիր Միր Մեհդի Խազանի «Քիթաբի-թարիխի Գարաբաղի» գրքից մեջբերելով, նշում է. «1799թ. հնում շարված պատերը փլվել են լրիվ: Յետագայում ռուսական իշխանության ժամանակաշրջանում, գիտուն ու գործին տեղյակ ինժեներները, պլանի համաձայն, նախկին պատերի չափսերը մեկ վերստից (մոտ 1.5կմ) ավելացրել են պատերի ընդհանուր երկարությունը եւ նախկինից ավելի ամուր պատ շարել»:

Շուշիի բանտի մասին գրված է. «Նա (խոսքը Իբրահիմ խանի մասին է, Յ.Յ.) վերանորոգեց նաև Շուշիի բերդի հարավային մասում, Կարկառի ձորի պռնկին կառուցված սարսափելի բանտը, որտեղ դաժանորեն սպանվում էին ոչ միայն Ղարաբաղի մելիքական տոհմերի ներկայացուցիչներից ու հոգեւոր առաջնորդներից շատերը, այլև ժողովրդական հերոսներ»:

Այնպես է ստացվում, որ իբր Փանահ խանը կառուցել, Իբրահիմն էլ վերանորոգել է բանտը:

Շուշիի բանտը տեղակայված է բերդապարսպի հյուսիս-արևելյան, այլ ոչ հարավային մասում: Ելիզավետպոլի նահանգապետի հրամանագրով 1860-ական թթ. կառուցվել են Ելիզավետպոլի, Նուխիի եւ Շուշիի բանտերը: Շուշիի բանտը կառուցվել է 1868թ., որի համար 2000 քառ. մ. տարածք է հատկացվել բերդից եւ նախատեսված է եղել 160 հոգու համար: Տարածքում կառուցվել է նաև հիվանդանոց: Շահագործման 1-ին տարում՝ 1869թ. այնտեղ պահվել է 200 բանտարկյալ (տե՛ս, Ադր. պետ. արխիվ, գործ 36, էջ 17): Բանտի առաջին հսկիչներից է եղել ավագ հսկիչ Եֆիմ Պետրովիչ Կիրչիկը:

Այո, պատմությունն ազգի կենսագրությունն է՝ իր բոլոր դառն ու քաղցր էջերով: Պարտավոր ենք սերունդներին ներկայացնել անվրեպ ու զգույշ, խրատ առնելով, առանց պատկերավորման՝ մի բան, որ շատ առանձնահատուկ է գրական ժանրերին: Այդ կապակցությամբ կցանկանալի Շուշիի հին հայկական գերեզմանատան կենտրոնական մասում ի հայտ եկած մի արձանագրություն ներկայացնել ընթերցողի, առաջնահերթ՝ գրչով աշխատողներիս ուշադրությանը, որն ասում է.

Ճշմարիտ խորատ է եւ ավելին չենք կարող ասել: Մեզ մնում է զգաստ կանգնել, միջին մատը սեղմել քունքի «կոճակին», նայել մեր հայրենիքի՝ ծովից ծով Հայաստանից մի պատառ մնացածի սահմանների շուրջը ու հետո միայն գրիչը սեղմել թղթին, որպեսզի չմանավենք մարգարաշտում սեփական դարպասը գրոհողի:

Արտահայտելով սեփական կարծիքս, ասեմ, որ ազգի խորացված ընդհանուր պատմավեպ հրատարակելու իրավունքը իր իրավական դաշտում պետք է պահի եւ նման գրքերը, տարածաշրջանի որ հատվածին էլ վերաբերի, հրատարակի ԳԱԱ-ն, մասնակից դարձնելով համալսարանների համապատասխան ամբիոններին, որպեսզի չասենք այս հեղինակի մոտ այսպես է, մյուսի մոտ՝ այնպես:

Զգիտեմ՝ ինչպիսին կլինի վիճակը մյուս մեկիքությունների առումով, սակայն, կարծում եմ, Շուշիի «սահմաններում» կատարված նկատումներս ապագա պատմավեպի հեղինակը հաշվի կառնի եւ մոտ ապագայում ընթերցողի սեղանին կհայտնվի ոչ մառախլապատ էջերով գիրք, չնայած այն գրելու մտահղացումը ասպարեզ է եկել հանկարծակի եւ մառախլապատ օրերի ազդեցությամբ:

1839թ. ռուսական ցար Նիկոլայ Առաջինը շրջագայության ժամանակ նկատում է, որ Գյուսիսային Կովկասում ծածանվում է կանաչ դրոշ, եւ ոմն հոգեւորական՝ Շամիլ անունով, տարածաշրջանում հռչակել է իմամ՝ ընդգրկելով լեռնականներին (հիմնականում՝ չեչենների ու լեզգիների): Կռահելով, որ վերահսկողությունը տարածքային կառավարիչ, գեներալ Ռոզենի կողմից բարձիթողի վիճակում է, ցարը նրան ազատում է պաշտոնից: Այնուհետեւ նորանշանակ կառավարիչ Գոլովինին հրամայում է բոլոր ուժերը կենտրոնացնել բարձրացված կանաչ դրոշի դեմ, որի ներքո հավաքվածները սրբազան պատերազմ էին հայտարարել «անհավատներին»:

Ինչպե՞ս կատարվեց ցարի հրամանը, եւ ինչպիսի՞ ճակատագրի արժանացավ Շամիլի իմամը: Այս մասին գուցե իմանայի, եթե Շուշիի հյուսիսային կողմի հին գերեզմանատանը չկարդայի մի գերեզմանաքարի արձանագրություն, թե Շուշիի գերեզմանատունը կամ այնտեղ տեղադրված գերեզմանաքարը ինչ կապ ունեն լեռնականների՝ 1834-1859 թվականների առաջնորդ Շամիլի հետ, կանդրադառնանք վերջում: Իսկ հիմա տեսնենք, թե ինչպես զարգացան դեպքերն ու ռազմական գործողությունները:

Գեներալ Գոլովինը, հավաքելով բոլոր ուժերը, առանձնացնում է էքսպեդիցիոն խումբ ու գեներալ Գրաբբեի հրամանատարությամբ ուղարկում ավարների Ախուլգո բարձունքը, որտեղ հիմնվել էր բողոքականների առաջնորդը՝ բերդում ունենալով մոտ 10 հազար մարդ: Գեներալի բազմաթիվ հարձակումները հաջողություն չեն բերում: Եվ նա, փոխելով ծրագիրը, պաշարում է բերդը: Երբ սպառվում է պաշտպանների պարենը, հետո էլ ջուրը, Շամիլի առաջարկությամբ ստիպված են լինում բանակցություններ վարել: Բանակցությունները վերջանում են նրանով, որ Շամիլը իր ավագ որդուն՝ Ջամալադդինին որպես պատանդ հանձնում է գեներալ Գրաբբեին: Երբ տղան արդեն իր մոտ էր, գեներալը գրոհելու հրաման է տալիս՝ հույս ունենալով, որ Շամիլը կհանձնվի հանուն 8-ամյա որդու: Սակայն Շամիլը շարունակում է մարտը ռուսների դեմ՝ բերդի պաշտպանության ժամանակ կորցնելով կնոջը, փոքր որդուն ու քրոջը: Շամիլն ավելի է զայրանում, կուտակվում է ատելությունը ռուսների նկատմամբ:

1842թ. Ջամալադդինին տեղափոխում են Պետերբուրգ, որտեղ նրա ճակատագրով զբաղվող Նիկոլայ Առաջինը ռազմական կրթություն է տալիս պատանուն՝ ցարական բանակի համար ապագա սպա պատրաստե-

լու նպատակով: Միաժամանակ նրան գրկում է հարազատների հետ նա-
մակագրական կապի իրավունքից: Տարբեր ճանապարհներով Շամիլը
տեղեկանում է, որ բավական չէ՝ Ջամալադդինը դարձել է ռուսական բա-
նակի սպա, դեռ պատրաստվում է ամուսնանալ ռուս աղջկա հետ: Դրանից
հոր կատաղությունը կրկնապատկվում է, եւ 1842թ. Յերգել լեռնային գյու-
ղի մոտ տեղի ունեցած մարտական գործողությունների ժամանակ ռուս-
ներին մեծ վնասներ է հասցնում: Վերջիններս կորցնում են մեծ թվով զին-
վոր ու սպա: Այս միջադեպից հետո հրամանատար է նշանակվում կոմս
Միխայիլ Վորոնցովը, որի հրամանատարության տակ գտնվող էքսպեդի-
ցիոն կորպուսը եւս պարտվում է, իսկ Իմամ Շամիլը մայրաքաղաքը տե-
ղափոխում է Դարգո լեռնային գյուղը: Յենց այդ ժամանակ կառավարա-
կան հրամանով Ջամալադդինին շնորհվում է կոռնետի կոչում, եւ նա ժա-
ռայության է մեկնում հեծելազորային գունդ (Լեհաստանից վերադառնա-
լուց հետո նա հաստատվել էր Տորժոկ քաղաքում): Շատ-շատերին է զար-
մացնում, որ կովկասյան իմամի ավագ որդին ծառայում է ցարական բա-
նակում: Իմամ Շամիլն ամեն կերպ որդուն վերադարձնելու ուղիներ էր
փնտրում: 1854թ. միջնեկ որդուն՝ Գագի-Մահամեդին հանձնարարում է
շարժվել դեպի Վրաստան, ձեռնարկել միջոցներ ու այնպիսի գերիներ բե-
րել, որոնց հետ հնարավոր լինի փոխանակել Ջամալադդինին: Եվ դա հա-
ջողվում է: Գագի-Մահամեդը Կախեթիայում գերի է վերցնում կառքերի մեծ
խումբ, որոնցով Թբիլիսի էին մեկնում երեխաներ ու դաստիարակներ: Խմ-
բի մեջ էին նաեւ իշխաններ ճավճավաձեն ու Օրբելին: Փոխանակման
բանակցություններն ընթացել են շուրջ մեկ տարի եւ միայն 1855թ. գար-
նան է հաջողվել այն իրականացնել: Տորժոկ քաղաքում Ջամալադդինը
պիտի ամուսնանար Լիզա Օլենինայի հետ: Ռուս աղջկա հետ որդու ա-
մուսնությունը խափանելու համար Շամիլը ոչ մի միջոցի առջեւ կանգ չի
առնում: 25-ամյա Ջամալադդինը մահանում է Դաղստանի սահմանամերձ
բարձրլեռնային Կարադա գյուղում, որտեղ «աքսորվել» ու բարձր հսկո-
ղության տակ էր գտնվում:

Իսկ ի՞նչ կատարվեց հետո: Ռազմագործողությունները շարունակում
էին զարգանալ: Այդ ընթացքում Շամիլը տեղափոխվում է Գունիբ: 1859թ.
իր պահակախբի հետ գերվում եւ ուղարկվում է Կալուգա, իսկ այնտեղից
1870թ. տեղափոխվում է Մեքքա, որտեղ եւ կնքում է իր մահկանացուն:

Որոշ աղբյուրներում նշված է, Շամիլը գերվել է, ավելի ճիշտ, հանձնվել
է Լազարեւին: Մեջբերում են. «Իվան Դավիթի Լազարեւը կռվել է Դաղստա-
նի լեռնականների դեմ: Այդ ապստամբությունը երկար տարիներ կառավա-

րում էր քաջարի Շամիլը, որը Անդրանիկի պես, դեռ կենդանության օրոք
մեծ հռչակ էր վայելում ավար եւ հարեւան ժողովուրդների մոտ: Շամիլը
հանձնվեց միայն Լազարեւին՝ գնահատելով նրա քաջությունն ու ասպե-
տությունը» (տե՛ս, Գ. Բեգլարյան, «Արցախ-Նամե», էջ 23, Ստեփ., 2002թ.):

Իսկ «Նոյյան տապան» գործակալության ռազմաքաղաքական մեկնա-
բան Դավիթ Պետրոսյանն առանց սկզբնաղբյուր նշելու գրում է. «1859թ. օ-
գոստոսին ռուսական զորքերի հարվածների տակ ընկավ Շամիլի վերջին
հենակետը՝ Գունիբը: Բարյատինսկին Շամիլի մոտ ուղարկեց հակառա-
կորդի կողմից հարգված գնդապետ Լազարեւին: Վերջինս, գնալով մենակ
եւ առանց ուղեկցող պահակախմբի, ճանաչեց Չեչնիայի եւ Դաղստանի
լեռնականների առաջնորդին: Գնդապետը դիմեց նրան հարգանքով. «Շա-
միլ, ամբողջ աշխարհին է հայտնի քո սխրանքները... Ենթարկվիր ճակա-
տագրին եւ հանձնվիր ռուս կայսեր մեծահոգությանը»: Շամիլը վստահում
է Լազարեւի խոսքին եւ գերի հանձնվում» (տե՛ս, «Վասն հայրենյաց» շա-
բաթաթերթ, 14.10.2002թ., թիվ 35 (53), էջ 15): Բոլոր դեպքերում քիչ հավա-
նական է հարվածներից «ընկած» լեռնականների մոտ անգեմ գնալը, դա
էլ այն դեպքում, երբ առաջնորդը կորցրել է մեծ թվով բարեկամներ:


Ինչպե՞ս է գերվել Շամիլը: Այս հարցին է, որ պատասխանում են Շու-
շիում հայտնաբերված գերեզմանաքարի կողերին ու երեսին գրված ար-
ձանագրությունները: Նրանք հաստատում են, որ Օրբելին ու ճավճավա-
ձեն (Պարսկաստանում Ցարական Ռուսաստանի դեսպան Ալեքսանդր
Սերգեյեւիչ Գրիբոեդովի կնոջ՝ Նինա ճավճավաձեի հայրը) գերվել են ճա-
նապարհորդության ժամանակ, իսկ վերջիններս էլ իրենց ստորագրու-
թյամբ հաստատում են, որ Շամիլին գերի է վերցրել շուշեցի փոխգնդա-
պետ Իսահակ Դավիաննեսի Դարամյանցը: Նույնությամբ՝ ներկայացնում
են գերեզմանաքարի արձանագրությունները.

ՀԱՆԳԻՍ

Հայազգի քաջ զինուորական փոխ-գնտա
պետ իսայաց Յովհաննիսյան Դրամեանց,
ծն. ի 1821 ամի եւ վախճ. ի 1886 ամի 12 Մարտի

Քաջամարտիկն իսայ յաղթական փառոք
Զինամն Շամիլ ի պարտութիւն մատնեաց
Եւ յետս դարձոյց գեներալ զընտանիս,
ճաւճաւադգե, Օրբել-վրաց իշխանաց
18-54

Իսկ գերեզմանաքարի երեսին խաչածե քանդակված են թուրն ու պատյանը, որից կախված են փոխգնդապետ Իսահակ Ղարամյանցի կառավարական պարգեւները՝ չորս խաչ ու վեց մեդալ եւ նույն արձանագրութիւնը՝ գրված ռուսերէն:



ՄԵՂՐԵՑՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ

Շուշիում կառուցված բոլոր պատմա-ճարտարապետական հուշարձանների շարքում իրենց տեղն են գրավում եկեղեցիները, որոնք թվով հինգն էին, իսկ այսօրվա դրությամբ մնացել են երեքը՝ Կանաչ ժամը (Սուրբ Հովհաննես Սկրտիչ), Ղազանչեցոց (Սուրբ Ամենափրկիչ) եւ Մեղրեցոց (Սուրբ Ամենափրկիչ) եկեղեցիները: Ժամանակի ընթացքում լրիվ ավերվել են Ագուլեցոց եկեղեցին ու Կուսանաց վանքը:

Այսօրվա դրությամբ վերանորոգված գործում են Ղազանչեցոցն ու Կանաչ ժամը, իսկ կիսավեր դեռ պահպանվում է Մեղրեցոցը, որի ներկայիս վիճակի մասին ընթերցողին ուզում են որոշ տեղեկություններ տալ:

Մեղրեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին կառուցվել է շուշեցի բարերար Մահտեսի Հախումյանցի ծախսերով 1833թ. համանուն թաղամասի կենտրոնում: Այն կառուցվել է չորս սյուների վրա, կամարածե, ձգված է եղել արեւելքից-արեւմուտք, որի չափսերն էին 24,75 x 12,70 մ: Կենտրոնական մասի սյուներից բացի պատերում եղել են վեց սյուներ, որոնք տեղադրվել են հյուսիսային ու հարավային պատերում՝ երեքական: Այն կառուցվել է սրբատաշ տեղական քարով: Սրբատաշ է եղել նաեւ եկեղեցու եռահարկ զանգակատունը: Հիմնական զանգակատներից բացի եղել է նաեւ փոքրիկ զանգակատուն՝ կառուցված եկեղեցու տանիքի մեջտեղում: Երբեմնի ճարտարապետական այս կառույցը քանդել ու դարձրել են ամառային կինոթատրոնի շենք: Եկեղեցու արեւելյան պատն ամբողջությամբ պահպանվում է, որովհետեւ այն ծառայել է որպես կինոյի էկրան: Մոտ 1,5 մ բարձրության վրա պահպանվում են նաեւ կառույցի մյուս երեք պատերը, որոնք ունեն 1,2 մ հաստություն:

Նշեմ նաեւ, որ այս եկեղեցին ոչ թե կառուցվել, այլ 1833թ. վերակառուցվել է: Մեզ հասած տեղեկությունների համաձայն, մինչեւ այդ եղել է փայտաշեն եկեղեցի հենց նույն տեղում եւ կատարել է ինչպես հոգեւոր, այնպես էլ վարչական դեր՝ իր շուրջը համախմբելով գաղթականներին:

Շուշիի Մեղրեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին իր գործելակերպով եղել է միաբանական: Իսկ ի՞նչ է նշանակում միաբանություն: Դա կրոնավորների համայնական կյանք է մի վանքում: Իսկ վանքը՝ միաբանների վանք: Մի վանքում ապրող միաբանների ամբողջություն (տե՛ս, Է.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երեւան, 1976թ., էջ 1005): Այդ մասին վկայում են արձանագրություններ, որոնք իմ ուսումնասիրություն-

Ների ժամանակ ի հայտ են բերվել քաղաքի Երեւանյան դռների հարավ-արեւմտյան մասում գտնվող հին հայկական գերեզմանատանը: Արձանագրությունները գրված են՝ յուր ժամանակին նշված եկեղեցուն իրենց ծառայությունը կատարած քահանա տեր Դանիելյանցի եւ ավագ քահանա Կառպետ Դանիելյանցի գերեզմանաքարերին, որոնք փաստում են.



Հանգիստ բնիկ Թաշլարեցի Բանիել քահանայի տիր գանիելյանց որ է եղբայր Թադէոս վարդապետի յաջորդի վիճակի գանձակու և միաբանն նր անձնայ եկեղեցւոյ մեղքեցւէ: Չուշի ԲՆՔի որ ի հնկի 40 ամաց փոխեցաւ ԲԵ ի 19 շեկտեմբերի 1878 ամի



Հանգիստ վաղաքառամ միաբայելի որդւոյ Կարապետ Բահանայի տէր գանիելյանց ճնեալ է ի 16 յունվարի 1853 ամի և վախճանեալ է ի 26 սեպտեմբերի 1873 ամի 21 ամաց հասակի

ՅԱՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՅ ՁԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ

17-18-րդ դարերում Անդրկովկասի շատ խանություններ, այդ թվում նաեւ Արցախը, գտնվում էին Պարսկաստանի իշխանության տակ: 1747թ. իր մերձավորների կողմից սպանված Նադիր շահի իշխանության փլուզումից հետո շահի թախտին նստել ցանկացողների թիվը շատանում է, եւ սկսվում են գահակալական կռիվները իրենց անկախ հռչակած խաների միջեւ: Պետության ներքին վիճակի նման վատթարացումը նպաստում է, որ Պարսկաստանն ունենա տարածքային կորուստ:

Ցարական Ռուսաստանն օգտագործելով ընձեռնված հնարավորությունը, 1805թ. մայիսի 14-ին, Գանձակից (Ելիզավետպոլ) ոչ հեռու, Կուրակ գետի (Քուռ գետի աջ վտակներից) ափին արդեն տեղակայված Ցիցիանովի զինվորական ճամբարում կնքվում է պայմանագիր: Համաձայն պայմանագրի՝ Ղարաբաղը անցնում է Ռուսաստանի հպատակությանը: Տարածաշրջանում իրավիճակը վերահսկելու, իր հարավային սահմաններն ամրապնդելու եւ Պարսկաստանին ավելի մոտիկ լինելու նպատակով Շուշիում տեղակայում են ցարական մի գումարտակ, որի հրամանատարն էր մայոր Լիսանեւիչը: Երեւի վճռական ու անվախ, կտրուկ քայլերի դիմող է եղել, որ տեղացի մահմեդականները նրան տվել են «ղալի մայոր» մականունը: Իսկ ինչ վերաբերում է տեղակայված զինվորական ջոկատին, ապա կարող են համոզված ասել, որ Շուշիի հին քրիստոնեական գերեզմանատների արձանագրությունների ուսումնասիրության ու գրառման ժամանակ ի հայտ եկած շատ արձանագրություններ վկայում են, որ դա N6 ցարական սահմանապահ գունդն է եղել եւ մասնակցել է ինչպես 1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմի մարտական գործողություններին ու հասել մինչեւ Եփրատ գետի ափերը, գրավել Կասպից ծովի ափին գտնվող Ղուբա ամրոցը (ՀՀ), այնպես էլ 1914-18թթ. առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ Ղարսի, Սարիղամիշի եւ Էրզրումի մարտական գործողություններին: Ջորամասն ունեցել է հեծելազորային, եգերական, Շուշի-Ելիզավետպոլ-Թբիլիսի ճանապարհը վերահսկող եւ տնտեսական գործերով զբաղվող գումարտակներ: Գնդի շտաբն ու զորանոցը տեղակայված են եղել Շուշիի Սեղրեցոց եկեղեցու հարեւանությամբ: Գորիսից քաղաք մտնող ճանապարհի վրա ունեցել է մեկ ուղեկալ, որի անունով այժմ էլ տեղամասը կոչվում է «Ձաստավա»: Ջորամասի Շու-

շիում տեղակայվելու առաջին տարիներից նորմալ հարաբերություններ են ստեղծվել ռուսների ու քաղաքի հայ բնակիչների միջև, եղել են փոխադարձ այցելություններ: Որոշ ընտանիքների մտերմությունը ժամանակի ընթացքում հասել է բարեկամության: Ղրա ապացույցը գնդի երիտասարդ սպա Գրիգոր բեկ Ավչարյանցի ամուսնության փաստն է նույն գնդի ավագ սպա Յակով Կովալյովի դստեր՝ Վարվարայի հետ, որ երեւի ներկայիս Ավչարյանների համար հանելուկ է:

2004թ. հոկտեմբերի 8-ն է: Երբ ես մտքերս էի ժողովում, թերթելով հավաքած արձանագրությունները, որպեսզի ընթերցողին ներկայացնեմ N6 սահմանային գնդի հայ զինծառայողների մարտական կարեւոր գործողությունների եւ ճակատագրերի մասին՝ ըստ նորահայտ արձանագրությունների, Բաքվից ռադիոյով հանդես եկող համալսարանի պատմության ամբիոնի դասախոսներից մեկը՝ Ի. Մամեդովը կոչ էր անում տարածաշրջանը 1918թ. հայերից «ազատող» Օսմանյան Թուրքիայի բանակի կերպարն ընդհանրացնող թուրք զինվորի արձանը կանգնեցնել Բաքու, Շամախի քաղաքներում, իսկ Շուշիում՝ ազատագրելուց հետո: Ըստ պրոֆեսորի, բացումը պետք է կատարվի 2005թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Պատկերացնո՞ւմ եք: Սրանք տարեթիվ ու ամիսներ են, երբ 11 զոհ տալով, 1918թ. Բերդաձորն է առաջին անգամ տեղահան արվել, գրավվել Շուշին Օսմանյան Թուրքիայի կողմից, իսկ նույն թվականի հոկտեմբերի 15-ին՝ Շամախին ու հետո էլ՝ Բաքուն ազատվել հայերից ու Ստ. Շահունյանից, ինչպես նշել է դասախոսը ռադիոյով, հայերին էլ անվանելով ռուսների գործակալներ: Իսկ մենք ուշադիր լսում ենք, քննադատում, օգնում մի երկու բառ չպարտում ու նորից ինքներս լսում, առանց խորանալու վերը նշված գաղափարի իմաստի մեջ:

Հարգարժան ընթերցող, կներքե շեղվելուս համար: Քանի որ նպատակադրվել են ներկայացնել ձեր ուշադրությանը մեր կողմից դարերով մոռացված փշատերեւ ծառերի, թփերի սաղարթների տակ կորած (թող ներեն ինձ եւ ինչպես ընդունված է ասել՝ հողը խաբար չտանի) մեր արմատների, Արցախի համար համազգեստ հագած ու զինված շուշեցիների, նաեւ որոշ զինծառայողների միայն տվյալները՝ ծնված Արցախ աշխարհի մյուս գավառներում, սակայն հողին հանձնված Շուշիի հին հայկական գերեզմանատներում:

Ներկայացնում են ի հայտ բերված ենթասպաների, պորուչիկների, միջին եւ ավագ սպաների միայն անուն-ազգանուն-հայրանունները առանց

արձանագրությունների, որ գրի են առել շիրմաքարերից: Եվ դրա մյուս պատճառն այն է, որ նպատակ ունեն հրատարակել Շուշիի տարբեր կողմերում գտնվող 8 քրիստոնեական գերեզմանատների քարտեզագիրք, որի էջերում տեղ կգտնեն հազար նորահայտ արձանագրություններ:

Տարբեր ժամանակներում Շուշիի N6 սահմանապահ գնդում ծառայել են

1. Արզուման բեկ Թորոսյան, քնդանոթապետ, մահացած 1835թ.,

2. Մելիք Ջունշուղ Մելիք Շահնազարյան, գնդապետ, 1850թ.,

3. Մելիք Բեիրամ բեկ Մելիք Շահնազարյան, որդին Մելիք Ջունշուղի, 1850թ.,

4. Սարգիս Բեիրամ բեկ Մելիք Շահնազարյան, (թոռը Մելիք Շահնազար 2-րդի, 1843-1891թթ.),

5. Գրիգոր բեկ Ավչարեանց, կրտսեր սպա,

6. Պետրոս բեկ Չերքեզեանց, փոխգնդապետ,

7. Եսայի բեկ Դանիելբեկեանց, պրապորշչիկ (ենթասպա),

8. Իսահակ Յովհաննեսի Ղարամյանց, փոխգնդապետ (1821-1866թթ.),

9. Սերգեյ բեկ Ղազարբեկյանց, մայոր, Թաղոտ գյուղից,

10. Հայրապետ աղա Բաղդասարի Դոլուխանյանց, շտաբս-կապիտան,

11. Ալեքսան բեկ Ջոհրաբեանց, գնդապետ,

12. Յովսեփ Ստեփանի Միրզայեանց, մայոր (1812-1882թթ.),

13. Մաղաք բեկ Մուսայելի Դոլուխանյանց, կապիտան (1833-1883թթ.),

14. Եսայի բեկ Բաղդասարի Դոլուխանյանց, մայոր (1797-1881թթ.),

15. Գյանջում Աղա Առաքելի Խանդամիրյանց, պորուչիկ (1853թ.), Շուշիի բերդապետ, 1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմի 1-ին ճակատամարտի ժամանակ Երեւանյան դռների մոտ ռուսական զորքի հրամանատար: Պարտություն են կրել պարսիկներին ու նահանջել:

16. Իսաջան Աղա Գյանջուն Աղայի, պրապորշչիկ, (մահ.1842թ.),
17. Բաբաբեգ Չոհրաբյանց, փոխգնդապետ (1830-1894թթ.),
18. Մնացականյան Սամսոն Բախշիի, Բերդաձոր (1894-1977թթ.),
19. Թումասյան Հակոբջան Մակիչի, Բերդաձոր (1892-1954թթ.),
20. Սովսեսյան Ներսես, Բերդաձոր,
21. Միքայել Մելիք Շահնագարյան, գնդապետ, 1914-18թթ. առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, 1917-18թթ. եղել է Շուշիի N6 սահմանապահ գնդի հրամանատարը: Նրա հրամանատարության տակ գունդը մասնակցել է Ղարսի, Սարիղամիշի եւ Էրզրումի համար մղված մարտերին: Նշված քաղաքների համար մղված մարտերին մասնակցել է նաեւ բերդաձորցի Սամսոն Մնացականյանը: Գնդապետ Շահնագարյանը եղել է Շուշիի գնդի վերջին հրամանատարը, քանի որ հեղափոխության պատճառով գունդը հանվել է զործող բանակի կողմից, հայերը մնացել են՝ ռուսները գնացել:
22. Բալաբեկեանց Սարուխան բեկ, պոստպորուչիկ, ծննդյան թիվը չկա, վախճ. է 06.02.1886թ., Քարին տակ գյուղում:
23. Գասպարեանց Բալասբեկ, պրապորշչիկ, վախճ. է 1893թ., Քարին տակ գյուղում:
24. Միրզայանց Հովսեփ Ստեփանի, Թաղոտ գյուղացի, մայրը, վախճ. 14 հունվարի, 1882 թ., 70 տարեկանում:
25. Ղազարբեկյան Սերգեյ բեկ, Թաղոտ գյուղացի, աստիճանավոր զինվոր, վախճ. 35 տարեկանում, 08.08.1991թ.:
26. Սովսեսյան Բախշի Ասրիի:
Վիճակագրական գործունեությունն ու հավաքված լրացուցիչ նյութերը ցույց են տալիս, որ Շուշիի N6 սահմանապահ գնդում եւ առհասարակ Ցարական Ռուսաստանի բանակում որպես սպաներ ծառայել են հիմնականում Մելիք-Շահնագարյանների (մի մասը կրելով ռուսականի ազդեցությունը դարձել է Շահնագարով), Դոլուխանյանների եւ Չոհրաբյանների (Չոհրաբյաններ) գերդաստանների սերունդները: Եվ եթե վերջիններիս մեկ կամ երկու սերունդն է մնացել ուսադիրների տակ, ապա Շահնագարյանների համար դիվանագիտությունն ու զինվորական ծառայությունը դարձել էին մի տեսակ ժառանգական մասնագիտություն, որ փոխանցվելով սերնդեսերունդ, պահպանվում է մինչեւ մեր օրերը:

Այսօր ակնհայտ է, որ 19-20-րդ դդ. Մելիք-Շահնագարյանների գերդաստանից մոտ 60 սպաներ, սկսած ենթասպայից մինչեւ գեներալ-լեյտենանտ, ծառայել են ռուսական բանակի տարբեր զորքերում (հրետանի, հետեւակ, հեծելազոր) ու պետական դիվանագիտական պաշտոններում:

1800թ. Միր Դավիթ Աստատուրի Մելիք-Շահնագարյանը, ծնված 1770թ. Շուշիում, ուսանող էր Փարիզի կայսրական ճեմարանում: Լավ տիրապետում էր հայերեն, պարսկերեն, արաբերեն, ֆրանսերեն լեզուներին: 1801թ. կայսր Նապոլեոնը դիմում է ճեմարանի դասախոս Հակոբ Շահան Ջրպետին, որ իրեն ներկայացնեն պարսկերենին լավ տիրապետող, Մերձավոր Արեւելքին էլ ծանոթ մեկին: Ներկայացնում են Միր Դավթին, որին էլ հավանում ու նշանակում է որպես Ֆրանսիայի բանագնաց Պարսկաստանում: Նա պաշտոնավարել է 1804-1830թթ.: Մահացել է 1853թ. ապրիլի 30-ին, թաղված է Թեհրանի սուրբ Թադեոս-Քարդուղենեսու եկեղեցու բակում, որի շիրմաքարին գրված է. «Ասպետ Միր Դավիթ Մելիք Շահնագարյան, հանգավ 1853, ապրիլ 30» (տե՛ս, Րաֆֆի, Տարեգիրք, Ա, Թեհրան, 1969թ., էջ 294):

Ցարական բանակում ծառայած Շահնագարյանների մասին հարուստ նյութեր են պահպանվել ու այսօր էլ գտնվում են Ռուսաստանի պետական զինվորական արխիվում: Հաշվի առնելով այս հանգամանքը, ի հայտ եկած արձանագրությունների հետ ներկայացնում են նաեւ այն զինվորականների տվյալները, որոնք հանգամանքների բերումով իրենց ծառայողական պարտականությունները կատարել են Ղարաբաղի սահմաններից դուրս՝ Ֆրանսիայում, Պարսկաստանում, Հյուսիսային Կովկասում, Ռուսաստանի տարբեր քաղաքներում:

Եվ սա օբյեկտիվ երեւույթ է, քանի որ այս մեծ գերդաստանի ինչպես բնակավայրի, այնպես էլ ուսանողական ծառայության աշխարհագրությունն ընդլայնված է եղել սկսած 19-րդ դարի վերջից:

Ղարաբաղի սահմաններից դուրս ապրած, ծառայած ու վախճանված Շահնագարյանների մասին որոշ տվյալներ է տրամադրել գերդաստանի սերունդ, Կուբայում եւ Մեքսիկայում Հայաստանի դեսպան Աշոտ Մելիք-Շահնագարյանի որդին՝ մոսկվայաբնակ Արսեն Մելիք-Շահնագարյանը: Նախապես շնորհակալություն հայտնելով, նյութերը կցում են իմ ձեռքի տակ եղածին ու ներկայացնում ընթերցողին:

Ահա հակիրճ տեղեկություններ նրանցից մի քանիսի՝ կրթության, զինվորական կոչումների ու զբաղեցրած պաշտոնների մասին.

1. Պավել Դմիտրիևիչ (Ջումշուդի) Մելիք-Շահնազարով, գեներալ-լեյտենանտ: Ծնվել է 1854թ. հոկտեմբերի 2-ին, Շուշի քաղաքում: Ավարտել է Թբիլիսիի բարձրակարգ գիմնազիայի 6-րդ դասարանը, Ստավրոպոլի կոզակների յունկերական ուսումնարանը եւ ստացել երկրորդ կարգ: Ծառայել է որպես հեծելազորային, եղել է Նովո-միրգորոյան 17-րդ խմբի հրամանատարը եւ մասնակցել է 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմին: 1910թ. անցել է թոշակի, սակայն հենց սկսվել է առաջին համաշխարհային պատերազմը, նորից զորակոչել են: Ջորացրվել է, ուղարկվել է թոշակի գեներալ-լեյտենանտի կոչումով՝ պատերազմն ավարտելուց հետո:

2. Անդրեյ (Անդրեաս) Պավլովիչ (Պավելի) Մելիք-Շահնազարով, դիվիզիայի հրամանատար: Ծնվել է Ստավրոպոլի երկրամասի Կավկազսկ քաղաքում, Շուշիից ծառայողական պարտականությունների բերումով տեղափոխված սպա, ապա գեներալ-լեյտենանտ Պավել-Մելիք-Շահնազարովի ընտանիքում: Ավարտել է Վարշավայի Սուվորովյան կադետական կորպուսը, Նիկոլաեյան հեծելազորային ուսումնարանը եւ ստացել առաջին կարգի որակավորում: 1905-18թթ. ծառայել է 5-րդ գուսարական Ալեքսանդրյան գնդում (թեթև հեծելազոր), աճելով կոռնետից մինչև գնդապետի կոչումը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին պարգևատրվել է 8 անգամ, այդ թվում՝ Գեորգիի 4-րդ կարգի շքանշանով եւ որպես շքանշանակիր՝ ցար Նիկոլայ 2-րդը անձամբ նրան շնորհել է ռոտմիստրի (հեծելազորային կոչում, որը հավասարազոր է հետեակի կապիտանի կոչմանը) կոչում: 1918-20թթ. գնդապետ Անդրեաս Մելիք-Շահնազարովը եղել է առաջին հայկական հեծյալ գնդի հրամանատարը, իսկ 1921-30թթ.՝ հայկական հրաձգային դիվիզիայի հրամանատարը: 1931թ. եղել է բելոռուսական զինվորական օկրուգի 16-րդ հրաձգային կորպուսի հրամանատարը: Հայտնի 1937-ի հունիսի 6-ին ձերբակալվել, իսկ հոկտեմբերի 31-ին Մինսկում գնդակահարվել է: Հրամանատարների թվում միակ անկուսակցականն էր: Հետմահու արդարացվել է 1958 թվականին:

3. Նիկիտա (Մկրտիչ) Գրիգորևիչ Մելիք-Շահնազարով, գեներալ-լեյտենանտ: Ծնվել է 1836թ. սեպտեմբերի 7-ին: Ավարտել է առաջին կադետական կորպուսը (փակ հիմնարկ, որը երեխաներին պատրաստել է սպայական ծառայության, կամ՝ սպայական ուսումնարան ընդունվելու: Ռուսաստանում այն գոյություն է ունեցել 1732-1917թթ.: 1863-82թթ. եղել է որպես զինվորական գիմնազիա):

1855-56թթ. մասնակցել է Ղրիմի պատերազմին ու բազմաթիվ մարտական գործողությունների Հյուսիսային Կովկասում ու Չեչնիայում՝ 1860-1877թթ.: Եղել է 25-րդ հետեակային դիվիզիայի առաջին բրիգադի հրամանատարը: Պահեստ է զորացրվել 1898թ.:

4. Նիկոլայ Մեծունովիչ Մելիք-Շահնազարով, գեներալ-լեյտենանտ: Ծնվել է 1851թ. ապրիլի 13-ին: Ավարտել է Բաքվի ռեալական գիմնազիան, Կոնստանտինովյան 2-րդ հրետանային ուսումնարանն ու սպայական դպրոցը: Ծառայել է տարբեր հրետանային զորամասերում: 1877-78թթ. պատերազմի տարիներին մասնակցել է Դաղստանում անցկացվող միջոցառումներին, Կասպից ծովի շրջակայքի գրավմանը, Գյոյ-թափայի (Աղդամից արեւելք) գրոհին, գեներալ Սկոբելևի ընդհանուր հրամանատարության ներքո: Մասնակցել է 1904-05թթ. ռուս-ճապոնական պատերազմին: 1910թ. գեներալ-մայորի աստիճանով անցել է թոշակի, սակայն 1914թ. նորից զորակոչվել է վերջնական՝ 1917թ. դեկտեմբերին գեներալ-լեյտենանտի կոչումով (աստիճանով) զորացրվել պահեստ:

5. Գաբրիել Մելիք-Շահնազարով, դաստիարակվել է Շուշիի գավառական ուսումնարանում, իսկ ծառայության է անցել 153-րդ հետեակային գնդում՝ որպես ազատորոշ շարքային զինվոր: Նրա որդիներ Դանիելն ու Գրիգորը, որ բանակում ծառայել են Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, սովորել են կադետական կորպուսներում: Դանիելը սովորել է Եկատերինա 2-րդի Մոսկովյան I, իսկ Գրիգորը՝ Պետրովսկ-Պոլտավյան կադետական կորպուսներում եւ Պավլովյան ուսումնարանի ռազմական ժամանակի դասընթացներում եւ ստացել առաջին կարգ:

6. Միքայել Հովսեփի Մելիք-Շահնազարով, ավարտել է Էջմիածնի հոգևոր ակադեմիայի 6-րդ դասարանը: Ռազմական կրթություն ստացել է Թբիլիսիի յունկերական հետեակային ուսումնարանում եւ ստացել 2-րդ կարգ:

7. Նարիման Մելիք-Շահնազարով, պորուչիկ, Պարսկաստանում ռուսական ներկայացուցչության թարգմանիչ: Չոհվել է դեսպան Գրիբոեդովի հետ:

8. Միքայել Մելիք-Շահնազարով, գնդապետ, Սանկտ-Պետերբուրգի ռազմական հեռագրակապի պետ: Ալեքսանդր 2-րդի սպանության գործի քննության ժամանակ եղել է գլխավոր փորձագետը պայթուցիկ հարմարանքների ստուգման գծով եւ անձամբ վնասագերծել է տեռորիստների կողմից տեղադրված մի քանի ինքնաշեն ռումբեր: Ռուսական ինքնակալության կործանումից հետո գերդաստանի մի շարք գավակներ շարունա-

կել են ծառայել հայկական բանակում ու Ղարաբաղի Ազգային խորհուրդում: 1918-20թթ. Վարանդայի գավառում ջոկատների հրամանատարությունն ու պաշտպանական գործերն իրականացնում էր Սոկրատբեկ Մելիք-Շահնագարյանը:



Ցարական բանակի հայ զինվորականներ՝ Մնացականյան Սամսոն Բախշիի, Միքայել Մելիք Շահնագարյան, Սամսոն Մելիք Շահնագարյան

Ինչպես տեսնում ենք, 19-րդ դարի 20-30-ական թթ. թվով ոչ քիչ պատանիներ էին տարվում Ռուսաստան ցարական կառավարության կողմից: Եվ հիմնականում տանում էին ռազմական կրթություն տալու նպատակով, որոնց որդիներն էլ 2-3 սերունդ հետո լրիվ տարրալուծվում էին: Եվ այսօր շատ հայեր չգիտեն հայերեն, չեն էլ թաքցնում իրենց հայ լինելը, քանի որ դրանում մագաչափ մեղք չունեն:

Թե ռուսերեն, թե հայերեն հրատարակված ոչ մի հանրագիտարանում չընթերցեցի նշված զինվորականների մասին: Մի՞թե չէր կարելի տեղ տալ Գյանջում Աղա Առաքելի Խանդամիրյանցին ու փոխգնդապետ Իսահակ Դովհաննեսի Ղարամյանցին ու երկու բառով նշել նրանց ծառայությունների մասին: Ջարմանալի չէ՞, որ պետության դեմ ելած լեռնական, հոգեւորական Շամիլի մասին կա, իսկ նրան գերած ռուսական բանակի, ապա ղարաբաղցու մասին՝ ոչ:

ԱՅՍՊԵՕՍ ԵՆՔ ՀԱՐԳՈՒՄ ՈՒ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Ազգ մը այնքան մեծ է,
Որքան գիտե իր մեռելները յարգել:
Այո՛, մեռելները ազգի մը
պատմութեան մեջ արմատ են:

Լ.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաքին

Նորից, արդեն երրորդ անգամ, ինձ համար անդրադարձի հարց է, «լուծում չունեցող» ոչ մաթեմատիկական մի խնդիր: Դա մեծ բարերար Թադեոս Բաբայի Թամիրյանցի սեւ գրանիտե հուշակոթողից մնացած միակ կտորի տեղը ետ բերելու խնդիրն է: Շատերին է հայտնի, որ 1990թ. այն ջարդել են թուրքերը:

Եվ ուզում եմ սկսել այսպես: «TV ալիք» թերթում ընթերցել էի Սիրան Գրիգորյանի հարցազրույցը՝ Ջանգեզուրի սովետական տարիների շրջկոմ, առաջին քարտուղար Ռ.Ալեքսանյանի հետ՝ «Մեռնել այն ամենի համար, ինչի համար արժե ապրել...» վերտառությամբ: Հարցերից մեկին ի պատասխան, Ռ. Ալեքսանյանն ասում է. «Ո՞վ է իր հետ ինչ-որ բան տարել, պետք է մտածել թողնելու մասին, Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին նորոգելիս բակում սեւ մարմարից մի գերեզմանաքար տեսա: Հայ մեծահարուստ մարդու գերեզման է, ով խողովակաշարով լեռներից ջուրը բերել է Շուշի: Նա խնդրել է իրեն թաղել ձեռքերը բաց ու պարզած, որպեսզի մարդիկ տեսնեն՝ ինչքան հարստություն ունի, սակայն դատարկ է հեռանում»: Մեջբերումը կարդացել եմ՝ անփոփոխ թողնելով ոճը եւ ուղղագրությունը:

Ովքեր լավ տեղյակ են եւ հիշում են, թե եկեղեցին իր տարածքով ինչպիսին է եղել, անպայման կհասկանան, որ խոսքը 19-րդ դարավերջի անվանի բարերար Թ. Թամիրյանցին է վերաբերվում:

Նպատակս ծավալում հողված գրելը չէ, առավել եւս, որ խնդրո առարկա դարձած հարցի մասին համապատասխան լուսանկարներով երկու անգամ գրվել էր «Դեմո» թերթում: Չնայած ոչ մի արձագանք չի եղել, ինչպես ասում են՝ ոչ խեր խոսող է եղել, ոչ էլ՝ շառ, բայց եւ այնպես, հույս կար, որ 2008թ. վերսկսված բարեկարգման գործերի ժամանակ իր տեղում կտեղադրվեր ազգի նվիրյալ զավակի՝ Թադեոս Բաբայի Թամիրյանցի հուշակոթողից մնացած (հրաշքով փրկված, կողին էլ գրված Москва, Дворецкая, Кабанов) մի մեծ կտորը, որը եկեղեցու զանգակատան հա-

րավ-արեւմտյան կողմից Շուշին ազատագրելուց հետո մյուս շիրմաքարերի հետ տեղափոխվել է եկեղեցապատկան ինչ-որ պահեստի բակ:

Արդեն ավարտին են մոտենում հայտնի բարերար Արցախի արժանի զավակ Լեւոն Գուրգենի Զայրապետյանի հովանավորությամբ տարվող բարեկարգման մեծածավալ աշխատանքները: Զամարյա շրջափակված է ամբողջ տարածքը, մոտենալ գերեզմանին համարյա անհնար է որեւէ տրանսպորտով, այլեւս անհիմաստ է հուսալ, թե շիրմաքարերը ետ կբերվեն իրենց տեղերը: Չգիտես՝ ի՞նչ են մտածում մարդիկ:

Մարդը միլիոններ է ծախսել, խողովակաշար բերել, 1000 տոննա տարողությամբ ջրամբար կառուցել (որից այսօր էլ օգտվում է Շուշիի բնակչությունը), եկեղեցուն նվիրել քանդակված պատկերներ, իսկ այսօր նրա գերեզմանի եւ հուշակոթողի նկատմամբ այսպիսին է մեր վերաբերմունքը:

Ստացվում է այնպես, որ 26 հողվածից բաղկացած «Լեռնային Ղարաբաղի Զանրապետության Օրենքը խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին», ստորագրված հանրապետության նախագահի կողմից՝ 24.12.2008թ., կամ չեն ընթերցել, կամ իրենց ավելի ուժեղ են զգում: Նշված օրենքի 4-րդ գլխի 11-րդ հոդվածում գրված է. «Կրոնական կազմակերպությունները պարտավոր են ապահովել պետության կողմից որպես սեփականություն իրենց հանձնած կառույցների, տարածքների եւ մյուս ունեցվածքի, ինչպես նաեւ իրենց սեփականությունը հանդիսացող պատմական հուշարձանների պահպանությունը եւ ըստ նշանակության օգտագործումը»:

Կ.ՊՈԼԻՍ-ՌՈՂՊՈՍՏՈ-ՇՈՒՇԻ

1918թ. մայիսի 29-ի լույս գիշերը, իր բնակարանում, Շուշիի զինվորական ատյանի պետ, գնդապետ Գր. Ռաշկովսկին, կինը, տղան եւ աղջիկը չարագործների ձեռքով մորթվում են (Ե. Իշխանյան, Լեռնային Ղարաբաղ 1917-1920 թթ., էջ 150):

-Յուլիսի 2-ին՝ հայկական ծիսակատարությամբ, ահագին բազմութեան ներկայությամբ, աճիւնները չորս դագաղի մեջ ամփոփվում են կողք-կողքի, մեկ ընդհանուր շիրիմի մեջ: Զայ-թուրքական ընդհարումների ժամանակ զոհված հայերի փոքրիկ գերեզմանատանը՝ ժամհարյանների հիվանդանոցի մոտ: Մարդիկ արտասվում էին այնպես, կարծես հարազատներին էին կորցրել: Ծերունիներից մեկը՝ քարտաշ Յակոբը հուզված ասում է. «Ռուս, էն օրն ես ընկել, որ քոսոտ ու քաչալ թուրքը համարձակվի քո պալկովիկին, կնոջը եւ երիտասարդներին ոչխարի պես մորթի» (նույն տեղում)՝ «Եվ այսքանը նրա համար, որ ռուս գնդապետի աղջիկը հրաժարվել էր ամուսնանալ դրամատան վարչության անդամ Խուլուշ Կուլիեւի տղայի հետ, ասելով, որ ինքը ոչ մի դեպքում չի ամուսնանա մահմեդականի հետ»:

Փոքրիկ գերեզմանոցի մոտով, որ գտնվում է ռեալական ուսումնարանի վերնամասում, ճանապարհը բարձրանում է դեպի այժմ գործող քաղաքային գերեզմանատունը: Ամենուրեք կիսաջարդ, հողի մեջ թաղված ու կիսաքաղ կողքի ընկած, թփերի մեջ կորած տապանաքարեր են: Սկսեցի մաքրել տեղանքը: Երբ մաքրման աշխատանքները ավարտվեցին, համարակալեցի բոլոր գերեզմանաքարերն ու գծագրեցի համապատասխան քարտեզ, որի օգնությամբ կարելի է առանց որոնելու հեշտ գտնել ցանկացած գերեզմանաքար:

Եիշտ է, առայժմ չի հաջողվել պարզել ռուս գնդապետի ընտանիքի գերեզմանի տեղը, սակայն հույս ունեն, որ կգտնվի, քանի որ դեռ շատ քարեր չեն բարձրացվել թեքված դիրքից: Նույն վայրում Շուշիի 6-րդ սահմանապահ գնդի զոհված ռուս զինվորի տապանաքարից քիչ հեռու՝ հարավահայաց կողմի վրա գետնին է ընկած մի մեծ գերեզմանաքար, որն ունի 4 քառ. մ մակերեսով հիմնաքար: Զավանական է, որ դա կլինի, այլապես ինչո՞ւ պիտի մեկ հանգուցյալի համար այդքան տարածք զբաղեցնել:

Այստեղ մի ուրիշ գերեզմանաքար էլ ի հայտ եկավ, որը շատ բան է ասում մեզ: Տապանաքարի երեսին, երկու կողերին կա արձանագրություն,

որը չունի ոչ մեկնաբանելու, ոչ էլ վերծանելու կարիք, այն պիտի որ պարզ ու հասկանալի-լինի հային, իսկ թարգմանելու դեպքում՝ յուրաքանչյուր քրիստոնյայի:

Պարզ երեւում է, որ արեւմտահայը Կ.Պոլիս, Ռոդոստո քաղաքներում առաջին համաշխարհային պատերազմին է մասնակցել, իսկ 1918-ին օգնության հասել Շուշիում ապրող իր եղբայրներին, որոնք դարասկզբին արդեն երրորդ անգամ են ընդհարվում մահմեդականների հետ զուտ այն պատճառով, որ քրիստոնյա են ու պաշտում են Զիսուսի խաչը:

Արձանագրությունը, որ բաղկացած է 10 տողից, հավասարապես բաժանված ու գրված է տապանաքարի կողերին, սկսելով հարավահայացից: Այն ասում է.

Համաշխարհային արիւնահեղ պատերազմը,
որը կորոշէր ազգերու բաղդը,
Զգալով հայի պատկանող նուիրական
պարտքը, առանց վարանելու խառնեց իւր
կեանքը հազարավոր անձնուրացների հետ
Չորս տարուայ առեւի պատերազմների
ընթացքում մահից զերծ մնացած
թանկագին մատաղ կեանքը հերոսաբար
զոհեց Շուշի եղբայրաօգնութեան
կարօտ օրհասական կռուի մեջ:

Իսկ քարի երեսին քանդակված է խաչ՝ առնված ձիթենու ճյուղերի պսակի մեջ ու գրված.

Աստ հանգչի
մարմին Մարտիրոս
Մովսես
Պաղղատլեանի
Կ. Պոլիս, Ռոտոս..
երանի նահատակի
յիշատակին որը ան
ծն. 1883թ.
նահատակեց 1918թ.
յուլիս 29-ն

Հազարավոր հայորդիների հետ Մովսես Պաղղատլեանն էլ իր կյանքը զոհել է հանուն ազգի, սուրբ կրոնի ու Զիսուսի խաչի: Ո՞վ ձեռք կմեկնի

նրա եւ մյուսների գերեզմանաքարերին, որ ոտքի կանգնեն, մեզ ու գալիք սերունդների համար մնան որպես յուրատեսակ սրբավայր:

Արցախցիներ, հայեր համայն աշխարհի:

Արցախյան ազգային ազատագրական պատերազմում զինադադարի կնքմամբ ավարտվել է պատերազմի առաջին փուլը: Երբ հայացք ենք գցում դեպի ոչ հեռու անցյալը, հպարտությամբ ու երախտագիտությամբ ենք մտաբերում այն էջը, որ գրեց մեր ժողովուրդը՝ տալով մեծաթիվ զոհեր: Եվ մենք պարտավոր ենք ընդմիշտ սրբությամբ պահպանել զոհված ազատամարտիկների հիշատակը, մոռացության չտալով նաեւ մեր ոչ վաղ անցյալի՝ 1905-06 եւ 1918-20թթ. զոհերին, իսկ ողջ մնացածների համար այսօրվա եւ վաղվա սերունդները պիտի հյուսեն դափնեպսակներ:

Իմ կողմից ի հայտ է բերված մի առանձին գերեզմանատուն, որտեղ ամփոփված են 1905-06թթ. հայ-տաճկական (թաթարական) ընդհարման ժամանակ զոհված հարյուրավոր հայերի դիակներ (ես այն անվանում եմ 1905-06թթ. զոհերի գերեզմանատուն):

Այդ գերեզմանատանն ի հայտ եկավ մի գերեզմանաքար, որն, ի տարբերություն շատերի, ուներ արձանագրություն կողերին ու երեսին՝ առնված դափնեպսակի մեջ: Արձանագրությունը շատ բան ասաց ինձ, եւ ես առանձնացնելով մյուսներից, ուզում եմ առանձին ներկայացնել Սփյուռքի մեր բարեկամներին, որոնք մայր-հայրենիքն ուշադրության կենտրոնում են պահում:

Պարզ երեւում է, որ Մովսես Պաղղատլեանը Զունաստանի Ռոդոստո քաղաքից է: Նա Պոլսում ու Ռոդոստոյում մասնակցել է առաջին համաշխարհային պատերազմին, եղել է անվանի զորավար Նժդեհի զինակիցը, երբ վերջինս գտնվում էր Պոլսում ու Բալկաններում: Երբ Շուշիում սկսվել է երկրորդ հայ-թուրքական ընդհարումը 1918-ին, զգալով իր պարտքն ազգի առաջ, եկել է օգնության: Մնացածը կասի՝ վերը տեղադրված արձանագրությունը: Շիրմաքարի կողերին գրված արձանագրությունը բաղկացած է 10 տողից, հավասարապես բաժանված:

Ո՞վ ձեռք կմեկնի, որ ոտքի կանգնեն Մովսեսի եւ մյուսների շիրմաքարերը: Մենք պարտավոր ենք սրբությամբ պահպանել նրանց հիշատակը, մոռացության չտալ մեր ոչ վաղ անցյալի՝ 1905-06 եւ 1918-20թթ. զոհերին, իսկ ողջ մնացածների համար այսօրվա եւ վաղվա սերունդները պիտի հյուսեն դափնեպսակներ:

23.02.2005թ., Շուշի

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ Ս ԵՐԿՈՒ ՎԿԱՆԵՐ

Ինչո՞ւ են այս վերնագիրն ընտրել: Շուշիի պատմա-ճարտարապետական հուշարձաններից ու հին գերեզմանատներից հավաքած վիմագիր արձանագրություններն այն հազարավոր անխոս վկաներն են, որ տեղեկություն են տալիս ինչպես 18-19-րդ դարերում քաղաքում ապրող 100-ից ավելի հայ գերդաստանների, նշանավոր մարդկանց ու պատմական կարեւոր դեպքերի, այնպես էլ արտաքին աշխարհի հետ ունեցած կապերի մասին:

Իսկ որո՞նք են մյուս երկու վկաները: Դրանք այն վկաներն էին, որոնք ամբողջով են ինչպես վերջերս: Ուզում են խոսք բացել մաե 3 շիրմաքարերի արձանագրությունների, ապա՝ մի գերդաստանի մասին, որի տոհմածառի պատմությունը գտնվում է պարսիկ հեղինակ Յամիդ Ալզարի «Միրզա Մելքուն խան» գրքի մեջ (տե՛ս, Յամիդ Ալզար, Միրզա Մելքուն խան, Լոս Անջելես, 1973թ.):

Նախ՝ ներկայացնեն արձանագրությունը: Շիրմաքարը, որի արձանագրության վերջում նշված է հանգուցյալներին 1751 թվին Շուշիում հողին հանձնելու մասին (տե՛ս, Յ. Յարությունյան, Շուշի, ռուսերեն, Սոնա, 2008թ.): Շիրմաքարերը տափակ են՝ 120x60x30, 120x50x30 եւ 60x40x30 սմ չափսերի, տեղադրված լաստապատցի Ալմաստի որդի Ասատուրի (Աստատուր), Մեղրեցի Խաչատուրի, նրա կնոջ Մարիամի (1753թ.) եւ Մեծ շենացի Տեր Աստատուրի թռան՝ Պետրոսի շիրիմներին ու արձանագրված՝

ԱՅԷ	ՏԱՊԱՆ	ԱՅԷ	ՏԱՊԱՆ	ՄԵԾ
ԼԱՍՏԱՊԱՆՍԹ	Ս ՄԵՂՂԵՑԻ	ՇԻՄԵՑԻ ՏՐ	ԱՇՄԱՏ	
ԱԼԱՍՏԻ ՄԻ	ԽԱՂԱՏՈՐԻ	ՌԻ ԹՈՌՆ ՊԵՏՐՈՆ		
ԱՍԶԱՏԻՔՆ	ՄԻՆ Ի ՌՄ	ՔՂ ՌՄ ԷՐ		
ՔԻՆ ՌՄԵՐ	Ե Գ ԲԵՂ			

Իսկ հիմա՝ Միրզա Մելքուն խանի մասին: Ինչպես տոհմածառի սկզբնասում, այնպես էլ վերը նշված գրքում, պարսիկ հեղինակը միանշանակ ասում է, որ գերդաստանի նահապետը հանդիսացող Մելքունի ընտանիքը օրիգինալ (իսկական) հայկական էր Ղարաբաղում՝ հայկական տարածաշրջանում: Մեջբերում են գերդաստանի տոհմածառից մի հատված՝ թարգմանաբար, որն ասում է. «Մելքունի-Մելքո/ւ/մի-Մելքունի ընտանիքը բնիկ հայկական ընտանիք է Ղարաբաղ (Ջանգեզուր) Յայաստանի ռեգիոնում»:

Գրքի շապիկի վրա պատկերված է Միրզա Մելքուն խանի գերդաստանի գերբը՝ ծխախոտի տերեւներ, իսկ կենտրոնում՝ թուրը գլխավերելում պահող առյուծ:

Նշեն, որ ըստ գերդաստանի 7-րդ սերնդի, Յովհաննես Մելքուն բեկի պատմածի, գերդաստանի նահապետը, որի անունն է կրում ինքը, բնակվել է Շուշիում եւ հիմնականում զբաղվել է ծխախոտի եւ կենցաղային ապրանքների առևտրով: Կապ ուներ Մերձավոր Արևելքի երկրների հետ: Պարսից շահի կողմից ճանաչված էր որպես անուն հանած առևտրական: 1600-ական թվականների վերջերին նրա հիմնական զբաղմունքն է եղել առևտուրը: Կինը եղել է Ջանգեզուրից: Որպեսզի այս կապակցությամբ կասկածներ չառաջանան, ասեն, որ Բելգիայի թագավորական պալատի հայտնի բժիշկը լավ պատմություն գիտի, իսկ Ղարաբաղի պատմությունն՝ առավելապես:

1700 թվականին տոհմի ավագն ունեցել է մեկ արու զավակ՝ Յակոբ անունով, մասնագիտությամբ բժիշկ, որն էլ իր հերթին ունեցել է երեք տղա՝ Աղանուր Մելքուն, Տիգրան Մելքուն եւ Աբրահամ Մելքուն:

1720-ական թվականներին Պարսկաստանի տնտեսությունը սկսում է քայքայվել: Միրզա Մելքուն խանը, օգտվելով այն հանգամանքից, որ հետամնաց ագրարային Պարսկաստանը խառխուլվում է, ինքն էլ շահի մերձավոր մարդկանցից է, թողնելով առևտուրը Շուշիում, տեղափոխվում է Սպահան: Պարսից շահի հատուկ ֆարմանով (հրամանագիր) տնօրինում է Պարսկաստանի ծխախոտի արդյունաբերությունն ու արտադրանքի մեծածախ առևտրով զբաղվում: Կարճ ժամանակում զարգացնում է ծխախոտի արտադրությունն ու ստանում մեծ եկամուտ: Երբ տնտեսական ու քաղաքական վիճակը երկրում ավելի է բարդանում, գերդաստանի հաջորդ ավագը՝ Աղանուրը կարողանում է ունեցվածքի կեսից ավելին մի կերպ վաճառել ու տեղափոխվել Յնդկաստան, որտեղ 1851 թվականին ծնվում են նրա երկու որդիները: 1880-ական թվականներին ավագ որդին՝

Դանիել Մելքուն բեկը տեղափոխվում է Ինդոնեզիա եւ շարունակում զբաղվել առեւտրով: Նա ունեցել է երեք արու զավակ՝ Ռոբերտ Մելքուն, Պավել Մելքուն եւ Գրիգոր Մելքուն: Ինդոնեզիայի մայրաքաղաք Բատավիայում (հետագայում վերանվանվել է Ջակարտա) Ռոբերտ Մելքունը 1932 թվականին ունեցել է արու զավակ, որին կոչել են իրենց նահապետի անունով՝ Մելքուն բեկ: 1939թ. Ռոբերտ Մելքունն իր ընտանիքով տեղափոխվել է Հնդկաստան: Նույն թվականին ճանապարհորդելու նպատակով գնացել են Ֆրանսիա: Երբ գտնվում էին Մոնտե Կարլոյում, սկսվել է 2-րդ համաշխարհային պատերազմը:

Մարտական գործողությունների գոտուց դուրս գալու նպատակով ընտանիքը տեղափոխվել է Իտալիայի առեւտրական կենտրոն՝ Վենետիկ, որտեղ էլ Հովհաննես Մելքուն բեկը հաճախել է դպրոց: 1945թ., երբ վերջացել է պատերազմը, նրանց ընտանիքը նորից գնացել է Ինդոնեզիա եւ Ջակարտայում մնացել մինչեւ 1954 թվականը: Նույն թվականին Հովհաննես Մելքուն բեկն ընդունվել է Գենտի (Բելգիա) համալսարանի բժշկական ֆակուլտետը, որտեղ սովորել է հինգ տարի եւ ստացել ընդհանուր վիրաբուժության, երակների խցանման եւ այլ հիվանդությունների բուժման մասնագիտություն: Նշված համալսարանի բանասիրական ֆակուլտետն է ավարտել նաեւ տաղանդաշատ բանաստեղծ Դանիել Վարուժանը, որի հարթաքանդակը, շագանակագույն մարմարից, փակցված է համալսարանի առաջին հարկի դահլիճի պատին, որը պարզ երեւում է դոկտոր Մելքուն բեկի եւ Բելգիայի նավթային արդյունաբերության բենզինի լաբորատորիայի համար կառուցված զտարանի հեղինակ, այժմ թոշակառու՝ Մաթոս Մաթոսյանի լուսանկարում:



Հովհաննես Մելքուն բեկը եւ Մաթոս Մաթոսյանը Գենտի համալսարանի Գ. Վարուժանի անվան դահլիճում

2001 թվականից հայտնի բժիշկ Հովհաննես Մելքուն բեկը սեփական տուն ունի քաղաքի Երեւանյան դռներին պատկից եւ համարվում է Շուշիի պատվավոր քաղաքացի:

Հովհաննես Մելքուն բեկ, 1932 թիվ: Այսպիսինն են նրա տվյալներն ըստ անձնագրի, որ ընդունված է գրել արտասահմանյան երկրներում: Իսկ ըստ տոհմածառի տվյալների՝ հայրանունը Ռոբերտ է: Վստահ կարող ենք գրել այսպես՝ Հովհաննիսյան (Հովհաննեսյան) Մելքուն բեկ Ռոբերտի, ծնված 1932 թվականին, Ինդոնեզիայի մայրաքաղաք Ջակարտայում:

Այս գերդաստանի զավակ Ջոզեֆ Մելքուն խանը Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանության համալսարանում դասավանդել է մաթեմատիկա: Որպես փայլուն մասնագետի, նրա մեծադիր նկարը տեղադրված է համալսարանի թանգարանում, որի մասին առանձնագրույցի ժամանակ նշել է բելգիահայ Մաթոս Մաթոսյանը:

Արխիվային փաստաթղթերի հիման վրա պարսիկ հեղինակ Համիդ Ալգարը կազմել է Մելքուն խանի տոհմածառը: Ըստ այդ տոհմածառի՝ Շուշիում հայն ապրում է 1600-ական թվականներից: Այդ են վկայում նաեւ այն բազմաթիվ՝ առանց արձանագրությունների շիրմաքարերը, որոնք տեղադրված են Շուշիի հին հայկական գերեզմանատներում: 1871թ. հայ քարագործ վարպետը շիրմաքար է տաշել ու արձանագրություն գրել՝ նշելով տարեթիվը՝ մեսրոպյան գրերով: Ադրբեջանական, ինչու չէ նաեւ հայկական որոշ աղբյուրներում գրում են, որ իբր Շուշիի հիմքը դրվել է 1752 թվականին՝ չներկայացնելով որեւէ սկզբնաղբյուր ու փաստ: Դրանում համոզվելու համար բերենք, որպես օրինակ, «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (1988-1994)» հանրագիտարանը՝ բաղկացած 864 էջից, տպագրված Երեւանում, 2004 թվականին (գիտախմբագրական հանձնաօրոգի ղեկավարությամբ, նախագահ՝ Ջ. Հ. Բալայան, գլխավոր խմբագրի եւ նախագահի տեղակալ, հատորի պատասխանատու քարտուղար՝ Գ.Վ. Ալեքսանյան): Նշված հանրագիտարանում Շուշիի մասին գրված է. «18-րդ դարի 2-րդ կեսին թուրքական սարըջալու քոչվորական ցեղի առաջնորդ Փանահ Ալին, օգտվելով Ղարաբաղի մելիքությունների ներքին անհամաձայնություններից, Վարանդայի Մելիք Շահնազար բ-ի օժանդակությամբ տիրացել է Շուշիի ամրոցին: 1752 թվին հիմնվել է Շուշիի կամ Ղարաբաղի խանությունը, իսկ Փանահ Ալին իրեն հռչակել է Ղարաբաղի խան, բերդը բնակեցրել նախ թուրքական վաչկատուն ցեղերով, ապա՝ Ազուլիսից, Ղազանչիից, Մեղրիից եւ այլ վայրերից տեղահանված հայ շինականներով ու

արհեստավորներով» (տե՛ս, նույն տեղում, էջ 525, 526, ակնարկը ներկայացրել է Բ. Կարապետյանը):

Ըստ վերը նշվածի՝ ստացվում է, որ իբր Շուշին էլ, Ղարաբաղի խանությունն էլ հիմնադրվել են 1752 թվականին: Այնինչ, թե մեկը, թե մյուսը գոյություն ունեն ավելի վաղ շրջաններից, որի մասին նշվում է շատ աղբյուրներում: Պարսկական աղբյուրներում նշվում է, որ Ղարաբաղի խանությունը հիմնադրվել է գոյատևել է 1848-ից մինչև 1805 թվականը (տե՛ս, Ախմեդ Բեկ Ջիվանջիր, О политическом существовании Карабахского ханства 1748-1805гг., Шуши, типография Махтеси Акобяна, 1901г.): Գրախոսելու միտում չունեն, միանգամայն այլ թեմա է, սակայն հպանցիկ նշեն, որ այն ճշգրտումների մեծ կարիք ունի: Եվ կարծում են, կարիք չկա նման վիճակում այն թարգմանել ռուսերեն եւս եւ դնել ընթերցողի սեղանին:

Ինչպես տեսնում ենք, հազարավոր վկաներին գումարվելով, անհերքելի վկայություն է բերում եւ իրենց անջնջելի կնիքը դնում Զամիդ Ալգարի «Միրզա Մելքուն խան» գիրքը:

Գերդաստանի սերունդներից է Զովսեփ Մելքունենցը:

Զովսեփ Զակոբի Մելքունենցը (Մելքունյան) ծնվել է Նոր-Ջուղայում 1831թ.: Իր հորից՝ Զակոբ խանից ժառանգել է խանության տիտղոս:

Նախապես ասենք, որ Մելքունենց գերդաստանը տեղահանվել է Նախիջեւանի Ջուղայից: Գերդաստանի մի ճյուղը բնակություն է հաստատել Շուշիում: Զբաղվել են հիմնականում առետրով եւ կապ են պահել իրար հետ:

Մելքուն խանը նախնական կրթությունը ստացել է խան» գրքի կազմը թեհրանում: Կրթությունը շարունակելու նպատակով 15 տարեկանում տեղափոխվել է Փարիզ: 1846-1851թթ. սովորել է տեղի Մուրադյան վարժարանում: 1851թ. վերադարձել է թեհրան, ընդունել պարսկական հպատակություն ու քաղաքացիություն եւ սկսել պաշտոնավարել արտաքին գործերի նախարարությունում:

Պետական ծառայությունը Մելքուն խանի համար երկրորդական զբաղմունք էր: Նա բոլոր ջանքերը ուղղում էր Պարսկաստանի մտավոր լուսավորության համար: Նրա թելադրիչ գաղափարները մեծ ազդեցություն ունեցան պարսիկների եւ պարսկերենի վրա: Նա ամեն գնով պարտադրում, համոզում ու տարածում էր իր գաղափարները:



«Միրզա Մելքուն խան» գրքի կազմը

1. Թեհրանում համախմբեց երիտասարդությանն ու համոզեց արեւմտյան առաջադիմական գաղափարներով, որ տգիտությունն է ազգի առաջադիմության արգելակ:

2. Նրա համոզիչ գաղափարների շնորհիվ էր, որ երիտասարդ ազնվական պարսիկներն ըմբռնեցին առաջադեմ ծրագրերը: Սկսեցին խոսել եվրոպական քաղաքակրթությունը ներմուծելու անհրաժեշտության մասին: Արդեն վիճում էին Ղուրանի մութ կետերի շուրջը եւ պահանջում, որ Պարսկաստանում տարածվի քաղաքակրթություն:

3. Մելքունենցի գլխավորած շարժումն այնքան ուժեղացավ ժամանակի ընթացքում, որ երիտասարդ Նասրետդին Շահը եւս սկսեց դառնալ շարժման մասնակիցը: Մեծ էր Իրանի շահի ուշադրությունն ինչպես Մելքուն խանի, այնպես էլ նրա ձեռնարկումների նկատմամբ: Մելքուն խանը գերազանց տիրապետում էր պարսկերենին:

4. Լինելով հնուտ լեզվաբան՝ հիմնել է «Գանուն» (օրենք) թերթը, որը հիմնականում տպագրում էր քաղաքական-երգիծաբանություններ եւ կծու, սրամիտ խոսքերով անխնա ծաղրում պետական այրերի տգիտությունը:

5. Մելքուն խանի մտավոր կարողությունն այնքան զորեղ էր, որ կարողացավ մեծ ազդեցություն ունենալ պարսիկ սերնդի վրա եւ հիմք դնել ազատական շարժմանը, որն էլ հանգեցրեց Պարսկական հեղափոխությանը: Պարսիկները միշտ էլ խոստովանել են, որ առանց Մելքուն խանի Պարսկաստանը երկար տարիներ զուրկ կմնար Սահմանադրության բարիքներից:

Իր պաշտոնավարության 4-5 տարիներին այնքան մեծ էր Շահի եւ հոգեւորականության վստահությունը, որ եվրոպական պետություններ եւ Ամերիկա գործուղվող պատվիրակությունների կազմում կարելու պաշտոններ էին տրվում Մելքուն խանին:

Նա ամեն տեղ կնքում էր բարեկամական դաշնագրեր ու վերադառնում շքանշաններով եւ այլ պարգևներով:

Ժամանակի ընթացքում սկսեցին չարախոսել, լուրեր հասցնել Շահին, որ իբր Մելքուն խանի ելույթները կեղծ են, նրանց տակ քողարկված են վնասակար գաղափարներ: Նրա ճառերը դիմակներ են, որոնց տակ թաքնված են, իբր, փառասիրական նպատակներ: Նա չար խորհուրդներ ունի՝ Շահին զահրճեց պիտի անի եւ իր ձեռքն առնի կառավարությունը: Զալածանքներն այնքան ուժգնացան, որ Մելքուն խանը 1860թ. 4. Պոլիս փախչելով, ազատվեց (փրկվեց) ձերբակալությունից: Այստեղ նա խոր ուսումնա-

սիրում է արեւելյան գրականությունը՝ փնտրում միջոցներ ու բարվոքում արաբերեն տառերը, որոնք ամբողջ մահմեդական աշխարհի տառերն էին: Նրան էլ հաջողվել էր միայն Սաադիի «Կիլիստան»-ը (Գյուլիստան) բարձր ծելով հրատարակել:

Թուրքիայի այն ժամանակվա դեսպանը, որ զարգացած մարդ էր (Հաջի Սիրզա Յյուսեին Խան), զգալով, որ Մելքոն խանի խորհուրդներն անհրաժեշտ են, բարեխոսեց, որ Շահի մոտ նրան արդարացնեն: Եվ երբ 1875թ. Թուրքիայի դեսպանը Պարսկաստանի առաջին նախարար անվանվեց (նշանակվեց), Մելքոն խանին հրավիրեցին Թեհրան եւ Շահի հավանությամբ նշանակեցին ներքին գործերի նախարար:

Որպես ՆԳ նախարար, Շահը նրան 1878թ. ուղարկեց Բեռլինի վեհաժողովին մասնակցելու եւ պարսից շահերը պաշտպանելու: Մելքոն Խանի ջանքերի շնորհիվ Կոթուրը անցավ Պարսկաստանին, որի համար Շահը նրան շնորհեց «Սիրզա» տիտղոսը: Սա այն բարձր կոչումն էր, որ առաջին անգամ բրիտոնյան նստացավ Շահից: Նա սրտի ցավով դատապարտում էր հայոց հեղափոխական ընկերությունների բռնած անհեռանկար ուղին: Սերտ կապեր ուներ Ս. Ղազար վանքի Մխիթարյան միաբանության հետ: Ս. Ղազարում ելույթ էր ունենում ընդդեմ նրանց, ովքեր կուզենային ինքնակոչ ղեկավարներ լինել՝ ճակատագրական ծրագրեր մշակելով:


Սիրզա Մելքոն խանը մահացել է 1908թ. Շվեյցարիայում, ուր գնացել էր բուժվելու: Նրա մահը ամբողջ Պարսկաստանի համար ազգային սուգ էր:

Մահից առաջ բախտ է ունեցել ողջունելու պարսկական սահմանադրությունը, որի համար տարիներով աշխատել է՝ կրելով զրկանքներ ու տառապանքներ:

Մեծ է գերդաստանի «աշխարհագրությունը»: Գերդաստանի 11-րդ սերնդի շառավիղներն այսօր արձագանքում են Բելգիայի Գենտ քաղաքից, որտեղ ապրում է ճանաչված բժիշկ դոկտոր Մելքոն բեկի ընտանիքը: Նրա միջոցներով ստեղծվել եւ անունով էլ կոչվում է ԼՂՀ ԱԳ նախարարության գրադարանը:

Կցվում է տոհմածառի սխեման, պատճենահանված «Սիրզա Մելքոն խան» գրքից:

Հուսանք, որ ասպարեզ կզան նոր վկաներ եւս ու կխոսեն հինավուրց Շուշիի ավելի վաղ շրջանի մասին, վերահաստատելով, որ սա հայկական ռեզիոն է, ինչպես Ալզարն է ասում:



ԱՅՈ՛ՒՔԱՂԱՔԸ ԶԿԱ

Կամ՝ բաց նամակ Ադրբեջանի ժողովրդին

Համայն աշխարհին հայտնի է, որ հայ-թուրքական արյունահեղ ընդհարում է եղել Կովկասում 1905-06 թվականներին: Շատ հայի արյուն է հեղվել նաև Արցախում, մասնավորապես՝ Շուշիում: Եվ ահա այդ արյունահեղության 100-ամյա տարելիցի օրերին «Реальный Азербайджан» թերթում ադրբեջանցի լրագրող էյնուլլա Փաթուլլաեւի «Спецрей из Шуши, Агдама и Ханкенди» վերտառությամբ հողված է տպագրել Արցախ այցելելուց հետո, ավելի ճիշտ՝ «հետախուզությունից» հետո: Որպես 1988-94թթ. Արցախի եւ արցախահայության հետ կատարված բոլոր դեպքերի բաջատեղյակներից ու անմիջական պայքարի մասնակիցներից մեկը՝ չէի կարող չարձագանքել նշված հողվածին (թեև որոշակի ուշացումով)՝ նպատակ ունենալով որոշ ճշմարտությունների մասին իրագեկել ադրբեջանցի ընթերցողներին: Հողվածագրի շոշափած մի քանի հարցերից կարելուրում եմ խոսել միայն երկուսի՝ Խոջալուի դեպքերի եւ այն մասին, թե ինչու Ադղամը չկա: Եվ նախքան այն հարցին պատասխանելը, թե ինչու այսօր Ադղամը չկա, ինչպես նշում է ռեպորտաժի հեղինակը, կուզենայի թեթևակիորեն անդրադառնալ Խոջալուին:

Այսօր պաշտոնական Բաքուն դիմում է միջազգային բոլոր կազմակերպություններին, որ 1992թ. փետրվարի 25-ի Խոջալուի դեպքերը որակվեն ու ճանաչվեն ցեղասպանություն: Ես չգիտեմ՝ ինչ ցեղասպանության մասին կարող է հարց արժարժվել, դեռ պահանջ էլ ներկայացվել, երբ արցախահայությունը կառավարական մակարդակով դիմել է «խաղաղ» բնակչությանը՝ ապահովելով անվտանգ տեղաշարժ, ինչպես իրենք են սիրում ասել, տալով միջանցք դեպի Ադղամ: Բնակչության տեղաշարժի ժամանակ ադրբեջանցի զինված ուղեկցողները, շեղվելով նախատեսված ճանապարհից, նրանց տարել են դեպի հայաբնակ Նախիջեւանիկ գյուղի մատույցները, որտեղից օր առաջ հեռացել էին մեր տղաները, սակայն դեռ հրետակոծվում էր տարածքը Ադղամից: Հենց այդ տեղամասում էլ Ադղամից արձակվող արկերից զոհվել են ինչպես ուղեկցողները, այնպես էլ տարհանվող բնակչությունը:

Հեղինակը գրուցել է նույնիսկ մի ասկերանաբնակ ադրբեջանցու հետ, որը Շարժման սկզբին տեղափոխվել, սակայն նորից հետ է վերադարձել՝ պատճառաբանելով, որ չի կարող հարմարվել, որոշել է ընտանիքով մնալ:

Նրա ցուցումով էլ պարզվել են որոշ հանգամանքներ: Նա համոզված հաստատում է, որ Ադրբեջանի ժողովրդական ճակատի վաշտը խոջալուցիներին միտումնավոր տարել է հրետակոծվող տեղամաս, որպեսզի պատրվակ ստեղծեն պետական հեղաշրջման համար: Եվ դա նրանց հաջողվել է. նախագահ Այազ Մութալիբովի հրաժարականն է վկայությունը: Նշված օրը մինչեւ լուսաբաց, կապի միջոցներով իրար հետ վիճաբանության մեջ են եղել ժողովրդական ճակատի (ՀՓՎ) զինված ջոկատն ու Ադրբեջանի ոստիկանության աշխատակիցները, որը, կարելի է ասել, առճակատման տպավորություն է թողել: Առավոտյան մոտավորապես ժամը 07-ին Խոջալուի միլիարժի կապավորը («Կուրա»), մեզ համար անհայտ տեղից, կատարվածի մասին զեկուցել է յուրայիններին: Երբ երկխոսությունը կտրվել է, երեւի դիտավորյալ, հայտնել է ադրբեջաններն ու ինքն էլ լռել: Այսօր ոչ ոք չի զարմանում, որ Ադղամ քաղաքից միայն անունն է մնացել քարտեզի վրա եւ երբեմնի շուկայի հարեւանությամբ մզկիթը, որի պատերին հայ զինվորների գրությունները ռեպորտաժի հեղինակը համարում է սեւ բիծ աղղամցիների եւ ադրբեջանցիների խղճին: Ըստ Փաթուլլաեւի՝ հայերը երազել են երբեւէ Ադղամը հողի երեսից ջնջված տեսնել ու այսօր տեսնում են:

Իսկ ինչո՞ւ պիտի հայերը, առաջին հերթին՝ արցախցիները, երազեին այդ մասին: Ասեմ, որ հենց այնպես ու առանց պատճառի ոչինչ չի լինում: Յուրաքանչյուր գործողություն՝ լավ կամ վատ, ունենում է պատճառ: Իսկ Ադղամի համար պատճառներ՝ ինչքան ուզեք:

Ադրբեջանի իշխանությունները կարճ ժամկետում զարգացրել են Ադղամը, որպեսզի հարթավայրային Արցախը «պատնեշով» ընդմիջտ կտրեն լեռնայինից, եւ այդ գործընթացը շատ հաջող տարվել է 1960-ական թվականներից ի վեր: Դեռ ոչ վաղ անցյալում՝ 1905-06թթ., Ադղամը մի յուրատեսակ հավաքակալան էր Արաքսի ստորին հովիտներում վիստացող, նաև Պարսկաստանի հարավ-արեւմտյան կողմից ու Իրաքից եկած դաջար, համադան, օվշար, շահսեւան եւ այլ զինված ցեղերի համար, որոնց նպատակն էր բնավորված մահմեդականների հետ տիրել Արցախին՝ հասնելով Շուշի:

Ոչ ոքի համար զաղտնիք չէ նաև, որ Ադղամը ոչ միայն Ադրբեջանի, այլև ամբողջ Հարավային Կովկասի ամենաազդեխիվ ու հանցագործ քաղաքն է եղել (համոզվել ցանկացողները կարող են դիմել նախկին ԽՍՀՄ կամ Ադրբեջանի ՆԳՆ արխիվին): Այնպես որ, Ադղամն ինքն էր իր գերեզմանը սեփական ձեռքերով փորել դեռ 1988 թվականի փետրվար-մարտ

ամիսներին, երբ, հավատարիմ մնալով Չինգիզ խանի եւ Լենկ Թեմուրի գաղափարներին, արշավել է Ստեփանակերտի վրա՝ հրի մատնելով այն ամենը, ինչ եղել է ճամփեզրերին: Ինչպես 1905թ., այս արշավանքն էլ կասեցվել է Ասկերանի մատույցներում: Եվ դա եղել է այն ժամանակ, երբ հայը գենքի դիմելու մասին չէր մտածում ու տեղացի աղբբեջանցիներն էլ էին հայտնում Չայաստամին վերամիավորվելու իրենց կամքը՝ ասելով. «Ի՞նչ վատ կլինի, չէ՞ որ մեզ անհրաժեշտ բոլոր ապրանքները այնտեղից ավելի հեշտ ենք ստանում, ինչո՞ւ չցանկանալ, շատ լավ կլինի մեզ համար էլ»:

Նորից վերադառնանք ռեպորտաժին, որի հեղինակը, մի կողմ թողնելով բուն պատճառը, պնդում է, թե Աղդամից արծակած հրետանու մեկ արկը պատճառ է դարձել, որ հայերը քաղաքը ոչնչացնելու որոշում կայացնեն: Ամենեւին էլ այդպես չի եղել: Հիմնական պատճառն այն է, որ նույն ժամանակաշրջանում Աղբբեջանի ԵԳ նախարարի առաջին տեղակալ, գեներալ-մայոր Քյամիլ Ալի օլլի Մամեդովը 1988թ. փետրվարին՝ Աղդամում ստեղծել էր մի յուրանտեսակ շտաբ ու գործում էր՝ ինչպես կամենում էր: Եկեք հոգիներս չծռելով խոստովանենք, որ ամենագլխավոր սադրիչն էլ եղել է հենց իմքը՝ Քյամիլ Մամեդովը: Ինչպես Աղբբեջանի հայաշատ շրջանների, Արցախի (այն ժամանակ՝ ԼՂԻՍ), այնպես էլ Հայկական ԽՍՀ Ղափանի, Սիսիանի, Եղեգնաձորի շրջանների, որտեղ ապրում էին աղբբեջանցիներ եւս, սադրիչ գործողությունների հեղինակն ինքն է եղել: Այնպես որ, Աղդամի մզկիթի պատերի գրություններն էլ, Աղդամի ավերվելն էլ բիծ է, ես կասեի, սեւ ու անջնջելի բիծ, առաջին հերթին, սեփական ժողովրդին (մտածված թե չմտածված՝ կարելոր չէ) դեպի կործանում տարած Ք. Մամեդովի խղճի վրա:

Թող ոչ ոքի չթվա, թե ես ուրախ եմ, որ այսօր ջնջված է Աղդամը: Ամենեւին էլ այդպես չէ: Ես էլ այն մարդկանց թվին եմ պատկանում, որոնք տուժել են պատերազմից: Առաջին տուժողներից եմ եղել (ծննդավայրս՝ Բերդաձորի Ենգիբար, (1970-ականներից ի վեր՝ Ծաղկաձոր) գյուղը, որի միջով անցնում է Ստեփանակերտ-Գորիս-Երեւան մայրուղին, աղբբեջանցիները 1990-ի աշնանը հրկիզել են՝ հարծակվելով գիշերը), լավ գիտեմ, թե ինչ է նշանակում այդ: Երեւի Աղդամում էլ ամենը մարդիկ են եղել, սակայն քիչ հավանական է: Թող բոլորն իմանան՝ անկախ ազգային պատկանելությունից, որ իր դատավճիռը Աղդամը գրել է տարիներով, սեփական ձեռքով՝ տեղաբնակ հանցագործ տարրերի եւ հանրապետության բոլոր ժամանակների ղեկավարների համաձայնեցված թելադրանքով:

Նորից դառնանք Խոջալուին՝ Արցախյան պատերազմի հենց առաջին օրերին այնտեղ կատարվածի մասին լրացուցիչ ճշտումներ ներկայացնելու նպատակով: Ասենք, որ հիմնական դրդապատճառը 2007թ. համացանցում հայտնված, չորս տարբեր պարբերությունից կազմված անանուն, մեկ էջանոց տեղեկատվությունն է, որը հանրությանն է ներկայացնում Ստեփանակերտի օդանավակայանի ավազակ Ալիք Հաջիեւին՝ որպես ազգի հերոսի:

Խոսենք, նշված էջերից մեջբերումներ կատարելով ու մեկնաբանելով, զուգահեռներ անցկացնենք նրանում եղածի, նրա անձնական գործի, ինչու չէ նաեւ 1985թ. քրեական գործի տվյալների միջեւ:

Ալիք Հաջիեւի մասին էջում նշված միակ ճիշտն այն է, որ նա ծնվել է Խոջալու գյուղում եւ որպես միլիցիայի աշխատող՝ տեղափոխվել է Բելոռուսիայից: Անանուն հեղինակն այնպես է ներկայացնում, կարծես Հաջիեւ Ալիքը բնատուր տաղանդով օժտված միլիցիայի աշխատող է եղել, որ շատ արագ կարողացել է բացել հայերի «քարտերը եւ դաշնակների պլանները բացահայտել, որի համար էլ Ղարաբաղի հայերը որոշել են նրան չեզոքացնել: Նույն պարբերությունում նշված է. «Ա. Հաջիեւին զրպարտել են, նրա դեմ հարուցել են քրեական գործ: Նրան դատապարտել են տասը տարի ազատազրկման հենց այնպես (դատավորները եղել են հայեր)»: Որպես Ա. Հաջիեւին ճանաչողներից մեկը՝ նշեմ, որ նա եղել է միջին կարողության տեր կիսագրագետ տեղամասային տեսուչ (չնայած բարձրագույն մասնագիտական կրթություն էր ստանում, ստուգողական աշխատանքները գրում էին հայերը):

Հիմա այն մասին, թե ինչպե՞ս, որտե՞ղ, ինչի՞ համար եւ ո՞ւմ կողմից է ձերբակալվել «հերոսը»:

Ասկերանի շրջապառընկերության ավտոխանութի վարորդ, Ջամիլլու գյուղի բնակիչ Կուրբանին օր-օրի նորանոր անօրեն պահանջներ էր ներկայացնում (յուրաքանչյուր ամիս մեծացնում էր ստանալիք հասույթի գումարի չափը), ինչից դրդված Կուրբանը դիմում է մարզի կուսակցական ու խորհրդային վերադաս մարմիններին: Պետանվտանգության եւ իրավապահ մարմիններին հանձնարարվում է զբաղվել նշված հարցով: Վերահսկողությունն իրականացնում էր մարզկոմի ադմինիստրատիվ բաժինը (վարիչ՝ Վազիք Ջաֆարով): Միջոցառումն իրականացնողները Ա. Հաջիեւին ձերբակալել են իր աշխատասենյակում՝ իրեղեն ապացույցով՝ Կուրբանի՝ պահանջված գումարը տալուց անմիջապես հետո: Մանրագնդին հետաքննությունից հետո 1986թ. Ա. Հաջիեւը դատապարտվել է տասը

տարվա ազատագրկման (դատավոր՝ Իդրիս Էֆենդիե, դատախազ՝ Ռովշան Մուրադով): Գործող օրենքների սահմաններում որոշումը բողոքարկվել է, որը վերանայելով՝ հանրապետական դատարանի եւ դատախազության կոլեգիան դատավճիռը թողել է նույնը: Այնուհետեւ խոսվում է անարդարության եւ իրենց կողմից իրականացվող «արդարության» մասին: Մեջբերում են թարգմանաբար. «Անցել են տարիներ, եւ գործը վերանայվեց: Պարզվել է, որ Ա.Յաջիեւը անմեղ է: Անօրեն ազատագրկման տարիները չեն կտրել նրա կամքը: Ազատվելով՝ վերադարձել է հայրենի երկրամաս: 1990թ. դեկտեմբերի 21-ին Ա. Յաջիեւը նորից ընդունվել է միլիցիայի շարքերը: Նա նշանակվել է Խոջալուի օդանավակայանի գլխավոր»:

Ալիֆին, իր նմանների հետ, ԽՍՀՄ փլուզվելու օրերին զինել-ուղարկել են անցախցիների կամքը կտրելու: Ստեփանակերտի օդանավակայանի տարածքում հայերի նկատմամբ կատարված հանցագործությունների համար արժանի հատուցում է ստացել:

«Դարալագյազը կրակի մեջ» գրքի հեղինակ Քյամիլ Մամեդովը՝ այն օրերին Ա. Յաջիեւի տեղակալը, ականատես ու մասնակից է եղել այս բոլոր բռնություններին, երբ թալանել են հայ կանանց, հափշտակել ոսկյա զարդեր եւ փող: Նա Խոջալուի դեպքերը ներկայացրել է որպես «հերոսամարտ»: Գիտե՞նք՝ ինչպես էք հերոսանում եւ ինչպես մեծարվում: Դրա վառ օրինակներից են քնած մարդուն կացնով սպանող Սաֆարովը, «Ակոս» թերթի խմբագիր Յրանտ Դինքին սպանողը, որի հետ լուսանկարվում են Թուրքիայի ոստիկանները եւ շատ ուրիշներ: Եվ զարմանալի չէ, որ Ա. Յաջիեւին ներկայացնում էք որպես ազգային հերոսի: Դա ձեր եւ ձեր կառավարության բնորոշ առանձնահատկություններից է, որը չունի աշխարհի ոչ մի ազգ:

ՇՈՒՇԻԻ ԱԳՈՒԼԵՑՈՑ ԹԱՂԱՄԱՍԻ ԵՎ «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ» ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԱԿԱՏԱԳՐԵՐԸ

Ագուլիս, Ագուլիք: 11-րդ դարում հիշատակվող քաղաքատիպ ավան էր պատմական Վասպուրականի Գողթն գավառի (այժմ Նախիջեւանի Օրդուբադի շրջան) համանուն գետի միջին հոսանքում, շրջապատված այգիներով:

Ավանն ունեցել է 8 հազար ընտանիք: Այնտեղ գործել են մետաքսի գործարաններ: Ագուլիսը հայտնի է եղել որպես առեւտրականների բնակավայր. ուներ հարմար դիրք՝ առեւտրական ճանապարհների մի յուրատեսակ խաչմերուկ էր: Ուներ նաեւ գեղեցիկ եկեղեցիներ (տես, ՅՍՅ, հատ. 1, Երեւան, 1973թ.):

Թավրիզում հաստատված ծագումով ուզբել Ազադ խանը 1752թ. փորձել էր զավթել Երեւանի խանությունը, սակայն անհաջող արդյունքի էր հասել: Նահանջի ճանապարհին անցնելով Արաքսի աջ ափը, գրավել է Ագուլիսն ու թալանել, իրի ու սրի մատնել ժողովրդին: Յայերի կողոպուտն այստեղ շարունակվել է 3 օր: Կողոպուտվել են նաեւ ավանին հարակից բոլոր գյուղերը: Բնակչության մի մասը, փախուստով փրկված, մերկ ու սոված հասել է Շուշի (տես, Չամչյան, Պատմություն հայոց, հատ. 3, Վենետիկ, 1897թ.):

Իսկ ինչպե՞ս է դասավորվել Ագուլիսից Շուշի եկած, վերաբնակված հայերի կյանքը: Ամեն ինչ սկսել են գրոյից: Կառուցել են տուն, դպրոց, շուկա, խանութներ, արհեստանոցներ, հարմարվել նոր պայմաններին հայաշատ Շուշիում: Քաղաքում նրանց թաղամասը կոչվում էր «Ագուլեցոց թաղամաս» եւ զբաղեցնում էր քաղաքային պուրակի հարեւանությամբ գտնվող փոստի շենքի, շուկայի եւ ներկայիս Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի միջեւ ընկած տարածքը: Հենց դպրոցի շենքի ձախ թելի տեղում կառուցված է եղել Ագուլեցոց «Սուրբ Աստվածածին» եկեղեցին, որն ուներ 30մ երկարություն, 17,5մ լայնություն: Բրածրությունն անհայտ է, քանի որ դեռ 1905թ. էր ավերվել 2-րդ հարկը: Այն կառուցվել է 1822թ. Թառույնյանների մեծ գերդաստանի կողմից: Այդ մասին վկայող արձանագրությունը, որ գրված է եղել հարավային դռան ճակատակալի սրբատաշ քարին, ասում է.

«Կամաւն Աստուծոյ Սուրբ Աստուածածնայ աւագ եկեղեցիս կառուցին արդեամբք եւ ծախիւք իւրեանց իշխանաք ազնուազգի հարազատ աղայք Դօհրապ. Դովհանջան. Մարկոս եւ Բաբա տէր Մատթոսնն թառունեանց ընդ որս եւ որդիք նոցա Յովհաննես աղային եւ Աւետիս աղայ ի յիշատակ եւ ի փրկութիւն հոգւոց իւրեանց եւ սոցա ծնողաց. ամուսնոց. որդւոց. դստերաց իւրեանց ամենից եւ առհասարակ ննջեցելեցն ի Տէր ի կայանս երկնից. ի 1882 ամի Տեառն» (տե՛ս, Մ. Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895թ. էջ 92-93):

Թառունյանների տոհմական գերեզմանոցը Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու հարավ-արեւելյան կողմի հին հայկական գերեզմանատան տարածքում է: Չնայած գերեզմանատունը լրիվ ավերված է քաղաքի «աղբրեջանցիների» կողմից, սակայն որոշ շիրմաքարեր դեռ պահպանվում են, որոնց թվում նաեւ՝ Աղա Մարկոս Թառունյանցի շիրմաքարը (մահացել է 25.03.1892թ.):

Եկեղեցին եղել է երկհարկանի: Առաջին հարկը կառուցված է եղել տեղական սրբատաշ քարից, իսկ երկրորդը՝ փայտաշեն, որտեղ եղել է նաեւ զանգակատունը: Պատերն ունեցել են 1,1մ հաստություն: Ունեցել է մուտքի երկու դուռ: Գլխավոր մուտքի դարպասը բացվում էր դեպի արեւելք, որտեղ հատվում էին Ագուլեցոց եւ Փոստի փողոցները: Այստեղից լավ տեսանելի էր 2-րդ հարկում գտնվող զանգակատունը: Երկրորդ մուտքի դարպասը բացվում էր դեպի հյուսիս (Ղազանչեցոց փողոց): Փոստի շենքից ցած գտնվող «Բորժոմի» երկհարկանի հյուրանոցից (տեղում կառուցված է ներկայիս 9 հարկանին) մինչեւ շուկա կողք-կողքի կառուցված էին ագուլեցոց խանութներն ու արհեստանոցները: Սրբատաշ քարից կառուցված այդ խանութները նույն նպատակին ծառայել են նաեւ խորհրդային տարիներից, մինչեւ 1970-ական թվականները: Նշված տարիներին դրանց տեղում կառուցվել է երկու բնակելի հինգհարկանի շենք:

Ինչպես Շուշիի բնիկ հայերը, այնպես էլ ագուլեցիները խաղաղ կյանքով ապրել են մինչեւ 1905 թիվը: Թիվ, որը պատմության էջերում նշանավոր է որպես Կովկասում հայ-թուրքական զինված ընդհարումներ սկսվելու տարեթիվ:

Ագուլեցոց Ս. Աստվածածին եկեղեցին հայերի շուկայի հետ միասին գտնվում էին թուրքերի (փաստորեն, Պարսկաստանից, Իրաքից եկած ցեղեր.- ԳԳ) թաղամասին մոտ: Նույնիսկ եկեղեցուց ոչ հեռու կար թուրքի տուն, որ պատկանում էր ոմն Սալմանովի:

Պատմական աղբյուրներում նշվում է. «Նախապես վճարելով, հենց առաջին ընդհարման առաջին օրը հրկիզում են տունը, որպեսզի հրկիզեն նաեւ եկեղեցին: Եվ դա հաջողվում է թուրքերին» (տե՛ս, Ա.Դո, Դայ-թուրքական ընդհարումները Կովկասում 1905-06թթ., Թիֆլիս, 1907թ.):

Քաղաքի հարավային կողմում, ռեալական ուսումնարանի ու ժամհարյանների հիվանդանոցի շենքից վերել, տեղակայված հին հայկական գերեզմանատան տարածքում (հիմնականում ընդհարման ժամանակ գեղված հայերի շիրմներն են) ի հայտ եկած արձանագրության տողերն ասում են, որ եկեղեցու պաշտպանությունն իրականացրել է հայդուկների (զոհվել է մարտի ժամանակ):

Ագուլեցոց Ս. Աստվածածին եկեղեցու ներսում դիրքավորված, ուժեղ էլ զինված թուրքերը զոհեր տալով, հետներն էլ վիրավորներ տանելով, թողել են եկեղեցու շենքը: Այն կանգուն (թեկուզ կիսավեր) մնացել է մինչ-տարբեր նպատակների համար: Եղել են տարիներ, երբ այնտեղ ստանում էին են վառելիք ու տարբեր տեսակի քսայուղեր, ավտոպահեստամասեր գյուսեցին հիմնադրել դպրոցի շենք, ուր տեղափոխվեց Շուշիի թիվ 4 աղբրեջանական դպրոցը՝ 1974թ.:

Այս եկեղեցուն շուրջ չորս տասնամյակ իր պարտականությունն է կատարել Ատեվհանոս Քահանա տեր Գրիգորյանը: Նրա եւ տիկնոջ՝ Մարգարիտ Պարոնյանի աճյունները կողք-կողքի հողին են հանձնված քաղաքի հին հայկական գերեզմանատանը: Շիրմաքարի հարավահայաց կողին գրված է.

Ի տապանս ամփոփեալ է մարմին լուսայ Դոզի ստեփանոս Քինյի տիրացու Դայրապետեան տեր գրիգորեանց Դայրենեօթն էր յագարակ գեղջեն բարկիւշատայ ծառայելով սբ ածածնայ եկեղեցւոյն ագուլեց շուշի Քաղաքի ամս 42 ծնեալ 1776 ամի 8 Մայիսի վախճան 16 փետր.

Իսկ ինչպե՞ս են քանդվել եկեղեցու սրբատաշ քարերից շարված պատերը: Շատերին կթվա, թե բանվորներն այն քանդած կլինեն լինգերով ու քլունգներով: Մենք էլ այդ կարծիքին էինք: Ամենեւին էլ ո՛չ: Դսկա կառույցի քանդելու մասին պարզապես վերջերս, 2007թ. ապրիլին, Քարին տակ-Ատեփանակերտ երթուղային ավտոբուսում պատմեց Շուշիի երբեմնի թիվ



*Շուշիի ազուլեցոց ՍՔ. Աստվածածին
եկեղեցու հարավահայաց մուտքը*

92 շինվարչության բանվոր, ծնված Քարին տակ գյուղում, այժմ Ստեփանակերտ քաղաքի Կրուզովայա փողոցի թիվ 4 տան բնակիչ Սամվել Բաբայանը: Մեջբերում եմ նրա պատմածը. «Ունեինք երկու աշխղեկ: Եկեղեցու շենքը քանդում էր Այվազ Գյուսեյնովի բրիգադը, որտեղ աշխատում էինք նաեւ 4-5 հայեր մեր գյուղից: Սկզբում փորձում էինք քանդել լինգերով՝ չստացվեց: Որոշեցին քիչ քանակով պայթուցիկ նյութերով քանդել, դարձյալ չստացվեց: Չնայած քարերը պոկվում էին, սակայն ուժանակի հոսից ու փոշուց խեղդվում էինք, շնչելը դժվարանում էր, կոկորդներս՝ չորանում: Վերամբարձ կռունկի համար

ծանր հարվածող մուրճ պատրաստեցին ու սկսեցին քանդել: Քանդած քարերը տեղափոխեցին եւ օգտագործեցին Ղազանչեցոց եկեղեցուց քիչ հեռու կառուցվող շենքի համար՝ որպես հիմնաքար: Նրա քարերից նույնիսկ իրավունք էր տրվում տանել Շուշիից դուրս, միայն թե տանեին: Այդ քարից մի ավտո էլ ես եմ տարել Քարին տակ»:

Այժմ լրիվ ավերված է քաղաքի ազուլեցոց թաղամասը: Զսկա թաղամասից փլատակներում մնացել է արձանագրության մի կտոր, որի սրբատաշ ուղղանկյունածեւ քարը տեղադրված է եղել խանութներից մեկի մուտքի դռան վերնամասում (տե՛ս, ազուլեցոց խանութներից մեկի մուտքի ջարդված ճակատաքարի արձանագրության լուսանկարը):

Սա մի կատարյալ աղետ է 1752թ. աղետից հետո, այն էլ ոչ միայն ազուլեցոց, այլ համայն հայության համար:

ԵՐԲ ԳԵՐԵԶՄԱՆՈՑՆ ԱՎԵԼԻՆ Է, ՔԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ

Ոչ ավել՝ ոչ պակաս, 85 տարի է անցել Շուշիի ջարդերից (հայ-տաճկական, թուրքական ընդհարումներից): Եվ ի՞նչ է փոխվել: Ոչինչ: Նույն ավերակներն են այսօր մեր աչքի առաջ, նույն ցավը, նույն թշնամին եւ մեր անփոփոխ կենսագրությունը: Լավ է, գոնե դարավերջին կարողացանք ազգովի համախմբվել, հաղթել ու ազատագրել Արցախի հողերի մի մասը, որի արեւելյան սահմանն, ըստ պարսիկ գրագիր Միրզա Ջամալ Ջավանշիրի, ձգվում է Քուռ գետի աջ ափով՝ սկսած Ջարդրբից մինչեւ Ղազախի մոտ գտնվող «Կրասնիյ մոստ»-ը, որը նախկինում կոչվում էր «Սընըխ քյորփու» (կոտրված կամուրջ), արեւմտյան սահմանն են կազմում Սալվարթի եւ Արիբլիի սարերը, հյուսիսայինը՝ Ելիզավետպոլ (Գանձակ) եւ Գյորան գետերը, իսկ հարավայինը՝ Արաքս գետի «խուղաֆիրին» կամրջից մինչեւ Քուռին խառնվելու տեղը (Ջարդոբ):

Տարօրինակ է մտածել, բայց մեզ մոտ կարող են նախանձել՝ տեսնելով մեր հին գերեզմանատները, կարդալով շիրմաքարերի արձանագրությունները, որոնք ե՛ւ բանաստեղծություն են, ե՛ւ կոչ, ե՛ւ պատգամ, ե՛ւ կենսագրություն: Կենսագրություն մարդու, գերդաստանների բնակավայրերի, երկրի եւ, ինչու չէ, նաեւ ժամանակի պատմական կարեւոր դեպքերի: Ամենաիրականը՝ Շուշի քաղաքի քրիստոնեական հին գերեզմանատների, իբրեւ մինչեւ օրս չկարդացած մատյանների, չուսումնասիրված, մինչեւ օրս էլ անտարբերության մատնված մնալն է: Ջարմանալի է, սակայն այս շիրմաքարերի կողքին, այս կոթողների արանքում ես ինձ ավելի հպարտ եւ ուժեղ եմ զգում, քան հենց Շուշի քաղաքում, քանի որ տակնուվրա է լինում իմ հոգին, երբ վերհիշում եմ սովորելու տարիներս այս դժբախտ, սակայն գեղեցիկ դիրք ու տեսարաններ ունեցող քաղաքում:

Եվ այստեղ ավելի իրական եմ տեսնում ազգի արածն ու թողածը, ժամանակի դաժան ու պարտադիր ներկայությունը, վերջապես, հնամյա քաղաքի պատմությունը, ամրոցի մեծամեծերին, երեւելի ու քաջ զինվորականներին, մտավորականներին, հոգեւոր առաջնորդներին ու մարտիրոսներին: Եվ ինքս ինձ հարցնում եմ՝ մի՞թե այսքանը շատ չէ մի քաղաքի համար, թեպետ քաղաքը 19-րդ դարավերջին ուներ 30 հազար բնակիչ, եկեղեցիներ, կրթօջախներ, տպագրատուն, թերթեր, զորանոցներ, հիվանդա-

նոց, դրամատուն, փոստ ու շքեղաշուք թատրոն: Շրջում են տարածքում, կարողում ու վերծանում գրություններն ու զարմացած մտնտում. ինչպե՞ս կործանվեց նման մարդկանց շինածը՝ պահած ու զորացրած քաղաքը... Ինքս ինձ հարցնում եմ ու չեմ կարողանում գտնել պատասխանը:

Չեմ կարողանում, որովհետև այստեղ շիրմաքարերին գրվածը հերոսական ու աստվածահաճո մի պատմություն է, անհերքելի, ճշմարիտ մի գիրք է, որով կարելի է Շուշիի դարպասները բացել համայն աշխարհի առաջ:

120-ից ավել բնիկ Շուշեցի գերդաստաններ իրենց տոհմական գերեզմաններն ունեն այստեղ: Արձանագրություններից պարզ իմացվում է, որ շատ գերդաստաններ մեծ ներդրում են ունեցել քաղաքի բարգավաճման գործում: Կավե խողովակաշարով 18 կմ հեռավորությունից խմելու ջուր են հասցրել ու քաղաքի երեսանյան դռներից ոչ հեռու սրբատաշ քարով 1000 խոր. մետր տարողությամբ ջրամբար կառուցել (Թադեոս Բաբայի Թամիրյանց), Թառումյանները եկեղեցի են կառուցել, ժամհարյանները՝ հիվանդանոց, Խանդամիրյանները՝ թատրոն ու հյուրանոց, Բահաթրյանները՝ մեմաստան ու կուսանոց:

Այստեղ հողին են հանձնված «Հին հայոց տաղաչափական արվեստը» գրքի հեղինակ Ավետիս Բաբայի Բահաթրյանի գերդաստանի շուրջ 17 հանգուցյալներ, որոնք հիմնականում եղել են մտավորականներ: 1937թ., տպագրվելուց մոտ 40 տարի հետո, իր գրախոսականում հանճարեղ Չարենցը այն անվանել է զարմանալի ու հանճարեղ գիրք:

Շուշիի այս հին գերեզմանատանն են հանգչում երկրի ու ժողովրդի համար այլ բազում բարի ու անմոռանալի գործեր կատարած երեւելիներ:

Այստեղ գերեզմանոց ունեն Հասան Ջալալյանների գերդաստանը: Այստեղ հողին է հանձնված գուբերնսկի սեկրետար, ազնվատոհմ Սարգիսյան Բէկ Ջալալբեկեան (Ջալալբեկի) Հասան Ջալալյանցի դիակը, վախճանված 1876թ.՝ 55 տարեկանում: Այստեղ են նաև Շուշիի Ագուլեցոց եկեղեցու շինությունը հովանավորող Թառումյանները: Ի դեպ, եկեղեցին գործել է մինչև 1905թ., եւ նրա պաշտպանությունը կազմակերպել է տասնապետ 25-ամյա Ասլան Աղաբաբյանցը (Գորիսի շրջանի Կոռնիձոր գյուղից):

Շարունակենք տող առ տող կարդալ. «Գուբերնսկի սեկրետար Մովսեսբեկ Ստեփանյան, Ռեւ գյուղից, վախճանված 1910թ., 53 տարեկանում»:

18-րդ դարի հայտնի բժիշկ Հովհաննես բէկ Բալաբեկ Աղասարյանը, որն ուներ «Աստիճանավոր բժիշկ» կոչումը, նույն գերդաստանի զավակ, ցարական կառավարության ներկայացուցիչ Արցախում՝ Ջհանգիր բէկ Աղասարյանցը, պարգևատրված ս. Աննայի 3-րդ աստիճանի շքանշանով, վախճանված 1853թ.՝ 44 տարեկան հասակում:

Այստեղ է Շամիլի իմամին պարտության մատնող, Շամիլին էլ Գունիբում գերի վերցնող շուշեցի փոխգնդապետ Իսահակ Ղարամյանցի շիրիմը: Նա պարգևատրվել է 4 խաչով ու 6 մեդալով: Իսկ քիչ հեռվում՝ ծառերի արանքում, հագիվ տեսանելի, կա մի տապանաքար, մի զարմանք, մի խորհուրդ, մի կտակ: Ահա այն. տապանաքարի երեսին քանդակված խաչ էւ հրացան ու փոքրիկ մի գրություն, ընդամենը մեկ նախադասություն. «Սա է մեր կյանքը վտանգից պաշտպանողը ամեն», 1905թ. փետրվարի 6: Եվ մենք հանգիստ, առանց երկմտելու կարող ենք այդ 1905 թվականի կողքին, 100 տարի անց մի տարեթիվ էլ ավելացնել՝ 2005 թիվ:

Գերեզմանաքարերը հուշում են, որ Շուշիում միշտ էլ անհանգիստ է բարախել ինչպես մարդու սիրտը, այնպես էլ՝ ժամանակը ոչ միայն 1905-1906, 1918-1920 թվականներին: Եվ ամենազարմանալին այն է, որ 30 հազարը հաճախ լուռ ու մունջ տարել է նվաստացումը՝ վերջում ստիպված թողնելով իր շինած, հրի մատնված գեղեցիկ քաղաքը: Ամոթալի մի էջ մեր պատմության մատյանում:

Ես չեմ երկմտում ասել՝ ահա այսօր մեր ամենամեծ հարստությունը, մեր իրավունքը, եթե կուզեք, մեր տեղը քաղաքակիրթ աշխարհում: Սակայն կրկին մի անմեկնելի առեղծված, այսքան զորություն ու կործանված քաղաք, այսքան քաղաքակրթության ու հալածվածի, ոչ հաղթողի տրամադրություն, այսքան իմաստնություն եւ շարունակվող անտարբերություն մեր ժառանգության հանդեպ:

Դրա համար էլ ասում եմ՝ այս գերեզմանատներում ամեն ինչ ավելի պայծառ է, ավելի պինդ, ավելի հերոսական, քան քաղաքի քարուքանդ փողոցներում:

2005թ., փետրվար

ՓՈՔՐԻԿ ԴՐՎԱԳ՝
ՇՈՒՇԻԻ ՄԵԾ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆՆԻՅ

1.

Շուշի՝ անուն հանած քաղաք,
Որի տերըն ի սկզբանե
Եղավ հայը՝ վեհ ու ազնիվ,
Քիչ էլ, սակայն, դյուրահավատ.
Հրաշքներ էր կերտում քարե,
Թերթ էր սարքում, գիրք էր ծաղկում.
Մեկն ավարտին հասցրած հազիվ՝
Հաջորդին էր ձեռքը զարկում,
Երազանքի՝ թեւին սահում,
Երբ իր անկուշտ հարեւանը,
Ձեռքն էր սրի կոթին պահում՝
Երդուններով սուտուպատիր...
Չուտ հայեցի՝ հենք ու բարքում՝
Շուշին այդպես ծախվեց մի օր
Ձեռքով իր իսկ հարազատի.
Ոտից գլուխ քայլ էր դա սեւ՝
Մտքի արդյունք դավաճանի,
Պտուղն էր այն խավար պահի,
Երբ մարդ խելքը կորցնում է
Հանուն գահի:
/Կառնի, արդյո՞ք, հայը դասեր,
Աստված չանի՝,
Որ կրկնվի մեղքը նման/
Ճակատագիր ծռող չարը
Հողս բերեց տարրը օտար,
Օ՛, հայ Ներոն...Օ՛, դու՝ կավա՛տ,
Այդ քո՛ ձեռքով այրվեց Շուշին:

2.

Քաղաք մտավ տարրը օտար
Ու թանձրացավ,

Բայց անհաղորդ մնաց հոգին
Լույսին պայծառ.
Պահում էր նա քաղաքն անջուր,
Չէր տնկում ծառ...
Միշտ ուրիշի հաշվին ապրող
Ցեղի վայրի
Կարգախոսն է՝ տիրիր եւ կան
Ջարդիր, այրիր...
Թաղեուսը, հա՛յն, ի վերջո,
Ձեռքը տարավ «տաք» գրպանին.
Ժայռի կուրծքը ոսկով հատեց-
Ամեն մետրին՝ քանի՛-քանի-
Չուլալ ջուրը հասնի քաղաք՝
Իր կառուցած
Սրբատաշ ու մեծ ամբարում
Ուժ կուտակի, մտնի ծորակ՝
Հայերենով՝ հոսի-խոսի...
Մերունդներին ի պահ տալով
«Առասպելը» Թաղեուսի:

3.

Բայց ոստանս ավերակվեց:
Հրին տվեց թու՛րքը քոչվոր,
Որ չնշվի այնտեղ Ջատիկ,
Ղազանչեցոց եկեղեցում
Սուրբ մեռնով չօժվի ոչ-ոք...
Տեղովը մեկ թուրքը՝ լեղի՝
Իր սեւ թաթը դրեց անգամ
Թաղեուսի գերեզմանին,
Շիրմաքարը հանեց տեղից՝
Տեղում պարի քոչի քամին...
Շուշին՝ հայի սիրտ ու հոգի,
Շուշին՝ հայի արյան հատիկ,
Վաղվա օրվան թողած իր դատ՝
Շուրթը առավ ատամի տակ,
Սպասելով բարի օրվա...

4.

Ու եկավ այն: Ու երբ եկավ՝
 Վախից դողաց թուրքն ապերախտ,
 Հայը նորեն խիզախ ու հաղթ՝
 Նրան տվեց, օ՛, ինչ քոթակ.
 Իր ոստանիկ տունը մաքրեց
 Թուրքից օտար:
 Հետո թեև պակաս-պռատ
 Հացիվ-կեցիվ,
 Հիշեց քարի մասին Մեծի...
 Ընկավ էս յան, ընկավ էն յան,
 Գործի դրած միտք ու հունար՝
 Գտավ սրտի հրոնածը:
 Իսկ նորօրյա բարերարն էլ
 /Անվամբ կոչեմ՝ կոչեմ
 «Լեւոն Հայրապետյան»-
 Շառավիղը Մեծն իշխան Ջալալյանի/
 Չխնայեց սեր ու գունար՝
 Մահարծանը Թաղեւոսի
 Վերստին շուքով տեղը դրեց...

Իրապատում դրվագն էլ այս՝
 Շուշիի մեծ պատմությունից
 Ձեր բոլորի խոնարհ ծառան՝
 Հարությունյան Հրաչյան գրեց:

ՍԵՐՎԱԾ ԱԶՆՎԱԿԱՆ ՏՈՐՄԻՑ

Պատմությանը հայտնի է, որ Շուշիի հին ու նշանավոր գերդաստաններից են նաև Աղամալյանները: Ազնվական այս գերդաստանի Աղամալյան ազգանվան ծագումնաբանությունն ասում է, որ տոհմի նախապապը եղել է Աղամալին: Որոշ տեղեկատու աղբյուրների վկայությամբ մեծ է այս գերդաստանի աշխարհագրությունը: Նրա սերունդներն ապրել են Նախիջևանում, Երնջակում, Երեւանում, Թբիլիսիում:

Աղամալյան Արտեմ Պողոսի: Ծնվել է 1882թ. Ելիզավետպոլի նահանգի Շուշիի գավառի Չայքադուզ գյուղում (այժմ Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղ): 1903թ. արտասահմանից Անդրկովկաս է տեղափոխել լեւինյան «Իսկրան», 1914-ին մասնակցել է ընդհատակյա տպարանը Բաքվից Ելիզավետպոլ տեղափոխելուն: Մահացել է 1963թ. (տե՛ս, ՀՍՀ, հ 1, էջ 241):

Աղամալյանց Սուքիաս (1738-1789), հայ մաթեմատիկոս, մանկավարժ, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ: Ծնվել է Սյունիքի Երնջակ գավառի Շոռոթ գյուղում (նույն տեղում, էջ 242):

Երեւանաբնակ Աղամալյաններից, որպես տեղեկատու, մնացել է լուսանկարիչ Աղամալյանի անունը մի քանի լուսանկարների վրա: Նախկինում ավանդաբար լուսանկարիչները իրենց անունները թողնում էին իրենց լուսանկարչատանը ստեղծված գործերի վրա: Մեզ են հասել լուսանկարիչի մի շարք գործեր:

Իսկ հիմա տեսնենք ինչ են ասում Շուշիի հին հայկական գերեզմանատան շիրմաքարերի արձանագրությունները Աղամալյանների գերդաստանի մասին: Գերդաստանի գերեզմանոցը տեղակայված է Երեւանյան դռների հարավ-արևմտյան կողմի գերեզմանատան կենտրոնական մասում: Պահպանված շիրմաքարերից մեկի հարավահայաց կողմն արձանագրված հինգ տողերն ասում են.

Ի ՏԱՊԱՆԻ ՀԱՅՍՄԻԿ Կ
 ՓՈՓԵԱԼ ՊԱՀԻ ՄԱՐՄԻՆ
 ԲԱԶՄԵՐԱԽՏ ՀՕՐ ՄԵՐՈՅ ԱՅԻ՝
 ԱՂԱՄԱԼԻ ԱՂԱՄԱԼԵԱՆՑ
 Ի 15 ԴԵՔԴ 1832

Արձանագրության չորրորդ տողը՝ Աղամալի Աղամալեանց անուն-ազգանունը հուշում է, որ Աղամալին կրում է իր պապի կամ նախապապի ա-

նունը, որի անունով կոչվում է գերդաստանը՝ Աղամալեանց։ Հարեւանությամբ հողին է հանձնված կնոջ՝ Եղիսաբեթ Աղամալեանցի աճյունը՝ մահացած 1841թ. մարտի 8-ին։ Ժամանակի ընթացքում ազգանվան «եանց» ածանցը իր տեղը զիջել է «յան» ածանցին, եւ ազգանունը շարունակել է գոյատեւել Աղամալեան գրությամբ։

Ուրիշ տեղեր չգիտենք, Արցախում այսօր այս գերդաստանը սերունդներ չունի։ Գերդաստանի՝ մեր երկրամասում ապրող վերջին շառավիղը եղել է անվանի բժիշկ Սմբատ Սերգեյի Աղամալեանը, որն իր գործունեությամբ մնայուն հետք է թողել Ղարաբաղում առողջապահության զարգացման բնագավառում։ Ի դեպ, սուղ տեղեկությունները, որ հասել են մեզ, առնչվում են բժիշկ Աղամալեանի հետ։ Նա ծնվել է 1897թ., Շուշի քաղաքում։



Աղամալեանների գերդաստանը

Կոնկրետ տեղեկություններ ստանալու նպատակով դիմեցի Ստեփանակերտ քաղաքում տեղակայված հակառակընդդեմ դիսպանսերի գլխավոր բժիշկ Բենիկ Միրզոյանին։ Մեր զրույցի ժամանակ պարզվեց, որ բժիշկ Ս. Աղամալեանը առաջին բժիշկն է եղել Ղարաբաղում, ով սկսել է պայքարը դեռ 1930-ական թթ. սարսափելի մի հիվան-

դության դեմ, որ կոչվում է թոքախտ։ Ս. Աղամալեանը եղել է ճանաչված եւ ընդհանուր հեղինակություն վայելող մասնագետ։ Նրա նախածեռնությամբ 1934թ. կազմակերպվել է 20 մահճակալանոց ստացիոնար բաժանմունք ու հատուկ լաբորատորիա։ Բ. Միրզոյանի հետ այսքանով սահմանափակվեց մեր զրույցը։ Խորհուրդ տվեց դիմել ավելի տարիքով բժիշկների, ովքեր ժամանակին աշխատել են Ս. Աղամալեանի հետ։

Ահա թե ինչ պատմեց Եղիշե Աթայանը, որ աշխատել է անվանի բժշկի հետ. «Սմբատ Սերգեյիչը շատ զրազետ, քաղաքավարի, մարդամոտ, իր մասնագիտության իսկական տերը հանդիսացող եզակի բժիշկ էր Ղարա-

բաղում։ Նա եղել է կոլեկտիվի սիրելին։ Բոլորիս համար նա անառարկելի հեղինակություն էր։ Հիվանդը սկսում էր ապաքինվել նրան տեսնելու պահից։ Նրա խոսքն ավելի լավ էր բուժում, քան ժամանակին տարածված «խիցին» եւ «սուլֆիդին» պրեպարատները։ Ապրում էր միայնակ, քաղաքի Մոզիլեւսկայա փողոցի թիվ 1շենքի բնակարաններից մեկում։ Երբ խորհուրդ էինք տալիս ամուսնանալ, կարճ պատասխանելով, ասում էր՝ մարդու հույսը միայն ինքն է, ժամանակ չունեն այդ բարդ հարցի մասին մտածելու համար»։

Ե. Աթայանը նշեց նաեւ, որ Ս. Աղամալեանը մասնագիտական կրթությունը ստացել է Պետերբուրգում։ Ունեցել է մեծ դրամական միջոցներ, մույնիսկ պապից ժառանգած ոսկե եւ արծաթե զարդեր։ Թոշակի է անցել 1960 թվականին։ Չարանեմզ գողերը գիշերը ջարդել են բնակարանի մուտքի դուռը եւ թալանելու նպատակով նրան սպանել։

Ստեփանակերտի Ստ. Շահունյանի անվան պուրակում ունեցած մեր զրույցի ժամանակ Եղիշե Սարգսյանը բժիշկ Աղամալեանի մասին պատմեց. «Աշխատում էր «Սովետական Ղարաբաղ» թերթի պատասխանատու քարտուղարի պաշտոնում։ 1957թ. ձմեռը հանգստանում էի Մարդաբյանի առողջարանում։ Հիվանդացա, ուղարկեցին Բաքվի Սեմաշկոյի անվան հիվանդանոցում հետազոտվելու։ Նույն հիվանդանոցում բուժվում էր նաեւ Ս. Աղամալեանը։ Չնայած ծանոթ էինք, ավելի մտերմացանք։ Առաքինի, լուրջ, խոհեմ, վարվեցողությամբ բարձր կուլտուրայի տեր անձնավորություն էր։ Մի օր, ճաշից հետո, երբ շրջում էինք հիվանդանոցի բակում, մեզ մոտեցավ հիվանդանոցի ավագ բուժքույրն ու դիմելով նրան, խնդրեց, որ բժիշկ Աղամալեանը գնա գլխավոր բժշկի մոտ։ Վերադառնալուց հետո պատմեց, որ գլխավոր բժշկի մոտ կային նաեւ երկու թերապեւտներ։ Գերմաներեն լեզվով ներդիրներով դեղեր էին ստացել, սակայն օգտագործելու ձեւը չգիտեին, խնդրել էին, որ բացատրի»։

...Անբասիր հագնված, թեթեւակի հենվելով նրբագեղ ձեռնափայտին, բժիշկ Սմբատ Աղամալեանը քայլում էր Լեհինի պողոտայով (ներկայիս Վ. Սարգսյանի փողոցով), որի ավարտին այն ժամանակ տեղակայված էր Ղարաբաղի միակ պալարախտային հիվանդանոցը։ Նույն ընթացքով աշխատանքային օրը վերջանալուց հետո, նա դանդաղաքայլ վերադառնում է իր կացարանը։ Հանդիպողները՝ ծանոթ թե անծանոթ, հարգալից բարեւում էին նրան, այդ կերպ հարգանքի տուրք մատուցելով բժշկի վաստակին։

Սմբատ Աղամալեան՝ Շուշիի ազնվագարն գերդաստանի՝ անփառունակ վախճանով ավարտած վերջին շառավիղը։

Միսկին Բուրջին սիրել է հանդիպումներ ունենալ անվանի մտավորականների հետ: Հանպատրաստից հորինել է քառյակներ ու մատուցել խնջույքների մասնակիցներին: Նրա մտերիմ ընկերներից է եղել քաղաքի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու առաջին հոգևորական Ավետիս Երամիշյանցը: Ասում են, Միսկին Բուրջին Ա. Երամիշյանցի հետ թբիլիսիում՝ 1837թ., հանդիպում է ունեցել Ռուսաստանի ցար Նիկոլայ Առաջինի հետ, որի ժամանակ, ի պատիվ ցարի, հորինել է մի քառյակ, որի տողերում ասվում է.

- Император русский, великий царь..
Кроме бога, нигде нет выше вас.

Պարզ ու հասկանալի, սակայն ռուսերեն ու աշուղավարի ողջունել է ցարի առաջին մուտքը Թբիլիսի: [3]

Հաջորդը՝ 19-րդ դարի 2-րդ և 20-րդ դարի 1-ին կեսին գործած աշուղի մասին պիտի խոսվի, որը հայտնի է «Տուղլու աշուղ Ալեքսան» (Տող գյուղ) անունով: Այս աշուղի մասին ևս մեր մշակույթի պատմության էջերում, հանրագիտարանում տեղեկություն չկա: Միանգամայն պատահականորեն ձեռք բերվեց Ֆիրիդուն Շուշինսկու «Սեյիդ Շուշինսկի» փոքրածավալ գրքույկը՝ հրատարակված 1966թ., Բաքվում: Այդ գրքում հիշատակված է նաև աշուղ Ալեքսանի անունը: Շատ զարմանալի է, որ այս հայ աշուղի մասին գովեստով է խոսում հեղինակը: Ջարմանալի է: Սակայն երբ ընթերցեցի աշուղի մասին տեքստի երկու էջերը, զարմանքս վերացավ: Հեղինակն այլընտրանք չուներ: Գրքույկն աղբբեջաներեն է, թարգմանաբար մեջբերում են ազգանունով անհայտ ղարաբաղցի, ղարաբաղում էլ գործած աշուղի վերաբերյալ հատվածը. «1904թ. աշնանը տողեցի աշուղ Ալեքսանն իր խմբով հարսանիքի է հրավիրվում Հորադիզ գյուղը: Նույն հարսանիքի կանանց խնջույքին մաշադի Հուրգաթը ևս հրավիրված էր: Հանդեսին հավաքված գյուղի տարեցները աշուղ Ալեքսանին խնդրում են, որ 15-ամյա Սեյիդի երգը ևս լսեն: Աշուղ Ալեքսանը չի մերժում, նվագակցելով՝ երգելու հնարավորություն է տալիս տղային: Դրանից հետո աշուղը իր խմբում ընդգրկում է Սեյիդին ևս: Սեյիդը միշտ հարգանքով էր խոսում աշուղ Ալեքսանի մասին, ասելով՝ ես առաջին անգամ Ղարաբաղի Ղոչահնեղլի գյուղում (գյուղը Կարյազհնոյից՝ այժմ՝ Ֆիզուլի) ոչ հեռու է, հեղափոխական Մամեդխան Մամեդովի հարսանիքի ժա-

մանակ աշուղ Ալեքսանի հետ միասին եմ երգել: Նրա խումբը բաղկացած էր 8 հոգուց: Աշուղի որդին՝ Լալալարը և երգում էր, և նվագում: Երեք-չորս տարի նրանց հետ Ղարաբաղար, Հորադիզ և Արաքսի ափերին տեղակայված գյուղերի հարսանիքների երգն այնպես էր երգում, որ լսողները հիացած էին մնում»:



Ձախից առաջինը՝ խմբի ղեկավար, հայտնի թառահար Սուրեն Մանգասարյանը

Այս աշուղի մասին կոմպոզիտոր Ուզեիր Հաջիրեկովը գրել է. «Աշուղ Ալեքսանը 19-րդ դարի 2-րդ կեսին ապրած աշուղներից է: Այն ժամանակ Ղարաբաղի գյուղական հարսանիքներում իր խմբով հանդես եկող (նվագող-երգող) աշուղ Ալեքսանը Աղբբեջանի երաժշտական արվեստի զարգացման և մի շարք վարպետ-մասնագետների հասունացման, զարգացման գործում մեծ ու նշանավոր ծառայություններ է ունեցել»:[4]

Եվ պատահական չէ, որ արվեստագետը իր հետագա հոդվածներից մեկում գրում է. «Աշուղ Ալեքսանն անցյալ դարի ականավոր աշուղներից մեկն է»:[5]

Քանի որ Ֆիրիդուն Շուշինսկին երգարվեստին նվիրած, Բաքվում հրատարակված իր գրքում խոսում է նաև առևտրի և հայերի թթի օղու մա-

սին: Մենք էլ մի քիչ շեղվենք ու պարզենք, թե ինչու է աշուղ Ալեքսանի խմբուն երգող հորադիզեցի Սեփոյն շուշեցի Սեփո Շուշինսկի անվանում, երբ նրա մանկության ընկեր Ասադ Միրզալի օղլին, հիշելով միասին սովորելու տարիները, գրում է. «Ես, Սեփոյն և Ղոչահմեդլի Չեյդար Չեյդարովը նույն դասարանում էինք սովորում: Մեր ուսուցիչն էր Մուլլա Յամգան: Նրան «Пишик Амза» (Կատու Յամգա) ասելով էին կանչում»: [6]

Կարող ենք համոզված ասել, որ Սեփոյն և այլոց՝ որպես շուշեցիների հանրությանը ներկայացնելը միշտ միևնույն նպատակն է հետապնդել ու այժմ էլ այդպես է արվում միտումնավոր, վաղուց կազմված ծրագրի համաձայն: Ծրագիր, որը տալիս է մեկ հանձնարարական՝ Շուշին ապագա սերունդներին ներկայացնել որպես մահմեդական Շուշի: Այլապես, Սեփոյն և շատ-շատերը չէին ներկայացվի որպես շուշեցիներ: Եթե նկատել եք, հանրագիտարանում բացակա է, չի նշված Ուզեիր Չաջիբեկովի ծննդավայրը: Ինչու: Որովհետև արվեստագետի կենսագրության ճշգրիտ նոր էջեր պիտի բացվեն: Պարզապես վերջերս հաջողվել է պարզել Ուզեիր Չաջիբեկովի իսկական անունը: Շատ-շատերի մոտ նա ևս ասիմիլյացիայի էր ենթարկվել: Նա ծնվել է 1885թ., մահացել՝ 1948թ. Բաքու քաղաքում, որտեղ էլ նրա՝ սև գույնի գրանիտից, քրիստոնեական ոճով կանգնեցրած ուղղանկյունաձև շիրմաքարին՝ կարակուլ է փափախով պատկերված նկարի տակ գրված է՝ Չաջի բէկ Ուզեյիր Աբդուլ Չյուսեյին օղլը: [7] Այս հարցը թողնենք հետագային, որ ուիշներն էլ զբաղվեն ու ասեն իրենց կոնկրետ, սպառիչ խոսքը և նորից դառնանք թեմային:

Քաղաքի հին հայկական գերեզմանատներում կատարված հետազոտությունների ժամանակ, կարևոր տեղեկատու արձանագրություններից բացի, շիրմաքարերի կողերին քանդակված՝ կերպավորված տարբեր պարային տեսարանների, երաժշտական գործիքների հանդիպեցի, որոնք գաղափար են տալիս, որ 18-19-րդ դարերում Շուշիում եղել ու գործել են հանրահայտ երաժիշտներ: Եվ հասկանալով, որ մեծ տեսարանների՝ պատկերների առկայությունը ձևի համար չէ, հետազոտության տարիներին շատ էի ցանկանում հանդիպել գոնե մեկ շիրմաքարի, որի արձանագրությունը որոշ տեղեկություն կտար ժամանակաշրջանի որևէ հայ երաժիշտի մասին: Եվ մնացի մտորումների մեջ, թե ինչպես կարող է հավաքված 1300-ից ավել արձանագրությունների շարքում, որոնք հստակ տեղեկություններ են տալիս քաղաքում գործող 49 արհեստների ու պատմական իրադարձությունների մասին չլինել երաժշտության վերաբերյալ տեղեկատու արձանագրություն:

Այս հարցը մի տեսակ դժվար, ավելի ճիշտ, չլուծվող խնդիր դարձավ ինձ համար, որը դժվարացնում էր հետագա տարիներին Շուշիում ապրած երաժիշտների մասին խոսք ասել:

Այո, դժվարացնում էր, քանզի կնամավեր մի շինության, որի հիմքի և առաջին հարկի մասին ոչինչ չասելով, պիտի ներկայացնեի հաջորդ հարկերն իրենց թերություններով ու առավելություններով: Եվ, վերջապես, 2008թ. հուլիսին, միանգամայն անսպասելի կերպով, դժվարությունը հաղթահարվեց: Արձանագրություններ հավաքած՝ Շուշիին հարակից Ղայրալի գյուղից վերադառնում էի: Ստեփանակերտ-Երևան մայրուղու աջակողմյա հեղեղատում նկատվեցին շիրմաքարեր: Չասկանալի էր, որ դրանք բերել են ազերիները, որպեսզի փակեն հեղեղատն ու նրա վրայով անցկացնեն ավտոճանապարհ դեպի մուսուլմանաբնակ Խալիֆալի և մյուս գյուղերը: Չենց հաջորդ օրվանից սկսեցի բացել տեղամասն ու նկարահանելով, հավաքել արձանագրություններ: Երրորդ օրը մի կիսաջարդ շիրմաքարի կողին ընթերցեցի «սազանդար» բառը: Աչքերիս չէի հավատում, որ գտնվել է տարիներ շարունակ փնտրածս: Չայացքս բառին սևեռած՝ նստեցի քարի դիմաց և սկսեցի ուշադիր զննել: Նրա վրա չկար ուռնի (ծանր մուրճի) ոչ մի հարվածի հետք: Չնարավոր է՝ ինքնաթափ մեքենայից քարերը հեղեղատը լցնելու ժամանակ են ջարդվել՝ երկու մասի բաժանվել (հուշում էր քիչ թեք՝ ուղղահայաց ջարդված լինելը): Մի քանի օր հետո, որոշ հեռավորության վրա, գտնվեց հրաշքով փրկված երկրորդ կտորը ևս: Այնուհետև երևացին ուրիշ շիրմաքարեր էլ, որոնք հանդիսացան անխոս վկաներ շուշեցի երաժիշտների մի գերդաստանի մասին, որ ապրել ու գործել էր 18-19-րդ դարերում:

Մի քանի խոսք արվեստի այս տեսակի ծագումնաբանության տեղի, ձևավորման ու տարածման մասին, մասն այն մասին, թե ինչպես և երբ է հասել Շուշի և նոր միայն ետ գնանք ու սկսենք երաժիշտների գերադաստանից ու փորձենք ներկայացնել այդ բնագավառը՝ մինչև մեր օրերը: Նշեն, որ այս բնագավառի մասնագետ չեն, երգել-նվագելու շնորհք չի տրվել ի վերուստ, սակայն սիրում ու հասկանում են թե մեկը, թե մյուսը, և նպատակս միայն մեկն է՝ ներկայացնել հանրությանը շուշիաբնակ հայերի տեղն ու դերը, քաշը արվեստի նշված բնագավառի կշեռքի նժարի վրա և նրանց ներդրումը տարածաշրջանում երգ-երաժշտության գործում:

Նախ՝ տեսնենք ինչպես է ներկայացված երաժշտությունը Շուշիում բաքվաբնակ Ֆիրիդուն Շուշինսկու (Մամեդովի) ռուսերեն «Շուշա» գրքում.

«Շուշին հանդիսանում է երաժշտության օրրան: Այս քաղաքը, որ իրավամբ Կովկասի կոնսերվատորիա էր համարվում, տվել է շատ երգիչներ և երաժիշտներ: [9] Սերտ կապված երգարվեստին, Շուշիում աճել է թառ, քյամանջա և հարմոն նվագողների ամբողջ համաստեղություն: Նրանց շարքում կարելի է դասել թառահարներ Ալի Ասկերին, Սադրխջանին, Արսենին, Լազր Տեր Վարդանեստովին, Արսեն Յարամիշյանին, Մաշադի Ջալալ Ամիրովին, Բալայի որդի Գրիգորին (1895-1929), փոքրիկ Գրիգորին, Բալա Գրիգորի որդի Մելիքովին (1902-03թթ. ապրել է Բաքվում), Թադևոս Յարությունյանին, Կուրբան Փիրումովին, Լազր Գաբրիելյանին, քյամանջահարներ Բաղդազյուլի որդի Աթային, Ավանեսին, Բաղդազյուլի որդի Քյասիին (Գասպար, Գ. Գ.) Սևիին, Լևոն Կարախանովին, Բ. Ալիևին, Արմենակ Շուշինսկուն և Մակիչին»: [10]

Ներկայացվող ցուցակին անմիջապես հաջորդում է երկտող. «Այս ցուցակում առանձին տեղ է զբաղեցնում թառահար Սադրխջանի անունը (նույն տեղում):

Իսկ ահա գրքի հեղինակը հաջորդ էլում գրում է. «Առանձնահատուկ պետք է նշել ճանաչված թառահար Արսենի անունը, որը երգիչ Սեփիի հետ լավագույն ձևով նվագում էր «Չահարգյահ» դժվար նվագվող մոտիվը: Նա միշտ արժանանում էր բուռն ծափահարությունների»: [11]

Ցուցակում ընդգրկված 20 երաժիշտներից 16 հոգի հայեր են, իսկ մյուս չորսը, թե ինչքանով են ադրբեջանցի, պարզ չէ: Սակայն անառարկելիորեն զգացնել է տալիս իրեն, որ Ջամիլը մաշադի քոչվոր ցեղի ծագում ունի: Ըստ նշված տարեթվերի, պարզ հասկանալի է, որ գրքում ներկայացված են 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի 30-ական թվականների շուշեցի երաժիշտները: Իսկ հետագա տարիների մասին ոչ մի խոսք, ուրովիետև Ադրբեջանում տարվող ներքին քաղաքականությունն իրավունք չէր տալիս իայ լավ մասնագետի մասին դրական խոսք ասել: Դրանում կհամոզվենք, ավելի ճիշտ, մեզ կհամոզեն էլի կոնկրետ օրինակները:

Դառնանք ու սկսենք վերը նշված հեղեղատում առաջօր էլ բազմաթիվ շիրմաքարերի հետ փշերի տակ մնացող ու փրկության սպասող 18-րդ դարում ու 19-րդ դարի սկզբին Շուշիում ապրած ու գործած երաժիշտ Յարունի գերդաստանից:

Ուսումնասիրություններից պարզվել է, որ հեղեղատում գտնվող շիրմաքարերը բերված են քաղաքի Ղազանջեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու

հարավ-արևելյան կողմի և ռուսական եկեղեցու բակի արևելյան հատվածի գերեզմանատներից:

Արդեն ակնհայտ չորս շիրմաքարերի արձանագրություններ, որ տեղադրված են եղել Ոսկանի, նրա որդիներ՝ Առաքելի, Յարությունի (անվանակոչել են պապի՝ Յարությունի անունով), Ասլանի շիրմաներին, վկայում են այն մասին, որ գերդաստանն, իրավամբ, բաղկացած է եղել երաժիշտներից, այն էլ՝ վարպետացած: Այդ մասին խոսում են նրանց վերագրված «ուստա» և «սազանդար» բառերը: Հիշյալ երաժիշտների ծնված թվերը չեն նշված շիրմաքարերի արձանագրություններում, սակայն պարզ գրված է, որ Ոսկանը մահացել է 1791թ., եղբայրներ Առաքելն ու Յարությունը՝ 1795թ., իսկ Ոսկանի երրորդ որդին՝ սազանդար Ասլանը՝ 1801 թվականին: Գերդաստանի Յարություն պապի մասին տվյալներ չկան, քանի որ չգտնվեց շիրմաքարը: Նրա որդու շիրմաքարի արձանագրության տողերում վերջինս հիշատակվում է որպես ուստա, այսինքն՝ վարպետ:



Վարպետ Յակոբջան Պետրոսյանը արհեստանոցում

լքեսին է նման: Հուշահամալիրը Արեւելքի երկրների հավատի օջախների զմբեթավոր կոմպոզիցիային է նման: Տասներկու կողմանի թմբուկի բրգածեւ ծածկի կտրվածքով անկյունները միացված են թելածեւ: Ադրբեջանի դեկավարների անտարբեր վերաբերմունքից օգտվելով՝ մեր ապերախտ հարեւանները, թուրք-օղուզ ցեղին պատկանող հուշարձանների 70 տոկոսից ավելին իրենցը դարձրին»:

Սա էլ ասում է Երեւանում բարձրագույն կրթություն ստացածը, առանց հաշվի առնելու մի հանգամանք, որ իր իսկ կողմից նշված հոգեւոր քարոզչության համար կառուցված կառույցները եւ օղուզների անվանափոխված շառավիղների Կովկաս թափանցելը ժամանակի առումով իրար հետ չեն խոսում: Իր իսկ ձեռքով գրում է, որ նշված հոգեւոր օջախները կառուցվել են 7-րդ եւ 12-րդ դարերում, առանց հաշվի առնելու, որ իրենց նախնիները Կովկաս են հասել մոտ 3 դար հետո: Իրենք կեղծելով-յուրացնելով, մեծ մասն էլ ավերելով (թարմ վկաներն են Ջուղայի խաչքարերը), ուզում են յուրովի պատմություն գրել, իսկ մենք լուռ եւ անտարբեր ենք նման ահավոր երեւոյթների նկատմամբ:

Եվ ինչո՞ւ չասի, երբ այսօր Շուշիի շուկայի հարեւանությամբ՝ մեր ձեռքերով վերանորոգված մզկիթի բակում, պահպանվում է մի քարե ցուցանակ, վրան գրված.

1920 - ЧИ ИЛИН ПАЈЫ ЗЫНДА Н, НАРИМАНОВ БУРАДА ЧЫХЫШ ЕТМИШДИР	1920 թվականի աշնանը Ն. Նարիմանովն այստեղ ելույթ է ունեցել
--	--

(Ն. Նարիմանովը եղել է Ադրբեջանի մինիստրների խորհրդի նախագահը Հ.Հ.):

Իսկ երբ 1960-ականներին կուլտուրայի մարզային բաժնի վարիչ Շ. Աբրահամյանը միստերից մեկի ժամանակ իր ելույթում ասել է. «Ոչ մզկիթի, ոչ էլ եկեղեցու շենքը մարքսիզմի դպրոց չի եղել, ինչո՞ւ կարելի է մզկիթի շենքն օգտագործել որպես թանգարան, իսկ Ղազանչեցոց եկեղեցին մատնել անուշադրության», ապա նրա հարցը ոչ միայն մնացել է անպատասխան, այլեւ կարճ ժամանակ անց ազատվել է պաշտոնից:

Նման շատ դեպքեր են եղել, այժմ էլ կան, որոնց ուշադրություն չենք դարձնում, չենք էլ ուզում ընդունել, որ կուլտակվելով, մոր հենարաններ

ստեղծելով՝ դրանք սերունդների հոգին ու մտածողությունը խաթարում են: Իսկ խաթարվեց հոգին, կորավ հավատը՝ կործանվում է մարդը:

Բերենք սուկ մեկ օրինակ ներկայից: Հաճախակի է մարդը: Ատես լինում, որ յուրատեսակ հավատացյալների ենք լսում ու ակավկաներ) ինչ-որ քարոզչություն է անում: Եվ այդ քարոզչությունը մի խումբ (եհովայի կային է՝ գենքից հեռու մնալու գաղափարի ներարկումը նպատակն է: Եվ սրան զուգահեռ, եթե փոքրիշատե օգտակար գաղափարներ էլ ուայն տեղ գտնի սերունդների հոգում, ապա անհամադրելի է, ու եթե էլ, հայրենիքն էլ: Այսօրինակ գաղափարներն ավելի վտանգավոր են, քան օրը ցերեկով կատարվող ռմբակոծությունը, որից պաշտպանվելը շատ հեշտ է, քան առաջինից:

Պաշտպանված ազգ ու հայրենիք ունենալու համար անհրաժեշտ է նաեւ պաշտպանված հոգի եւ գաղափար ունենալ ու այդ գաղափարով էլ մախնիներից ժառանգածը:

Պիտի պահպանենք մեր հոգեւոր-մշակութային ժառանգությունը: Մինչդեռ չենք անում: Չենք անում նույնիսկ այսօր: Իսկ դրանում համոզտառապատ բարձունքներին բազմած «Օխտը եխծե»-ի (յոթ եկեղեցի) շրքարեր, որ մեկը մյուսից գեղեցիկ ու շատ էլ տեղեկատու արձանագրույթուններ ունեն:

Պարտադիր չէ պետականորեն արվեն գործերը, թեւ, ինչ խոսք, գոնե բարձր մակարդակով: Պարզապես խոսքս հետեւյալի մասին է՝ եթե յուրառչնչպցումից, ինքն էլ կղառնա ազգասեր: Այլապես քու կոպեկի արժեք չեն ունենա այդտեղ վառած մոմերը:

Մենք կարող ենք եւ պարտավոր ենք դա անել հանուն մեր հոգիների փրկության ու մեր հոգեւոր անվտանգության:

**ՇՈՒՇԻՆ 18-19-ՐԴ ԴԱՐԵՐԻ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒ ՄԱՐՏԵՂԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ցեղերի ու ժողովուրդների մեծ գաղթի ու տեղաշարժի (ուրբանացման) ժամանակներից ի վեր Անդրկովկասը եղել է մեծ շահերի բախման ու ռազմաքաղաքական ծրագրերի իրականացման յուրատեսակ հանգուցակետ: Այս տարածքով են անցել դեպի հյուսիս արշավող ասորիները, իսկ հյուսիսից հարավ՝ սկյութները, դեպի արեւմուտք՝ պարսիկները, իսկ արեւմուտքից դեպի արեւելք՝ հույներն ու հռոմեացիները:

Այստեղով են անցել նաեւ թուրք սելջուկներն ու թաթար-մոնղոլները: Վերջիններս Լեւոն Թեմուրի առաջնորդությամբ եղել են նաեւ Ղարաբաղում (այդ մասին է վկայում Ասկերանի շրջանի Բաղարա գյուղի արեւելյան կողմում գտնվող «Լեւոն Թեմուրի մաննը» կոչվող տեղանունը):

Կատարենք մի փոքր էքսկուրս եւս, որից հետո խոսենք վերնագրված թեմայի շրջանակներում:

Անդրկովկասի շատ խանություններ, այդ թվում նաեւ Արցախը, 17-18-րդ դարերում գտնվում էին Պարսկաստանի իշխանության տակ: Երբ 1748թ. իր մերձավորների կողմից սպանվում է Նադիր շահը, փլուզվում է նրա իշխանությունը, իսկ նրա գահին նստել ցանկացողների թիվը մեծանում է:

Իրենց անկախ հռչակած խաների միջեւ սկսվում են գահակալական կռիվներ: Չնայած երկիրը տնտեսական ու քաղաքական ճգնաժամ էր ապրել, սակայն Նադիր շահի սպանվելուց առաջ նպաստավոր պայմաններ էին ստեղծվում երկրից փախած Փանահ Ալիի համար, ով 1747 թվականից թափառում էր Ղարաբաղի տափաստաններում:

Իսկ ո՞վ էր նա: Ինչպես պարսկական, այնպես էլ ադրբեջանական աղբյուրներում նրա մասին գրված է. «Պարսկաստանի խորքում բնակվող եւ թափառական կյանք վարող սարուջանլու ցեղին պատկանող մի հովվի որդի էր, որ Նադիր Շահի մոտ կատարում էր մունետիկի պաշտոն եւ կոչվում «Ջառչի Փանահ»: Սա ներհակաբար հրապարակ է հանել Նադիր Շահի հրապարակած վճիռը եւ գլխատվելուց վախենալով, Ղարաբաղ է փախել 1747 թվականին ու սկսել զբաղվել ավազակությամբ (տե՛ս, Ախունդով Նազիմ, Գարաբաղնամալար, Ադրբեջան, Բաքու, 1990):

Ապրես Բեկնազարյանը «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի 73-րդ էջում գրում է. «Երբ Նադիր Շահը 1748 թվականին մերձավորների կողմից սպանվում է, մեծ հնարավորությունների դուռ է բացվում տափաստաններում թափառող ավազակապետի համար: Նա տեղավորվում է Գյուլիստանի եւ Ջրաբերդի մելիքների մոտ: Նախապես խոստանալով հպատակություն, ստանալով նշված վայրերի մելիքների համաձայնությունը, իր մոտ է հրավիրում իր ցեղակիցներից մոտ 100 հոգի ու Ղարաբաղի հարթավայրային մասում ավելի ուժեղացնում ավազակային հարձակումները: Իսկ Շուշիում նրա հայտնվելու մասին գրված է. «Չետագայում, իրականությունից ու մելիքների ազդարարությանն անտեղյակ, Մելիք-Շահնազար Գ-ն վեց հազար թունանի ավազակապետի վրա ծախել է Շուշիի ստորին մասը»:

Փանահ Ալին Շուշիի ստորին մասում հաստատվելուց հետո շարունակում է ուժեղացնել բանակցությունները Մելիք-Շահնազարի հետ, ժամանակի ընթացքում զարտուղի ճանապարհով ստանում խանական կոչում ու էլ ավելի ուժեղացնում թուրքալեզու քոչվոր ցեղակիցների մուտքն՝ այս անգամ արդեն Շուշի: Նրանց տեղավորման վայրը կոչվել ու նույնիսկ խորհրդային տարիներին կոչվել է Քյոչալիլար մահլասի (քոչվորների թաղամաս): Չնայած հաստատվել էին քաղաքում, բայց շարունակում էին ապրել նախկին ձեռով:

Իսկ Շուշին մինչ այդ հայաբնակ էր, որի մասին արդեն հայտնի տեղեկությունների մի մասը կներկայացնենք ընթերցողին:

1. Ոչ հայագգի Համիդ Ալզարի հեղինակությամբ ԱՄՆ Կալիֆորնիայի նահանգում հրատարակված ծավալուն «Մելքոն Խան» գիրքը վկայում է, որ Մելքոն խանի գերդաստանը 1690-ական թվականներից ի վեր ապրել է Շուշիում, զբաղվել է առետրով, եղել է Պարսկաստանի շահի մերձավորներից: Գերդաստանի շառավիղները՝ բժիշկ Մելքոն Բեկի գլխավորությամբ, որոնք ներկայումս ապրում են Բելգիայի Գենտ քաղաքում, կենդանի վկաներ են:

2. Մելիք Շահնազարի գերդաստանի երկու ճյուղերն Ավետարանոցից արդեն տեղափոխվել եւ ապրում էին Շուշիում, ինչի մասին վկայում են քաղաքում երկու առանձնատներն ու տոհմական գերեզմանոցը:

Այժմ անդրադառնանք Շուշիի 18-19-րդ դարերի հին հայկական ու մահմեդական գերեզմանատներին եւ տեսնենք, թե ինչ են ասում առկա արձանագրությունները:

Հայկական գերեզմանատների շիրմաքարերի արձանագրությունները գրված են գրաբար, միջին հայերեն, նաեւ՝ ղարաբաղյան բարբառով:

Մահմեդական գերեզմանատան շիրմաքարերի արձանագրություններն արաբատառ են: Բոլոր գերեզմանատների (8 քրիստոնեական եւ 2 մահմեդական) շիրմաքարերը տեղական քարից են:

Այժմյան քաղաքի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու հարավարեւելյան կողմի՝ հիմնովին ավերված հայկական գերեզմանատան տարածքում պահվող շիրմաքարերի մեկի կողին գրված չորս տողից բաղկացած արձանագրությունը վկայում է, որ մեծշենցի հոգեւորական Ասծատուր Մայիլյանի թոռ Պետրոսի աճյունը հողին է հանձնվել ՌՍ (1751) թվին: Մայիլյանների գերդաստանի շառավիղները ներկայումս ապրում են Արցախում եւ նրա սահմաններից դուրս: Ռ՞վ գիտի, գուցե ավելի վաղ շրջանի մասին տեղեկացնող արձանագրություններ էլ կլինեին, եթե խորհրդային տարիներին ադրբեջանցիների կողմից չավերվեին քրիստոնեական գերեզմանները:

Ժամանակին փորձում էի պարզել, թե ում է պատկանում Շուշիի հյուսիսային կողմի հին հայկական գերեզմանատնից հեղեղատով սահմանազատված մահմեդական գերեզմանատունը: Նկատի ունեմ կոնկրետ ցեղը, ազգությունը: Ուսումնասիրության հենց նախնական շրջանում պարզվեց, որ այս գերեզմանատան տարածքում հողին են հանձնված Իրաքից եւ Պարսկաստանից տեղափոխված քոչվոր ցեղերի հանգուցյալների աճյունները, որոնց շիրմաքարերի արձանագրությունները որոշ տեղեկություններ են տալիս: Արձանագրությունները վկայում են այն մասին, որ Շուշի են հասել քերթալա, մաշադի, ղաջար եւ այլ ցեղեր: Պարզվեց նաեւ, որ որոշ ժամանակահատվածում կիսաքոչվոր կյանք վարելուց հետո նրանք 20-րդ դարասկզբին սկսել են հարմարվել նստակյաց կյանքին, բայց շարունակում էին զբաղվել հիմնականում անասնապահությամբ եւ թաղիքագործությամբ:

Վերը նշված քոչվոր ցեղերը խորհրդային տարիներին՝ 30-ական թվականներին, ասիմիլացիայի են ենթարկվել ու ստացել ադրբեջանցի անվանումը: Վերոնշյալ «Գարաբաղնամալար» գրքի 477-րդ էջում գրված է. «1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո» մինչեւ 1830 թվականը, բնակչության ներհոս է եղել դեպի Ղարաբաղ: Անդրկովկաս են տեղափոխվել 40 հազարից ավելի պարսիկներ, որոնք տեղավորվել են Երեւանի եւ Ելիզավետպոլի նահանգներում: Հեղինակը նույն գրքի 412-րդ

էջում նշում է. «Ղարաբաղի, Շամախու եւ Շաօի տարածքները հնում հուսկական են եղել»:

Հայտնի է, որ 1805թ. Կուրակ գետի ափին կնքված պայմանագրով Ղարաբաղը մտել էր Ռուսաստանի հպատակության տակ՝ ներառվելով Ելիզավետպոլի նահանգում: Այնպես որ, նահանգ ներհոս կատարած պարսկական ցեղերը բնակեցվել են նաեւ Շուշիի սուրբին՝ արեւելյան սարահարթի վրա: Այդ մասին են վկայում նաեւ մահմեդական գերեզմանատան արձանագրությունները: Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող արաբատառ այս արձանագրությունները միաժամանակ խոսում են հանգուցյալների՝ ինչպես այս կամ այն քոչվոր ցեղին պատկանելու, այնպես էլ խորհրդային տարիներին ասիմիլացիայի ենթարկվելու մասին:

Եվ այսպես, կողք-կողքի են ղաջարների ցեղի սերունդ քույր ու եղբայր Քեյխոսրովի եւ Նիմթաջի շիրմաքարերը: Եղբոր շիրմաքարին գրված է. Բահմանով Քեյխոսրով Միրզա Ղաջար Բեյգուբաթ Միրզա օղլու (1914-1985), իսկ քրոջ շիրմաքարին՝ Բահմանովա Նիմթաջ Քեյգուբաթ զըզը (1920-1974): Իսկ ոմն Այյուբի շիրմաքարի վրա, որ կանգնեցված է առագաստածեւ, գրված է արաբատառ եւ ադրբեջաներեն. Հաօիեւ Այյուբ Մաշադի-Սուլեյման օղլու (9.VII 1900-1971 19.1):

Հարկ ենք համարում նշել, որ ժամանակին երգարվեստին ծառայություն մատուցած, հանրությանը միշտ ադրբեջանցի ներկայացված Ուզեիր Հաջիբեկովն ու Բյուլ-Բյուլը եւս Պարսկաստանից տեղափոխված ցեղերի սերունդ են: Դա հաստատվում է նրանց իսկական տվյալներով: Առաջինը ծնվել է 1885թ., մահացել՝ 1948թ., Բաքու քաղաքում: Քրիստոնեական ոճով կանգնեցված ուղղանկյունաձեւ սեւ շիրմաքարին պատկերված նկարի տակ գրված է. «Հաջի բեկ Ուզեիր Աբդուլ Հյուսեին օղլը»:

Իսկ Բյուլ-Բյուլի մասին խորհրդային մեծ հանրագիտարանի առաջին հատորի 206-րդ էջում գրվածը ներկայացնում են թարգմանաբար. «Բյուլ-Բյուլ (իսկական անուն-ազգանունը՝ Մուրթուզա Մաշադի Ոզա օղլու Մամեդով, ծնվ.՝ 26.06.1897թ., Խանի բաղ տեղամասում: Շուշի քաղաքից ոչ հեռու: Ադրբեջանական խորհրդային երգիչ: Բյուլ-Բյուլ (բլբուլ) նշանակում է սոխակ: Հատուկ անուն դարձած այս մականունը նա ստացել է շնորհիվ իր ծայրի: Մահացել է 26.09.1961թ., թաղված է Բաքվում»:

Չիմացողների համար նշենք, որ Խանի բաղը Շուշիից 15 կմ հեռու է: Ստույգ տեղեկություն էլ չկա, թե կոնկրետ որ խանին է պատկանել:

ԿՈՎԿԱՍՈՐ՝ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍԱՀՄԱՆ ԵՎ
ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ
18-19-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

*Մեր ապագան մեծամասամբ
կախված է նրանից,
թե ինչ և ինչպես գիտենք մեր անցյալը:*

Ու. ՉԵՐՉԻԼ

Պատմությունից գիտենք, որ 16-րդ դարասկզբին Հայաստանը բաժանված էր երկու մասի: Նրա արևելյան մասում իշխում էր Պարսկաստանը, իսկ արևմտյան մասում՝ Օսմանյան թուրքիան: Գիտենք նաև, որ դաժան էին պայմանները հայ ժողովրդի համար (տարբեր տեսակի ծանր հարկեր էին սահմանված): Հայրենի երկրում հայը սովի մատնված էր, բռնում էր օտարություն տանող ճանապարհը: Այդ ճանապարհներից ամենահուսալին դեպի Ռուսաստան տանողն էր: Մեր ժողովրդի համար դժնդակ տարիներին Ռուսաստանն ընդունում էր հայ տարագիրներին: Նրանք բավարարվում էին աշխատանքով, իսկ որոշ ժամանակից հետո կառավարական մակարդակով Ռուսաստանի հարավային տարածքներում հիմնվում էին հայկական գաղութներ: Նման ձեռնարկումը մեծ ոգևորությամբ էր կատարվում, հետապնդելով նպատակ՝ ավելի ամրապնդվել Վոլգայի միջին ու ստորին հոսանքներում, հենվելով քրիստոնյա հայ ժողովրդի վրա: Սա կարևոր քաղաքականություն էր, որը ժամանակի առումով համընկնում էր Իվան 3-րդի և Իվան 4-րդի (Իվան Ահեղ) վարած քաղաքականությանը: Ժամանակակիցները վկայում են, որ այդ քաղաքականությունը հայերը սիրով էին պաշտպանում: Փոխադարձ վստահության ծնունդներից է Դոն գետի ափին հիմնադրված Նոր Նախիջևանը, որն այսօր Դոնի Ռոստով (Ростов на Дону) քաղաքի շրջաններից մեկն է:

Հավատարմության ու փոխադարձ վստահության բազմաթիվ օրինակներ կան պատմության էջերում: Ընթերցողին ներկայացնենք երկու օրինակ: Երբ 1552թ. Իվան 4-րդի զորքը շրջապատում է Կազան քաղաքը, թաթարները փորձում են հայ հրետանավորներին օգտագործել ռուսների դեմ: Երբ հայերը չեն համաձայնվում, թաթարները երկաթե շղթաներով նրանց կապում են թնդանոթներին: Մահվան դատարպատված հայ հրե-

տանավորները այնպես են կրակում, որ ռուսները կամ չէին հասնում ռուսական ստորաբաժանումներին, կամ էլ անցնում էին ավելի հեռու: [1] Իսկ երբ չորս տարի հետո, 1556թ. Աստրախանի խանությունն է հպատակեցվում, տեղի հայերը մեծ խանդավառությամբ են դիմավորում ռուսական զորքին: Բնակիչներ, որոնք դեռ մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում էին բնակություն հաստատել ու հաճախ էին ենթարկվում խաների ու մահմեդականների հալածանքներին: Պատմական աղբյուրներում այդ մասին նշված է. «Հավատակիցների գալը և Հաշտարխանի (Աստրախանի, Յ.Յ.) խանության կցումը Ռուսաստանին հայերին ազատեց խաների կամայականություններից: Մինչև այդ սակավաթիվ հայկական գաղութը սկսեց արագ աճել և նշանակալի դեր կատարեց Աստրախանի առևտրական համբավը բարձրացնելու գործում: Ստեղծվեցին առևտրական խոշոր տներ»: [2]

16-17-րդ դարերի պատմական մի շարք վավերագրեր վկայում են ինչպես Արևմտյան Եվրոպայի և Միջին Ասիայի, այնպես էլ Մոսկվայի հայ վաճառականների գոյության և հաջող գործունեության մասին: Միայն Ռուսական կայսրությունն էր նրանց մեծաշնորհներ և արտոնություններ տալիս: Ուշադրությունից դուրս չէին մնա դարաբաղցիները՝ Շուշի քաղաքի առևտրականները, որոնց միջոցով Ռուսաստան էր ներմուծվում հիմնականում մետաքս, իսկ այնտեղից Ղարաբաղ՝ տարբեր տեսակի ապրանքներ:

Շուշիի և Արցախի այլ բնակավայրերի ճարտարապետական կառույցների ու շիրմաքարերի արձանագրություններում շատ վկայություններ կան՝ 18-րդ դարասկզբից ի վեր ռուս-ղարաբաղյան ռազմական, դատաիրավական, առևտրական, քաղաքական հարաբերությունների մասին: Հայտնի առևտրականներ են եղել Անդրեաս Առուշանյանը, մոսկվայաբնակ շուշեցի Գրիգոր Մարտինի Առաքելովը, որի սեփական միջոցներով 1901-08թթ. կառուցվել է Կովկասի նշանավոր կառույցներից մեկը՝ Շուշիի ռեալական ուսումնարանի եռահարկ շենքը, որի շրջանավարտները շարունակում էին իրենց ուսումը Պետերբուրգի, Փարիզի և Բեռլինի համալսարաններում ու դառնում նշանավոր մասնագետներ: [3]

Անհրաժեշտ է նշել Պետերբուրգում կրթություն ստացած հայտնի ճարտարապետ Ֆրեյդուն Հակոբի Աղայանի անունը: Նրա մասին գրված է. «Աղայան Ֆրեյդուն Հակոբի (1876-1944), ծնվել է Շուշի քաղաքում, 1903-ին ավարտել է Պետերբուրգի քաղաքացիական ինժեներների ճար-

տարապետական բաժինը: 1903-21-ին Բաբվում նախագծել և կառուցել է երկաթուղու ուղեմատույց կանուրջները, զիննագիան, ծննդատունը, բանվորական տունը, գանձատունը, Արմավիրում՝ հայկական եկեղեցին, Կիսլովոդսկում՝ ամառանոցային շենքեր: 1921թ. տեղափոխվել է և աշխատել Երևանում: Մահացել է 01.02.1944 թվականին»: [4] Առանձնացնելով մյուս առևտրականներից, նշենք մեկի մասին, ով հայտնի է Իվան Կարապետ անունով: Լինելով հայտնի առևտրական Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաք Պետերբուրգում, զբաղվել է նաև քաղաքական հարցերով: Նա եղել է հայկական ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ Իսրայել Օրու հետնորդը: Վերջինս ասպարեզից դուրս մնաց: 1701-ին սկսած գործն ավարտին չհասավ (1711թ.) մահվան պատճառով: Ի դեպ, Ռուսաստանից Ղարաբաղին ռազմական օգնության հասնելու համար տարվող գործը դադարեցվեց մինչև 1715 թվականը, այսինքն մինչև ռուսական դեսպան Վոլինսկու Անդրկովկաս գալը: Նրա առաջ խնդիր էր դրված ուսումնասիրել Պարսկաստանի հետ եղած սահմանը և դեպի այն տանող կարևոր ճանապարհները: Իսկ մինչ այդ, Մինաս վարդապետի և Իսրայել Օրու միջոցով Պետրոս 1-ին ուղարկած փաստաթղթում, բաղկացած չորս կետից, որ նման է պայմանագրի, գրված է.

ա) Հայերս ունենք յոթանասունու թ հազար զորք, որից վաթսուներեք հազարը Ղարաբաղում է, իսկ տասներեք հազարը՝ Ուտիքի գավառում: Պահանջվելու դեպքում կարող ենք հարյուր հազար զորք հանել:

բ) Կայսրը կարող է տալ տասնհինգ հազար զորք, որոնք կառաջնորդեն հայոց զորքին՝ պատերազմի ժամանակ:

գ) Ռուսաց զորքի բոլոր ծախսերը հայերը պատրաստ կլինեն հոգավիրենց հաշվին, եթե այդ զորքը միանա հայերի հետ: Միացման օրից հայերի հաշվին կլինի ամեն ինչ:

դ) Երբ հայերը կթոթափեն պարսից լուծը՝ կմտնեն Ռուսաց պետության հովանավորության ներքո, պահպանելով իրենց հայկական իշխանությունը իր բազմադարյան իրավունքներով, վճարելով որոշակի տուրք Ռուսաց կառավարությանը: [5]

Պետրոս 1-ին կայսրը, որ միշտ խոստումներ էր տալիս և հայերին առաջարկում համբերել, վերջապես, տեղեկացնում է, որ զորքով շարժվում է դեպի Ղարաբաղ: Իսկ երբ մարտականորեն տրամադրված Ղարաբաղից հայերի զորքը հասնում է Գանձակ, անսպասելի տխուր լուր է հասնում այն մասին, որ կայսրի զորքը հասել է մինչև Դերբենդ ու կես ճանապարհից

հետ գնացել: Նրա խոստումն անկատար մնալուց հետո պարսից շահերն ավելի են չարանում: Փաստորեն բոլոր խոստումներից հետո 1722թ. արշավանքը Ղարաբաղին օգուտ չէր:

Հիտրանալով նշված ժամանակաշրջանում կատարված քաղաքական, դիվանագիտական, ինչու չէ, նաև ռազմական ձեռնարկումների մեջ, որոնց մասին շատ է գրված տարբեր աղբյուրներում ու արխիվային փաստաթղթերում, նպատակահարմար ենք գտնում մեջքերել մեկ օրինակ, որում նշվածը կատարվել է հենց խոստումների տարիներին. «Վերջապես Ռուսաց այս կայսրը, որ խոստացած էր հայոց ուժերով հայոց օգնել և հայերը պարսից լծի տակից ազատել՝ ինքն մի դաշնագրութեամբ, որ պարսից հետ էր, գրավում է Դարբանդը, Բագուն, Մազանդարանը և Գիլանը, իսկ մյուս դաշնագրութեամբ (1724) թուրքին՝ Օսմանցուց նուիրում Շամախին, Նուխին, Ղարաբաղը, Վրաստանը, Արարատեան և Ատրպատական նահանգները»: [6]

Ո՛չ նման դեպքերը, որ հետագա տարիներին էլ են կրկնվել, ո՛չ էլ Ղարաբաղի սուրբ հողի վրա 1752 թվականին ստեղծված խանությունը, որ սկսվել է ոմն Փանահ խանից, չեն ընկճել մեր նախնիներին:

Շարունակվել է նորմալ հարաբերությունների գաղտնի զարգացումը՝ Ռուսաստանից աջակցություն ստանալու ակնկալիքով:

Զմոռանա՞նք նշել Փանահ խանի ով լինելը: Ինչպես պարսկական, այնպես էլ ադրբեջանական աղբյուրներում նրա մասին գրված է. «Պարսկաստանի խորքում բնակվող և թափառական կյանք վարող սարուջանլուցեղից մի հովվի որդի էր, որ Նադիր-Շահի մոտ կատարում էր մունետիկի պաշտոն և կոչվում «Զառչի-փանահ»: Սա ներհակաբար հրապարակ է հանել Նադիր-Շահի հրապարակած վճիռը, որը գլխատվելուց վախենալով, Ղարաբաղ է փախել 1747 թվականին ու սկսել զբաղվել ավազակությամբ: [7]

Երբ Նադիր-Շահը 1748 թ.-ին մերձավորների կողմից սպանվում է, մեծ հնարավորությունների դուռ է բացվում տափաստաններում թափառող ավազակապետի համար: Նա տեղավորվում է Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքների մոտ: Նախապես խոստանալով հպատակություն, ստանալով նշված վայրերի մելիքների համաձայնությունը, իր մոտ է հրավիրում իր ցեղակիցներից մոտ 100 ձիավոր ու Ղարաբաղի հարթավայրային մասում ավելի ուժեղացնում ավազակային հարձակումները: Իսկ Շուշիում նրա հայտնվելու մասին գրված է. «Հետագայում իրականությունից

ու մեկիքների ազդարարությանն անտեղյակ Մելիք-Շահնազար Գ-ն վեց հազար թումանի ավազակապետի վրա ծախել է Շուշիի ստորին մասը: [8]

Շիրազում Ջենդ-Քերիմ խանի հրամանով 1763 թ. սպանվում է Փանահ-խանը: Այդ մասին գրված է այսպես. «Պանահ ճըռ-խանն (ինքնակոչ, ապորհնի, Գ.Յ) երբ լսեց, որ Ջենդ-Քերիմ-խանն, իր Ասկեար- խան եղբոր սպանման վրեժը լուծելու համար, Ուրմի արշաված, գրաված Փաթալի-խանը սպանած-և իր որդի Իբրահիմին, Շիրազ տարած է՝ մեծամեծ ընծաներով փութաց ի Շիրազ»: [9]

Նույն խանի մի այլ հրամանով 1763 թվականին, մոտ երկու տարի առաջ պատանդ տարված նրա որդին՝ Իբրահիմը հաջորդում է հորը, որն ավելի նենգացավ հետագայում:

Կարծում եմ, որ երկու տարուց քիչ ավել ժամանակահատվածը մեր մեկիքների համար խորհելու և համախմբվելու հնարավոր ժամանակը պիտի եղած լիներ, սակայն զարգացող դեպքերը, ըստ վավերագրությունների և պատմական աղբյուրների, վկայում են, որ դեռ ընդհանուր հայտարարի չէին եկել մեկիքները ի նպաստ Ղարաբաղի հայության շահերի: Ընդհակառակը, ձեռնամուխ եղան Ջրաբերդի տարածքում ստեղծել ինչ-որ «Գիլ-եաթաղ» (գայլի որջ) մեկիքություն և հոշոտել, սպանել օրինավոր մեկիքությունը: Սա այն ներքին երկպառակության սկիզբն էր, որ անպայման պիտի վնասեր Ղարաբաղի ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ու բարոյական հիմքերին: Սա կլինի այն մեծագույն հարվածը, որ դարերի ընթացքում չեն կարողացել հասցնել արտաքին զորեղ ու նենգ ուժերը:

Այսպիսի պարագայում էլ Ղարաբաղը չի ընկճվել: Նա համառորեն շարունակել է նորմալ հարաբերությունների գաղտնի զարգացումը Ռուսաստանի հետ այն նպատակով, որ, վաղ թե ուշ, նրանից ռազմական աջակցություն անպայման ստանալու է:

Իբրահիմ խանը շարունակում էր Ղարաբաղում Փանահ-խանի օրոք հատուկ խնդրագրերով սկսած թուրք թափառական ցեղերի հրավիրումն ու տեղաբաշխումը հայկական մեկիքությունների հարթավայրերում: Սակայն նա իրականում նպատակ էր հետապնդում հետագայում նույն քոչվոր ցեղերի ուժերով քայքայել Ղարաբաղի բոլոր հինգ մեկիքությունները (Գյուլիստան, Ջրաբերդ, Խաչեն, Վարանդա, Գիզակ): Այդ մասին վկայում են նրա մի քանի զինված հարձակումները մեկիքությունների վրա: Բազմաթիվ դեպքերից նշենք մեկի՝ Տող գյուղի բերդի վրա հարձակման ժամանակ կրած պարտությունը:

Իբր որոշում են «Գտիչ» վանքում, որտեղ ժամանակավոր գտնվում էր Տողի Մելիք-Եսային, հավաքվեն ու գտնեն հաշտության ու միաբանության եզրեր:

Գրված է. «Մելիքը, տեսնելով որ դավաճան ճըռ-խանի թիկնապահներից մին աճապարում է զինքը գլխատել՝ իսկույն հանում է իւր թուրը և գլխատում: Փախչելու ժամանակ աջ ազդրից վիրավորվում է գնդակով Իբրահիմ ճըռ-խանն»: [10]

Այսպիսի քաղաքական, տնտեսական վիճակում Ղարաբաղը շարունակում էր հարատևել ու պայքարել օտարի լծից ազատվելու համար: Առաջ անցնելով նշենք, որ դարերի երազանքը իրականացավ, երբ 1805թ. մայիսի 14-ին, Գանձակ-Ելիզավետպոլից ոչ հեռու՝ Կուրակ գետի ափին տեղակայված ցարական զորքի ճամբարում (հրամանատար Ցիցիանով), Իբրահիմ-խանի ստորագրությամբ Ղարաբաղի խանությունն անցավ Ռուսաստանի տիրապետությանը: Համաձայն պայմանագրի՝ Շուշիում տեղակայվեց Ռուսաստանի N6 սահմանապահ գունդը՝ մայրո Լիսանկիչի հրամանատարությամբ:

Քաղաքում գնդի տեղակայման տեղն այսօր էլ կոչվում է «Կազարմա-յի թաղ», որ բերդի Երևանյան դռներից մոտ է: Դեռ պահպանվում է 1920թ. մարտի 23-ին թուրքերի կողմից ավերված վառողի պահեստի մի մասը:

Արդյո՞ք, վերը նշված պայմանագրի տակ նրա՝ Իբրահիմ-խանի ստորագրությունը ազնիվ մարդու ստորագրություն էր: Ամենևին էլ ո՛չ, պարզապես այլընտրանք չունեի, կանգնած էր կոնկրետ փաստի առաջ:

Վերադառնալով Շուշի, շարունակել ու տարբեր գաղտնի ուղիներով փորձեր է արել կապ վերահաստատել իր ցեղակիցների հետ: Երևի այն կարծիքին էր, որ ուշադրություն դարձնող չկա: Այնինչ, գնդի Շուշիում տեղակայվելու սկզբնական շրջանից հայերը համակրանքով սկսեցին վերաբերվել ռուս և կոզակ զինվորականներին: Նույնիսկ փոխադարձ համակրանքը վերածվեց բարեկամության: Խառնամուսնության արդյունք է, որ այսօր Կովալյովների, Շահնազարյանների, Թավրիգյանների, Ավշարյանների, Կլեշչովների, Ղլեչյանների գերդաստանները սերունդներ ունեն ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Ռուսաստանում: Այդ մասին վկայում են Շուշիի 18-19-րդ դարերից պահպանվող մի շարք շիրմաքարերի արձանագրությունները: [11] Հենց նման հարաբերություններն էլ նպաստել են, որ հայ մեկիքները մտերմանան ու հաճախ լինեն Լիսանկիչի մոտ:

Առանձնապես մտերիմ էին Մելիք-Ջուլջուղն ու Վանի հարյուրապետը: Եվ անհնար էր, որ տեղյակ լինելով Իբրահիմի «գաղտնի քայլերին», որ տանում էին դեպի Պարսկաստան, տեղյակ չպահեին հրամանատարին: Նրանք այնպես էին հետևում, որ իմացան նույնիսկ գիշերով բերդի բանալիները թագաժառանգ Աբաս-Մրզային հանձնելու ցանկության մասին: Դա այն քայլն էր, որին պիտի հաջորդեր օտար զորքի մուտքը քաղաք ու հայերի և ցարական զորքի բնաջնջումը: Մայրո Լիսանկիչը, թեկուզ չէր կասկածում, ստուգում, համոզվում է և 1806 թ. հունիսի սկզբներին կոզակների փոքրաթիվ ջոկատով շրջապատում է Շուշիից դուրս տեղակայված Իբրահիմի վրաններն ու սպանում նրան: Այս մասին գրված է. «...մարմընիցն թռավ ճրռ-խանի գլուխն և կոտորուեցան բնաջինջ նորա արու զավակներն, իսկ նորա ընտանիքն և աղջիկներն փոխադրուեցան Շուշի» [12] Իբրահիմի սպանվելուց հետո խանությունն անցել է նրա որդի Մեհտի-Ղուլի-խանին: Գեներալ Երմոլովը վերջինիս իր փաստաթղթերում ներկայացրել է որպես թույլ մարդ՝ ասելով. «Նա ընկել էր գեներալ Մադաթովի ազդեցության տակ, խլել հայ մելիքների կալվածքները, որի համար ել նվիրել Մադաթովին տասից ավելի գյուղեր»:[13] 1822 թվականին Մեհտի-Ղուլի խանը փախել է Պարսկաստան: Չնայած նա դուրս էր Ղարաբաղի սահմաններից, ժառանգած թշնամությունը խորացնում էր ավելի մեծ ուժով և սպասում հարմար պահի, որպեսզի վրեժ լուծի և հայերից, և ռուսներից: Եվ դա որոշ չափով նրան հաջողվում է: Այդ մասին գրավոր ասված է. «Երբ 1826թ. սկսվեց ռուս-պարսկական պատերազմը, նա պարսից զորքի հետ անցավ Ղարաբաղ և այստեղ իր ազգականների միջոցով ընդհանուր ապստամբություն հարուցեց տեղական թուրքերի մեջ, որոնք ահազին քանակությամբ միացան պարսից զորքին և ռուսաց մի ամբողջ վաշտ ոչնչացրին Գորիս ավանի մոտ: Դրությունն այնքան վտանգավոր էր, որ Շուշի բերդի պահպանութեան համար զնդապետ Ռեուտ հարկավոր համարեց բանդարկել բերդում ապրող բոլոր բեկերին, իսկ թիւրք երիտասարդութիւնը դուրս վռնդեց: Փոքրաթիվ բերդապահ ռուս զօրքին միացան հայերը: Գեներալ Պապկեվիչի վկայութեամբ Շուշու պարիսպների վրա կռոււմ էին 1500 հայեր»: [14] Այս թշնամությունն այնպես էր ամրապնդված, որ միշտ իրեն զգացնել էր տալիս: Նման դեպքեր կրկնվել են 1905-06թթ. Կովկասում, 1918-20թթ. Շուշիում տեղի ունեցած հայ-թուրքական (թաթարական) զինված ընդհարումների տարիներին ևս:

Անհրաժեշտ ենք համարում խոսել 19-րդ դարասկզբի որոշ դեպքերի մասին, որ կատարված են Ղարաբաղի (ժամանակին Ելիզավետպոլի նահանգ), առանձնապես Շուշիում տեղակայված N6 սահմանապահ գնդի անձնակազմի ծառայությունների մասին: Ժամանակաշրջան, որ խոսում է 1826-28թթ. ռուս-պարսկական, 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմների և Յուսիսային Կովկասում լեռնականների հետ 1854-55թթ. մարտական գործողությունների մասին ևս:

Խոսելով նշված պատերազմների մասին, հայ-ռուսական երկկողմ ծեռնտու հարաբերությունների մասին ավելի լավ են նշում հենց ռուսական աղբյուրները: Մեջբերում են. «Միայն հայերի նվիրվածության շնորհիվ է, որ ռուսական կառավարությունը չէր վախենում, որ նախկինում Պարսկաստանին ու թուրքիային հպատակ տարածքների բնակչությունը կարող է ապստամբել: Շնորհիվ հայերի օժանդակության է, որ 1854-55թթ. Կովկասում մարտական գործողություններն ավարտվել են հաջող: Այդ պատերազմը կարող էր այլ տեսք ու ավարտ ունենալ, եթե չլիներ հայերի միջամտությունը»:[15] Միանգամայն հիմնավորված ճշմարտություն է, որի մասին վկայող շատ փաստեր կան՝ տրված անհասկանալի մոռացության: Օրինակ, շիրմաքարի արձանագրությունը վկայում է, որ իշխաններ Օրբելիանիին և Ծավճավաճեին գերությունից ազատել է շուշեցի փոխգնդապետ Իսահակ Յովհաննեսի Ղարամյանցը, 1854թ. փոխանակելով Շամիլի ավագ որդու՝ ցարական հեծելազորի սպա Ջամալադդինի հետ: Ղարամյանցի շիրմաքարի երեսին քանդակված են թուր, պատյան, վեց մեղալ ու չորս խաչ, որպես գնահատական մատուցած մարտական ծառայությունների: Նույն արձանագրության տողերում գրված է նաև, որ պարտության է մատնել Իման Շամիլին:[16] Իսկ մի այլ շիրմաքարի արձանագրություն վկայում է այն մասին, որ ալանների և չերքեզների դեմ Յուսիսային Կովկասում մղվող մարտերից մեկում 1844թ. զոհվել է շուշեցի հրամանատար Դավիթ Կոստանդյանը, որի աճյուղը կառքով Արցախ է տեղափոխվել որդու ուղեկցությամբ և հողին հանձնվել Շուշիի հին հայկական գերեզմանատանը: [17]

Շուշիի բերդի պաշտպանության, 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմի մասին խոսող հեղինակների աշխատություններում, չգիտես ինչու, տեղ չի գտել Շուշիի գնդի հրամանատար, զնդապետ Ֆեոդոր Սեմյոնովի անունն այն դեպքում, երբ քաղաքի ռուսական գերեզմանատան կենտրոնական մասում գտնվող նրա գերեզմանին կանգնեցված սպիտակ

չիրմաքարի կողերին գրված երեք արձանագրությունները վկայում են այն մասին, որ Պասկևիչ Երևանսկու դրոշի ներքո մարտեր մղելով, հասել է մինչև Եփրատ գետի ափերը, իսկ սեփական դրոշի ներքո գրավել է Կասպից ծովափնյա «Ղուբա» բերդը՝ հանուն Շուշիի խաղաղ ամրակայման: Նա մահացել է 17.08.1852թ., կյանքի 54-րդ տարում, որոնցից 37-ը ծառայել է հավատարիմ, ինչպես գրված է արձանագրության տողերում, ցարին ու հայրենիքին: [18]

Եթե «Երևանսկի» կապակցությունը ռուս զորավարի ազգանվանն է կցվել որպես հայ ժողովրդի նկատմամբ հավատարմության ու նվիրվածության նշան, ապա հայն էլ նրա ազգանունը 1828թ. «սեփականացրել» է որպես հատուկ անուն, Պասկևիչ ազգանվանն ավելացնելով «-յան» վերջածանց՝ դարձրել է ազգանուն: Օրինակ՝ Պասկևիչյան Սասուն Թաղևադի, ծնված 1935թ., երգահան, մի շարք երգերի հեղինակ, ապրում ու աշխատում է Երևանում:

Շուշիի պաշտպանության ժամանակ գեներալ Երմոլովը գնդապետ Ռեուտին Թբիլիսիից գրել է. «Պաշտպանվեցեք և չընդունեք ոչ մի առաջարկություն, այլապես այդ ստոր արարածները (երևի նկատի է ունեցել Աբաս-Միրզային ու տեղի թաթարներին, Յ.Յ.) Ձեզ կխաբեն: Պաշտպանվեցեք: Խլեցեք բոլոր հացամթերքը թաթարներից, թող սովամահ լինեն այդ դավաճանները: Մեծահոգի եղեք հայերի նկատմամբ, քանի որ նրանք լավ են ծառայում: [19]

Իրոք, դարաբաղիցները միշտ արժանացել են ռուսների վստահությանը և ամուր կանգնած են եղել իրենց վստահված պոստերում: Բավական է այն փաստը, որ 1820-40-ական թվականներին Շուշիի բերդապետը եղել է պորուչիկ Գյանջում աղա Առաքելի Խանդամիրյանցը: Ամեն օր ժամը 24-ին, երբ կողպվել են Երևանյան ու Ելիզավետպոլյան դռները, բանալիները մինչև առավոտյան ժամը 06-ը գտնվել են նրա մոտ: Բերդապետը մահացել է 1853 թվականին: Աճյունը հողին է հանձնված Երևանյան դռների հարավարևմտյան կողմի հին հայկական գերեզմանատան տարածքում: [20]

Վ.Պոտտոն «Геройская оборона крепости Шуши» գրքի 33-րդ էջում նշում է 42-րդ եզերական գնդի ծառայությունների մասին: Նշում է նաև Շուշեցի Ռոստոմ (Առուստամ) և Սաֆարի Թարխանյան եղբայրների հատուկ ծառայությունները: [21]

Նպատակահարմար է նշել, որ մեզ անհայտ պատճառներով չի նշված նույն գնդի հրամանատար, փոխգնդապետ, Գեորգիի շքանշանակիր, Վլա-

դիմիր Իվանովիչ Միխայլովը: Նա մահացել է 1833 թ., աճյունը հողին է հանձնված Շուշիի հայ-ռուսական համատեղ գերեզմանատան տարածքում: [22]

Ինչպես Շուշիում, այնպես էլ Ղարաբաղի այլ շրջաններում բնակություն են հաստատել ռուսներ, ունեցել են իրենց կրթական ու հոգևոր օջախները: Քաղաքում ունեցել են երկհարկանի միջնակարգ դպրոց և եկեղեցի: Եկեղեցին կառուցված է եղել 1830 թ., իսկ դպրոցի շենքը՝ 1875 թվականին: Եկեղեցին կոչվել է Սուրբ Գեորգիի անունով, ունեցել է 28,9 մ երկարություն և 5, 9 մ լայնություն: Այն քանդվել է Ադրբեջանի իշխանությունների հատուկ ցուցումով, հրապարակ կառուցելու պատճառաբանությամբ, իսկ նրա արևելյան կողմում դարից ավել պահպանված գերեզմանատան տարածքում, որտեղ հողին էին հանձնված ռուս անվանի մարդկանց աճյուններ, կառուցվել է Ադրբեջանի Կոմկուսի շրջկոմի շենքը, լրիվ ամայացնելով սրբատեղին: Գևորգավան կոչվող տեղամասում 19-րդ դարի վերջին ևս կառուցվել է ռուսական երկհարկանի եկեղեցի՝ կաթնագույն սրբատաշ քարից: Գիշտ է, մասնակի վնասված, այսօրվա դրությամբ այն պահպանվում է: Պահպանվում է, որովհետև գտնվում է հայկական բնակավայրերով շրջապատված տեղամասում:

Սովետական տարիներին ռուս հրամանատար, գնդապետ Կորյագինի անունը կրող ռուսների հիմնադրած Կորյագինո քաղաքը Ադրբեջանի կառավարությունը վերանվանել է «Ֆիզուլի», Դյուսիսային Արցախի հողերը բզկտելով յուրատեսակ շրջաններ են ստեղծել (Շահումյանի, Խանլարի, Դաշքյասանի), Ելենդորֆ քաղաքը դարձրել է Խանլար:

Երբ 2010թ. մայիսին Ռուսաստանի Ֆեդերացիայի պետդումայի պատգամավոր Իգոր Կոնստանտինովիչ Չերնիշենկոյի հետ եղանք Շուշիի ռուսական գերեզմանատան տարածքում, նա մեզ հետ լուսանկարվեց գնդի հրամանատարի շիրմաքարի մոտ, իսկ գրույցի ժամանակ ասաց. «Սա մեզ համար միանգամայն նորություն է»: Նա իր հետ Մոսկվա տարավ տողերիս հեղինակի գրած մի հոդված՝ Շուշիի ռուսական համայնքի մասին:

Ի՞նչ է ստացվում: Խորհում ես ու փորձում պատասխան գտնել: Թվում է՝ ժամանակի հոսանքի առաջ արժեք չեն ունեցել, մնացել են որպես մի յուրահատուկ անլսելի ծայն: Սակայն նաև թվում է, որ նման փաստերը գին ու արժեք կունենան մեր ընդհանուր պատմության էջերում: Նման քաջերն են, որ միշտ ձեռք-ձեռքի, խելք-խելքի տված պաշտպանել են հայրենիքը: Գալիս ենք այն եզրակացության, որ առանց արյունահեղության հայի համար

Ռուսաստանն էր հայրենիք դարձել, իսկ ռուսի համար՝ Ղարաբաղը: Պարզ է նաև, որ հայրենիքի հետագա պաշտպանության համար երկու ազգերն էլ բավականին զոհեր են տվել, որոնց մասին պետք է միշտ հիշել:

Գրականություն

1. Արզումանյան Ա., Բարեկանություն (հողվածներ, ակնարկներ, նամակներ), էջ 135, Երևան, 1958
2. Նույն տեղում, էջ 7
3. Арутюнян Г.М., Шуши: нововыявленные исторические надписи, Степанакерт, 2008.
4. Հայկական Սովետական հանրագիտարան, հ.1, էջ 240, Երևան, 1974
5. Բեկնազարյան Ա., Գաղտնիք Ղարաբաղի, էջ 44, 1886թ.
6. Նույն տեղում, էջ 46
7. Ахундов Назим, Гарабагнамалар, на азерб. яз, Баку, 1990
8. Բեկնազարյան Ա., Գաղտնիք Ղարաբաղի, էջ 73, 1886թ.
9. Ахмед бек Дживаншир, О политическом существовании Карабахского ханства с 1747-1805 гг., Шуши, лентип А. М. Магдеш Акопова, 1901 г
10. Բեկնազարյան Ա., Գաղտնիք Ղարաբաղի, էջ 80, 1886
11. Арутюнян Г.М., Шуши: нововыявленные исторические надписи, Степанакерт, 2008 г.
12. Ахундов Н., Гарабагнамалар, на азерб. яз., Баку, 1990.
13. Բեկնազարյան Ա., Գաղտնիք Ղարաբաղի, էջ 283, 1886
14. Ներքին տեսություն. Ղարաբաղի խաների տոհմը, «Մշակ», հայերեն, Թբիլիսի 1826
15. Дживилагов А.К., Армяне в России, ст.7, Москва, 1906.
16. Арутюнян Г.М. Шуши: нововыявленные исторические надписи, ст.291, Степанакерт, 2008.
17. Հարությունյան Հ. Ս., Շուշիի տապանաքարերի արձանագրությունները, էջ 142, Երևան, 2008
18. Նույն տեղում, էջ 276
19. Потто В., Геройская оборона крепости Шуши. ст.30, С-ПБ, 1905
20. Арутюнян Г.М., Шуши: нововыявленные исторические надписи, ст.152, Степанакерт, 2008
21. Потто В., Геройская оборона крепости Шуши, ст. 33, С-ПБ, 1905
22. Арутюнян Г. М., Шуши: нововыявленные исторические надписи, ст. 348, Степанакерт, 2008.

ՇՈՒՇԻՆ 1918-20 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

(ականատեսների վկայությամբ)

Դարեր շարունակ Հայաստանը աշխարհաքաղաքական եւ ներքին բարդ իրադարձությունների պատճառով ենթարկվել է ասպատակությունների ու կոտորածների: Չնայած հայ ժողովրդի հերոսական դիմադրությանը, անհավասար պայքարում նա մի անգամ չէ, որ հայտնվել է ողբերգական վիճակում:

Հայաստանի վիճակն ավելի ճակատագրական էր 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի առաջին երկու եւկես տասնամյակում: Պանիսլամական լայնածավալ եւ հզոր պետություն ստեղծելու ճանապարհին Հայաստանը լուրջ խոչընդոտ էր եւ միայն նրա վերացմամբ ուրիշի հողերի վրա պետություն դարձած Թուրքիան կարող էր հասնել իր նկրտումներին: Օգտվելով հայ ժողովրդի նկատմամբ աշխարհի հզոր պետությունների անտարբերությունից, 1895-96թթ. Թուրքիան հայերի կոտորածներ ձեռնարկեց Ադա-նայում եւ այլ վայրերում, որոնց զոհ գնացին հարյուր հազարավոր հայեր: Իսկ մեկ տասնամյակ անց հետեւեցին 1905-06թթ. հայ-թաթարական զինված ընդհարումները Կովկասում, ապա եւ զանգվածային ջարդերն ու կոտորածները Կիլիկիայում, 1909թ. ապրիլին:

Այս ամենով, իհարկե, չեն սահմանափակվում բոլոր այն չարագործությունները, որ հայ ժողովրդին բաժին հասավ մշված ժամանակահատվածում: Այնուհանդերձ իր չափերով եւ ահասարսուռ պատկերներով, իհարկե, հավասարը չունի այն իրավիճակը, որում հայտնվեց Հայաստանը 1915-20 թվականներին: Օգտվելով առաջին աշխարհամարտի ընձեռած հնարավորությունից, Թուրքիան իրի ու սրի մատնեց ողջ Արեւմտյան Հայաստանը: Ջոհվեց 1.5 միլիոն հայ, հրաշքով փրկվածները թողեցին իրենց ապուպապերի հողը: Արյունարբու Թալեաթը 1915թ. հայտարարեց. «Հայկական հարց այլեւս գոյություն չունի, հաջողվել է երեք ամսում անել այն, ինչ չէր կարողացել անել Աբդուլ Համիդը 30 տարում»: [1]

Այս բոլոր իրադարձություններից դուրս չմնացին Արցախն ու նրա կենտրոնը՝ Շուշին: Ստեղծվել էր այնպիսի իրադրություն, որ միայն ներքին բոլոր ուժերի համախմբմամբ, ուժեղ դիմակայությամբ միայն Արցախը կարող էր պահպանել իր գոյությունը:

Այդ ժամանակ Ռուսաստանն ընդգրկված էր հեղափոխական շրջադարձերի մեջ եւ արդեն ի վիճակի չէր պահպանելու Անդրկովկասը թուր-

քական ներխուժումից: Վտանգն ավելի ուժեղացավ, երբ ռուսական զորքերը դուրս բերվեցին Արեւմտյան Հայաստանից ու Անդրկովկասից:

Քիչ է ասել, թե պետք էր զգուշավոր լինել: Անհրաժեշտ էր դիմել ինքնապաշտպանության: Ռուսական կայսրության փլուզմանը զուգընթաց Ղարաբաղում ձեւավորվեց ժամանակավոր գործադիր կոմիտե (1917թ., մարտի 13), իսկ 1918թ. կայացավ արցախահայության առաջին համագումարը, որը Ղարաբաղը հռչակեց որպես վարչաքաղաքական անկախ միավոր: Ընտրվեց ժողովրդական կառավարություն եղիշե Իշխանյանի գլխավորությամբ:

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից հետո Անդրկովկասում սկսեց իր գերիշխանությունը հաստատել Մեծ Բրիտանիան: Եկուն դիվանագիտություն վարելով Թուրքիան եւ Ադրբեջանը բանակցությունների մեջ մտան նրա ներկայացուցիչ գեներալ Թոմսոնի հետ եւ հասան նրան, որ Շուշիից աքսորվեն Ղարաբաղի կառավարության բոլոր անդամները:

Թուրքիան սկսեց նորից ցույց տալ իր գազանային կերպարանքը՝ ձեռնարկեց յուրատեսակ ռազմական ագրեսիա Ղարաբաղի դեմ: 1920թ. գարնանը, երբ տարածք ներխուժած օսմանյան զորքի պարագլուխ Զահիդ բեկի կողմից արդեն զինաթափվել էր քաղաքի հայությունը, ամենասարսափելին եղավ Շուշիի պատմության մեջ:

Իսկ ինչպե՞ս են զարգացել իրադարձությունները մինչ այդ: Բաքվի կոմունայի պարտությունից հետո (15.09.1918թ.) թուրքերն ու տեղի մուսավաթականներն իրենց զգացին ավելի ազատ: Արդեն արեւելքից վտանգ չկար, որոշվեց լուծել հայության հարցը Անդրկովկասում: Կարելոր ու առաջնահերթ լուծելին հայկական Ղարաբաղի հարցն էր: Այդ իսկ նպատակով 22.09.1918թ. տարածաշրջան է ուղարկվում չորսհազարանոց թուրքական բանակ՝ էնվեր-փաշայի խորթ եղբայր Նուրի փաշայի հրամանատարությամբ: Աղղամ-Ասկերան-Շուշի ճանապարհի Ասկերանի պաշտպանական հատվածը ճեղքելու համար օժանդակ ուժեր են տրամադրվել:

Հայկական կամավորականները ցույց են տալիս ուժեղ դիմադրություն: Սակայն ուժերն անհավասար էին: Հայերը հիմնականում զինված էին հրացաններով, հակառակորդը՝ բազմաթիվ գնդացիներով ու թնդանոթներով: Թուրքերին հաջողվել է ճեղքել ճակատը, գրավել Ասկերանի բերդը, մոտակա մի քանի գյուղեր, վերահսկել Աղղամ-Շուշի ճանապարհը:

Բաքվի կոմունայի կործանումից տասը օր հետո (1918թ. սեպտեմբերի 25-ին) թուրքական զորքը Շուշիի հյուսիս-արեւելյան կողմից գրավում է թաթարական թաղամասը, որտեղ բնակվում էին այլ քոչվոր ցեղեր եւս:

Չնայած թուրքական զորամիավորումները շարունակում էին գրավել նոր տարածքներ, նույնիսկ հասել էին Դաղստան, Նուրի-փաշան իրեն անհանգիստ ու վտանգված էր զգում: Օսմանյան կայսրությունը, փաստորեն, առաջին աշխարհամարտում պարտվել էր, Ֆրանսիան ու Անգլիան սկսել էին գերիշխել: Դա առավել նկատելի դարձավ Պաղեստինը գրավելուց հետո, որում կարելու էր եւ խաղացել հայկական լեգիոնը:

Ստեղծված ռազմա-քաղաքական իրավիճակի պատճառով թուրքական բանակի հազարավոր զինվորներ, սպաներ ու ռազմական խորհրդականներ մնացին ծառայելու թուրքամետ մուսավաթական Ադրբեջանի բանակում, որի հրամանատարական կազմը, ինչպես նշվեց վերը, թուրք-գերմանական սպաներն էին Նուրի-փաշայի գլխավորությամբ: Այս ամենը, պարզ է, ավելի ծանր իրավիճակ ստեղծեց Ղարաբաղի համար: Սակայն արցախահայությունը բոլորովին չընկճվեց: Իր գոյատևության համար այն պատրաստ էր պայքարելու մինչև վերջ, եթե նույնիսկ դա պահանջեր մեծ զոհողություններ:

Դեպքերի ականատես, նաև զինվոր, Զարեհ Մելիք-Շահնագարովը իր օրագրում կատարած շատ կարելու այլ գրառումների հետ այդ մասին գրել է. «Թուրք-մուսավաթականների միակ հաջողությունը Շուշի մտնելն ու այն օկուպացնելն էր: Ղարաբաղի տարածքի մնացած մասն այդպես էլ թուրքերին չհպատակվեց»:[2]

Օսմանյան Թուրքիայի զորքի հեռանալուց հետո մուսավաթականները 1919թ. իրենց հպատակության տակ մնացած ջոկատներով երկրորդ անգամ փորձում են Շուշի մտնել քաղաքի արեւմտյան կողմից: Նրանց հաջողվում է իրենց վերահսկողության տակ առնել Բերդաձոր ու Զանգեզուր տանող միակ ճանապարհը, կտրել Շուշի-Քարին տակ արահետը, այն առնելով գնդացիների կրակի տակ: Ահա թե ինչպես է նկարագրում ստեղծված իրավիճակը օրագրի հեղինակ Զարեհ Մելիք-Շահնագարովը. «Հայրս՝ Սամսոն Օսիպովիչը (Հովսեփի), մաուզերը ձախ կողքից կախած անհանգիստ քայլում էր ետ ու առաջ: Հանկարծ մեծ դարպասից կախված մետաղե մուրճով ծեծում են այն, հայրս զգաստանում է, բանվոր Մկրտչին ուղարկում, որ դուռը բացի: Ներս եկողները պատմում են ընդհանուր իրավիճակի եւ Ձաստավից քիչ հեռու «Պուլուր թումբ» կոչվող տեղամասում

թուրքերի կողմից գնդացիներ տեղադրելու մասին: Հայրս նրանց հանգստացրեց ու ասաց, որ ինքը ամեն ինչ նկատում է: Նրանց գնալուց հետո, երբ հայրս զինված դուրս էր գնում, ցանկացա «կարաբինով» հետը գնալ: Չթողեց, հանձնարարեց պատշգամբից հեռադիտակով ուշադրության տակ պահել «Պուլուր թումբը» եւ կատարել գրառումներ: Հորս գնալուց քիչ հետո սկսվեց մարտ, որը տևեց 1.5 ժամ: Մերոնք վերադարձան իրենց հետ բերելով գերված թուրք սպայի»: [3]

Հիմա այն մասին, թե ինչ կատարվեց հետո, երբ ներս տարան գերվածին: Սամսոն Մելիք-Շահնազարովի հրամանով արձակում են նրա ձեռքերը, առաջարկում աթոռ: Գերված սպան չէր կամենում ճշմարտությունն ասել, սակայն հորս սաստող դեմքը նրան ստիպեց սքափվել ու պատմել. «Ոչ մի գորավարժություն էլ չէր նախատեսված: Պարզապես պետք է մտնեինք քաղաք, գրավեինք վառողի պահեստը, զորանոցի մոտ միանայինք մեր մնացած զորամասերին, քաղաքն առնեինք լրիվ շրջապատման մեջ ու գիշերը, մինչև լույսը բացվելը, կոտորեինք բոլոր հայերին: Այդքանն իրակացնելու համար մեզ օգնելու էր գալու եւս չորսհազարանոց զորք»: [3]

Սամսոն Մելիք-Շահնազարովին հավատացնելու համար թուրք սպան ծնկաչոք երեք անգամ խոնարհվում է ու ասում, որ ինքն ասել է ճշմարտությունը: Ըստ օրագրի գրառումների, Սամսոն Մելիք-Շահնազարովի հրամանով թուրք սպան, երեք զինվորի ուղեկցությամբ, տարվում է մինչև Ագուլեցոց Սուրբ Աստվածածին եկեղեցի եւ ազատ արձակվում:

Հայության վիճակն ինչպես Շուշիում, այնպես էլ հարակից գյուղերում շարունակվում էր մնալ տագնապալից: Եվ քանի որ Ղայբալի գյուղը պատմությանը հայտնի է իր դառը ճակատագրով (գյուղի լրիվ հրկիզում եւ բնակչության զանգվածային կոտորած), խոսենք նաեւ Շուշիի հետ սերտ կապ ունեցող այդ գյուղի մասին եւս: Զարեհ Մելիք-Շահնազարովի գրառումներում միայն նշված է, որ գյուղը ոչնչացվել է, զոհերի թիվը 700-ից ավելի էր՝ հիմնականում կանայք եւ երեխաներ:

Չձավալվեց, տեսնենք միայն, թե ինչ էր պատմում մեզ՝ իր 10-12 տարեկան թոռներին այդ մասին թամար տատս (1907-1984թթ, որն՝ ինչպես Բերդաձորում, այնպես էլ Շուշիում 1918-20թթ. տեղի ունեցած հայ-թուրքական զինված ընդհարումների ականատեսներից էր. «Բերդաձորից տեղահանվեցինք 1918թ. ամռան վերջին: Դատարկածեռն գնում էինք Շուշի: Հայրս՝ Գրիգորը, հետ գնաց, որ տնից գոնե մեկ պուլիկ յուղ բերի, բայց տան բակում սպանվեց: Մի կերպ հասանք Շուշի, տեղավորվեցինք Գյան-

ջումյանցների թաղամասում (թաղամասը Թաղեւոս Թամիրյանցի կառուցած ջրամբարից ցած գտնվող՝ Երեւանյան փողոցի աջակողմյա հատվածում հասնում էր մինչեւ Քամու աղաց տեղամասը, որտեղից երեւում է Ղայբալի գյուղը), որտեղ մնացինք մինչև 1920 թ. գարնան սկիզբը: Համարյա երկու տարի էր՝ մայրս չէր թողնում տան բակից հեռանալ: Մարտ ամսին վիճակն ավելի վատացավ, արդեն լսվում էին կրակոցներ: Մարտի սկզբներին, մի արեւոտ օր, մոտ 30-40 ջահել թուրք՝ անգլիացի սեւագզեստ զինվորների հետ Շուշիից իջան դեպի Ղայբալի գետը: Նրանց խմբված գնալը մեզ, արդեն ամեն ինչ հասկացող երեխաներիս, ընկալելի էր եւ հավաքվեցինք Քամու աղացի մոտ: Կես ժամ չանցած՝ ամբողջ գյուղը կորավ հրդեհի բոցերի ու ծխի մեջ: Երեկոյան լուր տարածվեց, որ գյուղում կենդանի մարդ չի մնացել»: Մեկ-մեկ տատիս աչքերն արցունքոտվում եւ երբեմն ասելիքը լացով էր պատմում:

-1920թ. մարտի երկրորդ տասնօրյակին,- շարունակում էր տատս,- վիճակը Շուշիում նորից սկսեց սրվել: Նորից էին տեղի ունենում փոխհրածգություններ, սպանություններ: Ավելի ահավոր ու տագնապալից մի քանի օրեր էլ անցան, ու եկավ մարտի 20-ը: Հարեւանները բակից-բակ իրար իմաց էին անում, որ ոչ միայն Ելումուտի ճանապարհներն են առաջվա պես վտանգավոր, քաղաքի հայոց թաղամասը լրիվ շրջափակվել է թուրքերի կողմից: Հայոց զինվորներն ու նրանց միացած զինված պատանիները վերահսկում էին միայն Քարին տակ տանող միակ ճանապարհը: Իրիկնաղեմին մայրս լաց լինելով՝ մի երկու կապոց հագնելու շորեր տվեց մեծերիս, մի հատ էլ ինքը շալակեց, փոքրիկ Մովսես երբորս գրկեց եւ փողոցում իրար խառնված ամբոխի հետ բռնեցինք Քարին տակ տանող ճանապարհը: Մի կերպ հասանք Վարազաբույն գյուղը: Այդտեղ իմացանք, որ Շուշիում շատ քիչ մարդ է փրկվել, այլեւս չկա հայոց թաղամասն իր գեղեցիկ արհեստանոցներով ու խանութներով»: [4]

Քաղաքում կատարված դաժանությունների մասին կարելու տեղեկություններ կան նաեւ շուշեցի առեւտրական Ավագ Գասպարյանի տիկնոջ՝ Հերիքնազ (Հերիք) Գասպարյանի գրառումներում, որ ինձ է տրամադրվել գերդաստանի սերունդ, մոսկվայաբնակ Գրիգոր Գասպարյանը: Նպատակահարմար են գտնում որոշ կարելու տեղեկություններ ներկայացնել մեր սերունդներին, որպեսզի պատկերացում կազմելով, կերտեն մեր ազգի ապագան:

Ըստ օրագրի գրառումների՝ Ավագ եւ Հերիքնագ Գասպարյանների տանը հաճախակի էին հավաքվում քաղաքի ու գյուղերից եկած մանրածախ առետրով զբաղվողներ՝ իրենց համար հարմար ապրանք ընտրելու նպատակով: Նման մի հավաք ընդհատվել էր Բուխարայից ու Մադրասայից նոր ապրանք ստանալու առիթով հավաքված տեղացի վերավաճառողների ու սովորական առետրի եկած համաքաղաքացիների գործարքը, երբ Ավագին տեղեկացրին, որ Շուշիի համար եկած խոսրով-բեկ Փոլադովն ուզում է առանձնագրույց ունենալ: Առանձնագրույցը կայացել է 1918թ. աշնանային մի մռայլ օր, տան երկրորդ հարկում: Օրագրում նշված է, որ առանձնագրույցը կողմերի միջեւ կայացել է թուրքական զորքը քաղաք մտնելու չորրորդ օրը: Արդեն կենտրոնական հրապարակում մի քանի կախաղան էին պատրաստել: Ժողովրդին ահ ու սարսափ ներարկելու համար արդեն կախաղան էին բարձրացրել հրապարակի նպարեղենի կրպակում աշխատողին, պատճառաբանելով, որ իբր թուրքական բանակի սպաներից ծխախոտը թաքցրել է: Հաջորդը անասնաբույժն էր, որն իբր հրաժարվել էր ստուգել ձիերի վիճակը: Քաղաքը լրիվ շրջափակված էր, մթերք չէին ստանում դրսից: Ոգեւորված թուրքական զորքի հովանավորությունից, ինչպես տեղացի թաթարները, այնպես էլ թուրք զինվորականները սկսել էին հայերին թալանել: Կախաղան է բարձրացվել նաեւ ռուսերեն թերթի խմբագիրը:

Քաղաքապետից բացի, բոլոր ղեկավարներին ձերբակալել էին: Քաղաքապետին պահել էին, որպեսզի նրա միջոցով բանակցություններ վարեն հայկական կողմի զինված ջոկատների հետ՝ նպատակ ունենալով նրանց զինաթափել:



Հերիքնագ Գասպարյանը որդու եւ բռնան հետ

Երբ Ավագի որդին՝ Վարդանը, տուն մտնելով, հորը տեղեկացնում է, որ խոսրով բեկ Փոլադովը առանձին 12 կախաղան է պատրաստել տվել քաղաքի ուսուցիչների համար, Ավագ Գասպարյանը որոշում է գնալ բանակցելու զորահրամանատար Խալիլ բեկի հետ: Երբ առանձնագրույցի ժամանակ 1000 ռուբլի ոսկեդրամ է ստանում Խալիլ բեկը, բեկանվում է կախաղանի որոշումը եւ հնարավորություն տրվում, որպեսզի հայերն անարգել թողնեն քաղաքը: Կար պայմանավորվածություն, որ հազարն էլ վերջում պիտի ստանա:

Իսկ ի՞նչ նպատակով էր խոսրով բեկը գնացել Ավագի մոտ: Այդ մասին օրագրում գրվածը ներկայացնենք թարգմանաբար. «Հարազատ ու թանկագին Ավագ աղա, ահա թե ինչ եմ ուզում ասել Ձեզ: Լսեցեք:

Ես Ձեր տունն անվտանգ պահելու համար հատուկ պահակներ կնշանակեմ, որպեսզի անհայտ ավազակներ չկարողանան մտել Ձեր առանձնատան տարածքը, ներկայանալով պաշտպաններ, թալանեն Ձեզ»: Ավագին քվում էր, թե մի յուրատեսակ տնային կալանք է նախատեսվում:

Իսկ երբ խոսրով բեկը հեռանում է, ամուսինները գալիս են այն եզրակացության, որ լավագույն դեպքում տարվում է նախապատրաստական աշխատանք ունեցվածքին ու տանն անվնաս տիրելու նպատակով:

Իսկ ահա թե ինչ որոշեցին ամուսինները: Հավաքեցին այն ամենը, ինչ հնարավոր էր ձեռքով տանել: Տան անդամների ու հարեւան գյուղերից իրենց մոտ աշխատողների համար կապեցին մեկական կապոց, բաժին հանեցին նաեւ քաղաքից իրենց խանութում աշխատողներին էլ ու գիշերով ուղեւորվեցին դեպի Քարին տակ, այնտեղից էլ՝ Մսմնա:

Նույն օրագրում խոսրով բեկի մասին գրված է. «խոսրով բեկ Փոլադովը Վարանդայի գյուղերում պարտություն կրելուց հետո այլեւս չի երեւացել Շուշիում: Ասում են, որ նա գնացել է Միջին Ասիա: Գրանցվել է որպես բոլշեիկ ու ծառայելով որպես կուսակցական աշխատող, հասել է մինչեւ կուսակցության Ֆերգանայի մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնին»:

Ավելի կարեւոր տեղեկություններ կան Ջարեհ Սամսոնի Մէլիք-Շահ-նազարովի գրառումներում (օրագիր, որ մնացել է ձերդաստանի արխիվում գերդաստանի նշանավոր բարձրաստիճան սպաների լուսանկարների ու նրանց ծառայության մասին տեղեկատու ցուցակների հետ՝ *послужной список*):

Ղարաբաղից ցարական զորքի հեռանալուց հետո Ջարեհ Մէլիք-Շահ-նազարովը շատ հայորդիների նման շարունակում էր ծառայել տեղում: Անձամբ գտնվում էր Գ.Նժդեհի հրամանատարության տակ:

1920թ. մարտի 13-ին շտաբս-կապիտան Նժդեհը կանչում է ու հրամայում, որ պատրաստվի առավոտյան ճանապարհվելու Շուշի՝ հիվանդ հորը տեսության: Ջորամասի տեղակայման վայրից Շուշի գալու մասին գրում է. «Երեկոյան Շուշի գալով՝ շատ դառնացա, երբ իմացա, որ հայրս օր առաջ թուրք-մուսավաթականների հետ ընդհարման ժամանակ, գնդացրի կրակոցից ծանր վիրավորվել է: Երեք օր մնացի հորս սենյակում: Վերքերը ծանր էին: Մարտի 17-ին մահացավ, 18-ին նրա աճյունը հողին հանձնեցինք վերին հայկական գերեզմանատանը: Սակայն մահվան 7-րդ օրը նշելու հնարավորություն չունեցանք, որովհետև այն լրանում էր մարտի 23-ին, որը շրջադարձային եղավ Շուշիի համար: Լուսադեմին թուրքական թաղամասից լսվող ինտենսիվ կրակոցներից արթնացա եւ պատուհանից դուրս նայեցի: Կրակում էին հայ-թուրքական սահմանագծի ամբողջ երկայնքով: Արդեն մոտ էին մեր տանը (խոսքը Շահնազարյանների 2-րդ տան մասին է, որ գտնվում էր Ղազանչեցոց եկեղեցու արեւելյան կողմում: Պատերն այժմ կիսով չափ պահպանվում են.- Գ.Յ.): Թուրքերն ու թաթարները, օգտվելով այն հանգամանքից, որ քիչ զենք բռնող հայ կաքաղաքում, հեշտ առաջ էին շարժվում, միաժամանակ հրի մատնում հայերի տները: Մեր տան աստիճանների վրա սպանվեցին փոքր եղբայրս՝ Դովսեփիկը եւ մորաքույրս՝ Աննա Պավելի Սաֆարյանցը, ծնված 1860 թվականին: Քիչ անց մեր բակը մտան չորս երիտասարդ մեր հարեւանի տղայի՝ Սուրենի գլխավորությամբ: Որոշեցինք դիրքավորվել՝ վրեժ լուծելու նպատակով: Բոլորիս զինելու համար Սուրենը սողալով գնաց եւ իրենց տնից բերեց մեկ մաուզեր եւ երկու հրացան: Արդեն բակում չորս թուրքի դիակ կար, երբ փլվեց տան վառվող տանիքը: Դուրս եկանք թաքստոցից, հավաքեցինք սպանվածների դիակների մոտ ընկած «մոսին» եւ «մաուզեր» տիպի հրացաններն ու հասանք թաղամասի խորքը, անցնելով Չերքեզյանցների խանութների մոտով (առեւտրականների գերդաստան Չերքեզյանցների տոհմական գերեզմանոցը գտնվում է Երեւանյան դռների հարավ-արեւմտյան կողմի հին հայկական գերեզմանատանը՝ ճգնավորյանների եւ Բարությանների գերեզմանոցների հարեւանությամբ: Գ.Յ.): Երբ հասանք թաղամասի ծայրամասում գտնվող մսագործ Ավետիսի տանը, արդեն նկատելի էր, որ քաղաքի բնակիչները ժամհարյանների տան ու ռեալական ուսումնարանի արանքով բարձրանում են դեպի Քարին տակ գյուղը տանող ճանապարհը»: [5]

Իսկ ի՞նչ են պատմում քաղաքի վեց հայկական հին գերեզմանատները 1918-20թթ. Շուշիում հայկական կոտորածների մասին: Ի՞նչ կարող են

պատմել: Ո՞վ պիտի հողին հանձնած լիներ հայերի աճյուններն ու շիրմաքարեր տեղադրած լիներ, երբ քաղաքում հայ չկար մարտի 23-ից հետո:

Տարեց մարդիկ, վերհիշելով անցածը, ասում էին, որ հայերի դիակներով լցված ու հողով փակված հարյուրավոր ջրհորներին պիտի հարցնել, միայն նրանք գիտեն դիակների իրական թվաքանակը: Իմ անձնական հետազոտությունների ժամանակ, որոնք տեւել են մոտ 7 տարի, քաղաքի գերեզմանատներում չեմ հանդիպել շիրմաքարի, որի կողերի արձանագրությունները խոսեին 1918-20թթ. Շուշիի հայերի կոտորածների մասին: Միակ անխոս վկան հունահայ Մովսես Պաղղատյանի շիրմաքարն է՝ ծավալուն արձանագրությամբ, որն ասում է. «Աստ հանգչի մարմինը Մարտիրոս Մովսես Պաղղատյանի, կ.Պոլիս, Ռոդոստո, երանի նահատակի յիշատակին, որ ծն. 1883թ., նահատակվեցաւ 1918թ. յուլիս 29.

Համաշխարհային արևմտահեղ պատերազմը, որ կորոշեր ազգերու բաղդը, զգալով հային պատկանող նուիրական պարտքը, առանց վարանելու խառնեց իւր կեանքը հազարավոր անձնուրացների հետ չորս տարուայ ահռելի պատերազմների ընթացքում մահից զերծ մնացած թանկագին մատաղ կեանքը հերոսաբար զոհեց Շուշի եղբայրօգնութեան կարօտ օրհասական կռվի մեջ»: [6]

Նշված արձանագրությամբ կաթնագույն ուղղանկյունածեւ շիրմաքարը գտնվում է 1905-06թթ. զոհերի գերեզմանատան կենտրոնական մասում:

Քաղաքի ողբերգալից վիճակն անբուժելի վերք է թողել մեր նախնիների հոգիներում, որի մասին իմանում ենք նրանց թողած գրառումներից:

Դասեր կառնե՞նք, որ հետագա սերունդների հոգսերին հոգսեր չավելացնենք:

Կարծում եմ՝ պետք է...

Գրականություն

1. Հայկական սովետական հանրագիտարան, հ.1, էջ 528-29, Երեւան, 1974թ.
2. Зарэ Мелик-Шахназаров, дневник (Записки карабахского солдата: воспоминания участника событий 1918-20гг. в Нагорном Карабахе).
3. Там же.
4. Թամարա Գրիգորի Մնացականյանի հուշերից:
5. Зарэ Мелик-Шахназаров, дневник (Записки карабахского солдата: воспоминания участника событий 1918-20гг. в Нагорном Карабахе).
6. Հարությունյան Գրաչիկ Մայրի, Շուշիի տապանաքարերի արձանագրությունները, էջ 33, Երեւան հրատ., 2008թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մաքսիմ Գորկիի հիշատակը -Մոլեռանդը	3
Երկու խոսք.....	6
Շուշիի բերդապարիսպը	7
Ոսկերչությունն ու ակնագործությունը	
Շուշիում 18-19-րդ դարերում՝ ըստ նորահայտ վիճակների	18
Նորահայտ արձանագրություններ շուշեցիների տոհմանունների եվ ազգանունների	
ծագումնաբանության վերաբերյալ	21
Ուշացած խոստովանություն.....	36
Եվ տասնապետը հրամայեց.....	38
Բաքվում շարունակում են շահարկել Շուշիի թեման.....	41
Չափանիշներ մենք ունեինք ի սկզբանե.....	43
Շուշիի ռուսական համայնքը	
ըստ վիճագրական արձանագրությունների.....	48
Շուշին որբի գլուխ չէ.....	57
Ստիպված եմ անդրադառնալ.....	63
Տպագրությունը Շուշիում (18-19-րդ դդ.)	66
Ադրբեջանցիների եվ ադրբեջաներենի	
ծագումնաբանությունն ըստ Շուշիի մահմեդական գերեզմանատան արձանագրությունների	69
Դերթական «կրակոցներ» Բաքվից	
Կամ՝ ականա պատասխան նենգավիժիչ պրոֆեսոր Մ.Գասրմախի.....	75
Անհայտության մեջ մնացած անուն՝ արժանի մեծարման.....	80
Դետադարձ հայացք կամ՝ մեր ազատագրական պայքարի պատճառահետեւանքային կապերը	84
Շիրմաքարերը ոչ թե մեր պատանդներն են, այլ՝ կռվանները.....	91
Գերեզմանն ի՞նչ հուշարձան.....	94
Ադրբեջանական զգվառոց	
հոբեյանական ոսկեդրամի շուրջ	97
Դայ ժողովրդի գողգոթան	
(Վկայում են Շուշիի արձանագրությունները).....	100
Ղայթալին՝ գյուղատեղի.....	109
Արցախի 90-ամյա «դեկաբրիստը»	
Կամ՝ հանդիպումն Բոգդան Ջանյանի հետ.....	112

Դուշարձան՝ կերտված գրչով	
Կամ՝ Ղարաբաղը Վազգեն Օվանի ստեղծագործություններում.....	119
Շուշիի արհեստն ու կենցաղը ըստ վիճագիր արձանագրությունների	126
Շուշի քաղաքի արհեստներն	
ըստ 18-19-րդ դարերի տապանագրերի.....	144
Ջուղայի վանդալիզմը Շուշիից է սկսվել.....	146
Դոնուտ.....	150
Ակնհայտ է վարպետի փնտրածը.....	154
Արձանագրությունները ճշգրտում են պահանջում.....	159
Կացինը դարձավ յաթաղան.....	164
Դայտնաբերվել են նոր շիրմաքարեր.....	166
Ինչպես Բերդաձորը հայտնվեց Շուշիում.....	170
Սիրային մոտիվներն արձանագրություններում.....	174
Խնդրագիր՝ Շուշիից	
Կամ՝ Ալիբեկովի վկայությունները մահմեդականների դաժանության մասին.....	179
Յախշունցի «Կալաշնիկովը».....	182
Շուշիի վիճագիր ժառանգությունը.....	188
Ինչ է կատարվում իրականում.....	194
Ազգի կենսագրությունը պատմություն է.....	199
Շամիլի վերջին հանգրվանը.....	205
Մեղրեցոց եկեղեցին՝ միաբանական.....	209
Ցարական բանակի հայ զինվորականները.....	211
Այսպե՞ս ենք հարգում ու հատուցում.....	219
Կ.Պոլիս-Ռոդոստո-Շուշի.....	221
Պատմական եւս երկու վկաներ.....	224
Այո՛, քաղաքը չկա	
Կամ՝ բաց նամակ Ադրբեջանի ժողովրդին.....	232
Շուշիի ազուլեցոց թաղամասի եւ «Սուրբ Աստվածածին» մայր եկեղեցու ճակատագրերը.....	237
Երբ գերեզմանոցն ավելին է, քան բնակավայրը.....	241
Փոքրիկ դրվագ՝ Շուշիի մեծ պատմությունից.....	244
Սերված ազնվական տոհմից.....	247
Շուշիի հայ երգարվեստի եւ երաժշտության անհայտ էջերից.....	250
Մեծ հարսություն է ժառանգվել մեզ.....	262
Շուշին 18-19-րդ դարերի քրիստոնեական ու մահմեդական գերեզմանների վկայություններում.....	266
Կովկասը՝ հարավային սահման եւ հայ-ռուսական հարաբերությունները Արցախում 18-19-րդ դարերում.....	270
Շուշին 1918-20 թվականներին (ակնատեսների վկայությամբ).....	281

ՀՐԱՉԻԿ ՄԱՅՈՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՇՈՒՇԻ. ՔԱՐԵՂԵՆ ԱՆԽՈՍ ՎԿԱՆԵՐ

Շապիկը՝ Մնացական ԱԶԻԶՅԱՆԻ

Խմբագիր՝
Տեխ. խմբագիր՝
Սրբագրիչ՝

Մաքսիմ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ժամնա ԱՎԱՆԵՍՅԱՆ
Գայանե ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ստորագրված է տպագրության՝ 30.07.2013:
Չափսը՝ 70x100 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 19 մամուլ: Տպագրությունը՝ օֆսեթ:
Տպաքանակ՝ 500:

«ՍՈՆԱ» գրահրատարակչություն
ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների, 16
Հեռ. 951555
E-mail: sonatparan@rambler.ru





Հրաչիկ Մախրոչի Հարությունյան

Ոստիկանության
պաշտոնաթող մայոր

Ծնվել է Շուշիի շրջանի Բերդաձոր գյուղում:
Ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում /Ալթայի երկրամասում, Հեռավոր արեւելքում, 1966-1968 թթ./: Ունի բարձրագույն կրթություն: 20 տարի ծառայել է ներքին գործերի համակարգի տարբեր պաշտոններում: 1988-1994 թթ. մասնակցել է Արցախյան շարժման ու նրա անկախության համար մղված պատերազմին: Պատերազմից հետո, այժմ էլ, զբաղվում է երկրամասի անցյալի ուսումնասիրությամբ: Հեղինակ է «Շուշի. արձանագրություններ քաղաքի պատմության մասին» /2002/, «Шуши, нововыявленные исторические надписи» /2008/, «Շուշի. տապանագրերի արձանագրությունները» /2008/ գրքերի եւ մի շարք գիտական հոդվածների:
Սույն գիրքը հասցեագրվում է քաղաքագետներին, լրագրողներին, դիվանագետներին, պատմաբաններին ու երկրամասի անցյալով բոլոր հետաքրքրվողներին:

